Դավիթ
Թումասյան

ՏՈՒԺՈՂԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Funded
by the European Union
and the Council of Europe

EUROPEAN UNION

COUNCIL OF EUROPE
CONSEIL DE L'EUROPE

Implemented
by the Council of Europe

Funded by the European Union and the Council of Europe
EUROPEAN UNION
COUNCIL OF EUROPE
CONSEIL DE L'EUROPE
Implemented by the Council of Europe

ԴԱՎԻԹ ԹՈՒՄԱՍՅԱՆ

ՏՈՒԺՈՂԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ԵՐԵՎԱՆ 2020

Ձեռնարկի հեղինակ՝

Ի. գ. թ, դոցենտ

Դավիթ Թումասյան

Ձեռնարկի պատրաստմանն աջակցել է

Մարդու իրավունքների գծով միջազգային փորձագետ

Ալեքսանդրա Իվանկովիչ-Տամամովիչը

Սույն ձեռնարկը պատրաստվել է *«Աջակցություն քրեական արդարադատության բարեփոխումներին և եվրոպական չափանիշների կիրառման ներդաշնակեցումը Հայաստանում»* ծրագրի շրջանակներում, որը ֆինանսավորվում է Եվրոպական միության և Եվրոպայի խորհրդի «Գործընկերություն հանուն լավ կառավարման» կառուցակարգի կողմից: Սույն ձեռնարկում ներկայացված տեսակետները որևէ կերպ չեն արտահայտում Եվրոպական միության և Եվրոպայի խորհրդի պաշտոնական տեսակետները:

© Եվրոպայի խորհուրդ, 2020
© Արդարադատության ակադեմիա, 2020

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն 5

Դաս 1. «Տուժող» հասկացությունը և դատավարության ազդեցությունը տուժողների վրա 6

Թեմա 1. «Տուժող» հասկացությունը միջազգային և ազգային օրենսդրության համաձայն 6

Թեմա 2. «Տուժող» և «զոհ» հասկացությունների հարաբերակցությունը 18

Թեմա 3. Տուժողի դերը քրեական դատավարությունում 26

Թեմա 4. Դատավարության ազդեցությունը տուժողի վրա 50

Դաս 2. Խոցելի տուժողների մարդու իրավունքները ... 60

Թեմա 5. Տուժողների իրավունքների պաշտպանությունը 62

Թեմա 6. Քրեական վարույթում քաղաքացիական հայց ներկայացնելը 75

Թեմա 7. Երկրորդային զոհականացումն ու տուժողների խոցելիությունը 86

Թեմա 8. Խոցելի տուժողների խմբերը (միջազգային և ազգային օրենսդրություն) և պաշտպանության կարիք ունեցող տուժողների նույնացումը 94

Դաս 3. Խոցելի տուժողների մասնակցությամբ իրականացվող քննությունը 137

Թեմա 9. Լրացուցիչ պաշտպանության ենթակա տուժողների իրավունքները 137

Թեմա 10. Խոցելի տուժողների՝ մարդու իրավունքների պաշտպանությունն ապահովող տակտիկան և մեթոդիկան 155

Օգտագործված գրականության ցանկ 195

Ներածություն

Սույն ձեռնարկը Դ. Թումասյանի և Ու. Յորդաշի «Խոցելի տուժողների/վկաների և կասկածյալների մասնակցությամբ իրականացվող քննությունը» վերտառությամբ ուսումնական ձեռնարկի հիման վրա կազմված և լրամշակված տարբերակն է: Նախորդ ձեռնարկը հրապարակվել է 2017թ.-ին և վերաբերելի էր խոցելի անձանց (տուժող, վկա, կասկածյալ/մեղադրյալ), իսկ սույն ձեռնարկը վերաբերում է միայն տուժողներին՝ հատուկ նշելով խոցելի խմբերի ներկայացուցիչների իրավունքների ապահովումը, ինչպես նաև երկրորդային զոհականացման բացառումը: Ձեռնարկում ներկայացվող կարգավորումներն ու վերլուծությունը վկաներին վերաբերելի է այնքանով, որքանով նրանց նկատմամբ վերաբերմունքը միջազգայնորեն հավասարեցված է տարբեր տեսակի հանցագործության զոհերի նկատմամբ կիրառվող վերաբերմունքին՝ ելնելով նրանց հոգեբանական, սոցիալական, տարիքային և այլ առանձնահատկություններից:

Սույն ձեռնարկը չի հանդիսանում 2017թ.-ի ձեռնարկի վերախմբագրված տարբերակը, քանի որ այստեղ շեշտադրումներն ուղղված են ոչ թե մինչդատական վարույթի, այլև դատական փուլի առանձնահատկություններին:

Դաս 1. «Տուժող» հասկացությունը և դատավարության ազդեցությունը տուժողների վրա

Թեմա 1. «Տուժող» հասկացությունը միջազգային և ազգային օրենսդրության համաձայն

Տուժողներին վերաբերող օրենսդրությունը վերջին տասնամյակներում բուռն զարգացում է ապրել, քանի որ միջազգային հանրությունը գիտակցել է այդ անձանց պաշտպանության հատուկ կարևորությունը և դրա ազդեցությունն արդարադատության համակարգի արդյունավետ գործունեության վրա, քանի որ, որպես կանոն, հանցագործության մասին տեղեկատվության առաջնային և երբեմն նաև միակ աղբյուրը հանցագործությունից տուժած անձինք են, և կախված այն հանգամանքից, թե ինչպես է պետական ապարատն արձագանքում այդ անձանց, ինչպիսի վերաբերմունք է դրսևորվում նրանց հանդեպ, որքանով են հարգվում նրանց իրավունքներն ու ազատությունները և չեն ոտնահարվում շահերը՝ կախված է տուժողի համագործակցությունն իրավապահ համակարգի և դատարանների հետ:

Իրավապահ համակարգի և դատարանների հետ տուժողի առնչության բացասական օրինակները ոչ միայն հանգեցնում են հանցագործությունների լատենտայնության բարձրացման ու, հետևաբար, արդարադատության ցածր արդյունավետության, այլ նաև անդրադառնում են իրավապահ համակարգի և դատարանների նկատմամբ հասարակության վստահելիության մակարդակի վրա:

Կարևորելով տուժողներին և նրանց իրավունքները՝ պետու-

թյունները պետք է ոչ միայն համապատասխանեցնեն ազգային օրենսդրությունը միջազգային չափանիշներին, այլ նաև ապահովեն դրա արդյունավետ կիրառումը գործնականում: Անթերի օրենսդրությունն արդյունավետ պրակտիկ կիրառման բացակայության պայմաններում դիտարկվում է որպես մասնագիտական թերություն և պետության կողմից կադրային ոչ ճիշտ վարած քաղաքականություն:

Հարկ է նշել, որ անգամ այն դեպքերում, երբ անձի զոհականացումն ուղղակիորեն ազդում է միայն սահմանափակ թվով անձանց վրա, հանցագործությունը՝ որպես սոցիալական երևույթ, բացասաբար է անդրադառնում անհատների ավելի լայն շրջանակների, ինչպես նաև՝ հասարակության վրա: Հետևաբար, դատարանների առջև դրված կարևորագույն խնդիրներից մեկն է ապահովել հասարակական վստահությունն իրավապահ համակարգի և դատարանների նկատմամբ:

Ակնհայտ է, որ անմիջական տուժողն ամենամեծ վնասն է կրում: Երկրորդ տեղում գտնվում են վկաները, առաջին արձագանքողներն ու աջակիցները, ովքեր գտնվում են հանցավորության դեմ պայքարի առաջնագծում, և տուժում են նաև հանցագործության հետևանքներից, քանի որ ստիպված են միջամտել հանցագործության վայրում գործողություններ իրականացնելիս կամ աջակցել զոհերին՝ կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ կտրվածքով: Երրորդ տեղում գտնվում է տուժողի սոցիալական միկրոմիջավայրը՝ ընտանիք, գործընկերներ, հարևաններ, ովքեր տուժում են հանցագործությունից տարբեր մակարդակներում. կարեկցում են զոհին (ընտանիքի այն անդամները, ովքեր բռնաբարության զոհին ուղեկցում են բժշկի և հոգեթերապիայի սեանսների, կամ նրա հետ մասնակցում են դատավարությանը), հենց այդ անձինք են տառապում երկրորդային տրավմայից. բռնաբարության զոհի իգական սեռի ընկերները կարող են վախենալ սեփական անվտանգության համար և իրենց պաշտպանելու նպատակով փոխել իրենց ամենօրյա սովորույթները և խուսափել այնպիսի իրավիճակներից, որոնցում տեղի է ունեցել

բռնաբարությունը, նրանց մոտ առաջանում է տագնապայնություն, վախեր: Գողության զոհի հարևանները նույնպես փոխում են իրենց վարքագիծը, օրինակ՝ ստիպված են լինում սեփական տանը կամ բնակարանում տեղադրել ազդանշանային համակարգ, որը կարող է ծախսատար և ժամանակատար լինել նրանց համար, իսկ ավտոմեքենաների անվտանգության համար՝ գնել ավտոտնակ կամ այն տեղափոխել հսկվող, սակայն վճարովի ավտոկայանատեղի և այլն:

Տուժողների անպաշտպանությունն ի վերջո անդրադառնում է նաև հասարակության լայն շրջանակների վրա նույնպես, և հասարակությունը նույնպես տառապում է զոհականացման որոշ հետևանքներից: Օրինակ՝ 2001թ.-ի սեպտեմբերի 11-ին Նյու Յորքում տեղի ունեցած հարձակումների հետևանքով բոլոր օդանավակայանները ձեռնարկեցին անվտանգության ուժեղացված միջոցառումներ, և հարձակումներից 18 տարի անց բոլոր օդային ուղևորները շարունակում են ենթարկվել խստացված զննումների: 2006թ.-ի օգոստոսին Լոնդոնի Հիթրոու օդանավակայանում տեղի ունեցած հարձակման փորձից հետո ձեռքի ուղեբեռում հեղուկների քանակի սահմանափակումներ են մտցվել և մինչ օրս շարունակում են կիրառվել աշխարհի օդային բոլոր ուղևորափոխադրումների դեպքում՝ լրացուցիչ անհարմարություն պատճառելով բոլոր ուղևորներին: Չնայած հետևանքները կարող են ավելի նվազ ազդեցություն ունենալ, դրանք կարող են ներառել անձանց ավելի լայն շրջանակներ: Սա հատկապես վերաբերում է ահաբեկչական հարձակումներին կամ այլ հանցագործությունների, որոնք մեծացնում են հանրային վերահսկողության մակարդակը[1]: Հաշվի առնելով զոհականացման ազդեցության մակարդակը՝ զոհականացման շրջանակները ներկայացվում են հետևյալ նկարում՝ անհատից դեպի գլոբալ մակարդակ.

[1] Ivankovic A., Altan L., Verelst A., How can the EU and the Member States better help victims of terrorism? //http://www.europarl.europa.eu/RegData/etudes/STUD/2017/596805/IPOL_STU(2017)596805_EN.pdf, էջ 24:



ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 1985թ.-ի նոյեմբերի 29-ի «Հանցագործության և իշխանության չարաշահման զոհերի համար արդարադատության հիմնական սկզբունքների» հռչակագրում տրվում է «զոհ»[2] հասկացության բնորոշումը, ինչպես նաև արտացոլված են հանցագործության զոհերի արդարադատության այնպիսի սկզբունքներ, ինչպիսիք են՝ հանցագործության զոհերի նկատմամբ արդարացի վերաբերմունքը, հանցագործության զոհերին իրավական և վարչական պաշտպանության կառուցակարգերի մատչելիության ապահովումը, անհրաժեշտ տեղեկատվության տրամադրման ապահովումը, ոչ պաշտոնական կառուցակարգերի օգտագործումը, ռեստիտուցիայի, փոխհատուցման և սոցիալական օգնության ապահովումը:

[2] «Victim» բառն անգլերենից հայերեն թարգմանվում է թե՛ որպես զոհ, թե՛ որպես տուժող, ինչը որոշակի խառնաշփոթ է առաջացնում: Սույն ձեռնարկում միջազգային օրենսդրություն ներկայացնելիս կիրառվելու է «զոհ» եզրույթը, իսկ ազգային օրենսդրությունը ներկայացնելիս՝ և՛ «տուժող», և՛ «զոհ» եզրույթները, ինչի վերաբերյալ մեկնաբանությունները կներկայացվեն 2-րդ թեմայում:

Միլանում 1985թ.-ին անցկացված ՄԱԿ-ի 7-րդ Կոնգրեսում ընդունվել է «Հանցագործությունների նախազգուշացումը և քրեական արդարադատության ղեկավար սկզբունքները նոր միջազգային տնտեսական կարգի զարգացման համատեքստում» հանձնարարականը, որտեղ հանցագործության զոհերին նվիրված է առանձին բաժին, որում պետություններին առաջարկվում է հանցագործության զոհերի արդյունավետ իրավական պաշտպանության միջոցներով, ներառյալ՝ հանցագործության հետևանքով նրանց պատճառված վնասների հատուցումն ապահովելու նպատակով ձեռնարկել անհրաժեշտ բոլոր օրենսդրական և այլ միջոցառումներ:

ՄԱԿ-ի 8-րդ Կոնգրեսում ընդունվել է «Միջազգային ահաբեկչության դեմ պայքարի միջոցառումների մասին» փաստաթուղթ, որի երեք բաժիններից երկուսը վերաբերում են տուժողների և վկաների պաշտպանությանը:

ԵԽ-ի շրջանակներում դեռ 1983թ.-ի նոյեմբերի 24-ին ընդունվել է «Բռնությամբ կատարված հանցագործության զոհերին հասցված վնասների փոխհատուցման մասին» Եվրոպական կոնվենցիան, որն անդրադառնում է բռնությամբ կատարված դիտավորյալ հանցագործությունների զոհերին և նրանց պատճառված վնասների հատուցմանը: Կոնվենցիայում նորմատիվ ամրագրում ստացած սկզբունքի համաձայն՝ պետությունն ապահովում է հանցագործության զոհերի վնասների փոխհատուցման իրավունքը, եթե այդ վնասների փոխհատուցումը չի կարող ապահովվել այլ աղբյուրներից (հոդված 2):

ԵԽ-ի նախարարների կոմիտեն 1997թ.-ի սեպտեմբերի 10-ին ընդունել է «Վկաներին ահաբեկելու և պաշտպանության իրավունքի ապահովման» մասին N R(97)13 հանձնարարականը, որտեղ տրվում են քննարկվող ոլորտում էական նշանակություն ունեցող մի շարք հասկացությունների բնորոշումներ, օրինակ՝ «ահաբեկել» հասկացությունը մեկնաբանվում է ցանկացած վկային հասցեագրված ուղղակի և անուղղակի կամ հնարավոր սպառնալիք, որը խոչընդոտում է վկային կատարե-

լու իր քաղաքացիական պարտքը: «Ահաբեկել» հասկացությունը ներառում է՝ (1) բռնի հանցագործություններ կատարող կազմակերպության համբավ ունեցող այնպիսի հանցավոր խմբի գոյության փաստը, որն ի զորու է ցանկացածից վրեժխնդիր լինել, (2) խոցելի սոցիալական խմբին վկայի պատկանելիության փաստը»:

ԵԽ-ի նախարարների կոմիտեն 2005թ.-ի փետրվարի 20-ին ընդունել է «Վկաների և արդարադատությանն աջակցող անձանց պաշտպանության մասին» N R(2005)9 հանձնարարականը, որտեղ հատուկ ուշադրություն է դարձվում վկաների ինքնությունը հաստատող տվյալների գաղտնագրման և մեղադրյալի պաշտպանության իրավունքի հավասարակշռման հարցերին:

ԱՊՀ անդամ պետությունների միջխորհրդարանական վեհաժողովն 1997թ.-ի դեկտեմբեր 6-ին ընդունել է «Տուժողների, վկաների և քրեական դատավարությանն աջակցող այլ անձանց պետական պաշտպանության մասին» մոդելային օրենքը, որի 5-րդ հոդվածի համաձայն՝ պաշտպանվող անձանց նկատմամբ կիրառվող անվտանգության միջոցներն են՝ պաշտպանվող անձի մասին տեղեկություններ չհրապարակելը, դռնփակ դատական նիստում գործերի քննությունը, պաշտպանվող անձի անձնական պաշտպանությունը, բնակարանի և գույքի պահպանությունը, պաշտպանվող անձի հեռախոսային խոսակցությունները լսելը, պաշտպանվող անձին զենք, անհատական պաշտպանության հատուկ միջոցներ, կապի և վտանգի մասին ազդարարող հատուկ միջոցներ տրամադրելը, տեղեկատվական-տեղեկատու շտեմարաններից պաշտպանվող անձի մասին տեղեկությունների տրման ժամանակավոր արգելքը, պաշտպանվող անձի վերաբնակեցումը բնակության այլ վայր, փաստաթղթերի փոխարինումը, պաշտպանվող անձի արտաքինի փոփոխումը, պաշտպանվող անձի աշխատանքի (ծառայության) կամ ուսման վայրի փոփոխումը, պաշտպանվող անձի ժամանակավոր տեղավորումն անվտանգ

վայրում[3]:

Որոշ դեպքերում դժվար է տարանջատել տուժողին և վկային: Սա հատկապես կարևոր է երկու իրավիճակներում.

1. Ընտանեկան բռնության դեպքեր. այս դեպքերի վերաբերյալ վիճակագրությունը ցույց է տալիս, որ զոհերի մեծամասնությունը կանայք են, այնուամենայնիվ, երեխաները, ովքեր ստիպված են եղել ցուցմունք տալ իրենց մայրերի կամ քույրերի նկատմամբ բռնության ենթարկվելու վերաբերյալ, մինչև վերջերս համակարգված չէին դիտարկվում որպես զոհեր, չնայած ապացույցներն ակնհայտ վկայում են, որ նրանք նույնպես վնաս են կրում այդ բռնության ազդեցությունից: Վերջերս ընտանեկան բռնության սահմանումները ճշգրտվել են, որպեսզի պաշտպանեն նաև այս անձանց՝ ականատեսներին: Սա հիմնականում պայմանավորված է 2011թ.-ի մայիսի 11-ին «Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման ու դրա դեմ պայքարի մասին» ԵԽ կոնվենցիայով, որը հատուկ անդրադառնում է անձանց այս խնդրին՝ ընդունելով, որ «երեխաներն ընտանեկան բռնության վկա են, ինչն ենթադրում է նաև ընտանիքում բռնությանը զոհ լինելը»: Հետևաբար, անհրաժեշտ է գիտակցել այն ուղղակի վնասները, որոնք կրում է երեխան, երբ ներկա է գտնվում բռնության իրականացմանը. երբ ծնողներից մեկը բռնանում է մյուսի

[3] Պաշտպանության միջոցների միջազգային իրավական հիմքերի մասին մանրամասն տե՛ս՝ Брусницын Л.В. Обеспечение безопасности лиц, содействующих уголовному правосудию: мировой опыт и развитие российского законодательства (процессуальное исследование). Монография. М.: Юрлитинформ, 2010, էջեր 57-89; ՀՀ քրեական դատավարություն. Մաս 1/ Գիտական խմբագիր Ա. Ղամբարյան, Երևան, 2016, էջեր 319-323 և այլն:

նկատմամբ, ապա երեխան ոչ միայն ականատես է լինում այդ դեպքին, այլ նաև ենթարկվում է հոգեբանական բռնության: Համանման է վիճակը, երբ բռնությունը կիրառվում է երեխայի նկատմամբ ծնողի ներկայությամբ, կամ ցանկացած այն դեպքում, երբ մերձավոր ազգականի նկատմամբ բռնանում են այն մերձավոր ազգականի ներկայությամբ, ով կարեկցում, սիրում և հարգում է այդ ազգակցականին և ում համար վերջինիս բարեկեցությունը կարևոր նշանակություն ունի:

2. Մյուս իրավիճակը, որը կարևոր է ընդլայնել «զոհ» եզրույթի ընկալումը՝ վկաներին պաշտպանելու համար, ահաբեկչության դեպքերն են: Մասնավորապես, ահաբեկչությանն ականատես լինելը տրավմատիկ է նույնիսկ այն դեպքում, երբ անձը չի վնասվում: Սա ապացուցված է փաստերով և հետազոտություններով[4], որոնք ցույց են տալիս, որ ընտանիքի անդամները կրում են նույն հետևանքները, ինչպես ահաբեկչության անմիջական զոհերը, բացառությամբ ֆիզիկական վնասվածքներից: Սովորաբար, ներպետական օրենսդրությունը թույլ է տալիս, որ ահաբեկչության կատարման վայրում գտնվող բոլոր անձինք ճանաչվեն տուժողներ՝ անկախ նրանց մոտ վնասվածքների առկայության հանգամանքից: Օրինակ՝ Բրյուսելի մետրոյում 2016թ.-ին տեղի ունեցած հարձակումից հետո իշխանությունները որոշեցին, որ հարձակման ենթարկված գնացքի մեջ գտնվող բոլոր անձինք տուժող են՝ փոխհատուցման, աջակցության և քրեական դատավարության նպատակներով:

[4] Տե՛ս՝ Barker A. and Dinisman T., Meeting the needs of survivors and families bereaved through terrorism/ https://www.victimsupport.org.uk/sites/default/files/Victim%20Support_Meeting%20the%20needs%20of%20survivors%20and%20families%20bereaved%20thro....pdf:

Այնուամենայնիվ, ապացույցները ցույց են տալիս, որ այն անձինք, ովքեր բաց են թողել հենց այդ գնացքը և, այդպիսով, «զերծ մնացել» անմիջական ազդեցությունից, ինչպես նաև այն մարդիկ, ովքեր Մաելբեկ կայարանում սպասում էին և կմեկնեին այդ գնացքով, եթե հարձակվողը որոշեր ռումբը պայթեցնել նրանց նստեուց հետո, նույնպես ենթարկվեցին հոգեբանական տրավմայի, հետվնասվածքային սթրեսային խանգարումների և այլ բարդությունների: Այնուամենայնիվ, այդ մարդիկ Բելգիայի իշխանությունների կողմից խիստ իմաստով (stricto sensu) չեն համարվել «տուժողներ»:

Վկաների և տուժողների իրավունքների պաշտպանության ուսումնասիրության համատեղությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ միջազգային պրակտիկան տուժողների և վկաների (մասնավորապես՝ ծանր և առանձնապես ծանր հանցագործության վկաների) նկատմամբ դրսևորում է նույն մոտեցումը՝ խրախուսելով պետություններին վկաներին դիտել նաև որպես հավանական տուժողներ: Առավելապես, երբ խոսվում է ծանր հանցագործության ականատեսների մասին, օրինակ՝ երեխան, ով ականատես է ընտանեկան բռնության: Տվյալ դեպքում նա նույնպես ենթարկվել է հոգեբանական տրավմայի:

ՄԻԵԿ-ի համատեքստում «վկա» հասկացության տակ ընկալվում են՝

- միևնույն գործով այլ մեղադրյալը (Տրոֆիմովն (Trofimov) ընդդեմ Ռուսաստանի, դատավճիռ՝ 4 դեկտեմբերի 2008թ.),
- տուժողը (Ռոմանովն (Romanov) ընդդեմ Ռուսաստանի, դատավճիռ՝ 24 հուլիսի 2008թ.),
- փորձագետը (Դուրսն (Durs) ընդդեմ Նիդեռլանդների, դատավճիռ՝ 26 մարտի 1996թ.)[5]:

[5] Մելքոնյան Դ., Հարությունյան Ս. ՄԻԵԴ նախադեպային իրավունքի հիմնահարցերը քրեական գործերով, Երևան, 2015, էջ 89:

▶ Հանցագործության տուժողը կամ վկան չպետք է վախենա իր կյանքի, առողջության, ազատության, անձեռնմխելիության համար: Այդ արժեքները չպետք է վտանգված լինեն բողոք ներկայացնելու կամ ցուցմունք տալու իր իրավունքն իրականացնելու արդյունքում և/կամ դրա հետևանքով:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ քր. դատ. օր.) 58-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ տուժող է ճանաչվում այն անձը, ում քրեական օրենսգրքով չթույլատրված արարքով անմիջականորեն պատճառվել է բարոյական, ֆիզիկական կամ գույքային վնաս: Տուժող է ճանաչվում նաև այն անձը, ում կարող էր անմիջականորեն պատճառվել բարոյական, ֆիզիկական կամ գույքային վնաս, եթե ավարտվեր քրեական օրենսգրքով չթույլատրված արարք կատարելը:

Անձը «տուժող» ճանաչվում է վարույթն իրականացնող մարմնի կողմից՝ կատարվող ստուգողական գործողությունների արդյունքում պարզելով, որ անձի իրավունքների խախտումը քրեական օրենքով արգելված արարքի կատարման հետևանք է, և այդ արարքի կատարման հետևանքով անձին անմիջականորեն պատճառվել է կամ կարող էր պատճառվել բարոյական, ֆիզիկական կամ գույքային վնաս:

Քրեաիրավական հարաբերության որևէ սուբյեկտի քրեական գործով տուժող ճանաչելու համար նախևառաջ անհրաժեշտ է, որ այն լինի ֆիզիկական կամ իրավաբանական անձ, այնուհետև պարզել՝ նրան հանցագործությամբ պատճառվե՞լ է արդյոք այնպիսի գույքային, ֆիզիկական կամ բարոյական վնաս (իրավաբանական անձի դեպքում՝ բարոյական և նյութական վնաս), որը նախատեսված է հենց քրեական օրենսգրքի համապատասխան հանցակազմում, որպես դրա պարտադիր հատկանիշ, և որի պատճառման համար նախատեսված է քրեական պատիժ (անմիջական պատճառական կապը), և որը հիմք է ՀՀ քր. դատ. օր.-ի 58-րդ հոդվածի և 59-րդ հոդվածի

5-րդ մասի ուժով նրան քրեական դատավարությունում տուժող ճանաչելու համար: Այլ կերպ ասած՝ տուժող ճանաչելու որոշում կայացնելիս իրավասու սուբյեկտի տրամադրության տակ պետք է լինեն բավարար հիմքեր առ այն, որ հանցագործությունից վնաս է կրել հենց ֆիզիկական կամ իրավաբանական անձը, և որ այդ վնասը հանցակազմի հատկանիշ հանդիսացող այն վնասն է (վնասները), որը (որոնք) պատճառվել է (են) անմիջականորեն հանցագործությամբ և սահմանված է (են) ՀՀ քր. դատ. օր.-ի 58-րդ հոդվածով և 59-րդ հոդվածի 5-րդ մասով, և որի (որոնց) առաջացման համար անձն ենթակա է քրեական պատժի[6]:

ՀՀ քր. դատ. օր.-ի նախագծի[7] 6-րդ հոդվածի 26-րդ կետի համաձայն՝ տուժող է համարվում ֆիզիկական կամ իրավաբանական անձը, պետությունը, համայնքը կամ միջազգային կազմակերպությունը, ում վերաբերյալ բավարար հիմքեր կան ենթադրելու, որ ենթադրյալ հանցանքով նրան պատճառվել է վնաս կամ կարող էր պատճառվել՝ ենթադրյալ հանցանքն ավարտին հասցնելու դեպքում:

Այսինքն՝ ՀՀ քր. դատ. օր.-ի նախագծով առավել ընդլայնվել է տուժողների շրջանակը, ինչը հնարավորություն կընձեռի ապագայում առավել արդյունավետ պաշտպանություն տրամադրել: Բացի տուժողների շրջանակն ընդլայնելուց, նախագիծը չի պահանջում, որ վնասն անմիջականորեն պատճառվի, այսինքն՝ հնարավոր է տուժող ճանաչվի նաև այն անձը, ում վնասը պատճառվել է միջնորդավորված կամ անուղղակի:

Հանրահայտ է, որ ցանկացած հանցագործության հանրային վտանգավորության աստիճանը բնութագրող հիմնական ցուցանիշն այն վնասն է, որ հասցնում է այդ հանցագործությունը (ներառելով հանցագործության վտանգավոր հետևանքները, վնասի չափը, բնույթը, ծանրության աստի-

[6] Մարաբյան Ս., Թումասյան Դ., Գևորգյան Դ. Երեխաների նկատմամբ բռնության բնութագիրը և քննության առանձնահատկությունները, Երևան, 2019, էջ 106:

[7] https://www.e-draft.am/projects/2085/about:

ճանը): Օրենսդրությամբ այդ վնասը հաճախ հստակ ձևակերպված լինելով (առողջությանը ծանր վնաս հասցնել, մահ, նյութական վնաս և այլն), գործնականում պահանջում է որոշակի ջանքեր այդ վնասի, մասնավորապես՝ նյութական վնասի, չափն ամբողջությամբ պարզելու համար, քանի որ այն ձևավորվում է ոչ միայն անմիջականորեն պատճառված վնասից, այլ նաև բացթողնված օգուտից, պատճառված վնասի առնչությամբ կատարվող լրացուցիչ ծախսերից, երրորդ անձանց պատճառված վնասներից և այլն:

Օ.Ս. Իոֆֆեն վնաս է համարում ոչ թե ցանկացած, այլ միայն այն բացասական հետևանքները, որը մեկ անձը կրում է մեկ ուրիշի ոչ իրավաչափ վարքագծի հետևանքով[8]:

Բացասական հետևանքները կարող են ունենալ նաև գույքային արտահայտություն, և դրանք պետք է հաշվարկվեն:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վնասներ են. իրավունքը խախտված անձի ծախսերը, որ նա կատարել է կամ պետք է կատարի խախտված իրավունքը վերականգնելու համար, նրա գույքի կորուստը կամ վնասվածքը (իրական վնաս), չստացված եկամուտները, որոնք այդ անձը կստանար քաղաքացիական շրջանառության սովորական պայմաններում, եթե նրա իրավունքը չխախտվեր (բաց թողնված օգուտ), ինչպես նաև ոչ նյութական վնասը:

Ինչպես արդարացիորեն նշվում է՝ վնասները տուժողի համար առաջացող այն անբարենպաստ բացասական հետևանքներն են (դրամական գնահատման ենթակա կորուստներ և չստացած եկամուտներ), որոնք առաջանում են օրենքով պահպանվող իրավունքների խախտման դեպքում[9]: Այսինքն՝ վնասը բաղկացած կարող է լինել դրամական գնահատման ենթակա կորուստներից և չստացած եկամուտներից, այն էլ պատճառված ոչ միայն տուժողին, այլ նաև այլ անձանց:

---

8 Иоффе О.С Обязательственное право. М., 1975, էջ 100:

9 Բարսեղյան Տ. Գույքային պատասխանատվության էվոլյուցիան և արդիական հիմնահարցերը: Երևան, Երևանի համալս. հրատ., 2006, էջ 148:

Նման հետևությունը համահունչ է ոչ միայն «վնաս» կատեգորիայի քաղաքացիաիրավական կարգավորմանը, այլև բխում է վնասների փոխհատուցման միջազգային իրավական ակտերով կարգավորվածության բնույթից[10]: Մասնավորապես՝ Միջազգային առևտրական պայմանագրի սկզբունքների 7.4.2. հոդվածի համաձայն՝ վնասներ են համարվում տուժողի մոտ իրավախախտման հետևանքով առաջացած ցանկացած կորուստ և չստուգված եկամուտ:

Հաշվի առնելով, որ ՀՀ-ում տուժողը դատավարական կարգավիճակ է, այն առաջացնում է լրացուցիչ մեկնաբանման անհրաժեշտություն՝ ելնելով կիրառվող այլ եզրույթների մեկնաբանությունից:

Թեմա 2. «Տուժող» և «զոհ» հասկացությունների հարաբերակցությունը

Կախված իրավական համակարգից՝ տուժողները կարող են հայտնվել տարբեր կարգավիճակներում և ունենալ տարբեր դերեր դատավարության ժամանակ: Ավանդաբար, զոհերը կարող են մասնակցել քրեական դատավարությանը որպես վկա կամ որպես տուժող: «Տուժող» հասկացությունը կախված է ազգային իրավական համակարգից և հիմնականում կարող է համապատասխանել Զոհերի իրավունքների ԵՄ հրահանգով ձևակերպված «զոհ» սահմանմանը: «Զոհ» հասկացությունը, իր ավանդական իմաստով, արդեն արդիական չէ և հանդիսանում է խոսակցական հասկացություն, մինչդեռ «տուժող» եզրույթն դատավարական հասկացություն է, որն իրավական տեսանկյունից ունի դատավարական հատուկ իրավունքներ և պարտավորություններ:

Ասվածն ամենևին չի նշանակում, որ «զոհ» եզրույթը չպետք է օգտագործվի նաև իրավաբանական գրականությունում, ուղղակի այս իմաստով այն կունենա տարբերվող մեկնաբանություն:

[10] Принципы международных договоров. М., 2003, էջեր 217-218:

Բացառություն չէ նաև Հայաստանը, որտեղ «զոհ» եզրույթը կիրառվում է, օրինակ, 2014թ.-ի դեկտեմբերի 17-ին ընդունված **«Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման ենթարկված անձանց նույնացման և աջակցության մասին»** ՀՀ օրենքում և այլ իրավական ակտերում:

Զոհերի իրավունքների հրահանգի համաձայն՝ Եվրոպական շատ իրավական համակարգերում «տուժող» հասկացությունը համապատասխանում է զոհ հասկացությանը[11]: Այնուամենայնիվ, ելնելով տուժող կողմի քրեական դատավարության ընթացքում որոշակի դատավարական նշանակության սահմանումներից, զոհերի որոշ իրավունքներ քիչ թե շատ պաշտպանված կլինեն: Օրինակ՝ Սերբիայի քրեական դատավարության օրենսգիրքը չի նշում «զոհ», այլ կիրառում է «տուժող կողմ» հասկացությունը, չնայած երկուսի մեկնաբանությունն էլ հիմնականում համընկնում են: Այնուամենայնիվ, տուժողի կարգավիճակը կարող է պաշտոնապես ճանաչվել միայն նրանից հետո, երբ նախաձեռնվել/սկսվել է քրեական դատավարությունը: Միևնույն ժամանակ, շատ դեպքերում ոստիկանությունը կարող է ձեռնարկել մի շարք քննչական գործողություններ՝ մինչև քրեական գործ հարուցելը:

ՀՀ-ում «հանցագործության զոհ» եզրույթը դատավարական եզրույթ չէ, այն կիրառվում է իրավական այլ ընթացակարգերում: Օրինակ՝ **«Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման ենթարկված անձանց նույնացման և աջակցության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ զոհը մարդկանց թրաֆիքինգի և(կամ) շահագործման ենթարկված անձն է, ով այդպիսին ճանաչվել է Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման զոհերի նույնացման հանձնաժողովի որոշմամբ: Նույն օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝** մարդուն զոհ կամ հատուկ կատեգորիայի զոհ ճանաչելը և քրեադատավարական նորմերին համապատասխան նրան տուժող ճանա-

[11] Համեմատական վերլուծության համար տե՛ս՝ VOCIARE report for comparative analysis/ «Հանցագործության զոհերի իրավունքների վերլուծություն Եվրոպայում» հաշվետվությունը:

չելը տարբեր նպատակներ հետապնդող գործընթացներ են և որևէ կերպ չեն կարող բխել միմյանցից, սակայն դրանց համար հիմք համարվող տեղեկությունները կարող են փոխադարձաբար օգտագործվել, եթե այդ տեղեկությունների օգտագործումն արգելված չէ օրենքով: **Նշված հոդվածից հստակ բխում է, որ «մարդկանց թրաֆիքինգի զոհ» հասկացությունն օգտագործվում է քրեական դատավարությունից դուրս՝ զոհերի նույնականացման գործընթացում:**

Վերը նշված իրավակարգավորումները չեն բացառում, որ քաղաքացիական դատավարության շրջանակներում այս հանգամանքը կարող է ոչ միայն օգտագործվել, այլ նաև վճռորոշ լինել տարաբնույթ հարցեր քննարկելիս, մասնավորապես՝ գույքային վեճերի լուծման պարագայում, օրինակ՝ քաղաքացիական հայցի ներկայացման, պետության դեմ հայց ներկայացնելիս՝ պետության կողմից ստանձնած պարտականությունները կատարելու համար և այլն:

Իհարկե, անհրաժեշտության դեպքում Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման զոհերի նույնացման հանձնաժողովի որոշումը՝ ՀՀ քր. դատ. օր.-ի 122-րդ հոդվածի համաձայն, կարող է ճանաչվել ապացույց՝ այլ փաստաթուղթ:

«Հանցագործությունից տուժած» հասկացությունն օգտագործվում է քրեական գործ հարուցելու հարցի լուծման փուլում, իսկ «տուժող» հասկացությունը՝ նախնական քննության և դատական քննության ընթացքում: Այսպես՝ ՀՀ քր. դատ. օր.-ի 182-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե այդ պահին հայտնի է հանցագործությունից տուժած անձը, քրեական գործ հարուցելու հետ միաժամանակ այդ անձը ճանաչվում է տուժող, իսկ եթե հանցագործության մասին հաղորդման հետ միաժամանակ ներկայացված է քաղաքացիական հայց, այդ անձը նույն որոշմամբ ճանաչվում է նաև քաղաքացիական հայցվոր[12]:

[12] ՀՀ քրեական դատավարություն: Մաս 1/ Գլխ. խմբագիր Ա. Ղամբարյան, Երևան, Տիգրան Մեծ, 2016, էջեր 218-219:

Տուժողն իրավունք ունի՝

1) ծանոթանալ առաջադրված մեղադրանքին.
2) տալ ցուցմունքներ.
3) տալ բացատրություններ.
4) ներկայացնել նյութեր քրեական գործին կցելու և հետազոտելու համար.
5) հայտնել բացարկներ.
6) հարուցել միջնորդություններ.
7) առարկել քրեական վարույթն իրականացնող մարմինների գործողությունների դեմ և պահանջել իր առարկությունները մտցնել քննչական կամ այլ դատավարական գործողության արձանագրության մեջ.
8) ծանոթանալ քննչական և այլ դատավարական գործողությունների արձանագրություններին, որոնց նա մասնակցել է և դիտողություններ ներկայացնել արձանագրությունում գրառումների ճշտության և լրիվության կապակցությամբ, քննչական և այլ դատավարական գործողությանը մասնակցելու, դատարանի նիստին ներկա գտնվելու դեպքում պահանջել նշված գործողության կամ դատարանի նիստի արձանագրության մեջ գրառումներ կատարել այն հանգամանքների մասին, որոնք, իր կարծիքով, պետք է նշվեն, ծանոթանալ դատական նիստի արձանագրությանը և ներկայացնել դրա մասին իր դիտողությունները.
9) նախաքննության ավարտման պահից ծանոթանալ գործի բոլոր նյութերին, դրանցից պատճեններ հանել և գործից դուրս գրել ցանկացած ծավալի ցանկացած տեղեկություններ.
10) մասնակցել առաջին ատյանի և վերաքննիչ դատարանների նիստերին.

11) իր խնդրանքով անվճար ստանալ քրեական գործը կարճելու, քրեական հետապնդումը դադարեցնելու, որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշումների պատճենները, մեղադրական եզրակացության կամ եզրափակիչ որոշման պատճենը, ինչպես նաև դատավճռի կամ դատարանի՝ այլ վերջնական որոշման պատճենը.

12) բողոքարկել հետաքննության մարմնի, քննիչի, դատախազի, դատարանի գործողությունները և որոշումները, այդ թվում՝ դատավճիռը և դատարանի այլ վերջնական որոշումը.

13) սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում հաշտվել կասկածյալի և մեղադրյալի հետ.

14) առարկություններ ներկայացնել դատավճռի կամ դատարանի՝ այլ վերջնական որոշման դեմ բերված դատավարության այլ մասնակիցների բողոքների վերաբերյալ.

15) օրենքով սահմանված կարգով ստանալ քրեական օրենսգրքով չթույլատրված արարքով պատճառված վնասի փոխհատուցումը.

16) ստանալ քրեական գործով վարույթի ընթացքում կրած ծախսերի հատուցումը.

17) հետ ստանալ քրեական վարույթն իրականացնող մարմնի կողմից որպես իրեղեն ապացույց կամ այլ հիմքերով վերցված գույքը, իրեն պատկանող պաշտոնական փաստաթղթերի բնօրինակները.

18) ունենալ ներկայացուցիչ և դադարեցնել ներկայացուցչի լիազորությունները[13]:

[13] Նախագծի 50-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ տուժողն իրավունք ունի՝

Տուժողը պարտավոր է՝

1) ներկայանալ քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով.

2) քրեական վարույթն իրականացնող մարմնի պահանջով տալ ցուցմունքներ.

1) ծանոթանալ մեղադրյալին ներկայացված մեղադրանքին.
2) տալ ցուցմունք.
3) հրաժարվել ցուցմունք տալուց կամ նյութեր տրամադրելուց, եթե դրանք հետագայում կարող են օգտագործվել կամ մեկնաբանվել ի վնաս իրեն, իր ամուսնու կամ մերձավոր ազգականի.
4) վարույթի նյութերին կցելու և հետազոտելու համար ներկայացնել ապացույցներ.
5) հարուցել միջնորդություններ.
6) հայտնել բացարկներ.
7) ունենալ լիազոր ներկայացուցիչ և դադարեցնել նրա լիազորությունները.
8) անվճար ստանալ իր կարգավիճակին վերաբերող դատավարական ակտերի պատճենները.
9) առարկել վարույթի հանրային մասնակիցների գործողությունների դեմ.
10) ծանոթանալ իր մասնակցությամբ կատարված ապացուցողական և այլ վարութային գործողության արձանագրությանը, դիտողություններ ներկայացնել այդ արձանագրությունում գրառումների ճշտության և լրիվության կապակցությամբ, ծանոթանալ դատական նիստի արձանագրությանը և ներկայացնել դրա վերաբերյալ իր դիտողությունները, ապացուցողական և այլ վարութային գործողությանը մասնակցելու, դատական նիստին ներկա գտնվելու դեպքում պահանջել համապատասխան արձանագրության մեջ կատարել իր մատնանշած հանգամանքների մասին գրառումներ.
11) անվճար ստանալ քրեական հետապնդում հարուցելու, չհարուցելու, այն դադարեցնելու կամ կասեցնելու, ինչպես նաև քրեական վարույթը կարճելու մասին որոշումների պատճենները, մեղադրական եզրակացության, եզրափակիչ ակտի կամ եզրափակիչ դատական ակտի պատճենը.
12) իր խնդրանքով անվճար ստանալ իր մասնակցությամբ կատարված ապացուցողական և այլ վարութային գործողության արձանագրության, ինչպես նաև փորձաքննություն նշանակելու մասին որոշման և փորձագետի եզրակացության պատճենները.
13) նախաքննության ավարտման պահից ծանոթանալ վարույթի բոլոր նյութերին, իր խնդրանքով դրանցից անվճար ստանալ պատճեններ կամ դուրս գրել ցանկացած տեղեկություն.
14) դատական նիստի անցկացման վայրի և ժամանակի մասին ստանալ պատշաճ ծանուցում.
15) ներկա լինել առաջին ատյանի, վերաքննիչ և վճռաբեկ դատարանների նիստերին, մասնակցել ապացույցների հետազոտմանը, հանդես գալ եզրափակիչ ելույթով.

3) քրեական վարույթն իրականացնող մարմնի պահանջով ներկայացնել իր մոտ եղած առարկաները, փաստաթղթերը, ինչպես նաև նմուշները՝ համեմատական հետազոտման համար.

4) իր նկատմամբ ենթադրաբար կատարված հանցագործության մասին քրեական գործով քրեական վարույթն իրականացնող մարմնի պահանջով ենթարկվել քննման.

5) քրեական վարույթն իրականացնող մարմնի պահանջով ենթարկվել արտահիվանդանոցային փորձաքննության՝ ստուգելու համար քրեական գործով բացահայտման ենթակա հանգամանքները ճիշտ ընկալելու և վերարտադրելու նրա ունակությունը, եթե հիմքեր կան կասկածի տակ դնելու նրա մոտ այդպիսի ունակության առկայությունը.

16) բողոքարկել վարույթի հանրային մասնակիցների և դատարանի վարութային ակտերը, այդ թվում՝ եզրափակիչ դատավարական ակտերը.
17) հետ վերցնել իր կամ իր լիազոր ներկայացուցչի ներկայացրած բողոքը.
18) տեղեկացվել վարույթի այլ մասնակցի կողմից բերված և իր շահերին առնչվող վերանայման բողոքի մասին, դրա վերաբերյալ ներկայացնել պատասխան.
19) դատական նիստում կարծիք հայտնել վարույթի այլ մասնակիցների միջնորդությունների և հայտարարությունների վերաբերյալ.
20) առարկել վարույթի այլ մասնակիցների կամ դատական նիստը նախագահողի գործողությունների դեմ.
21) սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում հաշտվել մեղադրյալի հետ.
22) իրեն ենթադրաբար պատճառված վնասը հատուցելու նպատակով գույքային հայց ներկայացնել դատարան, մինչև ապացույցների հետազոտման ավարտը փոփոխել գույքային հայցը, ինչպես նաև մինչև դատարանի առանձին սենյակ հեռանալը հրաժարվել գույքային հայցից.
23) ստանալ հանցագործությամբ պատճառված վնասի հատուցում.
24) ստանալ վարույթի ընթացքում կրած ծախսերի հատուցում.
25) հետ ստանալ վարույթն իրականացնող մարմնի կողմից վերցված և իրեն պատկանող գույքը և փաստաթղթերի բնօրինակները.
26) օրենքով նախատեսված դեպքերում ազատվել իր ներկայացուցչի ծառայությունների դիմաց վճարելու պարտականությունից.
27) իր, ինչպես նաև իր ընտանիքի անդամի կամ այլ մերձավոր անձի կյանքին, առողջությանը և իրավաչափ շահերին սպառնացող վտանգի դեպքում վարույթն իրականացնող մարմնից հայցել հատուկ պաշտպանություն.
28) իրականացնել սույն օրենսգրքով իրեն վերապահված այլ իրավունքներ:

6) ենթարկվել դատախազի, քննիչի, հետաքննության մարմնի, դատական նիստը նախագահողի իրավաչափ կարգադրություններին.

7) դատարանի նիստում պահպանել կարգուկանոն[14]:

ՀՀ օրենսդրությունում կիրառվում է նաև «բռնության ենթարկված անձ» հասկացությունը, որը նույնպես չի հանդիսանում դատավարական կատեգորիա: Այս եզրույթն օգտագործվում է, օրինակ, 2017թ.-ի դեկտեմբերի 13-ին ընդունված «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքում, որի 4-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն՝ ընտանիքում բռնության ենթարկված անձ է համարվում ֆիզիկական անձը, որը, ըստ նախազգուշացման, անհետաձգելի միջամտության, պաշտպանական որոշման կամ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռի, տուժել է ընտանիքում բռնությունից:

«Զոհ» և «բռնության ենթարկված անձ» հասկացությունները հիմնականում կիրառվում են սոցիալական աջակցության և օգնության տրամադրման ընթացքում և պայմանավորում են մինչդատավարական ընթացակարգերի արդյունավետ իրականացման նախապայմանը:

[14] Նախագծի 50-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ տուժողը պարտավոր է՝

1) ներկայանալ վարույթն իրականացնող մարմնի հրավերով.
2) տալ ցուցմունք.
3) վարույթն իրականացնող մարմնի պահանջով փորձաքննության համար հանձնել սույն օրենսգրքով նախատեսված նմուշներ, ենթարկվել քննման և փորձաքննության.
4) վարույթն իրականացնող մարմնի պահանջով ենթարկվել արտահիվանդանոցային փորձաքննության՝ ստուգելու համար վարույթի ընթացքում բացահայտման ենթակա հանգամանքները ճիշտ ընկալելու, հիշելու և վերարտադրելու նրա ունակությունը, եթե հիմքեր կան կասկածի տակ դնելու նրա այդպիսի ունակությունը.
5) այլ վայր մեկնելիս վարույթն իրականացնող մարմնին նախապես տեղեկացնել իր գտնվելու նոր վայրի և իր հետ հաղորդակցվելու միջոցների մասին.
6) ենթարկվել վարույթն իրականացնող մարմնի կարգադրություններին և դատական նիստի կարգին:

Թեմա 3. Տուժողի դերը քրեական դատավարությունում

Ավանդաբար, տուժողը հանդիսանում էր հանցագործին պատասխանատվության ենթարկելու «գործիք» իրավապահ համակարգի համար, ում միջոցով հնարավոր է լինում «անհերքելի ապացույցներ» ձեռք բերել անձի մեղավորության վերաբերյալ: Քրեական արդարադատության նախնական հրահանգի համաձայն՝ պետության դերը եղել է դատապարտել հանցագործին, իսկ տուժողի միակ դերը՝ հանդես գալ որպես վկա, և ինչպես ցանկացած այլ վկա, նրանք համարվել են պարզապես ապացույց տրամադրող անձինք: Վերջին տասնամյակների ընթացքում այս մոտեցումն էականորեն փոխվել է, մասնավորապես՝ միջազգային հանրության և նրա կողմից ընդունված բազմաթիվ փաստաթղթերի հիման վրա:

Իրավական համակարգում տուժողների դերը քրեական դատավարության գործընթացներում աճում է: ԵՄ հիմնարար իրավունքների գործակալության (այսուհետ՝ ՀԻԳ) զեկույցն երկրները բաժանում է երեք խմբի՝ պայմանավորված քրեական դատավարություններում տուժողների մասնակցության աստիճանով:

1. ԵՄ անդամ պետություններ, որոնք ընդունել են օրենսդրություն հանցագործության զոհերի հայեցակարգի, նրանց իրավունքների ոտնահարման վերաբերյալ: Այդ պետություններից են Ավստրիան, Գերմանիան, Լեհաստանը և Պորտուգալիան, որոնք համարվում են «1-ին տիպի» երկրներ: Նման համակարգում տուժողներն իրավունք ունեն ակտիվ մասնակցել քրեական դատավարությանը որպես կողմ՝ օգտվելով դատախազի հետ հավասարազոր լիազորություններից, որոշակի բացառություններով:
2. «2-րդ տիպի» երկրներ, օրինակ՝ Նիդեռլանդները և Միացյալ Թագավորությունը, որտեղ դիտարկվում է վնասը, որը զոհը կրել է հանցագործության արդյունքում, և հաշ-

վի են առնվում զոհերի առանձնահատուկ կարիքները: Այս երկրները տուժողին չեն ընկալում որպես քրեական դատավարության կողմ, հետևաբար, այս մոդելում քրեական արդարադատությունը գործում է պետության՝ ի դեմս հանրային դատախազի, և ամբաստանյալի միջև:

2. «3-րդ տիպի» երկրներ, օրինակ՝ Ֆրանսիան, որտեղ զոհի մասնակցությունը քրեական դատավարությանն իրականացվում է ըստ պատճառված վնասի և ոչ թե ըստ զոհի հետ տեղի ունեցած դեպքի: Զոհը հանդես է գալիս որպես հայցվոր, որը քաղաքացիական գործ է հարուցում հանցագործի դեմ: Այս դեպքում հիմք է հանդիսանում քաղաքացիական, այլ ոչ թե քրեական օրենսգիրքը: Նույնիսկ եթե զոհը հանդես է գալիս որպես քաղաքացիական կողմ, քրեական օրենսդրության հիման վրա իրականացվող հանրային գործողությունները շարունակում են մնալ բացառապես որպես դատախազի պարտականություն:

Հայաստանը կարող է հանդիսանալ «2-րդ տիպի» երկիր:

Քանի որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ ՄԻԵԴ) Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ ՄԻԵԿ) 6-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքացիական կողմին/զոհին օժտել է արդար դատաքննության իրավունքից օգտվելու հնարավորությամբ, դա նշանակում է, որ զոհը պետք է օգտվի իր իրավունքները պաշտպանելու և դատավարությունում ակտիվ դերակատարում ունենալու իրական հնարավորությունից: Եթե զոհերը չեն ճանաչվում որպես կողմ, ապա քրեական դատավարությունը նրանց վերաբերվում է լոկ որպես վկա: Միացյալ Թագավորությունում և Նիդեռլանդներում զոհերի կարգավիճակների տարբերությունները մեծ չեն[15],

[15] FRA Report, Part I, 2019. Երեք մոդելների մանրամասն վերլուծություն, տե՛ս FRA, Justice for Victims of Violent Crimes, Part I – Victims' Rights as Standards of Criminal Justice, April 2019, հետևյալ հղումով՝ https://fra.europa.eu/sites/default/files/fra_uploads/fra-2019-justice-for-victims-of-violent-crime-part-1-standards_en.pdf:

այսինքն, 1-ին և 2-րդ տիպի պետություններում, որպես կանոն, զոհի բոլոր իրավունքները պաշտպանված են հավուր պատշաճի և դատավարությունում նրանք ունենում են ակտիվ դերակատարում[16]:

Զոհերի կողմից դիմում ներկայացնելը և հանցագործության մասին հայտնելն ու հաղորդում ներկայացնելը հանդիսանում են կարևոր փուլ և արժանի է հատուկ ուշադրության:

Հանցագործության մասին հաղորդումների ստացումը և գրանցումը զոհերի իրավունքների և օրինական շահերի պաշտպանության առաջին և սկզբունքային փուլերից մեկն է, որն ապահովում է նաև անհրաժեշտ ապացուցողական բազայի արագ հավաքումը, դրանց պաշտպանությունը ոչնչացումից, վնասումից, փոփոխությունից, ենթադրյալ հանցագործությունը կատարած անձի արագ բացահայտումը և այլն[17]:

ՀՀ քր. դատ. օր.-ի 6-րդ հոդվածի 33-րդ կետի համաձայն՝ դիմող հանդիսանում է յուրաքանչյուր անձ, ով դիմել է դատարան, քրեական հետապնդման մարմնին կամ հավատարմագրված փաստաբանին՝ քրեական դատավարության կարգով խախտված իրավունքների պաշտպանության համար:

«Դիմողը» քրեադատավարական գործունեության ոլորտ ներգրավվում է սեփական նախաձեռնությամբ, առանց վա-

[16] Լավագույն փորձն արձանագրվել է Պորտուգալիայում և Մեծ Բրիտանիայում, որտեղ գրանցվել է զոհերի մասնակցային լավագույն գործելաոճը, և դատական համակարգի ներկայացուցիչներն առավելագույնս են գնահատել վերջիններիս մասնակցությունը:

[17] Այս հետևությունն ուղղակի բխում է «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության կողմից հանցագործությունների, վարչական իրավախախտումների, պատահարների վերաբերյալ հաղորդումներն ընդունելու, գրանցելու, հաշվառելու և դրանց ընթացք տալու կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 2017թ.-ի նոյեմբերի 23-ի թիվ 1495-Ն որոշումից, որում, մասնավորապես, սահմանված է, որ «(...) Իրավախախտման կամ պատահարի վայր ժամանած օպերատիվ խմբի ղեկավարը և անդամները (ճանապարհատրանսպորտային պատահարի դեպքում՝ ճանապարհային ոստիկանության ծառայողները) իրենց իրավասության սահմաններում

րույթն իրականացնող մարմնի համապատասխան որոշման, մինչդեռ «տուժող» ճանաչվելու վերաբերյալ քրեական հետապնդման մարմինները կայացնում են ինքնուրույն դատավարական որոշում: Այսինքն, նյութերի նախապատրաստման փուլում ՀՀ քրեադատավարական օրենսդրության իմաստով տուժող չկա, «տուժող» քրեադատավարական սուբյեկտը քրեական դատավարությունում ի հայտ է գալիս քրեական գործի հարուցումից հետո կամ գործի հարուցման հետ միաժամանակ՝ վարույթն իրականացնող մարմնի կողմից կայացվող որոշման հիման վրա: (…) Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ ՀՀ քր. դատ. օր.-ի 183-րդ հոդվածի 1-ին մասում առկա այն ձևակերպումը, որի համաձայն՝ «(…) հանցագործությունների վերաբերյալ գործերը հարուցվում են ոչ այլ կերպ, քան տուժողի բողոքի հիման վրա (…)», հակասում է ՀՀ քր. դատ. օր.-ի տրամաբանությանը, քանի որ նշված ձևակերպմամբ ստացվում է, որ մասնավոր հետապնդման գործ հարուցելու մասին որոշում կայացվում է տվյալ դատավարական փուլում գոյություն չունեցող սուբյեկտի բողոքի հիման վրա: Ուստի, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ քր. դատ. օր.-ի 183-րդ հոդվածում թվարկված մասնավոր հետապնդման գործերով վարույթի հարուցման հիմք պետք է դիտել ոչ թե տուժո-

պարտավոր են՝ 1) կանխել, խափանել իրավախախտումները, իրավախախտում կատարած անձանց բռնելու նպատակով ձեռնարկել անհետաձգելի միջոցառումներ. 2) իրավախախտումից, պատահարից տուժած, կյանքի կամ առողջության համար վտանգավոր այլ վիճակներում գտնվող անձանց ցույց տալ անհրաժեշտ օգնություն. 3) միջոցներ ձեռնարկել իրավախախտման կամ պատահարի վայրը պահպանելու ուղղությամբ. 4) ընդունել հայտնաբերված իրավախախտման վերաբերյալ հաղորդումներ. 5) հանցագործության հատկանիշներ անմիջականորեն հայտնաբերելիս՝ կատարել դեպքի վայրի զննություն. 6) ձեռնարկվող միջոցառումների ընթացքի մասին հայտնել տարածքային մարմնի հերթապահ մաս, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև տարածքային մարմնի պետին կամ պատասխանատուին, Երևան քաղաքում ճանապարհատրանսպորտային պատահարների ստուգման դեպքում՝ ճանապարհային ոստիկանության օպերատիվ կառավարման կենտրոն: (…)»:

ղի, այլ դիմողի բողոքը, որի բացակայության դեպքում վարույթն ենթակա է կարճման ՀՀ քր. դատ. օր.-ի 35-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիմքով: (…) Վճռաբեկ դատարանը մասնավոր հետապնդման գործերով «դիմող» համարում է այն անձանց, ում իրավունքները խախտվել են քր. օր.-ով չթույլատրված արարքով, ինչպես նաև նրանց, ովքեր օրենքի ուժով հանդիսանում են անչափահաս կամ անգործունակ անձանց օրինական ներկայացուցիչներ, եթե խախտվել են նրանց խնամարկյալների իրավունքները:

Վերոնշյալ մոտեցումից բացառություն է այն դեպքը, երբ անձը, ում իրավունքները խախտվել են, իր անօգնական վիճակի կամ այլ օբյեկտիվ պատճառներով չի կարող պաշտպանել իր իրավունքներն ու օրինական շահերը: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նման իրավիճակում քրեական գործ հարուցելու առիթը՝ օրինական, իսկ հիմքերը՝ բավարար լինելու դեպքում քրեական գործ հարուցելու մասին որոշում պետք է կայացվի հանրային մեղադրանքի գործերի հարուցման համար սահմանված ընդհանուր կարգով: (…)»[18]:

ՀՀ քր. դատ. օր.-ի համակարգային վերլուծությունից հետևում է, որ դրանում սահմանված չէ հանցագործության մասին հաղորդում ներկայացնող ֆիզիկական անձի կամ դիմողի նվազագույն տարիք, այսինքն՝ այն տարիքային շեմը, որից ցածր տարիքի անձինք հանցագործության մասին հաղորդում ներկայացնելու իրավունք չունեն, ինչը նշանակում է, որ զուտ տարիքի պատճառաբանությամբ անձի կողմից տրված հաղորդումը չի կարող չընդունվել, չգրանցվել, ընթացք չտրվել և դրա հիման վրա քրեական գործ հարուցելու կամ քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշում չկայացվել: Այս հետևությունն ուղղակիորեն բխում է հանցագործության մասին ֆիզիկական անձանց հաղորդումների ներկայացման և ընդունման

[18] Մանրամասն տես՝ Մարաբյան Ս., Թումասյան Դ., Գևորգյան Դ. Երեխաների նկատմամբ բռնության բնութագիրը և քննության առանձնահատկությունները, Երևան, 2019, էջ 91:

կարգին վերաբերող հարցերը կանոնակարգող ՀՀ քր. դատ. օր.-ի 177-րդ հոդվածից, որում ոչ միայն սահմանված են հաղորդումների ձևին, բովանդակությանը և արձանագրմանը ներկայացվող պահանջները, այլև հաղորդում ներկայացնող ֆիզիկական անձի տարիքին և դրանով պայմանավորված նրա իրավունքների պարզաբանմանը ներկայացվող պահանջները: Մասնավորապես, հիշյալ հոդվածի 3-րդ մասում սահմանված է, որ եթե լրացել է դիմողի 16 տարին, նա նախազգուշացվում է սուտ մատնության համար պատասխանատվության մասին, որպիսի հանգամանքը վկայում է այն մասին, որ անկախ տարիքից՝ անչափահասի հաղորդումը պետք է ընդունվի և դրան պետք է օրենքով սահմանված կարգով ընթացք տրվի[19], իսկ զուտ տարիքային հատկանիշով պայմանավորված անչափահասը նախազգուշացվում է կամ չի նախազգուշացվում սուտ մատնության համար քրեական պատասխանատվության մասին: Այստեղից էլ հետևում է, որ օրենսդիրը, ելնելով անչափահասին քրեական պատասխանատվության ենթարկելու մասին նախազգուշացման չափանիշից, փաստացի երկու խմբի է բաժանում հանցագործության մասին հաղորդում ներկայացնող անչափահասներին՝ մինչև 16 տարեկանների և 16-ից 18 տարեկանների:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ, օրինակ՝ երեխաների դեմ ուղղված հանցագործությունների վերաբերյալ դեպքերով քրեական գործ հարուցելու օրինական առիթ դիտարկվում է կա՛մ անչափահասի ծնողի/ օրինական ներկայացուցչի բողոքը, կա՛մ օրենքով նախատեսված ցանկացած այլ

[19] Հանցագործությունների ընդունման, գրանցման և ընթացք տալու հետ կապված կազմակերպական և տեխնիկական հարցերը կանոնակարգված են «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության կողմից հանցագործությունների, վարչական իրավախախտումների, պատահարների վերաբերյալ հաղորդումներն ընդունելու, գրանցելու, հաշվառելու և դրանց ընթացք տալու կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 2017թ.-ի նոյեմբերի 23-ի N 1495-Ն որոշմամբ:

հաղորդում, իսկ առավել տարածված է ՀՀ քր. դատ. օր.-ի 176-րդ հոդվածի 3-րդ կետում նշված՝ հետաքննության մարմնի, քննիչի, դատախազի, դատարանի, դատավորի կողմից հանցագործության մասին տվյալների, հանցագործության նյութական հետքերի և հետևանքների հայտնաբերումը՝ իրենց լիազորություններն իրականացնելիս: Ընդ որում, գործնականում որևէ տարբերակում չի դրվում անգամ այն հարցում, թե հանցագործությունը հանրայի՞ն, թե՝ մասնավոր մեղադրանքի կարգով է ենթակա քննության: Բոլոր դեպքերում, քրեական գործ հարուցելու օրինական առիթ է ընդունվում կա՛մ անչափահասի ծնողի հաղորդումը, կա՛մ ոստիկանության ծառայողի զեկուցագիրը, և գործնականում չի հանդիպել մի դեպք, երբ քրեական գործ հարուցելու առիթ է դիտարկվել մինչև 16 տարեկան անչափահասի հաղորդումը[20]:

Բացառելով ցանկացած խտրականություն՝ ցանկացած զոհ պետք է ունենա հնարավորություն անկաշկանդ հաղորդելու իր նկատմամբ կատարված հանցագործության մասին և դա իրականացնի թե՛ դատավարությունից առաջ, թե՛ դատավարության ցանկացած փուլում, ներառյալ՝ դատարանում: Երբեմն զոհին անհրաժեշտ է տևական ժամանակ մտորելու և իր նկատմամբ կատարված բազմադրվագային հանցագործության կամ հանցագործության տարբեր տեսակների մասին հայտնելու համար, և երբեմն այդ ցանկությունն անձի մոտ առաջանում է հենց դատաքննության ընթացքում, և կախված այն հանգամանքից, թե ինչպես է այդ հայտարարությանն արձագանքում դատարանն ու դատավարության մյուս մասնակիցները՝ պարզորոշվելու է այդ դատավարությունների հետագա ընթացքը:

Զոհերը պետք է հնարավորություն ունենան ոչ միայն հաղորդում ներկայացնելու, այլ նաև դիրքորոշում հայտնելու դատավարության ընթացքում թե՛ կատարված արարքի, թե՛

[20] Մանրամասն տես՝ Մարաբյան Ս., Թումասյան Դ., Գևորգյան Դ. Երեխաների նկատմամբ բռնության բնութագիրը և քննության առանձնահատկությունները, Երևան, 2019, էջ 89:

հանցագործին ներելու վերաբերյալ: Իհարկե, զոհի դիրքորոշումը ոչ բոլոր դեպքերում պետք է լինի վճռորոշ (բացառություն են միայն մասնավոր մեղադրանքի դեպքերը), սակայն զոհը լսված լինելու իրավունք ունի և պետք է հայտնի իր դիրքորոշումն իրեն վերաբերող կամ հանցագործությանն առնչվող ցանկացած հարցի կապակցությամբ[21]:

> Զոհի կարծիք հայտնելը տարբեր իրավական համակարգերում տարբեր ձևով է կարգավորվում, բայց հիմնականում այն հարթակ է զոհի համար պատմել հանցագործին, դատավորին և հանրությանը, թե ինչ ազդեցություն է ունեցել հանցագործությունն իրենց կյանքի վրա: Այս հայտարարությունը դիտվում է որպես գործիք զոհի վիճակն ինքնակարգավորելու համար:
>
> Զոհի կարծիք հայտնելը լայն տարածում պետք է ունենա և այն անկաշկանդ պետք է իրականացվի՝ առանց մտահոգությունների իր կյանքի, առողջության կամ անվտանգության վերաբերյալ: Օրինակ՝ ԱՄՆ-ում ձերբակալվել էր մի ոստիկան, ով սպանել էր իր հարևանին, երբ տղամարդը նստած էր եղել իր հյուրասենյակում և հեռուստացույց էր դիտում: Նա իր բնակարանը շփոթել էր հարևանի տան հետ և կարծել էր, թե վերջինս ներխուժել է իր տուն: Դատավարության ընթացքում տուժողի եղբայրը հանդես եկավ հայտարարությամբ՝ ներելով եղբորը սպանողին՝ ներկայացնելով հատուկ մտահոգություններ[22]:

[21] Օգտակար է նաև Փաստաբանների պորտալի կողմից պատրաստված տեսանյութը, որը հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.theadvocatesgateway.org/a-question-of-practice: Տեսանյութն անդրադառնում է դատավարության ընթացքում խոցելի մասնակիցների՝ և՛ զոհի, և՛ ամբաստանյալի վրա ազդող տարրերին:

[22] Հայտարարությունը հետևյալ հղումով՝ https://www.msnbc.com/morning-joe/watch/botham-jean-s-brother-forgives-and-embraces-amber-guyger-after-sentencing-70528069747:

Զոհերի վրա հանցագործության ազդեցության մասին հայտարարությունները կարգավորվում են ԵՄ զոհերի իրավունքների հրահանգի 10-րդ հոդվածով՝ հասկանալու և հասկացված լինելու իրավունքի առնչությամբ[23], ինչն իր զարգացումն է ստացել ներպետական օրենսդրությունում: Օրինակ, Նիդեռլանդները մի շարք դատավարություններ են իրականացնում աշխարհում (Աֆղանստան, Իրաք, Սիրիա և այլն) կատարված միջազգային հանցագործությունների մասով (ինչպես սահմանված է Միջազգային քրեական դատարանի Հռոմի ստատուտի կանոնադրությամբ) և բոլոր դեպքերում հնարավորություն ընձեռում ցանկացած զոհին հասկանալ և հասկացված լինել՝ բացառելով ցանկացած խտրականություն: Դրանք բավականին բարդ դատավարություններ էին, որտեղ հաճախ ներգրավվում էին ծանր տրավմայի ենթարկված զոհեր, ովքեր իրենց երկրներից ուղևորվում էին Նիդեռլանդներ՝ ցուցմունք տալու համար: Երբեմն նրանք նույնիսկ Նիդեռլանդներ չէին գալիս, բայց հետևում էին դատավարությանն իրենց երկրից:

Այս առումով Նիդեռլանդների դատական համակարգը որդեգրել է մի շարք դատավարական հարմարություններ՝ տուժողների մասնակցությունը նպատակային դարձնելու համար և ապահովելու, որ դատավարության մասնակցության տրավման և երկրորդային զոհականացման վտանգը լինի նվազագույն[24]:

Օրինակ՝ տարբեր երկրներում գտնվող Նիդեռլանդների դեսպանատները և հյուպատոսություններն իրենց քաղաքացի տուժողների մասնակցությամբ հանդիպումները կազմակերպում են դեսպանատներում կամ հյուպատոսություններում,

[23] Այս իրավունքի գործնական կիրարկումը նկարագրված է VOCIARE զեկույցում, էջեր 100-102:

[24] Դատավարության մասնակցության տրավմայի և երկրորդային զոհականացման վտանգի մասին խոսվելու է հաջորդիվ՝ հիմք ընդունելով լավագույն փորձն ու համապատասխան օրինակների կիրառման հնարավորությունը ՀՀ-ում:

ապահովում են դատավարությունների ուղիղ հեռարձակումը և տուժողներին տեղեկացնում են գործի ընթացքի մասին:

Նիդեռլանդների դատավորներից մեկը ներդրեց զոհերի և վկաների հարցաքննության արձանագրության լավագույն մեթոդ. նա նկատեց, որ ցուցմունք տվող զոհն ենթարկվել է ծանր տրավմայի և ունի առանձնահատուկ կարիքներ, և, համագործակցելով հոգեբանի հետ, մշակել է արձանագրություն՝ սահմանելով այն կանոնները, թե ինչպես պետք է հարցաքննվեն զոհերը, ինչպիսի պայմաններ են անհրաժեշտ ամբողջական ցուցմունքներ ստանալու համար (ինչպես տալ հարցերը, երբ են անհրաժեշտ ընդմիջումները, ինչպիսի մթնոլորտ պետք է ապահովել և այլն):

Համոզվելու համար, որ քննության ընթացքում նշված բովանդակությունն ու հասկացությունները լիարժեք ընկալված են՝ արձանագրության մեջ ներառվեցին նաև մարդաբանների հետ խորհրդակցության արդյունքները՝ հաշվի առնելով համայնքների/ ազգերի մշակութային տարբերությունները: Կարևոր է հասկանալ մշակութային և համատեքստային տարբերությունները, քանի որ երբեմն դա կարող է վտանգել ամբողջ գործը:

Օրինակ՝ որոշ երկրներում բռնաբարության բնորոշումը կարող է այլ նշանակություն ունենալ, քան ընդունված է երկրների մեծամասնությունում: Օրինակ՝ որոշ երկրներում բռնաբարությունը միայն առանց փոխադարձ համաձայնության սեռական գործողություն է չափահաս տղամարդու և աղջիկ երեխայի միջև, ուստի «բռնաբարության» մասին խոսելուց առաջ կարևոր է բացատրել հիմնական հասկացությունները:

Կարևոր է հասկանալ նաև, թե արդյոք զոհին որոշակի ձևով վերաբերելը կարող է անհարմարություն պատճառել նրան, թե կարող է օգտակար լինել. օրինակ՝ որոշ մշակույթներում ձեռք սեղմելն այնքան ընդունված չէ, որքան Եվրոպայում և այլն:

Նախապատրաստական կամ հիմնարար կանոնների վերաբերյալ լսումներ

Բազմաթիվ իրավական համակարգերում հնարավոր է անցկացնել նախապատրաստական կամ հիմնարար կանոնների վերաբերյալ լսումներ, որոնք կարող են համարվել քննության առաջին քայլ և կազմել հիմնական դատաքննության մաս:

Դատավորը, ղեկավարելով դատաքննությունը, պետք է ստանա պատշաճ աջակցություն իր լիազորություններն ի օգուտ բոլոր մասնակիցների կիրառելու համար:

Այս փուլում կդիտարկվի հետևյալը՝

- կորոշվի զոհի խոցելիությունը,
- կտրվի պաշտպանության համար անհատական գնահատական՝ ելնելով խոցելիությունից,
- կորոշվի աջակիցների մասնակցությունն ու դերը,
- կներկայացվեն որոշակի փաստեր (օրինակ՝ չի թույլատրվում հարցնել՝ արդյոք սեռական հանցագործության զոհը կրում էր սադրիչ հագուստ, կամ տալ հարցեր նախկին սեռական փորձի և սեռական կյանքի մանրամասների վերաբերյալ),
- այլ հարցեր, որոնք կապահովեն սահուն և արդար դատավարություն, կլինեն նվազ տրավմատիկ և կբացառեն երկրորդային զոհականացումը,
- կապահովի դատավարական հարմարությունները դատավարությանը մասնակցող հաշմանդամություն ունեցող կամ այլ խոցելիությամբ անձանց համար,
- կներկայացվի դատավարությունը զոհերի համար հարմարավետ լինելու ստուգման հնարավորություն[25]:

[25] Տես՝ https://www.theadvocatesgateway.org/images/toolkits/1-ground-rules-hearings-and-the-fair-treatment-of-vulnerable-people-in-court-2019.pdf:

Դատական պրակտիկայում երբեմն առկա են դեպքեր, երբ քրեական դատավարության մասնակիցները, օրինակ՝ տուժողը, պատշաճ տուժող չէ կամ որևէ պատճառով անհրաժեշտություն է առաջանում տուժողին հեռացնել վարույթից, ինչը կարող է պայմանավորված լինել քրեական գործով այն անձին որպես տուժող ներգրավելու փաստով, ով չպետք է ներգրավված լիներ այդ կարգավիճակում: Հարկ է նշել, որ ՀՀ քր. դատ. օր.-ը նման ինստիտուտ/ կարգավորում չի նախատեսում, և հետևաբար՝ դրա կիրառությունը ՀՀ ազգային օրենսդրության համաձայն հնարավոր չէ:

Հաշվի առնելով, որ միջազգային պրակտիկայում քաղաքացիական հայցվոր և տուժող եզրույթները համընկնում և նույնացվում են, իսկ տուժողի հիմնական իրավունքներից մեկը փոխհատուցում ստանալու իրավունքն է, և նա օգտվում է քաղաքացիական հայցվորի բոլոր իրավունքներից, դատական պրակտիկայում ոչ պատշաճ տուժողին վարույթից հեռացնելը և փոխարինելը պատշաճ տուժողով հնարավոր է այն քրեական գործերով, որոնցով նախաքննություն չի իրականացվում կամ եթե դրա առնչությամբ իրականացվելու է ամբողջական դատաքննություն՝ հնարավորություն ընձեռելով հավասարակշռված պաշտպանել դատավարության բոլոր մասնակիցների իրավունքները և դատաքննության ընթացքում հետազոտել ապացույցները:

Այն պետությունները, որտեղ քրեական դատավարությունը դեֆորմալիզացված է և հիմնական ոշադրությունը սևեռված է քրեական դատավարության բովանդակության վրա, տուժողի փոխարինումը պատշաճ տուժողով հնարավոր է և այն իրականացվում է դատավարության ցանկացած փուլում՝ հետազոտված ապացույցների հիման վրա: Նույնկերպ, դատավարության ցանկացած փուլում վարույթ իրականացնող մարմինը կարող է անձին ներգրավել որպես տուժող՝ համապատասխան որոշում կայացնելով: Օրինակ՝ եթե դատարանը գտնում է, որ վնասը պատճառվել է ոչ թե բնակարանի սեփականատիրոջը, այլ բնակարանի վարձակալին կամ երկու-

սին միաժամանակ, ապա դատարանը կաշկանդված չէ ներգրավել համապատասխան անձին որպես տուժող, եթե վերջինս ներկայացնում է բողոք և հայտնում իր դիրքորոշումը, այն պարագայում, երբ բնակարանի սեփականատերը չի առաքում այդ փաստի դեմ: Որոշ դեպքերում դատական համակարգերը, թույլ տալով ներգրավվել երկրորդ տուժողին, հետագայում չեն բացառում առաջին տուժողին վարույթից հեռացնելը, ինչը փաստացի հնարավորություն է ընձեռում ոչ թե փոխարինել ոչ պատշաճ տուժողին այլ տուժողով, այլ իրականացնել մի քանի փուլից բաղկացած գործընթաց, որի հիմքում ընկած է գործի քննության ընթացքում տուժողների ներգրավման-հեռացման փուլայնությունը:

Եթե տուժողի իրավունքների պաշտպանությունն ուղղվում և սահմանափակվում է քաղաքացիական իրավունքների պաշտպանությամբ, ապա այդ առումով ՄԻԵԴ-ն Էռնստը և այլոք (Ernst and others) ընդդեմ Բելգիայի թիվ 33400/96 գործով 2003թ.-ի հուլիսի 15-ին բացահայտել է, որ ինչպես Բրյուսելի առաջին ատյանի դատարանի խորհուրդը, այնպես էլ վճռաբեկ դատարանը կոչված էին որոշում կայացնելու ըստ ընթացակարգի, և որ հայցվորը վճռաբեկ դատարան է դիմել սոսկ հայտարարելու համար քրեական գործով քաղաքացիական հայց հարուցելու անհնարինության մասին, քանի որ հայցն ուղղված էր դատական անձեռնմխելիություն ունեցող անձի դեմ: Այս առումով ՄԻԵԴ-ի ուշադրությանն է արժանանում այն փաստը, որ համաձայն բելգիական օրենքի՝ քննիչի կողմից անձին որպես քաղաքացիական հայցվոր ճանաչելը քաղաքացիական հայց հարուցելու եղանակներից մեկն է, և որ տուժողներն իրականում իրենց քաղաքացիական իրավունքները պաշտպանելու այլ միջոցներ ունեն: Տվյալ դեպքում, քանի որ տուժողների բողոքն ուղղված է եղել այլ անձանց և ոչ այդ պաշտոնատար անձի դեմ, նրանք կարող էին հայց հարուցել քաղաքացիական դատարանում այլ անձանց դեմ: Ինչ վերաբերում է պաշտոնատար անձի դեմ քաղաքացիական գործ հարուցելուն, ապա այն կարգավորվում է Դատական օրենսգրքով նախատեսված

սպառիչ դրույթներով, որոնց սահմաններում հնարավոր է պաշտոնատար անձանց «որպես կողմ ներգրավել»: Խոսքը վերաբերում է առանձին մեխանիզմին, որը կիրառվում է բացառիկ դեպքերում: ՄԻԵԴ-ը կասկած է հայտնում առ այն, որ տվյալ դեպքում այդ դրույթը ենթակա էր կիրառման: Այն հաստատում է, որ Կառավարությունն իր եզրակացության մեջ առանձնահատուկ ուշադրություն չի դարձրել տվյալ դրույթին:

ՀՀ քրեական դատավարությունում ոչ պատշաճ տուժողին վարույթից հեռացնելու պրակտիկայի կիրառման մասին խոսելը ժամանակավրեպ է: Այս առնչությամբ կարևորվում է ՀՀ քր. դատ. օր.-ի 311-րդ հոդվածի 1-ին մասը, որի համաձայն՝ դատարանը գործն ուղարկում է լրացուցիչ նախաքննության, երբ հետաքննության կամ նախաքննության մարմինների կողմից թույլ է տրված քրեադատավարական օրենքի էական խախտում, եթե դա չի կարող վերացվել դատական քննության ընթացքում:

Խախտման էական լինելը պետք է որոշվի յուրաքանչյուր քրեական գործով՝ ելնելով գործի փաստական հանգամանքներից, ապացույցների համակցությունից և նշանակություն ունեցող հանգամանքների վերլուծությունից: Այսպես, եթե տուժողին պատճառվել է գույքային վնաս և տուժողը մահացել է դատավարության ընթացքում, ապա նրա ժառանգը փաստացի հանդիսանալու է տուժող, քանի որ այդ գույքային վնասը պատճառվել է նաև նրան, և նա պետք է ստանա այդ վնասի պատճառման արդյունքում հատուցում որպես ժառանգ/իրավահաջորդ[26]:

[26] ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1186-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ժառանգության զանգվածի մեջ է մտնում ժառանգության բացման օրը ժառանգատուին պատկանող գույքը՝ ներառյալ դրամը, արժեթղթերը, գույքային իրավունքները և պարտականությունները: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ժառանգության զանգվածի մեջ չեն մտնում ժառանգատուի անձի հետ անխզելիորեն կապված իրավունքները և պարտականությունները, մասնավորապես՝

1) ալիմենտային պարտավորություններով իրավունքները և պարտականությունները.

ՀՀ քր. դատ. օր.-ի 80-րդ հոդվածի համաձայն՝ վերը նշված անձը ճանաչվելու է տուժողի իրավահաջորդ և քրեական գործով վարույթին մասնակցելու է տուժողի փոխարեն և ունենալու է վերջինիս իրավունքները և պարտականությունները, բացի ցուցմունքներ տալու և տուժողի անձից անբաժանելի այլ իրավունքներից և պարտականություններից: Տուժողի իրավահաջորդն իրավունք չունի հաշտվել կասկածյալի և մեղադրյալի հետ ու հետ վերցնել տուժողի ներկայացրած բողոքը:

Վերոգրյալից ակնհայտ է, որ եթե միջազգային օրենսդրությունը տալիս է քրեական գործի ընթացքում այլ տուժողի ներգրավման հնարավորություն, ապա ՀՀ քրեական դատավարությունում այդ անձը ձեռք է բերելու այլ՝ տուժողի իրավահաջորդի կարգավիճակ:

Մյուս բոլոր դեպքերում ոչ պատշաճ տուժողի հայտնաբերման դեպքում, բացառելով իրավահաջորդությունը և հաշվի առնելով այն քննչական և դատավարական գործողությունների անհրաժեշտությունը, որոնք պետք է իրականացվեն տուժողի մասնակցությամբ, դատարանը պարտավոր է գործն ուղարկել լրացուցիչ նախաքննության:

Քրեական գործի շրջանակներում խիստ կարևորվում է տուժողի դիրքորոշում ներկայացնելու իրավունքի ապահովումը վարույթը բացառող հանգամանքների ի հայտ գալու կամ մեղադրողի կողմից մեղադրանքից հրաժարվելու դեպքում:

ՀՀ քր. դատ. օր.-ի 35-րդ հոդվածի համաձայն՝ քրեական գործ չի կարող հարուցվել և քրեական հետապնդում չի կարող իրականացվել, իսկ հարուցված քրեական գործի վարույթը ենթակա է կարճման, եթե՝

1) բացակայում է հանցագործության դեպքը.

2) արարքի մեջ հանցակազմ չկա.

2) քաղաքացու կյանքին կամ առողջությանը պատճառված վնասը հատուցելու իրավունքը.
3) անձնական ոչ գույքային իրավունքները և այլ ոչ նյութական բարիքները.
4 այն իրավունքներն ու պարտականությունները, որոնց անցումը ժառանգությամբ չի թույլատրվում սույն օրենսգրքով և այլ օրենքներով:

3) վնաս պատճառած արարքը քրեական օրենքով համարվում է իրավաչափ.
4) ՀՀ քր. դատ. օր.-ով նախատեսված դեպքերում բացակայում է դիմողի բողոքը.
5) ՀՀ քր. դատ. օր.-ով նախատեսված դեպքերում տուժողը հաշտվել է կասկածյալի կամ մեղադրյալի հետ.
6) անցել են վաղեմության ժամկետները.
7) անձի նկատմամբ կա նույն մեղադրանքով օրինական ուժի մեջ մտած դատավճիռ կամ դատարանի այլ որոշում, որը հաստատում է քրեական հետապնդման անհնարինությունը.
8) անձի նկատմամբ կա նույն մեղադրանքով քրեական հետապնդում իրականացնելուց հրաժարվելու մասին հետաքննության մարմնի, քննիչի և դատախազի չվերացված որոշում.
9) անձն արարքը կատարելու պահին չի հասել քրեական պատասխանատվության ենթարկելու՝ օրենքով նախատեսված տարիքին.
10) անձը մահացել է, բացառությամբ այն դեպքերի, երբ գործի վարույթն անհրաժեշտ է մահացածի իրավունքների վերականգնման համար կամ ուրիշ անձանց նկատմամբ նոր ի հայտ եկած հանգամանքների կապակցությամբ գործը վերսկսելու համար.
11) անձը կամովին հրաժարվել է հանցագործությունը մինչև վերջ հասցնելուց, եթե նրա փաստորեն կատարած արարքն այլ հանցակազմ չի պարունակում.
12) անձը ՀՀ քրեական օրենսգրքի ընդհանուր մասի դրույթների ուժով ենթակա է ազատման քրեական պատասխանատվությունից.
13) ընդունվել է համաներման մասին օրենք[27]:

[27] Ա.Բաղդասարյանի գործով որոշման մեջ Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ «(...) Քրեական

Վերը նշված 1-3-րդ և 6-12-րդ կետերով նախատեսված հիմքերի առկայության դեպքում տուժողի դիրքորոշումը հաշվի չի առնվում, սակայն 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված հիմքերի առկայության դեպքում այն խիստ կարևոր է և առաջնային:

Դիմողի բողոքի բացակայության հիմքով քրեական գործ չհարուցելու և քրեական հետապնդում չիրականացնելու հիմնահարցին ՀՀ վճռաբեկ դատարանն անդրադարձել է ՎԲ-73/08 քրեական գործով Ա.Աբրահամյանի վերաբերյալ 2008թ.-ի դեկտեմբերի 26-ի որոշմամբ, որի 12-րդ կետում ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է. «ՀՀ քր. դատ. օր.-ի 183-րդ հոդվածի 1-ին մասում առկա այն ձևակերպումը, որի համաձայն՝ «(...) հանցագործությունների վերաբերյալ գործերը հարուցվում են ոչ այլ կերպ, քան տուժողի բողոքի հիման վրա (...)», հակասում է ՀՀ քր. դատ. օր.-ի տրամաբանությանը, քանի որ նշված ձևակերպմամբ ստացվում է, որ մասնավոր հետապնդման գործ հարուցելու մասին որոշում կայացվում է տվյալ դատավարական փուլում գոյություն չունեցող սուբյեկտի բողոքի հիման վրա: Ուստի Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ քր. դատ. օր.-ի 183-րդ հոդվածում թվարկված մասնավոր հետապնդման գործերով վարույթի հարուցման հիմք պետք է դիտել ոչ թե տուժողի, այլ դիմողի բողոքը, որի բացակայության դեպքում վարույթը ենթակա է կարճման ՀՀ քրեական դատավարության

գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու հիմքերը սահմանող՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի վերլուծությունից երևում է, որ նշված հիմքերը դասակարգվում են երկու խմբի՝

ա) քրեական գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու «արդարացնող» («ռեաբիլիտացիոն») հիմքեր, որոնք նախատեսված են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-3-րդ կետերով և 2-րդ մասով.

բ) քրեական գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու «ոչ արդարացնող» («ոչ ռեաբիլիտացիոն») հիմքեր, որոնք նախատեսված են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 4-13-րդ կետերով» (տես Արմեն Բաղդասարյանի գործով Վճռաբեկ դատարանի 2013 թվականի սեպտեմբերի 13-ի թիվ ԵԱՔԴ/0009/11/13 որոշման 15-րդ կետը):

օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիմքով:

Նույն որոշման 13-րդ կետի համաձայն՝ Վճռաբեկ դատարանը մասնավոր հետապնդման գործերով «դիմող» դիտում է այն անձանց, ում իրավունքները խախտվել են քրեական օրենսգրքով չթույլատրված արարքով, ինչպես նաև նրանց, ովքեր օրենքի ուժով հանդիսանում են անչափահաս կամ անգործունակ անձանց օրինական ներկայացուցիչներ, եթե խախտվել են նրանց խնամարկյալների իրավունքները: Վերոնշյալ մոտեցումից բացառություն է այն դեպքը, երբ անձը, ում իրավունքները խախտվել են, իր անօգնական վիճակի կամ այլ օբյեկտիվ պատճառներով չի կարող պաշտպանել իր իրավունքներն ու օրինական շահերը: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նման իրավիճակում քրեական գործ հարուցելու առիթն օրինական, իսկ հիմքերը բավարար լինելու դեպքում քրեական գործ հարուցելու մասին որոշում պետք է կայացվի հանրային մեղադրանքի գործերի հարուցման համար սահմանված ընդհանուր կարգով:

Տուժողի քննարկվող իրավունքին անդրադարձ է կատարվել այլ քրեական գործով ևս: ՀՀ վճռաբեկ դատարանը ԵԿԴ/0013/01/15 քրեական գործով Հ. Հովհաննիսյանի վերաբերյալ 2016թ.-ի նոյեմբերի 1-ին կայացված որոշմամբ, որի 17-րդ կետի համաձայն՝ ամբաստանյալ Հ. Հովհաննիսյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելուն զուգահեռ թիվ ԵԿԴ/0013/01/15 քրեական գործի վարույթը կարճելով, զրկել է քրեական հետապնդում իրականացնող մարմնին՝ այդ վարույթի շրջանակներում հանցանք կատարած անձին (անձանց) հայտնաբերելու և օրենքով սահմանված կարգով քրեական պատասխանատվության ենթարկելու՝ նրա պարտականության կատարմանը, ինչը չի բխում թե՝ քրեական դատավարության օրենսդրության խնդիրներից, թե՛ հանցագործությունից տուժած անձի շահերի պաշտպանությունն ապահովելու պարտականությունից: Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ իրավաչափ չէ թիվ ԵԿԴ/0013/01/15 քրեական գործի վարույթը կարճելու վերաբերյալ Վերաքննիչ դա-

տարանի հետևությունն այն պայմաններում, երբ տուժողի առողջությանը ծանր մարմնական վնասվածք պատճառած անձը կամ անձինք չեն բացահայտվել:

Այս նախադեպով ՀՀ վճռաբեկ դատարանը փաստել է տուժողների իրավունքների պաշտպանության կարևորությունն ու դրա առաջնահերթությունը:

ԵԱՔԴ/0217/01/14 քրեական գործով Տ. Առաքելյանի վերաբերյալ 2016թ.-ի մարտի 30-ի որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ թե՛ ՀՀ քրեական օրենսգրքի 73-րդ հոդվածի հիմքով ՀՀ քր. դատ. օր.-ի 37-րդ հոդվածի, թե՛ ՀՀ քր. դատ. օր.-ի 183-րդ հոդվածի և 35-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի կիրառման պահանջներից մեկը տուժողի և հանցագործություն կատարած անձի հաշտությունն է: Միաժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հաշտության քրեաիրավական և քրեադատավարական կառուցակարգերը չեն նույնանում: Դրանք տարբերվում են մի շարք հատկանիշներով: Այսպես՝

ա) ՀՀ քրեական օրենսգրքի 73-րդ հոդվածով ամրագրված քրեական պատասխանատվությունից ազատելու հիմքը նյութաիրավական բնույթ ունի, որի կիրառման դատավարական հիմքն է ՀՀ քր. դատ. օր.-ի 37-րդ հոդվածը: Ինչ վերաբերում է մասնավոր մեղադրանքի ինստիտուտին, ապա այն քրեադատավարական բնույթ ունի, որի հիմքով քրեական հետապնդման դադարեցումը նախատեսված է ՀՀ քր. դատ. օր.-ի 35-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով,

բ) այն պայմաններում, երբ ՀՀ քրեական օրենսգրքի հատուկ մասում առկա են 100-ից ավելի ոչ մեծ ծանրության հանցակազմեր, ՀՀ քր. դատ. օր.-ի 183-րդ հոդվածում սահմանված են ոչ մեծ ծանրության թվով 26 հանցակազմ: Բացի այդ, նույն հոդվածով նախատեսված է նաև միջին ծանրության թվով 2 հանցակազմ: Այլ խոսքով՝ եթե մասնավոր մեղադրանքի գործերով քրեական գործի վարույ-

թը կարճելը հնարավոր է միջին ծանրության որոշակի, ինչպես նաև սահմանափակ թվով ոչ մեծ ծանրության հանցագործությունների դեպքում, ապա ՀՀ քրեական օրենսգրքի 73-րդ հոդվածը կարող է կիրառվել միայն ոչ մեծ ծանրության հանցագործությունների դեպքում,

գ) ՀՀ քրեական օրենսգրքի 73-րդ հոդվածում սահմանված է, որ անձը «կարող է» ազատվել քրեական պատասխանատվությունից, դրան համապատասխան՝ ՀՀ քր. դատ. օր.-ի 37-րդ հոդվածի 1-ին մասը նախատեսում է, որ վարույթն իրականացնող մարմինները «կարող են» հարուցված քրեական գործի վարույթը կարճել և քրեական հետապնդումը դադարեցնել: Մինչդեռ ՀՀ քր. դատ. օր.-ի 35-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով նախատեսված է, որ քրեական գործի վարույթը «ենթակա է կարճման»: Այսպիսով, օրենսդիրը հստակ սահմանել է, որ մասնավոր մեղադրանքի գործերով կողմերի հաշտության դեպքում իրավակիրառ մարմինը պարտավոր է կարճել քրեական գործի վարույթը, իսկ ՀՀ քրեական օրենսգրքի 73-րդ հոդվածով նախատեսված՝ տուժողի հետ հաշտվելու դեպքում կարող է ազատել քրեական պատասխանատվությունից՝ դադարեցնելով քրեական հետապնդումը և կարճելով քրեական գործի վարույթը: Այլ կերպ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 73-րդ հոդվածով նախատեսված դեպքում քրեական պատասխանատվությունից ազատելը վարույթն իրականացնող մարմնի համար նախատեսված է որպես տնօրինչական լիազորություն: Մինչդեռ մասնավոր մեղադրանքի գործերով ՀՀ քր. դատ. օր.-ի 35-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի առկայությունը վարույթն իրականացնող մարմնի համար առաջացնում է քրեական հետապնդումը դադարեցնելու պարտականություն:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ հաշտության քրեաիրավական և քրեադատավա-

րական ինստիտուտները համապատասխանաբար «անձ և պետություն» ու «անձ և տուժող» քրեաիրավական վեճի հաղթահարման կառուցակարգեր են: Մասնավորապես, հաշտության նյութաիրավական ինստիտուտը հանցագործության հետևանքով խախտված մասնավոր և հանրային շահերի հավասարակշռման կառուցակարգ է, որով էլ պայմանավորված՝ հանցանք կատարած անձի համար նախատեսվում է քրեական պատասխանատվությունից ազատվելու բարդեցված կարգ, քանի որ հանրային շահի բավարարման համար, տուժողի կամահայտնությունից բացի, անհրաժեշտ է նաև սոցիալապես դրական այլ հանգամանքների առկայություն: Վերջիններիս բավարարության գնահատման հայեցողությունն էլ թողնված է պետությանը՝ ի դեմս վարույթն իրականացնող մարմինների: Մինչդեռ մասնավոր մեղադրանքի գործերով հաշտության քրեադատավարական ինստիտուտը հանդիսանում է հակադիր մասնավոր շահերի հավասարակշռման կառուցակարգ, որով պայմանավորված էլ տուժողի կամահայտնությունը որոշիչ նշանակություն ունի հանցանք կատարած անձի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու հարցը լուծելիս և բացառում է պետության՝ ի դեմս վարույթն իրականացնող մարմինների հայեցողությունը: Այլ խոսքով՝ հաշտության նյութաիրավական ինստիտուտը (ՀՀ քրեական օրենսգրքի 73-րդ և ՀՀ քր. դատ. օր.-ի 37-րդ հոդվածներ) կիրառելի է միայն հանրային հետապնդման գործերով, իսկ քրեադատավարական ինստիտուտը (ՀՀ քր. դատ. օր.-ի 35-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետ և 183-րդ հոդված)՝ մասնավոր հետապնդման գործերով: Հետևաբար՝ ՀՀ քրեական օրենսգրքի 73-րդ և ՀՀ քր. դատ. օր.-ի 37-րդ հոդվածները կիրառելի չեն մասնավոր հետապնդման այն գործերով, որոնք վերաբերում են ոչ մեծ ծանրության հանցագործություններին: Վճռաբեկ դատարանի վերջին դիրքորոշումը հիմնավորվում է նաև նրանով, որ ՀՀ քր. դատ. օր.-ի 35-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը և 183-րդ հոդվածը, ի տարբերություն ՀՀ քր. դատ. օր.-ի 37-րդ հոդվածի, նախատեսում են քրեական գործի վարույթը կարճելու անվերապահ

հիմք, որի առկայությունն արդեն իսկ իմաստազրկում է ՀՀ քրեական օրենսգրքի 73-րդ հոդվածով նախատեսված մնացած պայմանների առկայության քննարկումը, ինչպես նաև վարույթն իրականացնող մարմինների հայեցողության դրսևորումը:

16. Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ մասնավոր հետապնդման գործերով վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու՝ ՀՀ քր. դատ. օր.-ի 35-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, 183-րդ հոդվածով նախատեսված կարգավորումից զատ ՀՀ քրեական օրենսգրքի 73-րդ հոդվածը, արտահայտելով քրեական օրենսդրության արդարության և մարդասիրության սկզբունքը, նախատեսում է ոչ մեծ ծանրության հանցագործությունների վերաբերյալ գործերով անձին քրեական պատասխանատվությունից ազատելու ինքնուրույն հիմք, որի կիրառման պայմանները և ընթացակարգն էապես տարբերվում են մասնավոր մեղադրանքի գործերով վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու կառուցակարգից:

Մեղադրանքից հրաժարվելու ընթացքում տուժողի իրավունքների և օրինական շահերի պաշտպանության վերաբերյալ առկա է երկու մոտեցումներից մեկի համաձայն՝ դատարանում մեղադրանքից հրաժարվելը չի խախտում տուժողի իրավունքները: Ի. Դեմիդովի և Ա. Տուշևի համաձայն՝ մեղադրողի կողմից մեղադրանքից հրաժարվելը չի հանգեցնում տուժողի իրավունքների խախտմանը, քանի որ մեղադրանքի ապացուցման և ամբաստանյալի օգտին բերվող փաստարկների հերքման պարտականությունը դրված է միայն մեղադրողի վրա: Հենց այդ պատճառով մեղադրողի կողմից մեղադրանքից հրաժարվելը հանգեցնում է դատարանի կողմից քրեական գործի կամ քրեական հետապնդման պարտադիր դադարեցմանը[28]: Մեղադրանքից հրաժարվելու մասին մեղադրողի որոշման հետ տուժողի անհամաձայնությունը չունի veto-ի նշանակություն: Այս դեպքում տուժողը չի կարող ար-

[28] Մանրամասն տե՛ս՝ Демидов И., Тушев А. Отказ прокурора от обвинения// Российская юстиция, 2002, № 8, էջեր 25-26:

գելափակել դատարանի կողմից գործի կարճումը և իր վրա վերցնել այն մեղադրանքի ապացուցման պարտականությունը, որից հրաժարվել է դատախազը և հանդես գալ այսպես կոչված սուբսիդիար մեղադրողի դերում: Նշված տեսակետին համակարծիք է նաև Վ. Խոլոդենկոն, ով գտնում է, որ ճիշտ չի լինի հանրային մեղադրանքի գործերով քրեական հետապնդումը դնել կախման մեջ՝ մասնավոր անձի կամարտահայտությունից[29]:

Այլ դիրքորոշման համաձայն՝ մեղադրանքից հրաժարվելը և այդ հիմքով քրեական վարույթը դադարեցնելը խախտում է տուժողի արդարադատության մատչելիության իրավունքը: Ֆ. Բագաուտդինովի, Ա. Վասինի և Ն. Պետրովայի համաձայն՝ դատախազի կողմից առանց տուժողի համաձայնության մեղադրանքից հրաժարվելը խախտում է վերջինիս իրավունքները: Մեղադրողը և՛ մեղադրանքի պաշտպանության, և՛ նրանից հրաժարվելու ժամանակ ապացույցները գնահատում է ղեկավարվելով իր ներքին համոզմունքով: Սակայն տուժողի՝ որպես մեղադրանքի կողմի մասնակից, ներքին համոզմունքը կարող է չհամընկնել մեղադրողի համոզման հետ: Չնայած դրան, մեղադրողի կողմից մեղադրանքից հրաժարվելու դեպքում տուժողը զրկվում է դատարանին ամբաստանյալի մեղքի հիմնավորման մասին իր փաստարկները ներկայացնելու հնարավորությունից: Այսպիսով, տուժողը զրկվում է նաև արդարադատության մատչելիության հնարավորությունից[30]:

Մեղադրողի կողմից մեղադրանքից հրաժարվելը և քրեական վարույթը դադարեցնելը տուժողի իրավունքների խախտում համարելու դեպքում առաջարկվում է հարցի լուծման տարբեր մոդելներ: Այսպես, առանձին գիտնականներ նշում են, որ մեղադրողի կողմից մեղադրանքից հրաժարվելը չպետք

[29] Холоденко В. Учет мнения потерпевшего и его представителя при изменении обвинения прокурором в стадии судебного разбирательства// Российская юстиция, 2002, №3, էջ 50:

[30] Тетерина Т. Отказ прокурора от обвинения «преступает» права потерпевшего на доступ к правосудию// Российская юстиция, 2003, №10, էջ 15:

է համարվի քրեական հետապնդման դադարեցման հիմք, եթե տուժողն առարկում է դրա դեմ: Այս դեպքում դատարանն ընդհանուր կարգով շարունակում է դատաքննությունը, իսկ մեղադրանքը պաշտպանում է տուժողն անձամբ կամ ներկայացուցչի միջոցով[31]:

Հանրային մեղադրանքի գործերով մեղադրանքից հրաժարվելու դեպքում վերանում է նաև սուբսիդիար մեղադրանքը. չկա մեղադրանք, չկա նաև սուբսիդիար մեղադրանք: Տուժողին ոչ ոք չի լիազորել պաշտպանել մեղադրանքը, եթե պետությունը հրաժարվել է մեղադրանքից: Այս կապակցությամբ պետք է նշել, որ մեղադրողն անաչառ անձ է, և նա գործի ելքով անձնական շահագրգռվածություն չունի, մեղավորից վիրավորված չէ, հետևաբար, սթափ կարող է գնահատել իրադրությունը: Մեղադրողը, որպես կանոն, որակյալ մասնագետ է, ով լավ է կողմնորոշվում ինչպես մեղադրանքի պաշտպանության, այնպես էլ քրեական դատավարական օրենսդրության հարցերում: Տուժողի համար որոշակի քրեական գործողությունների իրականացումն իրավունք է, իսկ դատախազը պաշտոնատար անձ է, ով պարտավոր է պետության անունից հանդես գալ ի պաշտպանություն որևէ անձի[32]:

Այս դեպքում տուժողի պնդումն այն մասին, որ ամբաստանյալը պետք է պատասխանատվության ենթարկվի, չի կարող դիտարկվել որպես դատարանում մեղադրանքի պաշտպանություն, քանի որ դատարանում քրեական հետապնդման իրականացումն ակտիվ գործունեություն է, կապված ինչպես դատարանին մեղավորության վերաբերյալ ապացույցների ներկայացման, այնպես էլ նրանց գնահատման հետ:

ՀՀ քր. դատ. օր.-ի հիմնադրույթներում նշվում է, որ եթե տուժողը համաձայն չէ կայացված դատական ակտի հետ,

[31] Մանրամասն տե՛ս՝ Джафаров А.М. Международно-правовые основы реформирования органов прокуратуры Азербайджанской Республики. Автореф. дисс. … докт. юрид. наук. М., 2008:

[32] Фоменко А. Н. Отказ от обвинения и права потерпевшего. Уголовный процесс. № 12, 2005:

ապա նա իրավունք ունի վերաքննիչ բողոք բերել դրա դեմ: Այս դեպքում վերաքննիչ դատարանը, հաշվի առնելով բողոքում շարադրված հանգամանքները և գործի բոլոր նյութերը, կարող է բեկանել առաջին ատյանի դատարանի դատական ակտը և կայացնել մեղադրական դատավճիռ[33]: Մեղադրանքից հրաժարվելու հիմքով կայացված դատական ակտը տուժողի կողմից բողոքարկելու իրավունքի վերապահման վերաբերյալ առաջարկը լիովին ընդունելի է և բխում է միջազգային իրավական չափորոշիչներից[34]:

Հարկ է հատուկ ընդգծել, որ միջազգային ընդհանուր չափորոշիչն այն է, որ հանրային մեղադրանքի գործերով տուժողի կամահայտնությունը չունի բացարձակ բնույթ: Տուժողին տրվում են իրավունքներ, որոնք հիմնականում ուղղված են իրենց պատճառված վնասների հատուցմանը**, այլ ոչ թե անձին պատասխանատվության ենթարկելու հարցի լուծմանը**[35]:

Թեմա 4. Դատավարության ազդեցությունը տուժողի վրա

Ցանկացած դատավարությանը մասնակցելը «փոքր հերոսություն» է տուժողի համար: Դա սթրեսային վիճակ է, և ցանկացած տուժող տարբեր ձևերով կարող է արձագանքել նման ազդեցությանը: Սթրեսային վիճակներին արձագանքելու բնորոշ ձևերը հետևյալն են.

Վարքային՝

- գործունեության մակարդակների փոփոխություն,

[33] Պետություն և իրավունք, թիվ 35, 2007, էջ 12:

[34] Ղամբարյան Ա. Դատարանում մեղադրանքից հրաժարվելու և մեղադրանքի փոփոխության իրավական կարգավորման կատարելագործումը: Օրինականություն, 2007, թիվ 43, էջեր 17-21:

[35] Մանրամասն տես՝ Ղամբարյան Ա. Դատարանում մեղադրանքը փոխելը և մեղադրանքից հրաժարվելը: Եր., 2009, էջեր 106-112:

- արդյունավետության և օգտավետության նվազում,
- դժվար հաղորդակցում,
- հումորի/ հեգնանքի զգացողության սրացում,
- գրգռվածություն, բարկության պոռթկումներ, հաճախակի փաստարկավորում,
- հանգստանալու, թուլանալու և լիցքաթափվելու անկարողություն, մշտական լարվածություն,
- սնվելու պայմանների և սովորությունների փոփոխություն,
- քնի խանգարումներ,
- աշխատանքի կատարման ոճի, տևողության և այլ պայմանների փոփոխություն,
- լալկանություն,
- օգտագործվող ծխախոտի, ալկոհոլի, թմրամիջոցների, շաքարավազի կամ կոֆեինի քանակի և հաճախականության ավելացում,
- գերզգոնություն անվտանգության կամ շրջապատող միջավայրի նկատմամբ,
- հիշողություններ առաջացնող գործողություններից կամ վայրերից խուսափում,
- պատահարների հակվածություն և այլն:

Հոգեբանական կամ հուզական՝

- հերոսի, էյֆորիկ կամ անխոցելի լինելու զգացողություն,
- մերժումներ,
- կենցաղային անհանգստություն կամ վախ,
- անհանգստություն սեփական և ուրիշների անվտանգության համար,

- գրգռվածություն կամ զայրույթ,
- տխրություն, տրամադրության կտրուկ փոփոխություններ, թախիծ կամ ընկճվածություն,
- վառ կամ տագնապալի երազներ,
- մեղքի կամ «վերապրածի մեղք»-ի զգացում,
- ճնշված, անօգնական կամ հուսալքված լինելու զգացում,
- մեկուսացված, կորած, միայնակ կամ լքված լինելու զգացում,
- անտարբերություն,
- վերապրածների հետ գերնույնացում,
- չգնահատված կամ սխալ հասկացված լինելու զգացում:

Ֆիզիկական՝

- սրտի աշխատանքի և շնչառության արագացում (տախիկարդիա),
- արյան բարձր ճնշում (հիպերթոնիա),
- ստամոքսի խանգարում, սրտխառնոց, փորլուծություն,
- ախորժակի ավելացում կամ նվազում (բուլաեմիա կամ անորեքսիա), որը կարող է ուղեկցվել քաշի կորստով կամ ավելացումով,
- քրտնարտադրություն կամ տենդ,
- դող, մկանային ցավեր և մկանային կծկումներ,
- լսողության վատթարացում,
- մթագնած տեսողություն,
- անկազմակերպվածություն,

- գլխացավեր,
- լուսազգայունություն,
- գոտկատեղի ցավեր,
- կոկորդում տհաճ զգացողություն,
- վախկոտություն,
- հոգնածություն, որը չի կարգավորվում լիարժեք քնով,
- կանանց մոտ ֆիզիոլոգիական ցիկլի խանգարումներ,
- սեռական ցանկության կամ արձագանքի փոփոխություններ,
- մրսածության, գրիպի, վարակների նկատմամբ դիմադրության անկում,
- ալերգիաների, ասթմայի կամ արթրիտի առաջացում,
- մազաթափություն:

Ճանաչողական՝

- հիշողության խնդիրներ/մոռացկոտություն,
- իրադրությունում կողմնորոշվելու խնդիրներ,
- խառնաշփոթություն,
- մտածելու, վերլուծելու կամ հասկանալու դանդաղություն,
- հաշվարկի, առաջնահերթությունների կամ որոշումների կայացման դժվարություններ,
- կենտրոնանալու դժվարություն,
- ուշադրության սահմանափակ տևողություն,
- օբյեկտիվության կորուստ,
- միջադեպի մասին մտածելու դադարման անկարողություն:

Սոցիալական՝

- մեկուսացում մարդկանցից և հասարակությունից,
- լսելու դժվարություններ,
- մտքեր փոխանակելու դժվարություններ,
- դժվարություններ փոխադարձ խնդիրների լուծման մեջ ներգրավվելիս,
- ինքնամեղադրում և քննադատում,
- խմբային գործողությունների անհանդուրժողականություն,
- օգնություն և աջակցություն ընդունելու դժվարություն,
- անհամբեր և անհարգալից վերաբերմունք մյուսների նկատմամբ[36]:

Բացի դրանից, դատաքննության մասնակցելը կարող է հանգեցնել գործնական և նյութական այլ խնդիրների, որոնք տուժողը պետք է լուծի կամ կարողանա կարգավորել:

Տուժողի վրա դատավարությունն ունենում է թե՛ գործնական, թե՛ նյութական, ներառյալ՝ ֆինանսական ազդեցություն:

Դատավարության գործնական ազդեցությունը տուժողի վրա

Դատավարության գործնական ազդեցությունը կախված է դատավարությանը տուժողի մասնակցության մակարդակից: Եթե տուժողը ցանկանում է մասնակցել դատավարությանը, ապա պետք է բացակայի աշխատանքից, կազմակերպի երեխայի խնամքը, ժամանակ ծախսի դատաքննության վայր հասնելու համար (եթե դատաքննությունը տեղի է ունենում բնակության վայրից հեռու), կազմակերպի իր աջակցությունը

[36] Ցանկն ամբողջական ներկայացված է հետևյալ հղմամբ՝ https://www.omh.ny.gov/omhweb/disaster_resources/pandemic_influenza/doctors_nurses/common_stress_reactions.html:

դատավարության ժամանակ (օրինակ՝ փաստաբան վարձի, ուղեկցող գտնի և այլն): Այնուամենայնիվ, անգամ երբ նրանք որոշում են չմասնակցել դատաքննությանը, դա կարող է ունենալ գործնական պատճառներ. հնարավոր է, տուժողը ցանկանում է խուսափել դատական գործընթացին առնչվելուց, մամուլ կարդալուց, հեռուստացույց դիտելուց, դատարանի տեղակայման վայրից և այլն:

Հաշվի առնելով ազգային օրենսդրության առանձնահատկությունները՝ պետք է նշել, որ դատաքննությանը տուժողի պարտադիր մասնակից լինելը դեռ չի նշանակում, որ անձը պետք է ենթարկվի երկրորդային զոհականացման, և մինչև տուժողին մասնակցելուն պարտադրելը պետք է ապահովվեն նրա համար անվտանգ պայմաններ:

Դատավարության գործնական ազդեցությունը վտանգի ենթարկված տուժողի վրա

Դատավարության գործնական ազդեցությունը վտանգի մեջ գտնվող տուժողի վրա շատ ավելի մեծ է, քան այլ տուժողների դեպքում: Պետք է ուշադրության կենտրոնում պահել այն դեպքերը, երբ հանցագործության մասին հաղորդելը, քրեական հետապնդում իրականացնելը կարող են վտանգել տուժողին, սպառնալ նրա ընտանիքի անդամների անվտանգությանը, խախտել գաղտնիությունը կամ այլ կերպ վտանգի ենթարկել նրանց՝ հաշվի առնելով հանցագործության ռեցիդիվը, վրեժխնդրությունը և այլ պայմանները: Սա հատկապես կարևոր է զինված հարձակումների, կազմակերպված հանցագործության զոհերի դեպքում, ինչպես նաև այն դեպքերում, երբ զոհն ունի կախվածություն հանցագործից: Դա վերաբերելի է երեխաների նկատմամբ բռնությանը, ընտանեկան բռնությանը, հետապնդումներին և սեռական ոտնձգություններին աշխատավայրում, մարդկանց թրաֆիքինգին և շահագործումներին և այլն: Նման դեպքերում տուժողների կյանքին վտանգ է սպառնում, ուստի նրանք համոզված պետք է լինեն, որ պաշտպանված են, որ-

պեսզի լիարժեք կարողանան մասնակցել դատավարությանը[37]:

Դատավարության նյութական ազդեցությունը

Քննչական և դատավարական այլ գործողություններին մասնակցելը ծախսատար է. աշխատանքից բացակայելը կարող է չվճարվել, երեխայի խնամքը կազմակերպելը, տրանսպորտային և այլ ծախսերն ապահովելն երբեմն իրատեսական չեն: Երբ վտանգի ենթարկված տուժողը միջոցներ է ձեռնարկում իրեն պաշտպանելու համար, այդ ծախսերը զգալիորեն աճում են: Տուժողները, հնարավոր է, առաջին հերթին ստիպված լինեն տեղադրել հսկողության և ազդանշանային համակարգեր, առավել ծայրահեղ դեպքերում՝ տեղափոխվել բնակության այլ վայր, դիմել պահնորդական ծառայությունների և այլն: Երբեմն դա կարող է տրամադրվել պետության կողմից, սակայն հաճախ տուժողներն իրենք են հոգում այդ ծախսերը: Մասնավորապես, կողոպուտների զոհերը հաճախ ազդանշանային համակարգեր են գնում[38]:

Երկրորդային զոհականացում

Երկրորդային զոհականացումը դատավարության ամենատարածված բացասական հետևանքներից մեկն է, և զոհը հաճախ տուժում է հանցագործության մասին հաղորդում տալու համար (մանրամասն կներկայացվի թեմա 7-ում):

[37] Օգտակար տեղեկատվությունը հասանելի է հետևյալ հղումներով՝ https://iwpr.net/global-voices/witness-intimidation-serious-problem-kosovo-cases; https://www.pravdareport.com/world/119186-kosovo_serbia/; https://www.amnesty.org/en/latest/news/2014/07/dr-congo-returned-icc-witnesses-must-not-face-death-penalty-or-torture/; https://www.bbc.com/news/uk-england-london-48036140:

[38] Օգտակար տեղեկատվությունը հասանելի է https://www.securitysales.com/fire-intrusion/burglary-victimization-alarm-systems-owners/ կայքէջում, իսկ ոստիկանության համար ուղեցույցը հասանելի է https://www.lancs.live/news/lancashire-news/police-advice-after-burglary-spree-17276983 կայքէջում:

▶ Հուշումներ մասնագետների համար՝

- թույլ տվեք, որ տուժողներն երբեմն լռեն ցուցմունք տալու ընթացքում: Երբ տեսնում եք, որ նրանք անհանգիստ են (օրինակ՝ արագ շնչառություն, խոսելու դժվարություններ, կակազել, դեմքի կարմրություն, քրտնարտադրություն, դող և այլն), հարցրեք՝ արդյոք ցանկանում է ընդմիջել կամ մի փոքր հանգստանալ,
- համոզվեք, որ տուժողի համար մշտապես հասանելի է խմելու ջուրը: Տարայով կամ շշով ջուր ունեցեք դատարանի դահլիճում,
- եթե տեսնում եք, որ տուժողի զգացմունքները բորբոքվում են կամ նա անհանգիստ է, փորձեք նվազեցնել լարվածությունը՝ հայտարարեք ընդմիջում կամ օգնեք տուժողին շեղվել բորբոքող թեմայից,
- ապահովեք, որ տուժողի, նրա ընտանիքի, աջակիցների և հանցագործի միջև կապը հասցվի նվազագույնի,
- համոզվեք, որ տուժողը հասկացել է իրեն ուղղված հարցը: Եթե պաշտպանական կողմի հարցը հրահրող է կամ սադրող, առարկեք այդ հարցի դեմ կամ հանեք հարցը,
- կանխեք դատարանի դահլիճում և դրա սահմաններից դուրս տուժողին ուղղված ցանկացած բացասական վերաբերմունք և սպառնալիք:

▶ Միշտ հավատացեք տուժողին

Սուտ հաղորդում տալու դեպքերը պետք է դառնան առանձին քննության առարկա, բայց միայն դրա հիմքերի առկայության դեպքում: Տուժողին պետք չէ ի սկզբանե վերաբերել կասկածամտու-

թյամբ: Սա հատկապես վերաբերում է սեռական ոտնձգությունների դեպքերին, որտեղ տուժողին ուղղված «մեղադրանքը» վերածվում է կասկածների և կեղծ հաղորդումների մասին լուրերի:

Համաձայն ուսումնասիրությունների՝ Միացյալ Թագավորությունում սեռական բռնության զոհերի միայն 15% է հանցագործության մասին հաղորդում ներկայացնում ոստիկանություն, իսկ 85%-ը՝ ոչ: 2018թ.-ի հանցագործության մասին հաղորդում ներկայացրած անձանց 15%-ից միայն 1,5%-ի դեպքերում է տրվել դատարանի ծանուցում կամ/և առաջադրվել մեղադրանք: Դա նշանակում է, որ բռնաբարության դեպքերի միայն 0.225% քննվել և համապատասխան ներկայացվել են մեղադրանքներ[39]:

Ըստ ԱՄՆ-ի սեռական բռնության ազգային ռեսուրսների կենտրոնի՝ «սեռական ոտնձգությունների մեծամասնությունը, մոտավորապես 63% երբեք չի հաղորդվում ոստիկանություն (Ռենիսոն, 2002): Սեռական բռնության կեղծ հաղորդումների դեպքերը քիչ են (Լիսակ, Գարդինիեր, Նիքսա և Կոտե, 2010), սակայն բռնություն վերապրածները հաճախ բախվում են խոչընդոտների և ենթարկվում են փորձաքննության: Օրինակ, երբ հարձակման մասին հաղորդում է ստացվում, բռնություն վերապրածները կարող են զգալ, որ իրենց զոհականացումը վերաձևակերպվել է, աղավաղվել է գործը քննողների, ընթացք տվողների և դասակարգողների կողմից[40]:

[39] Տեղեկատվությունն առկա է՝ https://www.refinery29.com/en-gb/2019/08/239295/rape-statistics-uk և https://rapecrisis.org.uk/get-informed/about-sexual-violence/statistics-sexual-violence/ կայքէջերում:

[40] https://www.nsvrc.org/sites/default/files/2012-03/Publications_NSVRC_Overview_False-Reporting.pdf:

Ինչպես մենք մեղադրյալին տալիս ենք կասկածների մեկնաբանման հնարավորություն ի օգուտ իրեն և երաշխավորում ենք անմեղության կանխավարկածը, այնպես էլ պետք է տուժողներին տանք ի օգուտ իրենց կասկածների մեկնաբանման հնարավորություն և ենթադրենք, որ նրանք ասում են ճշմարտությունը:

Այն փաստը, որ ամբաստանյալը կարող է մեղավոր չճանաչվել, դեռ չի նշանակում, որ տուժողը ստել է, դա միայն նշանակում է, որ կոնկրետ այդ մեղադրյալը քրեական պատասխանատվության չի ենթարկվում կոնկրետ այդ հանցագործության համար:

Երբեմն տուժողները կարող են ստել այլ պատճառաբանությամբ՝ ունենալով որոշակի իրական կամ մտացածին վախեր: Հնարավորության դեպքում դատավորը պետք է պարզի այդ պատճառները:

Դաս 2. Խոցելի տուժողների մարդու իրավունքները

Խոցելի վիճակում գտնվող անձանց, մասնավորապես՝ դատավարական կարգավիճակ ունեցող (տուժող, վկա, կասկածյալ, մեղադրյալ) կարիքների ճիշտ գնահատումը և հետևաբար նրանց իրավունքների արդյունավետ պաշտպանությունը ցանկացած զարգացած պետության և քաղաքացիական հասարակության կարևորագույն խնդիր են[41]:

Կարևոր է հիշել, որ բացարձակ խոցելիություն գոյություն չունի, և այն պայմանավորված է արտաքին և ներքին տարբեր գործոնների ազդեցությամբ, սակայն որոշ հանգամանքների խոցելի լինելու հավանականությունն անհամեմատ մեծ է: Օրինակ՝ երեխան միշտ համարվում է խոցելի և պահանջում հատուկ վերաբերմունք՝ անկախ նրանից, նա ունի տուժողի, վկայի, կասկածյալի, թե մեղադրյալի կարգավիճակ, իսկ միգրանտը պարտադիր չէ, որ լինի խոցելի: Իհարկե, բոլոր դեպքերում անգամ այս կատեգորիայի անձանց նկատմամբ պետք է ցուցաբերվի զգայուն մոտեցում: Պետությունը մի շարք դեպքերում պարտավորեցնում է անձին մասնակցել քրեական դատավարությանը: Օրինակ՝ հանցագործության ականատեսը քրեական պատասխանատվության ենթարկվելու սպառնալիքի ներքո պարտավոր է ցուցմունքներ տալ, նույնիսկ այն դեպքում, երբ դա կարող է վտանգավոր լինել ականատեսի և նրա մերձավորների համար: Նման դեպքում պետությունը միաժամանակ պետք է ստանձնի դատավարական պարտականու-

[41] Թումասյան Դ., Յորդաշ Ու. Խոցելի տուժողների/վկաների և կասկածյալների մասնակցությամբ իրականացվող քննությունը, Երևան, 2017, էջ 4:

թյունները կատարած անձի անվտանգության ապահովման պարտականությունը[42]:

Կարևոր է անձին վերաբերվել որպես խոցելի խմբի ներկայացուցիչ այնքան ժամանակ, մինչև չի հաստատվել հակառակը, եթե այդ անձի հետ առաջին շփման ժամանակ առկա են կասկածներ այդ անձի խոցելիության վերաբերյալ[43]:

Խոցելի խմբերի ներկայացուցիչների համար հավելյալ երաշխիքներ նախատեսված են հետևյալ միջազգային գործիքներում՝

- Երեխայի իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիան,
- Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին ՄԱԿ-ի հռչակագիրը,
- Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիան և այլն:

Տարածաշրջանային մակարդակով խոցելի խմբերի իրավունքների պաշտպանությունը կարևորվում է բազմաթիվ ակտերով, սակայն, ինչպես արդեն նշվել է, առանձնանում է ՄԻԵԿ-ը և դրա հիման վրա ձևավորված ՄԻԵԴ-ի նախադեպերը: Մասնավորապես, մարդու տարբեր իրավունքներին ՄԻԵԴ-ն անդրադարձել է հետևյալ նախադեպերով՝ սեռով պայմանավորված տարբերակված վերաբերմունքի վերաբերյալ (Օփուզն ընդդեմ Թուրքիայի 2009թ.-ի հունիսի 9-ի վճռի, պարագրաֆ 160), սեռական կողմնորոշմամբ պայմանավորված խտրականության վերաբերյալ (Շալքն ու Կոպֆն ընդդեմ Ավստրիայի 2010թ.-ի հունիսի 24-ի, պարագրաֆ 97), հոգեկան խանգարում ունեցողների վերաբերյալ (Քեենան ընդդեմ Միա-

[42] Երեմյան Ա., Ղամբարյան Ա. ՀՀ քրեական դատավարությանը մասնակցող անձանց պետական պաշտպանությունը, Երևան, 2006, էջ 14; ՀՀ քրեական դատավարություն. Մաս 1. Գիտ. խմբ.՝ Ա. Ղամբարյան, Երևան, 2016, էջ 315:

[43] Թումասյան Դ., Յորդաշ Ու. Խոցելի տուժողների/վկաների և կասկածյալների մասնակցությամբ իրականացվող քննությունը, Երևան, 2017, էջ 11:

ցյալ Թագավորության 2001 թ.-ի ապրիլի 3-ի վճռի, պարագրաֆ 111) կամ հաշմանդամների վերաբերյալ (Գլորն ընդդեմ Շվեդիայի 2009թ.-ի ապրիլի 30-ի վճռի, պարագրաֆ 84) և հիվանդության վերաբերյալ (Կիյուտինն ընդդեմ Ռուսաստանի 2011թ.-ի մարտի 10-ի վճռի, պարագրաֆ 64):

Հատկանշական է, որ ՄԻԵԴ-ն ամրագրում է, որ «եթե հիմնարար իրավունքների սահմանափակումը կիրառվում է հատկապես խոցելի խմբի ներկայացուցչի նկատմամբ, ով արդեն իսկ անցյալում զգալի խտրական վերաբերմունքի է ենթարկվել, ապա պետական հայեցողության սահմանները պետք է զգալիորեն նեղացվեն և պետք է լինեն ծանրակշիռ պատճառներ այդ անձին վերաբերող հարցերում սահմանափակումներ կիրառելիս» (Կիուտինն ընդդեմ Ռուսաստանի 2011թ.-ի մարտի 10-ի վճռի, պարագրաֆ 63): Խոցելիությունը գնահատելիս ՄԻԵԴ-ը հանգել է նրան, որ պետությունները պարտավոր են պաշտպանել խոցելի խմբերի հանդեպ ունեցած պոզիտիվ պարտավորությունները (օրինակ՝ Օփուզն ընդդեմ Թուրքիայի 2009թ.-ի հունիսի 9-ի վճիռ): Ընդհանրապես ՄԻԵԴ-ը պետությունից և պետական իշխանություններից պահանջում է առավել ուշադիր լինել խոցելի խմբերի ներկայացուցիչների հետ առնչվելիս:

Թեմա 5. Տուժողների իրավունքների պաշտպանությունը

Տուժողների իրավունքների պաշտպանությունը սկսվում է դատավարության ընթացքում համապատասխան հարմարություններ և պայմաններ ստեղծելով ու ներդնելով: Դատավարության պայմանները պետք է լինեն այնպիսին, որպեսզի տուժողի մասնակցությունը դատավարությանը լինի նվազ տրավմատիկ: Պայմաններն արդյունավետ ներդնելու համար անհրաժեշտ է հասկանալ տուժողների կարիքները, ինչն իրականացվում է ռիսկերի գնահատման հիման վրա: Ռիսկերի անհատական գնահատումը կարող է լինել արդյունավետ գործիք՝

ապահովելու զոհերի խոցելիության բացահայտումը և կարիքների գնահատումը: Երբեմն, հարմարեցված դատավարությունը կարող է սկսվել դատական նիստերը նշանակելով այն ժամերին, երբ հարմար է տուժողին: Եթե տուժողն աշխատող միայնակ ծնող է, կարևոր է խորհրդակցել նրա հետ, թե երբ կարող է նշանակվել դատական նիստը, որպեսզի նա կարողանա կարգավորել իր աշխատանքային պարտականությունները և ապահովել երեխաների խնամքը: Եթե տուժողը խիստ տրավմատիկ վիճակում է, հաջորդ դատական նիստը կարելի է նշանակել որոշակի ժամանակ անց:

Դատավարությունը հարմարեցված է, երբ դատարանի դահլիճում այնպիսի պայմաններ են, որոնք ապահովում են տուժողների համար լավագույն և հարմար միջավայր: Երբեմն դրան կարելի է հասնել ոչ ծախսատար և պարզ գործողությունների միջոցով, օրինակ՝ անդրադառնալ որոշ զոհերի զգայունությանը և նվազեցնել հնարավոր բացասական ազդակները: Օրինակ՝ եթե տուժողն ունի լսողության խնդիրներ, ցանկալի է ապահովել մասնակիցների բարձր խոսելու հնարավորությունը, ինչը կապահովի դատավարության հաջող ընթացքը: Հաճախ լսողության խնդիր ունեցող անձինք կաշկանդվում են խնդրել, որպեսզի դատավորը կամ դատախազն անընդհատ կրկնեն հարցերը և ստիպված են պատասխանել հարցերին այնպես, ինչպես իրենք են լսել կամ հասկացել, և ոչ թե այն հարցին, որն ուղղված է եղել իրենց:

Նման տուժողների համար երբեմն օգտակար կլինի հարցերը ձևակերպել գրավոր:

> Իհարկե, գործնականում լինում են դեպքեր, երբ տուժողի կարիքներին հարմարեցված վարույթ իրականացնելը դժվար է, սակայն դատարանը պետք է հնարավորինս փորձի դրանք լուծել:

Տուժողի կարիքներին հարմարեցված միջավայրում դատաքննության անցկացման մոտեցումներից է բուժական շների

մասնակցությամբ դատավարության կազմակերպումը:

- **Բուժական շների մասնակցությամբ դատավարության կազմակերպում** (հաճախ այդ շներին անվանում են օգնող, ծառայողական, օժանդակող, թերապևտ և այլն):

Մոտ 30 տարի առաջ Նյու Յորքի ոստիկանության քննիչները ծառայության վերցրին Շեբա անունով գերմանական հովվաշուն, որը նախկինում օգնում էր կույր անձի: Այժմ նա ծառայությունից թոշակի անցած շներից էր, որ աջակցում էր սեռական բռնության զոհ դարձած երեխաներին: Շեբան ուներ հատուկ մոտեցում հանցագործության զոհերի նկատմամբ, բռնության ենթարկված երեխաները սիրում էին նրան: Տարեցներն ավելի հանգիստ էին և լիցքաթափված նրա կողքին: Սգացող ընտանիքները մխիթարվում էին նրանով[44]:

Այս նորարարությունը հետագայում ընդօրինակեց նաև ԱՄՆ դատական շների հիմնադրամը, որը նախապատրաստում և մատակարարում էր բուժական շներ, որոնք աջակցում են դատավարության խոցելի մասնակիցներին (տուժողներ, վկաներ, մեղադրյալներ)[45]:

Այժմ կան բազմաթիվ այլ կազմակերպություններ, որոնք կիրառում են նմանատիպ աջակցություն, և ոստիկանական շատ բաժանմունքներ, դատախազություններ և դատարաններ, որոնք տրամադրում են շների ծառայություններ: Այդ շներն անցնում են հատուկ պատրաստվածություն, որպեսզի կարողանան պահպանել հանգստություն և դատավարության ընթացքում ուղեկցեն տուժողին: Գիտականորեն ապա-

[44] Տես՝ http://www.vachss.com/dogs/av_dogs/sheba.html:

[45] Տե՛ս՝ https://courthousedogs.org/dogs/facility-dogs/:

ցուցված է, որ շների ներկայությամբ հարցաքննությունն առավել հեշտացնում է շփումն երեխաների հետ: Շների ակնհայտ առավելություններից են.

1. արյան ցածր ճնշում և սրտի հանգիստ աշխատանք՝ արագ վերականգնում սթրեսային իրավիճակներում,
2. սթրեսի նվազում, երբ կենդանին ներկա է,
3. արյան ցածր ճնշում, սրտի խփոց, մաշկի լավ հաղորդականություն կենդանիների ներկայությամբ,
4. միայնության զգացողության նվազում,
5. ցածր թքարտադրություն,
6. սոցիալական ակտիվության աճ,
7. բարձր ինքնարդյունավետություն, արձագանքման խմբում խնդիրների հաղթահարման կարողություն[46]:

Հետևաբար, հատուկ պատրաստված շները կարող են աջակցել խոցելի զոհերին դատական գործընթացներում: Որոշ դեպքերում պաշտպանական կողմն առարկում է շների ներկայությանը դատարանի դահլիճում, պնդելով, որ շունը կարժանանա հանրության համակրանքին և կարող է կողմնակալ վերաբերմունք ստեղծել: Նման դեպքերում դատավորները թույլ են տալիս շների ներկայությունը, սակայն շները դատարանի դահլիճ են բերվում առանց այլ անձանց ներկայության, մնում են հսկողության տակ, մյուս մասնակիցների համար անտեսանելի պայմաններում: Դատավորը տեղեկացնում է մասնակիցներին շան ներկայության մասին և նշում, որ շան ներկայության

[46] Շների կիրառման մասին մանրամասն տե՛ս՝ https://www.ncbi.nlm.nih.gov/pmc/articles/PMC3408111/table/T1/?report=objectonly:

նպատակը տուժողին սատարելն է[47]:

Եվրոպայում շների կիրառումը նման դեպքերում տարեցտարի ավելանում է: Դրանք կիրառվում են Բելգիայում, Ֆրանսիայում, Իտալիայում և Իռլանդիայում: Շատ երկրներ պատրաստում և վերապատրաստում են շների և վարժեցնողների՝ դատավարության խոցելի մասնակիցներին աջակցելու համար:

Վերը նշված մոտեցումների կիրառման հնարավորությունը դեռ կքննարկվի ապագայում ՀՀ-ում կիրառելու տեսանկյունից, սակայն ներկայիս միջազգային որոշ կարգավորումներ հնարավորություն են տալիս պաշտպանել տուժողների իրավունքները ներկա իրավակարգավորումների պայմաններում:

«Հանցագործության զոհերի պաշտպանության, աջակցության և իրավունքների նվազագույն չափանիշների հաստատման մասին և ԵՄ թիվ 2001/220/JHA շրջանակային որոշման փոխարինման մասին» Եվրախորհրդարանի և Եվրոպական միության խորհրդի թիվ 2012/29/ԵՄ հրահանգի 25-րդ հոդվածի համաձայն՝ բոլոր այն պաշտոնատար անձինք, ովքեր կարող են անձամբ շփվել հանցագործության զոհերի հետ, պետք է պետության կողմից անցնեն ընդհանուր և մասնագիտական վերապատրաստում՝ հասցնելով պատրաստվածության այն մակարդակի, որը թույլ կտա նրանց պատկերացում կազմել հանցագործության զոհերի կարիքների մասին, ցուցաբերել անկանխակալ, հարգալից և մասնագիտական վերաբերմունք[48]:

[47] Տե՛ս՝ https://www.pbs.org/video/courtroom-dogs-help-child-crime-victims-tell-their-stories-1471568200/; https://www.youtube.com/watch?v=NCPqBE-j-44 (shortest but reflects well about the benefits); https://www.youtube.com/watch?v=RIrH0z_phG4; https://www.youtube.com/watch?v=IPVdie1-Jdc&gl=BE:

[48] Նույն Հրահանգը հատուկ կարգավորում է, որ մարդու սեռով, գենդերային ինքնությամբ կամ գենդերային արտահայտումով պայմանավորված բռնության դրսևորումները, կամ որոշակի սեռի անձանց նկատմամբ

Ըստ Հրահանգի, ընտանեկան բռնության մասին խոսելիս պետք է առանձնացնել, որ այդ բռնությունը կատարվում է այնպիսի անձի կողմից, ով զոհի ներկա կամ նախկին ամուսինն է կամ զուգընկերը, կամ ընտանիքի այլ անդամ է՝ անկախ հանցագործի կողմից զոհի հետ համատեղ տնտեսություն վարելու կամ վարած լինելու հանգամանքից: Նման բռնությունը կարող է լինել ֆիզիկական, սեռական, հոգեբանական կամ գույքային, և կարող է առաջացնել ֆիզիկական, սեռական, հոգեբանական կամ գույքային վնասներ: Ընտանեկան բռնությունը լուրջ և հաճախ թաքնված սոցիալական խնդիր է, որը կարող է հանգեցնել ծանր հետևանքների՝ պարբերաբար հոգեբանական և ֆիզիկական վնասվածքներ հասցնելով, քանի որ նման դեպքերում հանցագործն այն անձն է, ում զոհը վստահում է: Այս առումով ընտանեկան բռնության զոհերի համար անհրաժեշտ են պաշտպանության հատուկ միջոցներ: Նման բռնության զոհ կանանց վրա ազդեցությունն ավելի ուժգին է, քան տղամարդկանց, և իրավիճակը կարող է սրվել, եթե կինն ունի հանցագործից կախվածություն՝ պայմանավորված տնտեսական, սոցիալական պայմաններով կամ պետությունում կացության բացակայությամբ:

ուղղված անհամաչափ բռնությունը համարվում է գենդերային բռնություն: Այն կարող է արտահայտվել զոհին ֆիզիկական, սեռական, հուզական կամ հոգեբանական, ինչպես նաև գույքային վնաս պատճառելով: Գենդերային բռնությունը համարվում է խտրականություն, ինչպես նաև զոհի հիմնարար ազատությունների խախտման դրսևորման ձև և իր մեջ ներառում է ընտանեկան բռնությունը, սեռական բռնությունը (բռնաբարություն, սեքսուալ բնույթի բռնի այլ գործողություններ և այլ ոտնձգություններ), մարդու թրաֆիքինգը, ստրկությունը և անբարո վարքագծի տարբեր ձևերը, ինչպիսիք են հարկադիր ամուսնությունները, կանանց սեռական օրգանների խեղումները և այսպես կոչված «պատվի դեմ հանցագործությունները»: Գենդերային բռնության զոհ դարձած կանայք և նրանց երեխաները հաճախ հատուկ աջակցության և պաշտպանության կարիք ունեն, քանի որ բարձր է երկրորդային և կրկնակի զոհականացման վտանգը, ինչպես նաև հաշվի առնելով սպառնալիքների և նման բռնության կատարմամբ պայմանավորված վրեժի դրսևորման վտանգները:

Այսպես, ի լրումն դատավարական առկա երաշխիքների, անհրաժեշտ է լրացուցիչ պաշտպանել երեխաներին, ինչի համար դատավորը պետք է տեղեկացված լինի վերջինիս հատուկ կարիքների, սեռով պայմանավորված առանձնահատկությունների և երեխաների դեմ ուղղված տարբեր բնույթի հանցագործությունների բնույթի ու առանձնահատկությունների մասին, ինչպես, օրինակ՝ երեխաների դեմ ուղղված սեռական հանցագործությունների դեպքում:

Այս հարցի բազմակողմանի ներկայացման օրինակ է Հանցագործության զոհ կամ վկա երեխաների մասնակցությամբ արդարադատության հարցերում ՄԱԿ-ի տնտեսական և սոցիալական խորհրդի ուղեցույցը, որի համաձայն՝ պետական մարմինները տուժող կամ վկա երեխաների կարիքները գնահատելիս պետք է հաշվի առնեն **երեխայի տարիքը, ցանկությունները, հասկացված լինելու հանգամանքը, սեռը, էթնիկական, մշակութային, կրոնական, լեզվական և սոցիալական ծագումը, սոցիալական դիրքը, սոցիալ-տնտեսական վիճակը, ներգաղթյալի կամ փախստականի կարգավիճակը, ինչպես նաև երեխայի հատուկ կարիքները, այդ թվում՝ առողջությունը, կարողություններն ու ունակությունները**:

Վարույթ իրականացնող մարմնի առջև դրված լրջագույն խնդիրներից մեկն է ապահովել մարդու իրավունքների հավասարակշռված պաշտպանություն՝ անկախ որևէ հանգամանքից, առավել ևս դատավարական կարգավիճակից: Հաշվի առնելով տուժողի և ամբաստանյալի «հակադրումը»՝ կախված տրված ցուցմունքի բովանդակությունից՝ վկաների այս կամ այն կողմին «աջակցելը» և այլ նմանատիպ իրավիճակները, դատավորը պետք է զերծ պահի տուժողին երկրորդային զոհականացումից և միևնույն ժամանակ ապահովի ամբաստանյալի պաշտպանության իրավունքը: Այս երկու արժեքների հավասարակշռված պաշտպանությունը պետք է հանդիսանա կոնկրետ քրեական գործի քննության և առանձին գործողությունների պլանավորման անկյունաքար:

ԵՄ Հրահանգի համաձայն՝ յուրաքանչյուր զոհ կամ վկա ունի իրավունքների նվազագույն շրջանակ, որոնց թվին են պատկանում՝

1 - հասկանալու և հասկացված լինելու իրավունքը (հոդված 3)[49],

2 - լիազոր/ պետական մարմնի հետ հաղորդակցման առաջին պահից տեղեկատվություն ստանալու իրավունքը (հոդված 4)[50],

[49] Պետք է ձեռնարկվեն համապատասխան միջոցներ, որոնք հնարավորություն կընձեռեն հանցագործության զոհերի հետ առաջին իսկ շփման պահից, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև քրեական դատավարության ողջ ընթացքում, զոհերին ընկալել տեղեկատվությունն ու ապահովել լիազոր մարմինների կողմից նրանց խոսքի ընկալումը՝ ներառելով վերը նշված մարմիններին տեղեկատվություն տրամադրելիս: Հանցագործության զոհերի հետ հաղորդակցումը պետք է իրականացվի բանավոր կամ գրավոր եղանակով՝ պարզ ու հասկանալի լեզվով: Հաղորդակցման ձևը պետք է ընտրվի՝ հաշվի առնելով զոհի անձնական հատկանիշները, այդ թվում՝ ցանկացած տեսակի հաշմանդամությունը, որը կարող է ազդել զոհի՝ հասկանալու և հասկացված լինելու կարողության վրա: Պետական մարմնի հետ առաջին հանդիպմանը զոհը կարող է ներկայանալ իր ընտրած անձի ուղեկցությամբ, եթե հանցագործության հետևանքով զոհը՝ հասկանալու և հասկացված լինելու համար աջակցության կարիք ունի, բացառությամբ, երբ դա հակասում է զոհի շահերին կամ խախտում է քրեական դատավարության ընթացքը:

[50] Հանցագործության զոհերը, առանց անհարկի հապաղման, պետական մարմնի հետ հաղորդակցման առաջին պահից օժտված են սահմանված իրավունքների հասանելիությամբ՝ հստակեցնելով աջակցության տեսակների, հանցագործության վերաբերյալ դիմումների տրամադրման ընթացակարգերի, պաշտպանություն, այդ թվում՝ պաշտպանության միջոցների, իրավաբանական խորհրդատվության և օգնության, ցանկացած այլ խորհրդատվության, փոխհատուցման, գրավոր և բանավոր թարգմանության իրավունքի, քրեական դատավարության ընթացքում գործող լիազոր մարմինների կողմից իր իրավունքները չապահովելու դեպքում բողոքարկման առկա ընթացակարգերի, վերականգնողական արդարադատության, կատարված դատավարական ծախսերի մասին և այլ բնույթի տեղեկատվությունը:

3 - հաղորդում տալու զոհի իրավունք (հոդված 5)[51],

4 - իրենց գործի վերաբերյալ տեղեկատվություն ստանալու իրավունք (հոդված 6)[52],

5 - բանավոր և գրավոր թարգմանության իրավունք (հոդված 7)[53],

6 - հանցագործության զոհերի աջակցության ծառայությունների մատչելիության իրավունք (հոդված 8)[54],

---

[51] Զոհը գրավոր պետք է ծանուցվի լիազոր մարմնի կողմից՝ նրանից հանցագործության կատարման մասին դիմում ստանալու վերաբերյալ՝ ծանուցագրում նշելով հանցագործության հիմնական բնութագրերը: Պետությունները պետք է երաշխավորեն, որ հանցագործության մասին դիմում ներկայացնելու ցանկություն ունեցող, բայց գործավարության լեզվին չտիրապետող զոհերին հնարավորություն կընձեռնվի բողոքը շարադրել իրենց համար հասկանալի լեզվով կամ նրանց կտրամադրվի թարգմանիչ:

[52] Հանցագործության զոհերին, առանց անհարկի հապաղման, պետք է բացատրվեն հանցագործության կատարման մասին նրանց բողոքի հիման վրա հարուցված քրեական գործի վերաբերյալ հետևյալ տեղեկությունները ստանալու իրավունքը, եթե այդ տեղեկությունները տրամադրելու մասին խնդրել է զոհը՝

ա) ցանկացած որոշում, որով մերժվում է քրեական վարույթ հարուցելը կամ դադարեցվում են քննչական գործողությունները կամ մերժվում է հանցագործի նկատմամբ վարույթի իրականացումը.

բ) դատավարության ժամանակը և տեղը, ինչպես նաև հանցագործին ներկայացված մեղադրանքների բնույթը:

[53] Պետությունները պետք է ապահովեն, որ քրեական դատավարության լեզվին չտիրապետող հանցագործության զոհերին հնարավորություն կընձեռնվի ստանալ անվճար բանավոր թարգմանություն: Չսահմանափակելով պաշտպանության իրավունքի կիրառումը՝ թույլատրվում է օգտագործել տեղեկատվական տեխնոլոգիաներ, ինչպիսիք են՝ տեսահամաժողովները, հեռախոսակապը կամ համացանցը, բացառությամբ, երբ թարգմանչի ֆիզիկական ներկայությունն անհրաժեշտ է զոհի իրավունքները պատշաճ իրականացնելու կամ դատավարության ընթացքում կատարվածը հասկանալու համար:

[54] Հանցագործության զոհերը պետք է կարողանան անվճար և գաղտնի դիմել աջակցման ծառայություններին, որոնք ծառայություն կտրամադրեն քրեական դատավարությունից առաջ, դրա ողջ ընթացքում և դատավարու-

7 - լսված լինելու իրավունք (հոդված 10)[55],

8 - քրեական գործի հարուցումը մերժելու որոշում կայացնելու իրավունքներ (հոդված 11)[56],

9 - վերականգնողական արդարադատության ընթացքում պաշտպանության միջոցների իրավունք (հոդված 12)[57],

---

թյունից հետո: Անհրաժեշտության դեպքում աջակցություն պետք է ստանան նաև զոհի ընտանիքի անդամները: Աջակցման ծառայությունները հնարավորինս պետք է լինեն մասնագիտացված, անվճար և գաղտնի:

55 Հանցագործության զոհերը պետք է լսված լինեն և կարողանան ներկայացնեն ապացույցներ: Եթե ցուցմունք է տալիս հանցագործության զոհ երեխան, ապա պետք է պատշաճ կերպով հաշվի առնել նրա տարիքն ու հասունության աստիճանը:

56 Հանցագործության զոհերը պետք է ունենան քրեական գործի հարուցումը մերժելու որոշման վերանայման իրավունք: Եթե ազգային օրենսդրությամբ սահմանված կարգով հանցագործության զոհերի դերակատարումը քրեական արդարադատության համակարգում որոշվում է միայն քրեական գործ հարուցելուց հետո, պետություններն առնվազն ծանր հանցագործությունների զոհերին պետք է իրավունք ընձեռեն վերանայել քրեական գործի հարուցումը մերժելու որոշումները:

57 Վերականգնողական արդարադատության իրականացման ընթացքում պետք է նախատեսվեն հանցագործության զոհերին երկրորդային և կրկնակի զոհականացումից, սպառնալիքներից և վրեժից պաշտպանության միջոցներ: Այդ միջոցները պետք է ապահովեն, որ վերականգնողական արդարադատությանը մասնակցելու համաձայնություն հայտնած զոհերը պետք է հնարավորություն ունենան օգտվել տրամադրվող և անվտանգության պահանջներին համապատասխանող վերականգնողական արդարադատության ծառայություններից՝ առնվազն հետևյալ պայմանների ապահովման դեպքում՝

ա) վերականգնողական արդարադատության ծառայությունները կիրառվում են միայն այն ժամանակ, երբ դա պայմանավորված է զոհի շահերով և բխում է անվտանգության նկատառումներից, զոհի գիտակցված համաձայնության առկայության դեպքում, որը կարող է վերացվել ցանկացած պահին.

բ) նախքան վերականգնողական արդարադատությանը մասնակցելու համաձայնություն հայտնելը՝ հանցագործության զոհը ստանում է լիարժեք և օբյեկտիվ տեղեկություններ այդ ընթացակարգի և հնարավոր հետևանքների մասին, ինչպես նաև տեղեկություններ ցանկացած հաշտության իրականացման ընթացքի նկատմամբ վերահսկողության մասին.

10 - իրավական օգնություն ստանալու իրավունք (հոդված 13)[58],

11 - ծախսերի հատուցման իրավունք (հոդված 14)[59],

12 - գույքի վերադարձման իրավունք (հոդված 15)[60],

13 - քրեական դատավարությունում հանցագործից փոխհատուցում ստանալու իրավունք (հոդված 16)[61],

14 - պաշտպանության իրավունք (հոդված 18)[62],

15 - տուժողի և հանցագործի միջև շփումը կանխելու

գ) հանցագործն ընդունել է գործի հիմնական հանգամանքները.

դ) ցանկացած համաձայնություն ձեռք է բերվում կամավոր հիմունքներով և կարող է հաշվի առնվել հետագա քրեական դատավարությունում.

ե) վերականգնողական արդարադատության այն բանակցությունները, որոնք հրապարակավ չեն անցկացվել և ունեն գաղտնի բնույթ, հետագայում բացահայտման ենթակա չեն, բացառությամբ կողմերի համաձայնության առկայության դեպքերի կամ գերակա հանրային շահերի առկայության դեպքում՝ ազգային օրենսդրության համաձայն:

58 Հանցագործության զոհերը հնարավորություն ունեն ստանալ իրավաբանական օգնություն:

59 Հանցագործության զոհերը պետք է ստանան այն ծախսերի հատուցումը, որոնք առաջացել են քրեական դատավարությունում ակտիվ մասնակցելու հետևանքով:

60 Հանցագործության զոհի առգրավված գույքը լիազոր մարմնի որոշմամբ հնարավորինս կարճ ժամկետում պետք է վերադարձվի զոհին, բացառությամբ այն դեպքերի, երբ գույքն անհրաժեշտ է քրեական դատավարության նպատակների համար:

61 Պետությունները պետք է երաշխավորեն (ձեռնարկելով համապատասխան միջոցներ) քրեական դատավարության ընթացքում ողջամիտ ժամկետում հանցագործից փոխհատուցում ստանալու զոհերի իրավունքը, բացառությամբ այն դեպքերի, երբ ազգային օրենսդրությամբ նախատեսված է նման որոշում կայացնելու այլ կարգ:

62 Չխախտելով պաշտպանության իրավունքը՝ պետությունները պետք է ապահովեն հանցագործության զոհերի և նրանց ընտանիքի անդամների համար պաշտպության միջոցների հասանելիությունը՝ պաշտպանելով երկրորդային և կրկնակի զոհականացումից, սպառնալիքից ու վրեժից, այդ թվում՝ հուզական և հոգեբանական վնասի վտանգից:

իրավունք (հոդված 19)[63],

16 - քրեական գործի քննության ընթացքում հանցագործության զոհերի պաշտպանության իրավունք (հոդված 20)[64],

17 - մասնավոր կյանքի պաշտպանության իրավունք (հոդված 21)[65],

---

63 Պետությունները պետք է ձեռնարկեն դատավարական գործողությունների իրականացման սենյակներում հանցագործության զոհերի և նրանց ընտանիքի անդամների ու հանցագործի միջև շփումները կանխելուն ուղղված համապատասխան միջոցներ, բացառությամբ գործի հանգամանքներով պայմանավորված դեպքերի:

64 Պետություններն ապահովում են, որ քրեական գործի քննության ընթացքում՝

ա) հանցագործության զոհերի հարցաքննություններն իրականացվում են առանց անհարկի հապաղման՝ լիազոր մարմնին հանցագործության կատարման մասին դիմում ներկայացնելուց անմիջապես հետո.

բ) հանցագործության զոհերի հարցաքննությունների թիվը հասցվում է նվազագույնի և հարցաքննությունն անցկացվում է քրեական դատավարության նպատակներից ելնելով՝ խիստ անհրաժեշտության դեպքում.

գ) զոհերն ունեն օրինական ներկայացուցչի կամ զոհի կողմից ընտրած անձի ուղեկցության իրավունք, բացառությամբ, երբ պատճառաբանված որոշում է կայացվել հակառակի մասին.

դ) բժշկական զննությունները հասցվում են նվազագույնի և անցկացվում են քրեական դատավարության նպատակներից ելնելով՝ խիստ անհրաժեշտության դեպքում:

65 Պետությունները պետք է ապահովեն, որ քրեական դատավարության ընթացքում լիազոր մարմինների կողմից որոշում կայացվի անձի մասնավոր կյանքը պաշտպանող անհրաժեշտ միջոցների կիրառման մասին, այդ թվում՝ պետք է պաշտպանվեն Հրահանգի 22-րդ հոդվածով սահմանված անհատական տվյալները, ներառյալ՝ զոհի և նրա ընտանիքի անդամների նկարները: Բացի այդ, պետությունները պետք է ապահովեն, որ մարմինները կկիրառեն բոլոր միջոցները՝ ուղղված հանցագործության զոհ երեխային բացահայտող ցանկացած տեղեկատվության տարածման կանխմանը: Ապահովելով մասնավոր կյանքի, անձնական անձեռնմխելիության և զոհի անձնական տվյալների պաշտպանությունը՝ պետությունները պետք է ապահովեն նաև խոսքի և տեղեկատվության ազատության, զանգվածային լրատվամիջոցների ազատության և բազմակարծության

18 - հանցագործության զոհերի հատուկ կարիքների բացահայտմանն ուղղված անհատական գնահատում (հոդված 22)[66],

19 - քրեական դատավարությունում պաշտպանության հատուկ կարիք ունեցող հանցագործության զոհերի պաշտպանության իրավունք (հոդված 23),

20 - քրեական դատավարությունում հանցագործության զոհ երեխաների պաշտպանության իրավունք (հոդված 24):

Հատուկ պաշտպանության կարիք ունեցող անձինք դատավարության մյուս մասնակիցներից տարբերվում են կարիքների առանձնահատկություններով, ինչի հետևանքով վարույթ իրականացնող մարմինն առաջնահերթ պետք է պարզի այդ կարիքների առկայությունը:

Հատուկ ուշադրություն պետք է դարձվի հանցագործության զոհերի նկատմամբ հարգալից վերաբերմունքի և վարույթին մասնակցելու վերաբերյալ հիմնավորված որոշում կայացնելու աջակցմանը:

Այս առումով հատկապես կարևոր տեղեկություններ են համարվում վարույթի ընթացքի մասին հստակ պատկերացում ստանալու հնարավորություն ընձեռող տեղեկությունների տրամադրումը[67]:

սկզբունքները, խրախուսեն լրատվամիջոցներին ընդունել ինքնակարգավորման միջոցներ:

66 Քանի որ Հրահանգի 22-րդ, 23-րդ և 24-րդ հոդվածները վերաբերելի են զոհերի հատուկ պաշտպանությանը, այն ավելի մանրամասն կներկայացվի հաջորդիվ:

67 Դա վերաբերում է նաև այն տեղեկատվությանը, որով թույլատրվում է զոհին բողոքարկելու քրեական գործ հարուցելու մերժման մասին որոշումը: Եթե այլ բան նախատեսված չէ, զոհին տեղեկությունը պետք է տրամադրվի բանավոր կամ գրավոր, այդ թվում՝էլեկտրոնային միջոցներով:

- **Տուժողը կամ վկան պետք է գիտակցեն իրենց մասնակցությունը դատավարությանն ու դրա կարևորությունը:**

Դատաքննության ընթացքում հանցագործության զոհերը կարող են օգտվել՝

1) զոհի և հանցագործի անմիջական շփումը բացառող միջոցներից, այդ թվում՝ ապացույցներ ներկայացնելու ընթացքում կիրառելով համապատասխան եղանակներ, ներառյալ՝ հեռահաղորդակցման տեխնոլոգիաների կիրառմամբ.
2) դատարանի դահլիճից զոհի բացակայության պայմաններում նրա ձայնը լսելու հնարավորության ապահովումից, մասնավորապես՝ համապատասխան հեռահաղորդակցման տեխնոլոգիաների կիրառմամբ.
3) հարցաքննության ընթացքում հանցագործության հետ որևէ առնչություն չունեցող հանցագործության զոհի մասնավոր կյանքի մանրամասների մասին ավելորդ հարցադրումներից խուսափելու հնարավորություն ընձեռող միջոցներից, և
4) դռնփակ դատական լսումներ անցկացնելու հնարավորությունից:

Թեմա 6. Քրեական վարույթում քաղաքացիական հայց ներկայացնելը

«Հանցագործության և իշխանության չարաշահման զոհերի արդարադատության հիմնական սկզբունքների մասին» ՄԱԿ-ի 1985թ.-ի հռչակագիրը, «Զոհի դերը քրեական իրավունքում և դատավարությունում» NR (85)11 1985թ.-ի հանձնարարականը և այլ միջազգային փաստաթղթեր առանձնացնում են զոհի գույքային իրավունքների պաշտպանությունը՝ հատուկ ուշադ-

րություն դարձնելով հանցագործությամբ պատճառված վնասը հատուցելուն ու դրա իրականացումն ապահովելու համար պայմաններ ստեղծելուն:

- *ՀՀ քր. դատ. օր.-ի համաձայն՝ հանցագործությամբ պատճառված վնասների հատուցման ավանդական ձևը քաղաքացիական հայցն է:*

ՀՀ քր. դատ. օր.-ի 158-րդ հոդվածի համաձայն՝ քրեական դատավարությունում քաղաքացիական հայց կարող է հարուցվել յուրաքանչյուր պահի՝ սկսած քրեական գործի հարուցումից մինչև դատավճիռ կայացնելու համար դատարանի հեռանալը խորհրդակցական սենյակ: Քաղաքացիական հայց հարուցվում է կասկածյալի, մեղադրյալի կամ նրա դեմ, ում վրա կարող է գույքային պատասխանատվություն դրվել մեղադրյալի գործողությունների համար: Հայցադիմումում նշվում է, թե որ քրեական գործով, ով, ում, ինչի հիման վրա և ինչ չափով է հարուցում քաղաքացիական հայց, ինչպես նաև պետք է բովանդակի խնդրանք՝ վնասի հատուցման համար կոնկրետ դրամական գումարի և գույքի բռնագանձման մասին:

ՀՀ քր. դատ. օր.-ի 154 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քրեական դատավարությունում քաղաքացիական հայցը հարուցվում, ապացուցվում և լուծվում է սույն օրենսգրքի դրույթներով սահմանված կանոններով: Քաղաքացիական դատավարական օրենսդրության նորմերի կիրառումը թույլատրվում է՝ եթե դրանք չեն հակասում քրեական դատավարության օրենսգրքին, և քաղաքացիական հայցով վարույթի համար անհրաժեշտ են կանոններ, որոնք նախատեսված չեն սույն օրենսգրքով: Փաստորեն, օրենսդիրը սահմանում է քրեական դատավարությունում քաղաքացիական դատավարական օրենսդրության նորմերի կիրառման երկու նախապայման.

1. եթե դրանք չեն հակասում քրեական դատավարության օրենսգրքին: Օրինակ՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 96–րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պատասխանողն իրավունք ունի մինչև գործով

վճիռ կայացնելը հակընդդեմ հայց հարուցել ընդդեմ հայցվորի՝ սկզբնական հայցի հետ համատեղ քննելու համար, մինչդեռ ՀՀ քր. դատ. օր.-ը հակընդդեմ հայց հարուցելու իրավական հիմքեր չի նախատեսում: Օրինակ՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 34-րդ հոդվածի համաձայն՝ վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ ներկայացնող երրորդ անձինք կարող են գործի մեջ մտնել մինչև դատարանի կողմից վճիռ կայացնելը: Նրանք օգտվում են հայցվորի բոլոր իրավունքներից և կրում են նրա բոլոր պարտականությունները, մինչդեռ ՀՀ քր. դատ. օր-ը երրորդ անձանց ինստիտուտ չի նախատեսում:

2. քաղաքացիական հայցով վարույթի համար անհրաժեշտ են կանոններ, որոնք նախատեսված չեն ՀՀ քր. դատ. օր.-ով: Օրինակ՝ ՀՀ քր. դատ. օր.-ը նախատեսում է կողմերի միջև քաղաքացիական հայցի կապակցությամբ հաշտության համաձայնության կնքման հնարավորություն, սակայն չի պարունակում դրա կնքման, դատարանի կողմից հաստատման կապակցությամբ ծագող հարաբերությունները կարգավորող նորմեր, ուստի դրանց նկատմամբ կիրառելի են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 33-րդ և 133-րդ հոդվածները:

Քրեական դատավարությունում քաղաքացիական հայցի հարուցումն ունի որոշակի առավելություններ.

1. միևնույն վարույթի շրջանակներում լուծվում են և՛ քրեական, և՛ քաղաքացիական պատասխանատվության ենթարկելու հարցերը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ պատասխանատվության երկու տեսակների կիրառումը պայմանավորված է մեկ հիմքով՝ հանցագործությամբ և դրա արդյունքում պատճառված գույքային վնասով:
2. քրեական դատավարությունում քաղաքացիական հայցը քննվում է ավելի արագ և արդյունավետ: Քրեական դատավարությունում քաղաքացիական հայց հարուցելով՝

անձն ազատվում է նույն հիմքով կրկին դատարան հայց հարուցելու միջոցով իր խախտված իրավունքները պաշտպանելու անհրաժեշտությունից:

3. քրեական դատավարությունում քաղաքացիական հայցվորն ազատվում է ապացուցման պարտականությունից, քանի որ քրեական հետապնդման մարմինների կողմից ձեռք բերված ապացույցները, ըստ էության, հիմնավորում են նաև քաղաքացիական հայցը[68]:

Առանձնահատուկ է նաև այն, որ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի «ե» կետի համաձայն՝ դատարաններում պետական տուրքի վճարումից ազատվում են հայցվորները՝ հանցագործության հետևանքով իրենց պատճառված նյութական վնասի փոխհատուցման վերաբերյալ հայցերով:

Քրեական դատավարությունում քաղաքացիական հայցը բաղկացած է որոշակի տարրերից: Հայցի տարրերը նրա բաղկացուցիչ մասերն են, որոնք որոշում են նրա բովանդակությունը, իրավական բնույթը և հնարավորություն են տալիս անհատականացնել հայցը, այն տարբերակել նույնական հայցերից[69]:

- *Քաղաքացիական հայցի տարրերն են առարկան և հիմքը:*

Քրեական դատավարությունում քաղաքացիական հայցի առարկան հանցավոր արարքի արդյունքում պատճառված գույքային վնասից բխող և քաղաքացիական հայցվորի կողմից քաղաքացիական պատասխանողին հասցեագրված նյութահրավական պահանջն է, որի կապակցությամբ դատարանը

[68] ՀՀ քրեական դատավարություն: Մաս 1/ Գլխ. խմբագիր Ա. Ղամբարյան, Երևան, Տիգրան Մեծ, 2016, էջեր 563-564:

[69] Պետրոսյան Ռ.Գ. Հայաստանի քաղաքացիական դատավարություն: ԵՊՀ հրատ, Եր.: 2007, էջ 30:

պետք է կայացնի դատավճիռ: Քրեական դատավարությունում քաղաքացիական հայցի հիմքը հայցապահանջի հիմքում ընկած փաստական տվյալները: Ֆիզիկական վնասը կարող է զուգակցվել գույքային վնասի հետ և ներառվել քաղաքացիական հայցի առարկայի մեջ: Օրինակ՝ առողջության վերականգնման համար կատարված բուժման ծախսերը:

Քաղաքացիական հայցի առարկայի մեջ կարելի է ընդգրկել նաև ոչ նյութական վնասը հատուցելու պահանջը: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 162.1-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եթե դատական կարգով հաստատվել է, որ պետական մարմնի կամ պաշտոնատար անձի որոշման, գործողության կամ անգործության հետևանքով ֆիզիկական անձի նկատմամբ թույլ է տրվել «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի 2-րդ, 3-րդ կամ 5-րդ հոդվածներով երաշխավորված իրավունքների խախտում (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի իմաստով՝ կոնվենցիոն իրավունքների խախտում), ապա այդ անձը, իսկ նրա մահվան կամ անգործունակության դեպքում՝ նրա ամուսինը, ծնողը, որդեգրողը, երեխան, որդեգրվածը, խնամակալն իրավունք ունեն դատական կարգով պահանջելու պատճառված ոչ նյութական վնասի հատուցում: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե դատապարտյալն արդարացվել է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիային կից թիվ 7 Արձանագրության 3-րդ հոդվածով նախատեսված պայմաններում, ապա նա իրավունք ունի դատական կարգով պահանջելու իրեն պատճառված ոչ նյութական վնասի հատուցում (սույն օրենսգրքի իմաստով՝ հատուցում անարդարացի դատապարտման համար): ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.2-րդ հոդվածի համաձայն՝ ոչ նյութական վնասը ենթակա է հատուցման՝ անկախ հատուցման ենթակա գույքային վնասից: Ոչ նյութական վնասը ենթակա է հատուցման՝ անկախ վնաս պատճառելիս պաշտոնատար անձի մեղքի առկայությունից: Ոչ նյութական վնասը հատուցվում է պետական բյուջեի միջոցների հաշվին: Ոչ նյութական

վնասի հատուցման չափը որոշում է դատարանը՝ ողջամտության, արդարացիության (equitableness) և համաչափության սկզբունքներին համապատասխան: Հատուցման չափը չի կարող գերազանցել՝

1) նվազագույն աշխատավարձի հազարապատիկը՝ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի 2-րդ կամ 3-րդ հոդվածներով երաշխավորված իրավունքների խախտման պարագայում, ինչպես նաև սույն օրենսգրքի 162.1 հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքում.
2) նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկը՝ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի 5-րդ հոդվածով երաշխավորված իրավունքի խախտման պարագայում:

Քրեական դատավարությունում քաղաքացիական հայցի առարկայի մեջ չեն մտնում նաև հարկային հանցագործությունների վերաբերյալ գործերով հաշվարկվող տույժ-տուգանքները[70]: «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 23-րդ և 24-րդ հոդվածների համաձայն՝ տույժ-տուգանքները կիրառվում են որպես հարկային իրավախախտման համար պատասխանատվության միջոցներ, ինչը ենթադրում է, որ եթե հարկային պարտականությունները չկատարելը հանգեցնում է քրեական պատասխանատվության, ապա դա բացառում է նույն արարքի համար վարչական պատասխանատվության ենթարկելը: Տույժը և տուգանքը կիրառվում են, երբ արարքը համարվում է հարկային (վարչական) իրավախախտում, այլ ոչ թե հանցագործություն[71]:

[70] Մարաբյան Ս. Քաղաքացիական հայցի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետության քրեական դատավարությունում: ԵՊՀ: Եր.: ԵՊՀ հրատ., 2013, էջ 84:

[71] Նույն տեղում:

Քրեական դատավարությունում քաղաքացիական հայցի առարկայի մեջ չեն մտնում ոչ գույքային բնույթի պահանջները, օրինակ՝ բնակարանի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցումն անվավեր ճանաչելու կամ ծնողական իրավունքից զրկելու պահանջները[72]:

Մասնագիտական գրականության համաձայն՝ քաղաքացիական հայց հարուցելը մինչև դատարանի խորհրդակցական սենյակ հեռանալը թույլատրելու օրենսդրական կարգավորման պարագայում հակասություն է առաջանում ՀՀ քր. դատ. օր.-ի 158-րդ և 334-րդ հոդվածների միջև: ՀՀ քր. դատ. օր.-ի 334-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված է, որ նախագահողը դատաքննությունը սկսում է՝ ամբաստանյալին նրան ներկայացված (…) քաղաքացիական հայցի հիմքերը և չափը պարզաբանելով: Եթե ելնենք այն հանգամանքից, որ հայցը կարող է հարուցվել նաև դատաքննության ընթացքում կամ ավարտին, ապա այս պահանջը կարող է երբևէ չիրականացվել, ուստի կարող ենք փաստել, որ այս նորմը կրում է դեկլարատիվ բնույթ: Մինչդեռ հայցադիմումը հրապարակելը կարևոր գործողություն է. դրանով ոչ միայն ընդգծվում են դատական քննության սահմանները, այլև հայցի հասցեատերերը հնարավորություն են ունենում հայտնելու իրենց դիրքորոշումը դրա վերաբերյալ և այլն: Երկրորդ՝ գործող իրավակարգավորումների պայմաններում (հայցը մինչև դատավճիռ կայացնելու համար դատարանի խորհրդակցական սենյակ հեռանալու պահը հարուցելու դեպքում) կարող է խախտվել նաև կողմերի մրցակցության և հայցով պատասխանողի պաշտպանության իրավունքը, քանի որ այդ դեպքում պատասխանողը բավարար հնարավորություն և ժամանակ չի ունենում առարկելու ներկայացված հայցի դեմ և այլն[73]:

[72] Մանրամասն տես՝ ՀՀ քրեական դատավարություն: Մաս 1/ Գլխ. խմբագիր Ա. Ղամբարյան, Երևան, Տիգրան Մեծ, 2016, էջեր 565-567:

[73] ՄԻԵԴ-ը գտել է, որ «կողմերի հավասարության սկզբունքի՝ որպես արդար դատաքննության ավելի լայն գաղափարի հատկանիշների մեկի համաձայն՝ յուրաքանչյուր կողմ պետք է ողջամիտ հնարավորություն ունենա

Հայց ներկայացնելու վերջնաժամկետը կրճատելու անհրաժեշտության մասին տեսության մեջ առկա մոտեցումներից ՀՀ-ում ակտիվորեն քննարկվել է այն, որ հայցը պետք է ներկայացվի մինչև դատաքննությունը սկսվելու պահը, քանի որ դա ոչ միայն կնպաստի ապացույցների հետազոտման գործընթացին, այլև կապահովի հայցից լիարժեք պաշտպանվելուն և մրցակցությանը քրեական դատավարությունում: Միաժամանակ նշվել է, որ բացառիկ դեպքերում հայց ներկայացնելու հնարավորություն կարելի է սահմանել նաև մինչև դատարանի խորհրդակցական սենյակ հեռանալու պահը՝ պայմանով, որ պետք է նիստը հետաձգվի, և պատասխանող կողմին ժամանակ և հնարավորություն տրվի պատրաստվելու հայցից պաշտպանվելուն՝ ընդհուպ ապահովելով գործի նյութերին ծանոթանալը: Բացառիկ կարող է համարվել, օրինակ, այն դեպքը, երբ հանցագործությունից վնաս կրած անձը քրեական գործով վարույթ է ներգրավվում դատական քննության փուլում (օրինակ՝ հիվանդանոցում ստացիոնար բուժում ստանալու պատճառով, կամ դատարանում է պարզվում, թե ով է վնաս կրած անձը և այլն), և տեղեկացվում է, որ նա իրավունք ունի քրեական օրենսգրքով չթույլատրված արարքով պատճառված վնասի հատուցման մասին պահանջ ներկայացնել ամբաստանյալի կամ նրա գործողությունների համար գույքային պատաս-

ներկայացնելու իր գործն այնպիսի պայմաններում, որոնք մի կողմին մյուսի նկատմամբ չեն դնում անբարենպաստ դրության մեջ […]»/ Ֆուչերն (Foucher) ընդդեմ Ֆրանսիայի գործով ՄԻԵԴ-ի 1997թ.-ի մարտի 18-ի որոշում, պարագրաֆ 34; Բալաթն (Bulut) ընդդեմ Ավստրիայի գործով ՄԻԵԴ-ի վճիռը, 1996թ.-ի փետրվարի 22, պարագրաֆ 47/: Կողմերի հավասարության սկզբունքն ապահովում է, որ պաշտպանության կողմը մեղադրանքի կողմի հետ իր գործը նախապատրաստելու և ներկայացնելու հավասար՝ ողջամիտ հնարավորություն ունի: Դրա պահանջները ներառում են պաշտպանությունը նախապատրաստելու համար բավարար ժամանակ և հնարավորություններ՝ ներառյալ մեղադրանքի կողմից նյութական տեղեկությունների բացահայտումը և այլն/ Ֆուչերն (Foucher) ընդդեմ Ֆրանսիայի գործով ՄԻԵԴ-ի 1997թ.-ի մարտի 18-ի որոշում, պարագրաֆներ 35-36:

խանատվություն կրող անձի դեմ և օգտվում է իր այդ իրավունքից[74]:

Միջազգային միտումների և զոհակենտրոն մոտեցումների համաձայն՝ նման բացառիկությունն այդքան էլ չի բխում զոհի շահերից, ով ցանկացած պահին հատուցում ստանալու պահանջով դիմելու իրավունք պետք է ունենա: Այսինքն, զոհակենտրոն մոտեցման համաձայն՝ վարույթը պետք է հարմարեցվի զոհին, այլ ոչ թե սահմանափակվի նրա իրավունքը կամ բարդացվի դրա իրացումը:

Դատական պրակտիկայի ուսումնասիրության համաձայն՝ որպես կանոն, դատարանների կողմից հանցագործությամբ պատճառված վնասի հատուցման մասին որոշումներ են կայացվում հայցադիմումի բացակայության պայմաններում: Դատարանների կողմից վնասի հատուցման մասին որոշում կայացնելու համար հիմք է ընդունվում տուժողի մինչդատական վարույթում կամ դատական քննության ընթացքում արված բանավոր հայտարարությունը[75], որը, փաստորեն, դիտվում է որպես հայցի հարուցում[76]: Առավել տարածված պրակտիկայի համաձայն՝ հայցադիմումի փոխարեն տուժողների կողմից քննիչի անունով դիմում է ներկայացվում հայցվոր ճանաչելու խնդրանքով, իսկ վերջիններս էլ դրա հիման վրա

[74] Մանրամասն տե՛ս՝ Մարաբյան Ս. Քաղաքացիական հայց հարուցելու դատավարական կարգի հիմնախնդիրները ՀՀ քրեական դատավարությունում (գործող օրենսդրության, դատական պրակտիկայի և զարգացման մասին իրավական վերլուծություն)// ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գիտաժողովի նյութերի ժողովածու, Երևան, 2012, էջ 358:

[75] Տե՛ս, օրինակ, Արարատ Հովելի Դավթյանի վերաբերյալ Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանի 2007թ.-ի դատավճիռը Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանի արխիվում:

[76] Կարևոր է նշել, որ առանց օրենքով սահմանված կարգով ներկայացված հայցադիմումի՝ հանցագործությամբ պատճառված վնասների հատուցման մասին որոշումներ կայացնելու դեպքեր արձանագրված են եղել նաև ՀՀ ԴՆԽ-ի կողմից 2006թ.-ի կատարված դատական պրակտիկայի ուսումնասիրությունների ժամանակ, որի կապակցությամբ ԴՆԽ-ն իր 2006թ.-ի

որոշում են կայացնում անձին քաղաքացիական հայցվոր ճանաչելու մասին: Այսպես, ԵՔՐԴ/0630/01/08 գործով Գ.Մ.-ն քաղաքացիական հայցվոր է ճանաչվել իր դիմումի համաձայն, որում, մասնավորապես, նշված է՝ «Մալաթիա քննչական բաժնի քննիչ Ա.Բ.-ին, ... Գ.Մ.-ից դիմում՝ ես՝ որպես սույն քրեական գործով տուժող Գ.Մ.-ս, դիմում եմ Ձեզ խնդրանքով, որպեսզի 2008թ.-ի օգոստոսի 2-ին ինձանից հափշտակված 35.000 ՀՀ դրամի չափով, ինձ ճանաչեք որպես քաղաքացիական հայցվոր»: Բացի այդ, որ դատարանները պատճառված վնասի հատուցման հարցը հաճախ քննարկման առարկա չեն դարձնում այն պատճառաբանությամբ, որ թեև մինչդատական վարույթում անձը ճանաչվել է հայցվոր, սակայն դատարանին պատշաճ կազմված հայցադիմում չի ներկայացրել[77]:

«Զոհի դերը քրեական իրավունքում և դատավարությունում» R (85)11 հանձնարարականի 4-րդ կետի համաձայն՝ մեղադրող մարմինների յուրաքանչյուր զեկույցում ոստիկանությունը պետք է կատարի հնարավորինս հստակ և լրիվ նշում զոհին պատճառված վնասների ու կորուստների մասին, իսկ 12-րդ կետի համաձայն՝ զոհին պատճառված վնասների և կորուստների մասին համապատասխան ամբողջական տեղեկատվությունը պետք է ներկայացվի դատարան, որպեսզի նա կարողանա դա հաշվի առնի պատժի տեսակը և չափը որոշելիս:

հունիսի 13-ի թիվ 100 որոշմամբ դատարաններին պարզաբանել է, որ «... 2. Քրեական դատավարությունում քաղաքացիական հայցը կարող է քննության առնվել ՀՀ քր. դատ. օր.-ի 158-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներին համապատասխան ներկայացված հայցադիմումի առկայության դեպքում, բացառությամբ ՀՀ քր. դատ. օր.-ի 164-րդ հոդվածով նախատեսված բացառիկ դեպքերի: 3. Քաղաքացիական հայցը ՀՀ քր. դատ. օր.-ի 158-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներին չհամապատասխանեցնելու դեպքում, դատարանը, ՀՀ քր. դատ. օր.-ի 159-րդ հոդվածի համաձայն, կայացնում է որոշում հայցադիմումն ընդունելուց հրաժարվելու մասին»: Սակայն առայսօր այդ պրակտիկան շարունակվում է:

[77] Օրինակ, թիվ ՀՅՔՐԴ 2/0150/1/08 քրեական գործը դատարանների արխիվում:

Անկախ նրանից՝ տուժողը հայց ներկայացրել է, թե՞ ոչ, վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է վնասի բնույթի և չափի մասին հստակ նշում անել մեղադրական եզրակացության մեջ. ելնելով այս հանգամանքից՝ որևէ խոչընդոտ չի կարող լինել նաև վարույթն իրականացնող մարմնի կողմից հայցադիմում կազմելու համար:

Այսպիսով, մինչդատական վարույթում հանցագործությունից վնաս կրած անձը վարույթն իրականացնող մարմիններին դիմում է հայցվոր ճանաչելու խնդրանքով: Դա կարող է լինել ինչպես բանավոր, որը մտցվում է համապատասխան գործողության արձանագրության մեջ, այնպես էլ գրավոր՝ հայցադիմումի կամ սովորական դիմումի ձևով: Այդ փուլում կարող են պարզ չլինել ինչպես վնասի չափը, այնպես էլ հայցով պատասխանողը:

Քննության արդյունքներով և ներկայացված պահանջների հաշվառմամբ՝ քննիչն օրենքին համապատասխան կազմում է հայցադիմում: Հետագայում՝ քրեական գործի նյութերին ծանոթանալու ժամանակ, այդ հայցադիմումը ներկայացվում է հայցվորին ստորագրման և կցվում է մեղադրական եզրակացությանը՝ որպես հավելված:

Հայցը դատարան ներկայացվելու դեպքում պետք է համապատասխանի օրենքով սահմանված պահանջներին, հակառակ դեպքում դատարանը կարող է վերադարձնել հայցադիմումն այն ներկայացրած անձին՝ թերությունները վերացնելու և կրկին ներկայացնելու համար: Թերությունները վերացվելու և եռօրյա ժամկետում կրկին ներկայացվելու դեպքում հայցն ընդունված է համարվում սկզբնական ներկայացնելու օրը[78]:

[78] Մանրամասն տես՝ Մարաբյան Ս. Քաղաքացիական հայց հարուցելու դատավարական կարգի հիմնախնդիրները ՀՀ քրեական դատավարությունում (գործող օրենսդրության, դատական պրակտիկայի և զարգացման մասին իրավական վերլուծություն)// ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գիտաժողովի նյութերի ժողովածու, Երևան, 2012, էջեր 35-368:

Թեմա 7. Երկրորդային զոհականացումն ու տուժողների խոցելիությունը

Երկրորդային զոհականացում նշանակում է, որ զոհականացումը տեղի է ունեցել ոչ թե հանցավոր արարքի ուղղակի ազդեցության արդյունքում, այլ տարբեր հաստատությունների և անհատների կողմից տուժողին արձագանքելու միջոցով:

ԵԽ Նախարարների կոմիտեի կողմից 2006թ.-ի հունիսի 14-ին սահմանվել է Հանցագործությունների զոհերին օգնություն ցույց տալու վերաբերյալ առաջարկությունը, որի համաձայն՝ երկրորդային զոհականացումը հաճախ արտացոլվում է պետական ներկայացուցիչների վարքագծի և վերաբերմունքի մեջ, որոնք տուժողին ուղղակի կամ անուղղակի մեղադրում են իր նկատմամբ կատարված արարքի համար, անհարգալից են կամ ոչ զգայուն:

Երկրորդական զոհականացման բնորոշ օրինակ է՝ բռնաբարությունից տուժող կնոջը հարցնել, թե ինչո՞ւ էր նա կարճ հագուստ կրում բռնաբարվելու օրը կամ ինչո՞ւ էր նա գիշերը միայնակ քայլում փողոցում: Այս եղանակով պատասխանատվությունը հանցագործից «տեղափոխվում է» զոհի վրա, որն իրեն դրել է այդ վտանգավոր իրավիճակի մեջ:

Առկա են հարցեր և ձևակերպումներ, որոնք, «օրինական» լինելով, կարող են հանդիսանալ երկրորդական զոհականացման աղբյուր, երբ ուղղվում են տուժողների որոշակի խմբերի ներկայացուցիչներին (երեխա, հաշմանդամություն ունեցող անձ, սեռական բռնության զոհ, ընտանեկան բռնության զոհ և այլն):

ԵՄ Հրահանգի 22-րդ հոդվածի համաձայն՝ պետությունները պետք է ապահովեն, որ ազգային ընթացակարգերին համապատասխան հանցագործության զոհերը ժամանակին կանցնեն **անհատական գնահատում՝ երկրորդային և կրկնակի զոհականացման, սպառնալիքի կամ վրեժի հանդեպ նախատրամադրվածության տեսանկյունից՝** Հրահանգի 23-րդ և 24-րդ հոդվածներով նախատեսված պաշտպանության հա-

տուկ կարիքների բացահայտման և հատուկ միջոցների կիրառման արդյունավետության աստիճանը որոշելու նպատակով: Անհատական գնահատումն իրականացնելիս պետք է, մասնավորապես, հաշվի առնել՝

ա) զոհի անհատական բնութագիրը.

բ) հանցագործության տեսակն ու բնույթը, և

գ) հանցագործության կատարման հանգամանքները:

Այդ գնահատման անցկացման դեպքում հատուկ ուշադրություն պետք է դարձնել այն զոհերին, ում ծանր հանցագործությամբ պատճառվել է էական վնաս, կամ հանցագործությունը կատարվել է ատելության շարժառիթով կամ խտրականությունից ելնելով, ինչը հնարավոր է պայմանավորված լինի անձնական հատկանիշներով: Հետևաբար, անհրաժեշտ է պատշաճ կերպով ուսումնասիրել ահաբեկչության, կազմակերպված հանցավորության, մարդու թրաֆիքինգի կամ շահագործման, սեռով պայմանավորված բռնության, ընտանեկան բռնության, սեռական բռնության, ատելության շարժառիթով կատարված հանցագործությունների զոհերի, ինչպես նաև սահմանափակ կարողություններով զոհերի վերաբերյալ դեպքերը:

▶ Տուժողի կարիքների գնահատմանը դատավորը կարող է ներգրավել մասնագետ (հոգեբան, սոցիալական ծառայող, մանկավարժ և այլն):

Հանցագործության զոհ երեխաներն ունեն պաշտպանության հատուկ կարիք՝ ելնելով երկրորդային և կրկնակի զոհականացման, սպառնալիքի և վրեժի հանդեպ նախատրամադրվածությունից: Երեխաները նույնպես անցնում են նախատեսված անհատական գնահատում, սակայն անհատական գնահատման սահմանները կարող են տարբերվել՝ կախված հանցագործության ծանրության աստիճանից և զոհին պատճառված ուղղակի վնասից:

Անհատական գնահատման արդյունքում նախատեսված հատուկ միջոցները չպետք է կիրառվեն, եթե կազմակերպչական կամ գործնական սահմանափակումները դրանց կիրառումը դարձնում են անհնարին, ինչպես նաև այն դեպքերում, երբ առկա է զոհին հարցաքննելու հրատապ անհրաժեշտություն և եթե նման գործողության չիրականացումը կարող է հանգեցնել հանցագործության զոհին կամ որևէ երրորդ անձին վնաս պատճառելուն կամ կարող է բացասաբար ազդել դատավարության արդյունքների վրա:

ԵՄ Հրահանգի 24-րդ հոդվածի համաձայն՝ հանցագործության զոհ երեխայի դեպքում պետությունները պետք է ապահովեն, որ՝

1) քրեական գործի քննության ընթացքում հանցագործության զոհ երեխայի մասնակցությամբ բոլոր հարցաքննությունները տեսաձայնագրվեն և նման տեսաձայնագրությունները քրեական դատավարությունում օգտագործվեն որպես ապացույց.
2) լիազոր մարմինները հանցագործության զոհ երեխայի համար նշանակեն հատուկ ներկայացուցիչ, եթե ազգային օրենսդրությամբ սահմանված կարգով ծնողական պարտականություններ իրականացնող անձանց արգելվում է ներկայացնել երեխայի շահերը՝ այնպիսի անձանց և հանցագործության զոհ երեխայի միջև շահերի բախման հետևանքով կամ եթե հանցագործության զոհ երեխան չունի ուղեկցող անձ կամ բաժանվել է ընտանիքից.
3) այն դեպքում, երբ հանցագործության զոհ երեխան ունի փաստաբանական ծառայություններ ստանալու իրավունք, և եթե առկա է կամ կարող է լինել շահերի բախում հանցագործության զոհ երեխայի և ծնողական պարտականություններ իրականացնող անձանց միջև, երեխան ունի նաև իրավաբանական օգնություն ստանալու և փաստաբանի կողմից իր անունից դատավարությունում շահերի ներկայացման իրավունք:

Երկրորդային զոհականացման իրավիճակներ են համարվում՝

- **Անհարկի այնպիսի հարցեր տալը, որոնք կապված չեն հանցագործության հետ:** Օրինակ՝ սեռական բռնության զոհին հարցնել իր պահվածքի մասին, ահաբեկչության զոհին հարցնել, թե ինչու է հենց այդ գնացքը նստել, կողոպուտի զոհին հարցնել, թե ինչու չեն օգտագործել ավելի լավ ազդանշանային համակարգ, կամ հարձակման զոհին հարցնել, ինչու չի կարողացել պաշտպանել իրեն: Զոհը մեղավոր չէ, որ նա տուժել է որևէ հանցագործությունից, ուստի նա չպետք է զգա, թե իրեն մեղադրում են կատարվածի համար: Դա չի նշանակում, որ այս առնչությամբ ոչ մի հարց չի թույլատրվում. եթե ինչ-որ մեկի մեքենան գողացել են, քանի որ նրանք թողել են բանալին ավտոմեքենայում, այս հանգամանքի շուրջ հարցաքննելն արդարացված է և հիմնավոր:

- **Կրկնակի հարցաքննություն** – հաճախ տուժողներին հարցաքննում է ոստիկանությունը, այնուհետև՝ քննիչը, դատարանը և այլն, և նրանք մի քանի անգամ կրկնում են իրենց ցուցմունքները դատաքննության տարբեր փուլերում: Նույն հանգամանքների վերաբերյալ կրկնակի հարցաքննությունը տուժողների համար կարող է լինել նյարդայնացնող, անհարգալից և վնասակար: Ավելին, դեպքերի վերհիշումը ժամանակի ընթացքում փոխվում է, և վկայությունն այդպիսով կարող է փոփոխվել, քանի որ ժամանակի ընթացքում տուժողը կարող է հիշել ավելին կամ կարող է մտաբերել այլ մանրամասներ: Դա չի նշանակում, որ նրանք ստում են կամ հորինում. նրանք ավելի ուշ են վերականգնվում տրավմայից և ի վիճակի են մտաբերել իրադարձությունների որոշակի տարրեր ավելի ուշ փուլերում:

- **Դատավարության անհարկի ձգձգումներ.** հաճախ դատավարությունը հետաձգելու կամ տեղափոխելու կարիք է առաջանում: Ամեն հետաձգման դեպքում տուժողը, ով պատրաստ է մասնակցել դատական նիստին, կարող է իրեն հիաս-

թափված կամ «դավաճանված» զգալ՝ առավել ևս անորոշության պայմաններում: Ի լրումն գրավոր ծանուցագրերի՝ կարևոր է հայտարարել հետաձգման մասին, և եթե տուժողը դատարանի դահլիճում է, դատավորը պետք է անձամբ բացատրի հետաձգման պատճառները:

- **Հաղորդակցման և տեղեկատվության խափանում** – տուժողներն ակնկալում են հարգանք իրենց անձի նկատմամբ, հակառակ դեպքում կառաջանա երկրորդական զոհականացում: Սա առավել ակնհայտ է այն դեպքում, երբ տուժողների հետ հաղորդակցումը պատշաճ չի իրականացվում, տեղեկատվությունն ամբողջական և ժամանակին չի տրամադրվել անգամ այն դեպքում, երբ դատավարությունն ավարտվում է մեղադրական դատավճռով և հիմնավորվում է տուժողի նկատմամբ հանցագործություն կատարելու փաստը:

- **Չափազանցված ներողամտություն մեղադրյալի նկատմամբ** - պատժի միակ նպատակը մեկուսացումը և հատուցումը չեն: Ռեստիտուցիան, վերականգնումը, վերադաստիարակումը, արդարության վերականգնումը կարևոր դեր են խաղում քրեական արդարադատության համակարգում և պետք է հաշվի առնվեն պատժատեսակի և պատժաչափի որոշման և կիրառման ժամանակ: Այնուամենայնիվ, տուժողները կարող են բացասաբար արձագանքել չափազանց մեղմ պատժին: Նրանք կարծում են, որ մեղադրյալի ապագայի նկատմամբ մտահոգություններն ավելի շատ են, քան կատարված հանցագործության համար համարժեք պատիժ նշանակելը: Այնուամենայնիվ, երբ տուժողը ներողամտություն է դրսևորում և խնդրում է մեղմ պատիժ նշանակել ամբաստանյալի նկատմամբ, դա կարող է հաշվի առնվել՝ մեղմ պատիժ նշանակելիս, եթե այդ դիրքորոշումը տուժողի վրա հարկադրանքի կամ որևէ այլ ազդեցության հետևանք չէ:

Երկրորդային զոհականացման և փոխհատուցման որոշում

Տուժողների կարիքները համակարգելու և իրավիճակը գնահատելու անհրաժեշտությունը ցույց տալու համար ճիշտ կլինի դիտարկել երկրորդային զոհականացման վտանգը, երբ դատարանները չեն բավարարում տուժողի քաղաքացիական հայցը քրեական դատավարությունում, ինչը բավականին հաճախ հանդիպող երևույթ է: Քրեական և քաղաքացիական պատասխանատվությունները հստակ տարբերվում են, և տեսականորեն տուժողները պետք է կարողանան քաղաքացիական հայց ներկայացնել քրեական դատավարությանը զուգահեռ, իսկ քաղաքացիական դատարանները պետք է կասեցնեն իրենց վարույթը՝ սպասելով քրեական գործի ավարտին: Նման կարգավորում նախատեսված է նաև ՀՀ օրենսդրությամբ:

Այսպես, տուժողները հայտնվում են այնպիսի իրավիճակում, երբ պետք է սպասեն քրեական գործի ավարտին, որպեսզի վերսկսվի քաղաքացիական վարույթը կամ քաղաքացիական հայց պետք է ներկայացնեն քրեական դատավարությունում:

Այս դատավարությունները ոչ միայն ծախսատար և ժամանակատար են, այլ նաև կարող են տուժողի համար ավարտվել ոչ ցանկալի արդյունքով, օրինակ՝ կարող է պարզվել, որ մեղադրյալը տարիներ առաջ վաճառել է իր ամբողջ ունեցվածքը, և որևէ հատուցում չի վճարելու:

Լավագույն լուծումն այս քաշքշուկից խուսափելու և երկրորդական զոհականացումը կանխելու համար՝ զոհերի փոխհատուցման հիմնադրամի ստեղծումն է, ինչպես դա իրականացվել է Ֆրանսիայում, Նիդեռլանդներում, Շվեդիայում և այլ երկրներում:

Հատկապես հետաքրքիր է ֆրանսիական համակարգը. ամեն տարի Ֆրանսիայի զոհերի փոխհատուց-

ման հիմնադրամը հավաքում է հարյուր միլիոնավոր եվրո գումար՝ հիմնականում ավտոտրանսպորտային միջոցների հարկերից (սեփականատերերից՝ 1,2% և ապահովագրողներից՝ 1%) և անշարժ գույքի ապահովագրությունից (2015թ.-ին 4,5 եվրո ֆիքսված փոխարժեքից): Միայն 2015թ.-ին այդ երկու հարկատեսակների մասով հավաքագրվել է ավելի քան 600 միլիոն եվրո: Աշխարհի ցանկացած երկրում, բռնության զոհ դարձած յուրաքանչյուր ֆրանսիացի, ինչպես նաև Ֆրանսիայում բռնության զոհ դարձած ցանկացած անձ՝ անկախ իրենց ազգային պատկանելությունից, ստանում է փոխհատուցում, որը սահմանվում է այդ հիմնադրամի կողմից և հիմնված է հանցագործության տեսակի, հետևանքների, և պայմանավորված չէ մեղադրյալի վճարունակությամբ: Փոխհատուցումը տրվում է այն պահին, երբ պարզվում է, որ հանցագործություն է տեղի ունեցել՝ անկախ այն հանգամանքից՝ հանցագործը հայտնի է, ձերբակալվել է, գործը կքննվի դատարանի կողմից, թե՝ ոչ: Եթե հանցագործը հայտնի է, պետությունը կարող է փոխհատուցում պահանջել տուժողին արդեն իսկ վճարված փոխհատուցման դիմաց: Այնուամենայնիվ, փոխհատուցումն երբեք կախված չէ այն հանգամանքից՝ արդյոք պետությունը կկարողանա այն հետ գանձել մեղադրյալից, թե՝ ոչ: Այս համակարգում տուժողը որևէ շփում չունի հանցագործի հետ փոխհատուցման առնչությամբ. ընթացակարգը համեմատաբար պարզ է և հստակ: Տուժողից չի պահանջվում վարչական ռեսուրսներ կամ գումար ծախսել, չկա բժշկական հետազոտությունների լրացուցիչ կարիք, բացակայում են բարդ այլ պահանջներ: Ի սկզբանե միանվագ կատարվող բուժզննումը վճարվում է պետության կողմից[79]:

[79] Ֆրանսիայի զոհերի փոխհատուցման հիմնադրամի մասին մանրամասն տես՝ https://www.fondsdegarantie.fr/indemniser/:

Դռնբաց դատավարության և լրատվամիջոցների դերն երկրորդային զոհականացման համատեքստում

Երկրորդային զոհականացման ռիսկն առավել ակնհայտ է այն դեպքերում, երբ առկա է լրատվամիջոցների բարձր հետաքրքրվածությունը և ներգրավվածությունը: Դատարանները պետք է հատկապես ուշադիր լինեն նման իրավիճակներում լրատվամիջոցներին ղեկավարելու գործում՝ կիրառելով տարբեր գործիքներ և մեխանիզմներ, ինչպիսիք են սահմանափակ մուտք դատական նիստերի դահլիճ կամ դռնփակ դատաքննություն: Այնուամենայնիվ, դա պետք է լինի ծայրահեղ միջոց՝ հաշվի առնելով հասարակական իրազեկվածության կարևորությունն արդար դատաքննության համար: Սակայն, որոշ դեպքերում, դա ծայրահեղ անհրաժեշտ է, քանի որ տուժողների իրավունքներն ունեն գերակայություն:

Եվրոպական որոշ երկրների օրենսդրության և պրակտիկայի համաձայն՝ դա չի նշանակում, որ լրատվամիջոցները չեն կարող մասնակցել դատավարությանը, պարզապես նրանց հրահանգվում է չհրապարակել զոհերի ինքնությունը, նույնիսկ այն դեպքում, երբ նրանց դա հայտնի է: Հրահանգի կատարումն ապահովելու համար սահմանված են տուգանքներ կամ այլ պատժամիջոցներ:

Դատարանները պետք է պաշտպանեն տուժողներին անցանկալի հրապարակայնությունից և հասարակության սևեռված ուշադրությունից: Սա հատկապես կարևոր է, երբ ենթադրյալ հանցագործները կամ տուժողները հանրային անձինք են կամ դեպքը ներկայացնում է հանրային հետաքրքրություն:

Հուշումներ մասնագետների համար

Երկրորդային զոհականացումից խուսափելու համար կարևոր կանոնը հարգանքն ու տուժողի իրավունքների ճանաչումն է: Անհրաժեշտ է հարգել տուժողին, պատշաճ կերպով հաղորդակցվել և համոզվել, որ նա հասկանում է, թե ինչ է կա-

տարվում դատավարության ընթացքում և ինչու է դա կարևոր: Դա նշանակում է նաև տուժողների ակնկալիքների կառավարում: Չնայած վերոնշյալը գլխավորապես մեղադրող կողմի կամ տուժողների օրինական ներկայացուցչի պարտականությունն է, այնուամենայնիվ, դատարանը, չեզոք մնալով, պետք է նաև համոզվի, որ տուժողն իրատեսական ակնկալիք ունի դատավարությունից:

Տուժողների ակնկալիքները պետք է ընկալվեն որպես արդարացված, նույնիսկ եթե դրանք հնարավոր չէ բավարարել: Սա սկսվում է, վստահելով զոհին, հաղորդելով նրան խոչընդոտների և պատճառների մասին, եթե նույնիսկ օրենքով հնարավոր չէ ակնկալիքները բավարարել:

- *Դատավարությունը միշտ պետք է լինի արդար: Դատարանը ոչ մի բարեհաճություն չի կատարում տուժողի նկատմամբ՝ պատժելով հանցագործին:*

Թեմա 8. Խոցելի տուժողների խմբերը (միջազգային և ազգային օրենսդրություն) և պաշտպանության կարիք ունեցող տուժողների նույնացումը

Խոցելի խմբերի ներկայացուցիչները, ինչպես և ցանկացած անձ, օժտված են մարդու իրավունքների ամբողջականությամբ, հետևաբար, պետք է ապահովել ՄԻԵԿ-ով նախատեսված նրանց բոլոր իրավունքների պաշտպանությունը: Ավելին, այդ իրավունքների պաշտպանությունը պետք է իրականացվի առաջնահերթ:

Խոցելի խմբերի ներկայացուցիչների պաշտպանության հիմնախնդիրներին անդրադառնալուց առաջ պետք է իրականացնել այդպիսի անձանց շրջանակի հստակեցում, քանի որ ո՛չ միջազգային, ո՛չ էլ ազգային օրենսդրությամբ նման սահ-

մաններ ուրվագծված չեն: Միջազգային պրակտիկայում ընդունված է հատուկ պաշտպանության կարիք ունեցող անձանց բաժանել երկու խմբի՝

1) ովքեր մշտապես ունեն հատուկ պաշտպանության կարիք - երեխաներ, փախստականներ, մարդու թրաֆիքինգի կամ շահագործման զոհերը, սեռական հանցագործության զոհերը, ընտանեկան բռնության զոհերը,
2) ովքեր հատուկ պաշտպանության կարիք ունեն՝ ելնելով կոնկրետ հանգամանքներից - կանայք, ազգային և սեռական փոքրամասնությունները, օտարերկրյա քաղաքացիներ կամ քաղաքացիություն չունեցող անձինք, հաշմանդամներ, տարբեր իրավիճակներով պայմանավորված իրենց իրավունքներն ու շահերն ինքնուրույն պաշտպանելու հնարավորությունից զրկված անձինք:

Եթե առանձին խոցելի խմբերի պարագայում ՀՀ օրենսդրությամբ առկա է որոշակի կարգավորում, ապա նույնը հնարավոր չէ ասել ընդհանրական համատեքստում՝ առհասարակ խոցելի լինելու հիմքով պայմանավորված առանձնահատկությունների մասին: Մասնավորապես, բավարար կարգավորված է երեխաների, մարդու թրաֆիքինգի կամ շահագործման ենթարկված անձանց, սեռական հանցագործության ենթարկված անձանց առնչվող իրավահարաբերությունները, ինչը բացակայում է այլ կատեգորիայի խոցելի անձանց պարագայում: Օրինակ՝ վերը նշված ԵՄ Հրահանգի կիրառման ընթացքում առաջնահերթությունը պետք է տրվի երեխաների շահերին՝ Երեխայի հիմնարար իրավունքների մասին ԵՄ խարտիայի և Երեխայի իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի համաձայն: Երեխաները պետք է կարողանան իրականացնել իրենց իրավունքները՝ հաշվի առնելով նրանց՝ սեփական կարծիքը ձևավորելու կարողությունը: Հրահանգը կիրառելիս պետք է ապահովվի, որ հանցագործության զոհ հաշմանդամները Հրահանգով սահմանված իրավունքներն իրականացնեն լիարժեք և այլ անձանց հետ հավասար հիմքերով, մասնավորապես՝

պետք է ապահովել այդպիսի անձանց մուտքն այն տարածք, որտեղ իրականացվում է քրեական գործով վարույթը, ինչպես նաև պետք է ապահովել տեղեկատվության մատչելիությունը:

Դատավորները պետք է հստակ գիտակցեն, որ խոցելի կարող են լինել նաև չափահաս անձինք, ովքեր նույնպես կարող են երկրորդային զոհականացման ենթարկվեն և ունեն պաշտպանության լրացուցիչ կարիք՝ նախաքննության ողջ ընթացքում:

Հանցագործության բնույթով և հանգամանքներով պայմանավորված խոցելիությունը որոշելիս հաշվի են առնում՝

- հանցագործության բնույթը,
- հանցագործության ծանրացնող հանգամանքները,
- հանցագործության ուղղակի և անուղղակի հետևանքները (իրական և հնարավոր),
- հանցագործության շարժառիթներն ու նպատակները,
- հանցագործի և տուժողի փոխհարաբերությունները[80]:

Այս հանգամանքներով պայմանավորված՝ խոցելիությունը հանգեցնում է նրան, որ տուժողը քննության ընթացքում ավելի զգայուն է սպառնալիքների նկատմամբ և առկա է երկրորդային զոհականացման իրական վտանգ, ինչը պայմանավորված է վերջինիս անհատական առանձնահատկություններով:

▶ **Հանցագործության բնույթով և հանգամանքներով պայմանավորված խոցելիությունը պետք է գնահատվի բազմակողմանի:**

Իհարկե, հանցագործության հանգամանքները կրում են անհատական բնույթ և դատավորների կողմից տարբերակված են ուսումնասիրվում, սակայն վերը նշված հատկանիշով պայմա-

[80] Մանրամասն տե՛ս՝ Թումասյան Դ., Յորդաշ Ու. Խոցելի տուժողների /վկաների և կասկածյալների մասնակցությամբ իրականացվող քննությունը, Երևան, 2017, էջեր 33-34:

նավորված խոցելի անձանց լայն շրջանակի առկայությունը չի կարող անտեսվել: Հետազոտությունները ցույց են տալիս, որ տուժողների և վկաների նկատմամբ սպառնալիքներն առավել տարածված են սեռական և ընտանեկան հանցագործությունների դեպքում, այն դեպքերում, երբ հանցագործն ու տուժողը/վկան ծանոթ են, երկրորդային զոհականացման դեպքում, ռասայական շարժառիթներով կատարված հանցագործությունների դեպքում: Երբեմն վկաները վախենում են արդյունավետ ապացույց չներկայացնելու մտքից, ինչից ելնելով առաջանում է լրացուցիչ աջակցության և օգնության կարիք[81],

Որոշ երկրներում, մասնավորապես Մեծ Բրիտանիայում, սեռական և ընտանեկան բռնության զոհերը, ռասայական, կրոնական, սեռական կողմնորոշման շարժառիթներով կատարված հանցագործությունների, բանդիտիզմի զոհերը, կրկնակի զոհ դարձած անձինք, ինչպես նաև տարեց և թույլ/հիվանդոտ մարդիկ համարվում են խոցելի խմբերի ներկայացուցիչներ[82],

ԵՄ զոհերի իրավունքների վերաբերյալ հրահանգի 22-րդ հոդվածը սահմանում է զոհերի խոցելիության ճանաչման երեք հիմնական չափանիշ.

Այս երեք գործոնների համադրության արդյունքում յուրահատուկ կերպով ձևավորվում է տուժողի խոցելիությունը:

- հանցագործության տեսակը,
- հանցագործության հանգամանքները,
- տուժողի հանգամանքները:

[81] The United Kingdom Ministry of Justice, Achieving Best Evidence in Criminal Proceedings: Guidance on interviewing victims and witnesses, and guidance on using special measures, (2011) Crown Prosecution Service, էջ 6:

[82] The United Kingdom Ministry of Justice, Achieving Best Evidence in Criminal Proceedings: Guidance on interviewing victims and witnesses, and guidance on using special measures, (2011) Crown Prosecution Service, para. 1.11. Հասանելի է https://www.cps.gov.uk/publications/docs/best_evidence_in_criminal_proceedings.pdf հղմամբ:



Այնուամենայնիվ, հասկանալով, որ բոլոր զոհերն ունեն նույն հիմնական կարիքները, և որ զոհերի որոշ խմբեր ունեն որոշ համատեղ և ընդհանուր կարիքներ՝ մենք հեշտությամբ կարող ենք նույնականացնել խոցելիությունը հետևյալ բուրգի միջոցով.



Զոհերի կարիքներին պատշաճ արձագանքելու առաջին քայլն անհատական գնահատումն է:

Տուժողների խոցելիության առնչությամբ ԵԽ Հրահանգի 22-րդ հոդվածի համաձայն՝ նախագծվել է զոհերի իրավունքների վերաբերյալ անհատական գնահատման իրականացման ուղեցույց: Այն մանրամասնում է, թե ինչպես կարելի է գնահատել յուրաքանչյուր տուժողին՝ հաշվի առնելով երկրորդային զոհականացման, վրեժխնդրության, հատուցման և երկրորդային զոհականացման խոցելիությունը[83]:

Անհատական գնահատումը Մեծ Բրիտանիայում

Եթե տուժողը հանցագործության մասին հաղորդում է ներկայացնում, ապա վարույթ իրականացնող մարմինը պետք է ապահովի, որ տուժողն անհատապես գնահատվի՝հասկանալու նրա պաշտպանության հատուկ կարիքները և պարզելու՝ տուժողի պաշտպանությունից օգտվելու փաստն ու աստիճանը: Գնահատման բնույթը պայմանավորված է բոլոր հանգամանքներով, ներառյալ՝ հանցա-

[83] Նման գործիքներ կիրառվում են Ֆրանսիայում, Լեհաստանում և այլ երկրներում՝
http://www.justice.gouv.fr/publication/evvi_guide_en.pdf; https://asgp.unicatt.it/asgp-Individual_assessm_corp_violence_victims.pdf:

գործության ծանրությունը և տուժողի կողմից կրած վնասի աստիճանը: Գնահատումը պետք է հաշվի առնի տուժողի անձնական հատկանիշները, նրա հայացքները և հանցագործության բնույթն ու հանգամանքները: Եթե մարմինը գիտակցում է, որ տուժողի հանգամանքները զգալիորեն փոխվել են, ապա գնահատումը պետք է վերանայվի:

Հարցաքննություններ

Տուժողին հարցաքննելիս վարույթ իրականացնող մարմինը պետք է ապահովի հետևյալ քայլերը.

- իրականացնի հարցաքննությունը հանցագործության կատարման մասին բողոքը ստանալուց հետո՝ առանց անհիմն հետաձգման,
- հնարավորության սահմաններում կրճատի հարցաքննությունների քանակը և միայն իրականացնի այն հարցաքննությունները, որոնք խիստ անհրաժեշտ են քննության համար,
- թույլ տա, որ տուժողին ուղեկցի վերջինիս կողմից ընտրված անձը, եթե հակառակ հիմնավոր որոշում չի կայացվել, և
- բժշկական փորձաքննություն նշանակել միայն այն դեպքում, երբ դա խիստ անհրաժեշտ է քրեական դատավարության նպատակների համար, իսկ մյուս դեպքերում՝ հնարավորինս նվազեցնել բժշկական զննումների քանակը:

Եթե վարույթ իրականացնող մարմինը հարցաքննում է տուժողին, նա անհրաժեշտության դեպքում պետք է քայլեր ձեռնարկի՝ ապահովելու, որ տուժողը (և նրա ընտանիքը) չունենա ավելորդ առնչություն հանցագործի հետ: Եթե անհատական գնահատման գործընթացի արդյունքում վարույթ

իրականացնող մարմինը տուժողին ճանաչել է որպես անձ, որն ունի հատուկ պաշտպանության կարիք, և որը հարցաքննության ընթացքում պետք է օգտվի հատուկ պաշտպանության միջոցներից, ապա վարույթ իրականացնող մարմինը պետք է ապահովի նաև, որ.

- տուժողի հետ բոլոր հարցաքննություններն իրականացնի նույն անձը, եթե, իհարկե, դա չի վնասի հետաքննության պատշաճ իրականացմանը,
- անհրաժեշտության դեպքում հարցաքննությունը տեղի ունենա հատուկ նախատեսված/ հարմարեցված տարածքներում,
- հարցաքննություններն անցկացվեն հատուկ այդ նպատակով վերապատրաստված մասնագետների կողմից կամ վերջիններիս միջոցով, և
- սեռական, գենդերային կամ ընտանեկան բռնության դեպքերում տուժողներին տրվի հնարավորություն, որ իրենց հարցաքննությունն անցկացվի միևնույն սեռի անձի կողմից: Ցանկացած այդպիսի խնդրանք, հնարավորության դեպքում, պետք է բավարարվի, եթե, իհարկե, դա չի վնասի քննության պատշաճ իրականացմանը[84]:

Երեխաներ

Երեխա է համարվում 18 տարին չլրացած յուրաքանչյուր անձ, սակայն դա չի նշանակում, որ 18 տարին չլրացած բոլոր անձանց պետք է միանման վերաբերվել՝ անգամ հստակորեն պատկերացնելով նրանց խոցելիության մասին: Տարբեր իրա-

[84] Տե՛ս՝ https://assets.publishing.service.gov.uk/government/uploads/system/uploads/attachment_data/file/476900/code-of-practice-for-victims-of-crime.PDF:

վական համակարգերում գոյություն ունի երեխաների՝ լսված լինելու իրավունքի տարիքային սահմանափակում դատավարության ընթացքում, այսինքն՝ երբ դատարանն արտահայտվելու հնարավորություն է տալիս տուժող երեխային: Սովորաբար այդ սահմանափակումը նախատեսված է մոտավորապես 10-12 տարեկան երեխաների համար, և այս տարիքից փոքր տուժողները կարող են հնարավորություն չունենան արտահայտվելու, սակայն նման մոտեցումը ճիշտ չէ, քանի որ դա չի բխում երեխայի լավագույն շահից[85]:

Տուժող երեխաների պարագայում պետք է հարգվեն փոխկապակցված հետևյալ սկզբունքները՝

ա) ***արժանապատվություն.*** յուրաքանչյուր երեխա յուրօրինակ և բարձրարժեք մարդկային էակ է, և որպես այդպիսին՝ նրա անհատական արժանապատվությունը, հատուկ կարիքները, հետաքրքրությունները և անձնական կյանքը պետք է հարգվի և պաշտպանվի.

բ) ***խտրականության բացառում.*** յուրաքանչյուր երեխա արդարացի և հավասար վերաբերմունքի իրավունք ունի՝ անկախ իր, իր ծնողի կամ օրինական ներկայացուցչի ռասայից, ծագումից, մաշկի գույնից, սեռից,

[85] «Երեխայի լավագույն շահը» երեխայի իրավունքների երաշխավորման սկզբունքներից է, որի առանցքում նրա բարեկեցության ապահովումն է՝ նպատակ ունենալով առավելագույնս երաշխավորել երեխայի անվտանգությունը, ինչպես նաև նրա առաջնահերթ կարիքների բավարարումն է ու խնամքը: Ըստ «Երեխաների իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի՝ «երեխայի լավագույն շահը» գնահատելը նշանակում է գնահատել բոլոր այն տարրերը, որոնք անհրաժեշտ են երեխայի կյանքում որևէ միջամտություն իրականացնելու համար: Ընդ որում, այդ որոշումը բավական անհատական է, քանի որ յուրաքանչյուր դեպք, յուրաքանչյուր երեխա անհատ է և պահանջում է առանձնահատուկ մոտեցում: Երեխայի լավագույն շահի գնահատումն ենթադրում է հարցազրույցների իրականացում երեխայի և նրա ծնողների/խնամակալների հետ, տնային այցելությունների իրականացում, տեղեկատվության ստացում բոլոր այն կառույցներից, որտեղ երեխան ընդգրկված է եղել նախկինում կամ ընդգրկված է տեղեկատվության ստացման պահին:

լեզվից, կրոնից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային, էթնիկ կամ սոցիալական ծագումից, գույքային դրությունից, հաշմանդամությունից, ծննդյան կամ այլ կարգավիճակից.

գ) ***երեխայի լավագույն շահ.*** յուրաքանչյուր երեխա իրավունք ունի պահանջելու, որպեսզի իր լավագույն շահերին առաջնային ուշադրություն դարձվի: Դա ներառում է պաշտպանության և ներդաշնակ զարգացման հնարավորությունների իրավունքը:

Որոշ դեպքերում երեխաների հետ աշխատանքի սկզբունքները հետևյալներն են՝

- խտրականության բացառումը,
- երեխայի լավագույն շահը,
- գոյատևումն ու զարգացումը,
- լսված լինելու իրավունքը:

Տուժող երեխան առնվազն ունի հետևյալ իրավունքները՝

1. արժանապատիվ ու կարեկցող վերաբերմունքի արժանանալու իրավունք,
2. խտրականությունից պաշտպանված լինելու իրավունք,
3. տեղեկացված լինելու իրավունք,
4. լսված լինելու և տեսակետներ ու մտահոգություններ արտահայտելու իրավունք (իր տարիքին և զարգացվածությանը համապատասխան),
5. արդյունավետ օժանդակություն ստանալու իրավունք,
6. մասնավոր կյանքի գաղտնիության իրավունք,
7. արդարադատության գործընթացում զրկանքներից պաշտպանված լինելու իրավունք,
8. անվտանգության իրավունք,
9. պատճառված վնասի հարթման իրավունք,

10. հատուկ կանխարգելիչ միջոցների իրավունք[86]:

Ինչպես առաջարկվում է ՀԻԳ-ի կողմից, ցանկացած տարիքային սահմանափակում պետք է հանվի, և երեխայի շահը, զարգացվածությունը և կարողությունները պետք է լինեն երեխայի՝ դատավարությանը մասնակցության բացառիկ հիմքեր, որոնք պետք է հիմնված լինեն յուրաքանչյուր երեխայի անհատական գնահատման հիման վրա[87]: Երեխահեն լավագույն մոդելներից մեկը Բառնահաուս մոդելն է, որը լայն կիրառում է ստացել տարբեր երկրներում[88]:

Բառնահաուս մոդելի կիրառումը՝ նախատեսված զոհ երեխաների համար

Բառնահուսը (բառացիորեն՝ Երեխաների տուն) երեխայակենտրոն, միջոլորտային և բազմաոլոր-

[86] Մանրամասն տես՝ Թումասյան Դ., Գրավեսոն Ք. Օրենքի հետ առնչվող երեխաների նկատմամբ վերաբերմունքի ընդհանուր կանոններն ու առանձնահատկությունները (ձեռնարկ քննիչների համար), Երևան, 2016, էջ 11:

[87] Երեխաների՝ դատավարության մասնակցության տարիքի մանրակրկիտ համեմատական վերլուծության համար տես՝ ՀԻԳ. Երեխաների իրավունքներն ու արդարադատությունը. ԵՄ-ում նվազագույն տարիքային պահանջները՝ հետևյալ հղմամբ՝ https://fra.europa.eu/sites/default/files/fra_uploads/fra-2018-minimum-age-children-rights_en.pdf:
Քրեական դատավարության ընթացքում որպես տուժող և վկա երեխաների մասնակցության վերաբերյալ համապարփակ ակնարկը տես՝ ՀԻԳ. Երեխայակենտրոն արդարադատություն – դատական գործընթացներում երեխաների՝ որպես տուժող, վկա կամ կողմ հանդես գալու հեռանկարներն ու փորձը՝ հետևյալ հղմամբ՝ https://fra.europa.eu/en/publication/2017/child-friendly-justice-childrens-view:
Սեռական բռնությունների զոհ դարձած երեխաների նկատմամբ վերաբերմունքի մասին տես Մեծ Բրիտանիայի մեղադրողների համար նախատեսված ուղեցույցում հետևյալ հղմամբ՝ https://www.cps.gov.uk/legal-guidance/child-sexual-abuse-guidelines-prosecuting-cases-child-sexual-abuse:

[88] Մանրամասն տե՛ս՝ https://www.childrenatrisk.eu/promise/eubarnahus/:

տային հաստատություն է՝ նախատեսված զոհ և վկա երեխաների համար, որտեղ վերջիններս կարող են հարցաքննվել և ենթարկվել բուժզննման, դատական փորձաքննությունների, բազմակողմանիորեն հետազոտվել և ստանալ համապատասխան բուժում համապատասխան մասնագետների կողմից:

Բարնահաուս մոդելը ձևավորվել է 1980-ական թթ.-ին ԱՄՆ-ում ընդունված Երեխաների շահերի պաշտպանության մոդելով, և հիմնադրվել Իսլանդիայում 1988թ.-ին՝ հետագայում տարածվելով նաև Հյուսիսային Եվրոպայի այլ երկրներում (Շվեդիա՝ 2005թ.-ին, Նորվեգիա՝ 2007թ.-ին, Գրենլանդիա՝ 2011թ.-ին, Դանիա՝ 2013թ.-ին և այլն):

Բարնահաուս մոդելը հատուկ իրավահամակարգ է, որն արձագանքում է ենթադրյալ բռնության կամ շահագործման ենթարկված երեխաների հատուկ կարիքներին: Այս իրավահամակարգի հիմքում ընկած է այն սկզբունքը, որ տվյալ իրավիճակներում երեխաների կարիքներն էականորեն տարբերվում են միևնույն իրավիճակում գտնվող մեծահասակների կարիքներից և դա պետք է մասնագետների կողմից պարտադիր հաշվի առնվի:

Բռնության կամ շահագործման ենթարկված երեխան չպետք է մի քանի անգամ հարցաքննվի տարբեր մարմինների կողմից տարբեր վայրերում: Նման հարցաքննությունները կարող են տրավմատիկ լինել երեխայի համար և այդ «երկրորդային զոհականացումը» կարող է նույնիսկ ավելի վնասակար հետևանքների հանգեցնել, քան ինքնին ոտնձգությունը: Ավելին, հետազոտությունները ցույց են տվել, որ այն մարդկանց կողմից կատարված կրկնակի հարցաքննությունները, որոնք չեն անցել հարցաքննությունների անցկացման վերաբերյալ հատուկ վերապատրաստում, իրենց հարցերով հիմնականում շեղում են երեխայի մտապահած

դեպքերի ընթացքը՝ բացասաբար անդրադառնալով քրեական գործի քննության վրա:

Պետք է երեխայի համար բարենպաստ միջավայր ապահովել քննչական գործողությունների ժամանակ, ինչը կնվազեցնի երեխայի անհանգստության մակարդակը, որն էլ իր հերթին կարևոր է երեխայի կողմից ներկայացվող տեղեկությունները հաջող բացահայտելու համար:

Այսինքն՝ Բառնահաուսի նպատակն է ծառայել բոլոր երեխաների լավագույն շահին, ինչպես նաև ապահովել իրավական գործընթացի պատշաճ իրականացումը[89]:

Բառնահաուսում մատուցվող ծառայություններն են՝

1) հարցաքննություններ,

2) բուժզննում,

3) բուժական ծառայություններ,

4) ընտանեկան խորհրդատվություն/աջակցություն:

Բառնահաուսը, ըստ նկարագրության, ունի չորս «սենյակ» և դրանցից յուրաքանչյուրն իրականացնում է հատուկ գործառույթ: Դրանք են՝

[89] Բառնահաուսի թիրախային խմբեր են հանդիսանում այն երեխաները, ովքեր՝ 1. հնարավոր է ենթարկվել են սեռական ոտնձգության (Իսլանդիա), 2. հավանաբար ենթարկվել են ծանր հանցագործությունների (կյանքի և առողջության դեմ ուղղված հանցագործություններ), ապօրինի զրկվել են անձնական ազատությունից, ենթարկվել են թրաֆիքինգի, ապօրինի ճնշման, ապօրինի սպառնալիքի, ոտնձգության և այլ հանցագործությունների (ազատության և խաղաղության դեմ ուղղված հանցագործություններ) (Շվեդիա), 3. ականատես են եղել մերձավորի նկատմամբ բռնության (Շվեդիա): Նաև թիրախ խմբեր են հանդիսանում՝ 4. կանայք, ովքեր սեռական օրգանների խեղման զոհ են դարձել (Շվեդիա), 5. զարգացման խանգարումներ ունեցող մեծահասակները (Նորվեգիա):

- քրեական հետապնդում,
- համագործակցություն/ պաշտպանություն,
- ֆիզիկական առողջություն,
- հոգեկան առողջություն:

Ավելին, Բառնահաուսը մի վայր է, որտեղ սոցիալական ծառայությունները, ոստիկանությունը, դատախազությունը/ քննչական մարմինը, դատաբժշկական ծառայությունը, մանկաբուժական և երեխաների ու դեռահասների հոգեբուժական ծառայությունը համատեղ են աշխատում և համագործակցում են միմյանց հետ՝ հատկապես նախաքննության և սոցիալական աջակցության սկզբնական փուլերում[90]:

Դատաքննության ընթացքում դատավորները պարտավոր են դրսևորել երեխաների նկատմամբ զգայուն մոտեցում, այսինքն՝ դրսևորել երեխայի նկատմամբ այնպիսի մոտեցում, որի դեպքում առաջնային ուշադրություն է դարձվում երեխայի պաշտպանության իրավունքին և հաշվի են առնվում երեխայի անհատական կարիքներն ու տեսակետները՝ նախապատվություն տալով երեխայի լավագույն շահին:

▶ Երեխայի հետ վարվի՛ր այնպես, ինչպես կցանկանայիր, որ վարվեին քո երեխայի հետ, այսինքն՝ հարգալից և արդարացի:

Երեխայի լավագույն շահի հասկացությունն ազգային օրենսդրությամբ նախատեսված չէ, սակայն այն որոշվում է հստակ չափանիշներով, որոնց ամրագրմանն ուղղված աշխատանք-

[90] Ակնարկը պատրաստվել է Ֆ. Նիսայի կողմից՝ Felicia Nica for Child Protection Hub for South East Europe, 2016. Հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://childhub.org/en/promising-child-protection-practices/what-barnahus-and-how-it-works:

ներ տարվում են[91]: ՀՀ վճռաբեկ դատարանը, չնայած չի ամրագրել «երեխայի լավագույն շահ» հասկացությունը, սակայն իր 2012թ.-ի մարտի 23-ին թիվ ԵԱՔԴ/0474/02/11 քաղաքացիական գործով կայացրել է նախադեպային որոշում, որում մասնավորաբար նշել է՝ «...դատարաններն երեխայի իրավունքները շոշափող ցանկացած գործ քննելիս առաջնայնությունը պետք է տան **երեխայի շահերի առավել ապահովմանը**: .... Ընդ որում, դատարանը հաշվի է առնում երեխայի կապվածությունը ծնողներից յուրաքանչյուրի, քույրերի ու եղբայրների հետ, երեխայի տարիքը, ծնողների բարոյական և անձնական այլ հատկանիշներ, ծնողներից յուրաքանչյուրի և երեխայի միջև գոյություն ունեցող հարաբերությունները, երեխայի դաստիարակության ու զարգացման համար պայմաններ ստեղծելու հնարավորությունը (ծնողների գործունեության (աշխատանքի) բնույթը, նրանց գույքային ու ընտանեկան դրությունը և այլն):»[92]: Այս նախադեպային որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանը փաստացի տարբերակում է օրինականությունն ու երե-

[91] Մասնավորապես՝ ՀՀ ընտանեկան օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագծի 1-ին հոդվածի համաձայն՝ նախատեսվում է ՀՀ ընտանեկան օրենսգրքի 1-ին հոդվածի 1-ին մասում լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ չորրորդ և հինգերորդ պարբերություններ. «Երեխայի նկատմամբ իրականացվող ցանկացած գործողություն պետք է բխի նրա լավագույն շահերից: Երեխայի լավագույն շահերի ապահովումն ուղղված է երեխայի իրավունքների արդյունավետ և ամբողջական իրականացմանը, ինչպես նաև երեխայի զարգացմանը, հաշվի առնելով երեխայի մտավոր և ֆիզիկական կարիքները, այդ կարիքների բավարարման համար համապատասխան խնամքի առկայությունը, երեխայի զարգացման համար ծնողի և ընտանիքի այլ անդամների հետ շփվելու կարևորությունը, ինչպես նաև երեխայի մշակութային, լեզվական, հոգևոր կամ կրոնական կապերը կամ դաստիարակությունն ու նշանակությունն ընտանեկան միջավայրում և այլ կարիքները և պահանջները (այսուհետ՝ Երեխայի լավագույն շահեր): Եթե որևէ նորմ կարող է տարաբնույթ մեկնաբանվել, ապա այն մեկնաբանվում է ի օգուտ երեխայի: Երեխայի իրավունքներն ունեն նախապատվություն ծնողների իրավունքների նկատմամբ:»:

[92] Քաղաքացիական գործ թիվ ԵԱՔԴ/0474/02/11՝ Գուրգեն Խալաթյանի

խայի շահերի ապահովումը և հորդորում է ստորադաս դատարաններին երեխայի շահերի առավել արդյունավետ ապահովմանը:

Երեխայի լավագույն շահի պաշտպանությանը ՀՀ վճռաբեկ դատարանն անդրադարձել է նաև ծնողական իրավունքների սահմանափակման վերաբերյալ գործերով, մասնավորապես՝ թիվ ԵԱԴԴ/1513/02/08[93] և ԵԱՔԴ/1095/02/08[94] քաղաքացիական գործերով:

Պետք է նկատել, որ գործնականում հանդիպում են դեպքեր, երբ վարույթն իրականացնող մարմինն երեխայի մասնակցու-

---

վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 14.12.2011 թ.-ի որոշման դեմ՝ ըստ հայցի Անի Մարտիրոսյանի ընդդեմ Գուրգեն Խալաթյանի՝ երեխայի խնամքն ու դաստիարակությունը մորը հանձնելու և երեխայի բնակության վայրն ըստ մոր բնակության վայրի որոշելու պահանջների մասին և ըստ Գուրգեն Խալաթյանի հակընդդեմ հայցի՝ Անի Մարտիրոսյանին ծնողական իրավունքներից զրկելու, երեխայի խնամքն ու դաստիարակությունը հորը հանձնելու պահանջների մասին:

93 Քաղաքացիական գործ թիվ ԵԱԴԴ/1513/02/08՝ Մարգարիտ Հովհաննիսյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 10.11.2010 թ.-ի որոշման դեմ՝ ըստ հայցի Մարգարիտ Հովհաննիսյանի ընդդեմ Արթուր Թորոսյանի, երրորդ անձ Երևանի Դավթաշեն վարչական շրջանի խնամակալության և հոգաբարձության մարմնի՝ երեխայի հետ տեսակցության կարգ սահմանելու պահանջի մասին և Արթուր Թորոսյանի հակընդդեմ հայցի՝ ծնողական իրավունքները սահմանափակելու պահանջի մասին:

94 Քաղաքացիական գործ թիվ ԵԱՔԴ/1095/02/08՝ Ռազմիկ Հարությունյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 27.05.2009 թ.-ի որոշման դեմ՝ ըստ Սոֆյա Ավետիսյանի, Մերուժան Ավետիսյանի, Մանե Ավետիսյանի հայցի ընդդեմ Ռազմիկ Հարությունյանի, Ամալյա Ստեփանյանի՝ երեխայի հետ շփման, խնամքին ու դաստիարակությանը մասնակցելու կարգ սահմանելու պահանջների մասին, և ըստ Սոֆյա Ավետիսյանի, Մերուժան Ավետիսյանի հայցի ընդդեմ Ռազմիկ Հարությունյանի՝ երեխայի նկատմամբ Ռազմիկ Հարությունյանի ծնողական իրավունքը սահմանափակելու և երեխայի խնամքն ու դաստիարակությունը Սոֆյա Ավետիսյանին և Մերուժան Ավետիսյանին հանձնելու պահանջների մասին:

թյամբ կատարվելիք գործողությանը ներգրավում է հոգեբանի: Օրինակ՝ դատարանում քննվող քրեական գործերից մեկով, որը վերաբերում էր 4-5 տարեկան երեխաների նկատմամբ անառակաբարո գործողություններ կատարելու դեպքին, դատարանը դիմել էր ՀՀ արդարադատության նախարարության «Իրավախախտում կատարած անձանց վերականգնողական կենտրոն» ՊՈԱԿ-ին և խնդրել էր նշանակել հոգեբանի, որպեսզի վերջինը դատական քննության փուլում օգնի երեխայի հարցաքննությանը, որին ի պատասխան դատարանին էր ներկայացվել հոգեբան-ուսուցիչ: Թեև դատախազը և տուժողի ներկայացուցիչ փաստաբանը բացարկ էին հայտնել հոգեբանին, առարկություններ էին ներկայացրել դատարանի գործողությունների դեմ այն պատճառաբանությամբ, որ օրենքով նախատեսված չէ նման կարգ, սակայն դատարանն երեխայի հարցաքննությունն իրականացրել էր հոգեբանի մասնակցությամբ[95]: Քրեական դատավարությանը մասնակցելու համար ցանկալի է հրավիրել մանկական կամ տարիքային գործոնով մասնագիտացված, հոգեբանության բնագավառում փորձառու մասնագետի: Երեխաների նկատմամբ կատարված սեռական հանցագործությունների գործերով վերջիններս բախվում են սթրեսի, շոկային իրավիճակների, որոնք առաջանում են կատարվածի բացասական գործոնների ազդեցությունից: Նշված վիճակն իր հերթին հանգեցնում է երեխաների հուզական անկայունության, այդ իսկ պատճառով երեխայի նկատմամբ սեռական բռնության կիրառման վերաբերյալ գործերով անհրաժեշտ է հոգեբանի՝ բժշկական հոգեբանության բնագավառի մասնագետի մասնակցություն: Ենթադրվում է, որ քննչական գործողություններին հենց այդպիսի հոգեբանի մասնակցությունը կարող է օգտակար լինել մի շարք գործնական

[95] Մեկ այլ դեպքում տուժողի օրինական ներկայացուցիչը դատարանին միջնորդություն էր ներկայացրել, որպեսզի երեխայի հարցաքննությունն իրականացվի փորձառու հոգեբանի մասնակցությամբ, ընդ որում՝ ոչ դատական նիստերի դահլիճում, ամբաստանյալի և պաշտպանի բացակայությամբ:

խնդիրների լուծման հարցում, այդ թվում՝ երեխայի հետ կոնտակտի հաստատման հարցում դատավորին օժանդակություն ցուցաբերելը (մանկավարժի և ներկայացուցիչների հետ համատեղ)՝ քննչական գործողությունների կատարման տակտիկայի որոշման և ցուցմունք տալու հարցում երեխայի վերաբերմունքի մշակման համար, ինչպես նաև հուզական ծանրաբեռնվածության հաղթահարման գործում աջակցության ցուցաբերում՝ պայմանավորված տարբեր բացասական գործոններով: Այս առումով ուշագրավ է, որ երեխաների նկատմամբ անառակաբարո գործողությունների վերաբերյալ քրեական գործով դատարանը դիմել էր մարզպետին և խնդրել դատական նիստին ապահովել մանկահասակ երեխաների հետ աշխատանքի փորձ ունեցող մանկավարժի և հոգեբանի կամ մանկավարժ-հոգեբանի մասնակցությունը, որպեսզի աջակցեն տուժող երեխաների հարցաքննությանը: Ի պատասխան դատարանի խնդրանքի, մարզպետի կողմից երեխայի հարցաքննությանը մասնակցելու համար ներկայացվել էին մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի մասնագետներ՝ մանկավարժը և հոգեբանը, որոնք ոչ միայն մասնակցել էին հարցաքննությանը, այլև մեկնաբանություններ էին ներկայացրել երեխայի տված ցուցմունքների վերաբերյալ և այլն: Այսպիսով, կարող ենք արձանագրել, որ հոգեբանի մասնակցությամբ քննչական կամ դատավարական գործողություններ կատարելու դրական փորձ առկա է, որը պարզապես անհրաժեշտ է լայնորեն կիրառել և ձևավորել միջազգային չափանիշներին համապատասխանող իրավակիրառ պրակտիկա, որը կլուծի նաև երեխայի իրավունքների և օրինական շահերի պաշտպանության և ապահովման հարցը[96]:

[96] Մարաբյան Ս., Թումասյան Դ., Գևորգյան Դ. Երեխաների նկատմամբ բռնության բնութագիրը և քննության առանձնահատկությունները, Երևան, 2019, էջեր 102-103:

▶ Հատուկ պաշտպանության կարիք ունեցող խմբերից առաջնայինն երեխաներն են: Անձին պետք է վերաբերվել որպես երեխա, եթե նրա տարիքն անհայտ է և հիմքեր կան ենթադրելու, որ նրա 18 տարեկանը դեռ չի լրացել:

Դատական գործընթացում երեխայի անվնաս մասնակցության և երկրորդային զոհականացման կանխման համար առաջնահերթ են գործի քննության իրականացումն առավելագույն հնարավոր սեղմ ժամկետներում, ինչպես նաև երեխային աջակցող մասնագետի անփոփոխ լինելը գործընթացի ողջ ընթացքում: Սա դարձնում է իրավիճակն առավել կանխատեսելի և ստեղծում է իրավիճակի նկատմամբ վերահսկողության զգացում, ինչը կարևորագույն նպաստավոր հոգեբանական գործոններից է տրավմատիկ իրավիճակներում: Վերահսկողության զգացողությանն է նպաստում նաև երեխային նախապես իրազեկելը հետագա գործընթացների բնույթի, տևողության, նրանից պահանջվող գործողությունների և հետևանքների մասին: Նույնիսկ եթե առկա է մտավախություն, որ նման նախապատրաստումը կարող է խանգարել դատարանում ինքնաբուխ վկայություններ ստանալուն և գուցե իջեցնել գործընթացի իրավաբանական արդյունավետությունը, այնուամենայնիվ, ելնելով երեխայի լավագույն շահի սկզբունքից, նրան նախապատրաստելը պարտադիր պայման է: Միջազգային չափորոշիչները պահանջում են, որ երեխան հարցաքննվի բացառապես բարյացակամ ոճով՝ վախեցնելու պոտենցիալ ռիսկի իջեցման նպատակով: Թե՛ քննիչները և թե՛ դատավորները կարևոր դերակատարում ունեն այս դրույթի ապահովման հարցում: Փորձը ցույց է տալիս, որ լավագույն արդյունքների կարելի է հասնել, եթե երեխան հարցաքննվում է զրույցի ձևաչափով՝ ի համեմատություն միակողմանի կամ խաչաձև հարցաքննության ձևաչափերի: Վերջինիս դեպքում անհրաժեշտ է դատավորի կողմից գործընթացի նկատմամբ խստագույն վերահսկողություն երեխային հասցվող հնարավոր վնասի կան-

խարգելման նկատառումներից: Ավելին, անհրաժեշտ է հաշվի առնել, որ երեխան, մեծահասակի համեմատ, ունի ուշադրության կենտրոնացման ավելի քիչ ունակություն, այդ պատճառով կարևոր է նախատեսել ընդմիջումներ ըստ անհրաժեշտության: Երեխային տրվող հարցերի քանակը կարող է սահմանափակվել՝ նրա ուշադրությունը պահպանելու և առավել որակյալ ցուցմունքներ ստանալու նպատակով: Երեխաներին հարցաքննության պետք է ենթարկել միայն մեկ անգամ, բացառությամբ հատուկ դեպքերի: Հանցագործությունից տուժած կամ հանցագործության վկա երեխաներին դատավարության ժամանակ հարցեր ուղղվելու դեպքում դատավորները պետք է հստակ հետևեն գործընթացին և վերահսկեն՝ ինչ հարցեր և ինչպես են տրվում: Նրանք պետք է կասեցնեն.

- անհամապատասխան հարցերը, որոնք տրվում են երեխային վախեցնելու կամ տրավմատիզացիայի ենթարկելու նպատակով,
- արագ և բազմաթիվ անգամներ տրվող հարցերը, որոնք նպատակ ունեն երեխային շեղելու կամ շփոթեցնելու,
- երեխային իր տարիքում անհասկանալի լեզվով տրվող հարցերը,

սեռական բռնության դեպքերում տրվող այն հարցերը, որոնք ենթադրում են, որ երեխան համաձայնություն է տվել սեռական գործողություններին, կամ նրա սեռական կյանքին վերաբերվող հարցերը:

Նման մարտավարությունները կարող են հանգեցնել երեխայի վախենալուն և նսեմացմանը, ինչը ոչ միայն կարող է նրան վնասել և սթրես առաջացնել, այլև այնպես ազդել նրա վրա, որ չկարողանա այլևս տալ գործի հետ կապված ճշմարիտ և հստակ տեղեկություններ[97]:

[97] "Protecting children's rights in criminal justice systems: A training manual and reference point for professionals and policymakers", Penal Reform International, 2013.

Ընտանեկան բռնության զոհեր[98]

Ընտանեկան բռնության զոհերը հիմնականում կանայք են և երեխաները: Այս առումով կարևոր է հասկանալ, որ նույնիսկ այն երեխաները, ովքեր ականատես են լինում իրենց մայրերի նկատմամբ կատարված բռնություններին, պետք է ևս համարվեն զոհեր, նույնիսկ եթե նրանք չեն ենթարկվել ուղղակի բռնության: Ընտանեկան բռնության դեպքերը քննելու և դատապարտելու վերաբերյալ ուղեցույցի լավագույն օրինակներից է Միացյալ Թագավորության Թագավորական դատախազության ծառայության կողմից պատրաստված ուղեցույցը[99]:

■ Միացյալ Թագավորության ուղեցույցի համաձայն՝ պետք է խուսափել ենթադրություններից

Խտրականության (սեռի, ռասայի, ազգային պատկանելիության, հաշմանդամության, տարիքի, սեռական կողմնորոշմամբ) հետ առնչվող դեպքերում մեղադրող կողմը պետք է խուսափի կարծրատիպային ենթադրություններից:

Մեղադրող կողմը պետք է նաև զգոն լինի և խուսափի այնպիսի ենթադրություններից, որոնք վերաբերում են տուժողի տարիքին կամ ոտնձգությունն իրականացրած անձի հետ, վերջինիս հարաբերությունների բնույթին կամ արտաքին տեսքին կամ գենդերային կարծրատիպերին: Ոստիկանությունից հնարավորինս շատ տեղեկություններ պետք է հավաքել հարաբերությունների հանգամանքների վերաբերյալ, որպեսզի մեղադրող կողմը հնարավորություն ունենա ճիշտ գնահատել բողոքողի հա-

[98] Տե՛ս՝ ECtHR Factsheet on Domestic violence: https://www.echr.coe.int/Documents/FS_Domestic_violence_ENG.pdf:

[99] Տե՛ս՝ https://www.cps.gov.uk/legal-guidance/domestic-abuse-guidelines-prosecutors:

տուկ պահանջներն ու կարիքները, և սահմանել աջակցության մակարդակը, որը պահանջվում է և կարող է տրամադրվել աջակցություն ապահովող համապատասխան ծառայությունների միջոցով:

Անհրաժեշտության դեպքում պետք է կրոնական, մշակութային և այլ հարցերի շուրջ մասնագիտական խորհրդատվության համար դիմել համապատասխան գերատեսչությունների, մասնավորապես՝ մասնագիտացված կազմակերպությունների (օրինակ՝ ազգային փոքրամասնություն կազմող կանանց հետ աշխատող):

«Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքը սահմանում է ընտանեկան բռնության զոհերի նկատմամբ հատուկ կարգավորումներ, որոնց կիրառումը պարտադիր է՝ անկախ այն հանգամանքից, թե դատավարության որ փուլում է գտնվում զոհը:

Ընդհանուր առմամբ, պետություններից Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին ԵՄ կոնվենցիայով պահանջվում է «ձեռնարկել անհրաժեշտ օրենսդրական կամ այլ միջոցառումներ՝ բռնությունից տուժած բոլոր անձանց հետագա բռնարարքներից պաշտպանելու նպատակով»:[100] Կարևոր է այն, որ դրանով պահանջվում է՝ համապատասխան այնպիսի մեխանիզմների առկայությունը, որոնք արդյունավետ համագործակցություն կապահովեն շահագրգիռ բոլոր պետական գերատեսչությունների, այդ թվում՝ դատարանների, դատախազների, իրավապահ մարմինների, տեղական և տարած-

[100] Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին ԵՄ կոնվենցիա, 18-րդ հոդվածի 1-ին կետ:

քային իշխանությունների, ինչպես նաև հասարակական կազմակերպությունների ու այլ շահագրգիռ կազմակերպությունների ու մարմինների միջև՝ սույն Կոնվենցիայի գործողության շրջանակում ընդգրկվող բռնության բոլոր ձևերից տուժած անձանց ու վկաներին պաշտպանելու և օժանդակելու գործում, այդ թվում՝ ընդհանուր բնույթի և մասնագիտական օժանդակություն տրամադրող ծառայություններ ուղղորդելու միջոցով:[101]

Դրանով օրենսդրական դաշտից պահանջվում է ոչ միայն ապահովել անհետաձգելի միջամտության և պաշտպանական որոշումներ, այլև միջգերատեսչական մեխանիզմ՝ ապահովելու համար, որ պաշտպանությունը, դատական պաշտպանության միջոցները և օժանդակություն տրամադրող ծառայություններն արդյունավետորեն իրականացվեն միասնական կերպով:

Ընտանեկան բռնության կանխարգելման մասին ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի համաձայն՝ ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության միջոցներն են՝

1) նախազգուշացումը.

2) անհետաձգելի միջամտության որոշումը.

3) պաշտպանական որոշումը:

Սեռական բռնության զոհեր

Սեռական բռնության զոհերը հատուկ վերաբերմունքի կարիք ունեն՝ անկախ տարիքից և սեռից: Չափահաս կին զոհը նույնքան խոցելի է, որքան տղամարդ զոհը, եթե նրանք ենթարկվել են սեռական ոտնձգության: Այս հարցի զգայունությունը սրվում է հատկապես ֆիզիկական ապացույցների ձեռքբերման անհրաժեշտության պայմաններում, որը պետք է արվի բռնության կիրառումից հետո՝ հնարավորինս շուտ, ինչպես նաև հաշվի առնելով վերջինիս հետ կապված բոլոր զգայուն հարցերը: Չափազանց կարևոր է հավատալ տուժողներին, հարգանքով վերաբերվել նրանց և համոզվել, որ դատավարության

[101] Նույն տեղում, 18-րդ հոդվածի 2-րդ կետ:

ընթացքում նրանք չեն ենթարկվում անբարեխիղճ վերաբերմունքի և ոչ զոհակենտրոն եղանակով իրականացվող քննչական գործողության[102]:

Սեռական բռնությունների քննության լավագույն փորձ

Ուղղահայաց քննություն

Այն առաջարկվում է իրականացնել սեռական բռնության ցանկացած դեպքում: Սեռական բռնությունների ուղղահայաց քննություն ասելով հասկացվում է, որ միևնույն քննիչը/դատախազը, ով անցել է մասնագիտացված վերապատրաստում այս հանցագործությունների առանձնահատկությունների վերաբերյալ, վարում է գործը սկզբից մինչև վերջ: Ուղղահայաց քննության դեպքում տուժողներն աշխատում են նույն դատախազի և քննիչի հետ: Ինչպես ցույց է տվել փորձը, ուղղահայաց քննության արդյունքում բարելավվում է հանցագործությունների բացահայտման մակարդակը, նվազում է տուժողներին հասցվող տրավման, ինչպես նաև հետագայում նշանակվում է առավել համապատասխան պատժաչափ:

Հանդիպում տուժողի հետ/փաստաբանի ներկայություն

Առաջարկվում է, որ քննիչները/դատախազները հանդիպեն տուժողի հետ նախքան հանցագործին մեղադրանք առաջադրելու մասին որոշում կայացնելը: Տուժողի հետ հանդիպումը քննիչին/դատա-

[102] UK Guidance for Prosecutors for prosecuting sexual violence. Գլուխ 1, որը հասանելի է https://www.cps.gov.uk/legal-guidance/rape-and-sexual-offences-chapter-1-cps-policy-statement հղմամբ, ինչպես նաև 2-րդ գլուխը, որը հասանելի է https://www.cps.gov.uk/legal-guidance/rape-and-sexual-offences-chapter-2-sexual-offences-act-2003-principal-offences-and հղմամբ:

> խազներին հնարավորություն է տալիս տիրապետել գործի մանրամասներին, որոնց նրանք չեն կարող ծանոթանալ պարզապես հաղորդումներ կարդալով: Տուժողի հետ հանդիպումը զոհակենտրոն ընթացակարգի մաս է և տուժողին ցույց է տալիս, որ մեղադրող կողմը լուրջ և հետևողական վերաբերմունք է դրսևորում տվյալ գործի նկատմամբ[103]:

Սեռական բռնության զոհերի սուբյեկտիվ պատկերացումները և վախերը պետք է հարգվեն, և դատարանը պետք է հնարավորություն ընձեռի վերջինիս արտահայտել իր բոլոր մտահոգություններն ու մտավախությունները:

«Կանանց նկատմամբ բռնության» վերաբերյալ ՄԻԵԴ տեղեկագիրը պարունակում է բազմաթիվ որոշումներ բռնաբարության և սեռական բռնության այլ ձևերի վերաբերյալ, որոնք կիրառելի են նաև ՀՀ դատական պրակտիկայի համար[104]:

ՀՀ դատական պրակտիկայում հատուկ ուշադրության էր արժանացել շիզոֆրենիայով տառապող կնոջ բռնաբարության փորձի դեպքով նրա ցուցմունքի արժանահավատության հարցը:

Այդ դեպքով ՀՀ վճռաբեկ դատարանն Ա. Խաչատրյանի վերաբերյալ ԿԴ1/0006/01/14 քրեական գործով 2015թ.-ի մարտի 27-ի որոշման 18-րդ կետում դիրքորոշում է հայտնել առ այն,

[103] Մանրամասն տես՝ https://www.nsvrc.org/sites/default/files/publications/2018-09/Best%20Practices%20for%20Prosecution.pdf; https://www.ciclt.net/ul/ndaajustice/WhitepaperFinalDraft-SA.pdf; https://www.un.org/sexualviolenceinconflict/wp-content/uploads/2019/05/report/best-practices-manual-for-the-investigation-and-prosecution-of-sexual-violence-crimes-in-post-conflict-regions/140130_prosecution_of_sexual_violence.pdf:

[104] I. Radačić, The European Court of Human Rights as a Mechanism of Justice for Rape Victims: Contributions and Limitations, հասանելի է՝ https://www.researchgate.net/publication/303427313_The_European_Court_of_Human_Rights_as_a_Mechanism_of_Justice_for_Rape_Victims_Contributions_and_Limitations:

որ «հոգեկան կամ ֆիզիկական պակասություններ ունեցող անձանց ցուցմունքները որպես ապացույց օգտագործելու և դրանք մեղադրական դատավճռի հիմքում դնելու հարցը պարզելու համար յուրաքանչյուր դեպքում անհրաժեշտ է որոշել, թե տվյալ անձն արդյոք ունակ է ճիշտ ընկալել գործի համար էական նշանակություն ունեցող փաստերը և վերարտադրել դրանք: Այս հանգամանքները կարող են հաստատվել միայն հիմնավորվածության, լրիվության և հստակության պահանջներին համապատասխանող դատահոգեբուժական փորձաքննությամբ:

Միևնույն ժամանակ, հաշվի առնելով ամբաստանյալի և տուժողի մրցակցող իրավունքները (համապատասխանաբար՝ արդար դատաքննության և իր իրավունքների ու օրինական շահերի պաշտպանության), ինչպես նաև տուժողի վերոնշյալ ունակությունների հանգամանքը հաստատելու համար փորձագետի եզրակացության անփոխարինելիությունը՝ վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է ձեռնարկել օրենքով նախատեսված բոլոր միջոցները փորձագետի եզրակացության արժանահավատությունն ապահովելու համար:»[105]

[105] Նույն որոշման 20-րդ կետի համաձայն՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Փորձագիտական եզրակացության հետևություններում առկա են հակասություններ: Մասնավորապես, դրանում նշված է «ախտորոշմանը բնորոշ փոփոխությունները /զառանցական մտքերի առկայությունը, մտածողության անկապությունը, դատողությունների թեթևակշռությունը, անհեթեթությունը/ արտահայտված են այն աստիճան, որ զրկում են երևույթները ճիշտ գիտակցելու, ընկալելու, ինչպես նաև վերարտադրելու ունակությունից», միևնույն ժամանակ նշված է, որ «իր ներկա հոգեկան վիճակով Ա.Ավակիմյանը կարող է աղավաղել իր հետ կատարված և կատարվող գործողությունները», ավելին՝ «Ա.Ավակիմյանը բավարար տեղեկացված է սեռերի միջև փոխհարաբերությունների, սեռական հարաբերությունների վերաբերյալ»: Մեջբերված հետևություններից բավարար չափով պարզ չէ՝ Ա.Ավակիմյանը կարող է աղավաղել օբյեկտիվ իրականության փաստերը, թե աղավաղում է դրանք, և արդյոք «սեռերի միջև փոխհարաբերությունների, սեռական հարաբերությունների վերաբերյալ» հանգամանքների մասին «բավարար տեղեկացված լինելու» պայմաններում նա զրկված է այդպիսի բնույթի փաստերը ճիշտ ընկալելու,

Հաշմանդամություն ունեցող զոհեր

Կարևոր է հիշել, որ հաշմանդամություն ունեցող անձինք չեն կազմում միատարր խումբ: Հաշմանդամության տարբեր տե-

գիտակցելու և վերարտադրելու ունակությունից: Բացի այդ, Փորձագիտական եզրակացությունը թերի է, քանի որ դրանում առկա չեն Ա.Ավակիմյանի հիվանդության զարգացման ընթացքի և փուլի, դրանց դրսևորման առանձնահատկությունների վերաբերյալ տեղեկություններ:

Մինչդեռ Առաջին ատյանի դատարանը, չձեռնարկելով Փորձագիտական եզրակացությունում առկա վերը նշված անհստակությունները, հակասությունները և բացը վերացնելուն ուղղված որևէ միջոց, գտել է, որ «թեև փորձագետի եզրակացության համաձայն՝ տուժող Ա.Ավակիմյանը տառապել և տառապում է «շիզոֆրենիա, պարանոիդ ձև» հոգեկան հիվանդությամբ, ինչի բնորոշ փոփոխություններն (զառանցական մտքերի առկայությունը, մտածողության անկապակցվածությունը, դատողությունների թեթևակշռությունը, անհեթեթությունը) արտահայտված են այն աստիճան, որ զրկում են երևույթները ճիշտ գիտակցելու, ընկալելու, ինչպես նաև վերարտադրելու ունակությունից, նա կարող է աղավաղել իր հետ կատարված և կատարվող գործողությունները, նրան բնորոշ է զառանցական մտքերի առկայությունը, սակայն Դատարանը գտնում է, որ սույն դեպքի կապակցությամբ Ա.Ավակիմյանի ցուցմունքն արժանահավատ է և այն պետք է դնել սույն դատավճռի հիմքում, քանի որ սույն գործի օրինական, հիմնավորված և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքների տեսանկյունից նշված ցուցմունքում դեպքի կապակցությամբ նրա կողմից հայտնված տվյալների մի մասը, ինչպես միմյանց, այնպես էլ սույն քրեական գործով ձեռք բերված այլ ապացույցներով ստացված տվյալների հետ համընկնում ու փոխկապակցվում են»: Վերաքննիչ դատարանն իր հերթին գտել է, որ «գործի փաստական տվյալներով չի արձանագրվել որևէ հանգամանք, որը կարող էր հիմք հանդիսանալ տուժող Ա.Ավակիմյանի կողմից տված ցուցմունքներն անարժանահավատ համարելու համար»:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Փորձագիտական եզրակացության վերոնշյալ անհստակությունների, հակասությունների և բացի, ինչպես նաև ստորադաս դատարանների կողմից դրանք վերացնելուն ուղղված միջոցներ (ՀՀ քր. դատ. օր.-ի 251-252-րդ հոդվածներով նախատեսված) չձեռնարկելու, իսկ վճռաբեկ վարույթում այդպիսիք ձեռնարկելու իրավական անհնարինության պայմաններում հնարավոր չէ պատասխանել բողոքաբերի կողմից Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցին:»:

սակների դեպքում պահանջվում են տարբեր հարմարություններ և մոտեցումներ, մասնավորապես՝ մատչելիության առնչությամբ: Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիան պահանջում է, որ քրեական դատավարության ընթացքում ապահովվի վերջիններիս մատչելիությունը: Սա վերաբերում է ֆիզիկական, զգայական, մտավոր և այլ տեսակների հաշմանդամություններին[106]:

Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի 1-ին հոդվածի համաձայն՝ սույն կոնվենցիայի նպատակն է աջակցել, պաշտպանել և ապահովել հաշմանդամություն ունեցող անձանց՝ լիարժեքորեն և հավասարապես օգտվել մարդու իրավունքներից և հիմնարար ազատություններից, ինչպես նաև ապահովել հարգանքը նրանց արժանապատվության նկատմամբ: Հաշմանդամություն ունեցող անձինք են համարվում նրանք, որոնք երկար ժամանակ տառապում են ֆիզիկական, հոգեկան, մտավոր և նյարդային հիվանդություններով, որոնք տարբեր արգելքների հետ փոխազդեցության արդյունքում կարող են խոչընդոտել, որ նրանք լիակատար և արդյունավետ մասնակցեն հասարակական կյանքին մյուսների հետ հավասար հիմունքներով:

Նույն կոնվենցիայի 13-րդ հոդվածի համաձայն՝ մասնակից պետությունները հաշմանդամություն ունեցող անձանց մյուսների հետ հավասար հիմունքներով ապահովում են արդարադատության մատչելիությամբ՝ տրամադրելով նաև ընթացակարգային ու տարիքին համապատասխան այնպիսի հնարավորություններ, որոնք հնարավորություն կտան ապահովելու նրանց արդյունավետ մասնակցությունը, որպես ուղղա-

[106] Մանրամասն տե՛ս՝ https://tbinternet.ohchr.org/_layouts/15/treatybodyexternal/Download.aspx?symbolno=CRPD/C/GC/2&Lang=en (available in English and Russian); https://www.ncjrs.gov/ovc_archives/factsheets/disable.htm; http://www.markwynn.com/wp-content/uploads/Effective-Prosecution-of-Cases-Involving-IWDDS.pdf; https://www.ucc.ie/en/media/academic/law/ccjhr/publicationsseptember2018/AccesstoJusticeforPeoplewithDisabilitiesasVictimsofCrimeinIreland2012.pdf:

կի կամ անուղղակի մասնակիցներ, ինչպես նաև որպես վկաներ դատական բոլոր ընթացակարգերին, նաև՝ քննչական և այլ նախնական փուլերում[107]:

Դատավորները պետք է տարբերեն, որ որոշ չափահաս տուժողներ և վկաներ կարող են լինել խոցելի անձնական հատկանիշներով: Խոցելի չափահասներից են նրանք, ովքեր ունեն հոգեկան հիվանդություն, տկարամտություն կամ ֆիզիկական հաշմանդամություն, որն ազդում է նրանց գիտակցելու և ընկալելու ունակության վրա[108]: Միջազգային պրակտիկայում հաշմանդամություն ունեցող անձ ասելով պետք է հասկանալ՝

- ֆիզիկական և հոգեբանական խանգարումներ ունեցող անձանց,
- մտավոր հաշմանդամություն, աուտիզմ, հոգեկան հիվանդություններ ունեցող անձանց,
- թմրամոլների և ալկոհոլամոլների,
- բուժման հետևանքով թաքնված հաշմանդամություն ունեցող անձանց (տառապում են ռևմատիզմով, շաքարախտով և այլ քրոնիկ հիվանդություններով),
- տերմինալ հիվանդություններ, այդ թվում՝ ծերունական թուլամտություն, ՁԻԱՀ և այլն ունեցող անձանց[109]:

---

[107] Որպեսզի ապահովվի հաշմանդամություն ունեցող անձանց համար արդարադատության մատչելիությունը, պետությունները պետք է կազմակերպեն համապատասխան ուսուցողական դասընթացներ արդարադատության վարչական համակարգի աշխատակիցների, ինչպես նաև ոստիկանության և կալանավայրերի անձնակազմերի համար:

[108] The United Kingdom Ministry of Justice, Achieving Best Evidence in Criminal Proceedings: Guidance on interviewing victims and witnesses, and guidance on using special measures, (2011) Crown Prosecution Service.

[109] H. Brown, Safeguarding adults and children with disabilities against abuse, (2003, Council of Europe Publishing), էջ 21: Հասանելի է՝ http://www.coe.int/t/e/social_cohesion/soc-sp/Abuse%20_E%20in%20color.pdf հղմամբ:

«Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ հաշմանդամ է համարվում այն անձը, ով առողջության խաթարմամբ պայմանավորված, կենսագործունեության սահմանափակումների հետևանքով ունի սոցիալական պաշտպանության անհրաժեշտություն: Անձը հաշմանդամ ճանաչվում է բժշկասոցիալական փորձաքննության եզրակացության հիման վրա:

Տուժողի խոցելիությունը որոշվում է ոչ թե փորձաքննության արդյունքում հաշմանդամ ճանաչելու դեպքում, այլ միջազգայնորեն ճանաչված չափանիշների հիման վրա հատուկ վերաբերմունքի ու պաշտպանության կարիք ունենալու հիմքով:

Խոցելի չափահաս տուժողների և վկաների բացահայտման գնահատումն իրականացվում է անձնական բնութագրերի հիման վրա՝ որոշելով նրանց ունակությունը գիտակցել քրեական վարույթը և մասնակցել դրան՝ հաշվի առնելով հետևյալ հանգամանքները՝

- հոգեկան խանգարումներով անձանց հայտնաբերումը կարող է բարդացված լինի հիվանդության փուլային ընթացքով և խանգարումը հնարավոր լինի բացահայտել միայն սրացման պահին;
- կարճ հարցազրույցը կամ կոնտակտը բավարար չէ հոգեկան խանգարումը բացահայտելու համար, սակայն եթե ախտորոշումն արդեն առկա լինի, այն պետք է ընդունվի որպես փաստ;
- ալկոհոլի կամ թմրամիջոցի կիրառումը, ինչպես նաև դրանցից հրաժարվելը կարող է վատթարացնել անձի հոգեկան վիճակը;
- հաշմանդամության պարզումը ոչ թե կոնկրետ արատի ուսումնասիրությունն է, այլ տարաբնույթ գործոնների համակցության հստակեցում, որոնք կարող են ազդել անձի ընկալման կամ սոցիալական վարքի վրա;

- հաշմանդամության ունիվերսալ սահմանում չկա, այն որոշվում է անձի ինտելեկտուալ և սոցիալական թերությունների կամ խանգարումները հաշվի առնելով;
- երբեմն հաշմանդամություն ունեցող անձն արտաքնապես կարող է չնույնացվի որպես այդպիսին, ելնելով նրա խոսելու ու շփվելու ունակությունից, բայց դա չի նշանակում, որ անձը գիտակցում է իրականությունն ու քրեական վարույթի նպատակն ու իմաստը;
- ֆիզիկական հաշմանդամության բացահայտումն առավել դյուրին է, քան հոգեկանը;
- ֆիզիկական հաշմանդամության դեպքում պետք է պարզել դրա ազդեցությունը ցուցմունք տալու ընթացքի և դրանց բովանդակության վրա[110]:

Բացի օբյեկտիվ հանգամանքներով պայմանավորված խոցելիությունից, ինչպես արդեն նշվել է, առկա է նաև հանցագործության բնույթով և հանգամանքներով պայմանավորված խոցելիություն: Նման խոցելիությունն իր տարածվածությամբ ավելին է, քան առաջինը:

ՀՀ քր. դատ. օր.-ի 86-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ որպես վկա չեն կարող կանչվել և հարցաքննվել անձինք, որոնք ֆիզիկական կամ հոգեկան պակասություններ-ի հետևանքով ունակ չեն ճիշտ ընկալելու և վերարտադրելու քրեական գործով պարզելու ենթակա հանգամանքները: Խոցելի այլ խմբերի մասին որևէ տեղեկություն չկա, սակայն միջազգային միտումների համատեքստում դա առավել կարևոր է:

[110] The United Kingdom Ministry of Justice, Achieving Best Evidence in Criminal Proceedings: Guidance on interviewing victims and witnesses, and guidance on using special measures, (2011) Crown Prosecution Service, էջեր 29-30:

Իրավունակությունից զրկված տուժողներ

Հատկապես կարևոր է հիշել, որ հաշմանդամություն ունեցող անձինք դատավարության ընթացքում առանձնահատուկ ռիսկի են ենթարկվում: Հարկ է նշել, որ իրավունքների պատշաճ պաշտպանությունից զրկված լինելը պետք է աստիճանաբար դադարեցվի՝ համաձայն ՄԱԿ-ի Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիայի 12-րդ հոդվածի[111]:

Այս հարցին անդրադարձել է ՄԻԵԴ-ն իր հարուստ նախադեպային որոշումներով[112]:

Հոգեկան խանգարում ունեցող անձանց իրավունքներին ՀՀ Վճռաբեկ դատարանն անդրադարձել է Ա. Հակոբյանի վերաբերյալ ՍԴ2/0006/11/16 քրեական գործով 2018թ.-ի հուլիսի 20-ի որոշմամբ, որի 18.1-րդ կետում դիրքորոշում է հայտնել առ այն, որ «(...) Չնայած տուժողի ցուցմունք տալու իրավական առանձնահատկություններին՝ նրա հարցաքննության նկատմամբ օրենսդիրը տարածել է վկայի հարցաքննության կանոնները: Մասնավորապես՝ տուժողը չի կարող կանչվել և հարցաքննվել այն դեպքում, երբ ֆիզիկական կամ հոգեկան պակասությունների հետևանքով ունակ չէ ճիշտ ընկալելու և վերարտադրելու քրեական գործով պարզելու ենթակա հանգամանքները: Այլ խոսքով՝ ՀՀ քր. դատ. օր.-ով նախատեսված է տուժողի՝ ցուցմունք տալու պարտականությունից բացառություն, ինչպես նաև նրա ցուցմունք տալու իրավունքի սահմանափակման հիմք: Նշված սահմանափակումը նպատակ է հետապնդում ապահովել ամբաստանյալի արդար դատաքն-

111 Տես՝ http://foundationnet.info/wp-content/uploads/2016/02/AJuPID_Research_Report_2015.pdf:

112 Մանրամասն տե՛ս՝ https://www.echr.coe.int/Documents/FS_Disabled_ENG.pdf:

նության իրավունքը, համաչափ է հետապնդվող նպատակին և չի իմաստազրկում տուժողի՝ իր իրավունքներն ու օրինական շահերը պաշտպանելու բուն իրավունքը, քանի որ վերջինս օժտված է իր իրավունքների և օրինական շահերի պաշտպանության այլ իրավական միջոցներով (ՀՀ քր. դատ. օր.-ի 59-րդ հոդված): Միևնույն ժամանակ ՀՀ քր. դատ. օր.-ով հստակ սահմանված են տուժողին հարցաքննելու սահմանափակման հիմքերը: Մասնավորապես՝ որպես տուժող չի կարող կանչվել և հարցաքննվել այն անձը, ով.

1. ունի ֆիզիկական կամ հոգեկան պակասություններ,
2. (1) կետում նշված հանգամանքի հետևանքով ունակ չէ ճիշտ ընկալելու և վերարտադրելու քրեական գործով բացահայտման ենթակա հանգամանքները:

Ընդ որում, վերոնշյալ հանգամանքների միաժամանակյա առկայությունը պարտադիր է քննարկվող սահմանափակումը կիրառելու համար: Օրենսդրական նման կարգավորումը պայմանավորված է նրանով, որ անձի մոտ ֆիզիկական կամ հոգեկան բնույթի առանձին շեղումների առկայությունը դեռևս չի նշանակում, որ տվյալ անձն առհասարակ չի կարող ճիշտ ընկալել և վերարտադրել օբյեկտիվ իրականության փաստերը: Մասնավորապես՝ հնարավոր են դեպքեր, երբ հոգեկան հիվանդությամբ տառապող անձի մոտ ժամանակավորապես վերականգնվի օբյեկտիվ իրականության փաստերը ճիշտ ընկալելու և վերարտադրելու ունակությունը, կամ տվյալ հիվանդությունն իր բնույթով այնպիսին լինի, որ անձին չզրկի երևույթների նշանակությունը հասկանալու և դրանք վերարտադրելու ունակությունից և այլն: Հետևաբար, անձը չի կարող հարցաքննվել, եթե ֆիզիկական կամ հոգեկան պակասությունը զրկում է նրան քրեական գործով բացահայտման ենթակա հանգամանքները ճիշտ ընկալելու և վերարտադրելու ունակությունից:

(…) [Ք]րեական գործով բացահայտման ենթակա հանգամանքները ճիշտ ընկալելու և վերարտադրելու տուժողի ունա-

կությունը կասկածի տակ դնելու հիմքերի առկայության դեպքում վարույթն իրականացնող մարմինը պետք է նշանակի փորձաքննություն: Իսկ տուժողի ունակ չլինելը ճիշտ ընկալել և վերարտադրել քրեական գործով բացահայտման ենթակա հանգամանքները կարող է հաստատվել միայն դատահոգեբուժական փորձագետի եզրակացությամբ:

Ընդ որում, փորձագետի եզրակացությունն ապացույցների տեսակներից մեկն է և որպես այդպիսին չունի նախապես հաստատված ապացույցի ուժ, իսկ դրա գնահատման նկատմամբ կիրառելի են ապացույցների գնահատման ընդհանուր կանոնները (…)՝ հաշվի առնելով ապացույցի այդ տեսակի առանձնահատկությունները:

(…) Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հոգեկան կամ ֆիզիկական պակասություններ ունեցող անձանց ցուցմունքները որպես ապացույց օգտագործելու և դրանք մեղադրական դատավճռի հիմքում դնելու հարցը պարզելու համար յուրաքանչյուր դեպքում անհրաժեշտ է որոշել, թե տվյալ անձն արդյոք ունակ է ճիշտ ընկալել գործի համար էական նշանակություն ունեցող փաստերը և վերարտադրել դրանք: Այս հանգամանքները կարող են հաստատվել միայն հիմնավորվածության, լրիվության և հստակության պահանջներին համապատասխանող դատահոգեբուժական փորձաքննությամբ:

Միևնույն ժամանակ, հաշվի առնելով ամբաստանյալի և տուժողի մրցակցող իրավունքները (համապատասխանաբար՝ արդար դատաքննության և իր իրավունքների ու օրինական շահերի պաշտպանության), ինչպես նաև տուժողի վերոնշյալ ունակությունների հանգամանքը հաստատելու համար փորձագետի եզրակացության անփոխարինելիությունը՝ վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է ձեռնարկել օրենքով նախատեսված բոլոր միջոցները փորձագետի եզրակացության արժանահավատությունն ապահովելու համար:»:

Սույն որոշման 22-րդ կետի համաձայն՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ տվյալ գործով տուժող Ա.Հակոբյանի և գործով հարցաքննված այլ վկաների միջև առերես

հարցաքննության չիրականացումը պատճառաբանվել է նրանով, որ համաձայն 2016թ.-ի փետրվարի 2-ի փորձաքննության եզրակացության՝ Ա.Հակոբյանի մոտ հայտնաբերված պրոդուկտիվ հոգեախտաբանական ախտանիշների առկայությունը, առավելապես ընկալման, մտածողության խեղաթյուրումներն արտահայտված են այն աստիճան, որ զրկում են նրան կարողությունից ճիշտ ընկալելու և վերարտադրելու քրեական գործով բացահայտման ենթակա հանգամանքները: Մինչդեռ Վճռաբեկ դատարանը կրկնում է, որ ՀՀ քր. դատ. օր.-ի 210-րդ հոդվածի կիրառմամբ ՀՀ քր. դատ. օր.-ի 86-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետը չի կարող մեկնաբանվել այնպես, որ քրեական գործով պարզելու ենթակա հանգամանքները ճիշտ ընկալելու և վերարտադրելու անկարողության մասին ստացված փորձագիտական եզրակացությունն ինքնին բացառում է անձին որպես տուժող կանչելու և հարցաքննելու, այդ թվում՝ տուժողի և այլ անձանց միջև առերես հարցաքննություն իրականացնելու հնարավորությունը: Ինչպես արդեն իսկ նշվել է, փորձագիտական այդպիսի եզրակացությունն ինքնին չի կարող բավարար համարվել հոգեկան պակասություններ ունեցող համապատասխան անձի լսվելու իրավունքը սահմանափակելու համար:

Խոցելի, մասնավորապես՝ հոգեկան հիվանդություն ունեցող անձանց մասնակցությամբ գործերի քննության առնչությամբ Եվրոպական դատարանն իր նախադեպային իրավունքում ձևավորել է, ի թիվս այլնի, հետևյալ իրավական դիրքորոշումները.

- հոգեկան հիվանդություն ունեցող անձն անձամբ կամ ներկայացուցչի միջոցով լսված լինելու իրավունք ունի[113]: Այդպիսի անձը դատավարությունում ունի երկբնույթ դեր, մասնավորապես՝ նա և՛ շահագրգիռ անձ է, և՛ դատաքն-

[113] Տե՛ս՝ Եվրոպական դատարանի՝ Վինթերվերպն (Winterwerp) ընդդեմ Նիդեռլանդների գործով 1979թ.-ի հոկտեմբերի 24-ի վճիռը, գանգատ թիվ 6301/73, կետ 60:

նության օբյեկտ: Հետևաբար, նրա մասնակցությունն անհրաժեշտ է ոչ միայն գործն անձամբ ներկայացնելու, այլև դատավորին հնարավորություն տալու համար իր անձնական կարծիքը ձևավորել գործի և այդ անձի հոգեկան վիճակի վերաբերյալ: Դատավորի համար կարևոր է առնվազն հոգեկան հիվանդություն ունեցող անձի հետ կարճ հանդիպում ունենալը և նախընտրելի է նրան հարցեր ուղղելը: Դատավորի կողմից գործի լուծումը միայն փաստաթղթավորված ապացույցների հիման վրա, առանց տեսնելու կամ լսելու անձին, Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված մրցակցության սկզբունքի խախտում է[114],

- ոչ թե բժիշկ-մասնագետը, այլ դատավորն է, ով պետք է գնահատի հոգեկան հիվանդություն ունեցող անձին առնչվող փաստերը և անձնական բնույթի այլ հանգամանքները: Վարույթն իրականացնող դատարանի լիազորությունն է որոշելու, թե արդյոք առկա է նման ծայրահեղ միջոց կիրառելու անհրաժեշտություն, կամ արդյոք նվազ խիստ միջոցը կարող է բավարար լինել: Երբ խնդիրը վերաբերում է անձի մասնավոր կյանքին վերաբերող նման կարևոր հարցի, դատավորը պետք է զգուշորեն հավասարակշռի բոլոր վերաբերելի գործոնները՝ գնահատելու համար կիրառման ենթակա միջոցի համաչափությունը: Դատավարական անհրաժեշտ երաշխիքները պահանջում են նվազագույնի հասցնել կամայականության դրսևորման ցանկացած վտանգ: Հետևաբար, դատարանը պետք է պարզի, թե արդյոք մասնագիտական գնահատական տված բժշկի եզրահանգումները կամայական չեն, և բժշկի հետ միասին լսի նաև վկաներին: Եվ, որ ամենակարևորն է, դատարանն ինքը պետք է եզրահան-

[114] Տե՛ս՝ Եվրոպական դատարանի՝ Շտուկատուրովն (Shtukaturov) ընդդեմ Ռուսաստանի գործով 2008թ.-ի մարտի 24-ի վճիռը, գանգատ թիվ 4409/05, կետեր 72-73:

գումներ անի անձին գործունակությունից զրկելու հարցի շուրջ[115]:

Փոքրամասնություն հանդիսացող խմբերի զոհերը

Ինչպես հաշմանդամություն ունեցող անձինք, փոքրամասնությունները ևս բազմատարր կատեգորիա է, և նրանց զոհականացումը մեծապես կախված է յուրաքանչյուր երկրի տեղակայման տարածաշրջանի պատմական համատեքստից[116]:

ԼԳԲՏԻՔ զոհեր

Եվրոպայի խորհուրդը 2017թ.-ին ներկայացրել է ԼԳԲՏԻՔ անձանց դեմ ուղղված ատելության հողի վրա կատարված հանցագործությունների վերաբերյալ դասընթաց:[117]

Կարևոր է հիշել, որ ԼԳԲՏԻՔ զոհերը կարող են լինել ոչ մի-

[115] Տես՝ Եվրոպական դատարանի՝ Իվինովիչն (Ivinović) ընդդեմ Խորվաթիայի գործով 2014թ.-ի սեպտեմբերի 18-ի վճիռը, գանգատ թիվ 13006/13, կետ 40, Իքս.-ն ու Ուայ.-ն (X and Y) ընդդեմ Խորվաթիայի գործով 2011թ.-ի նոյեմբերի 3-ի վճիռը, գանգատ թիվ 5193/09, կետեր 85-86:

[116] Տես՝
https://www.ohchr.org/Documents/Publications/GuideMinorities7en.pdf;
https://www.ohchr.org/Documents/Publications/FactSheet18rev.1en.pdf;
https://www.echr.coe.int/Documents/FS_Racial_discrimination_ENG.pdf:

[117] Դասընթացը հասանելի է հետևյալ հղմամբ՝
https://edoc.coe.int/en/lgbt/7405-policing-hate-crime-against-lgbti-persons-training-for-a-professional-police-response.html, իսկ ատելության շարժառիթով կատարված հանցագործությունների դեմ պայքարի՝ ՀԻԳ-ի կողմից հայտնաբերված լավագույն օրինակները.
https://fra.europa.eu/en/theme/hate-crime/compendium-practices:

Համասեռականության քրեական ասպեկտների վերաբերյալ ՄԻԵԴ տեղեկագիրը հասանելի է հետևյալ հղմամբ՝ file:///C:/Users/vseof/Downloads/GuidanceonFrameworkDecision2008_913_JHA_finalpdf.pdf; նաև՝
https://www.cps.gov.uk/legal-guidance/homophobic-biphobic-and-transphobic-hate-crime-prosecution-guidance:

այն ատելության շարժառիթով կատարված հանցագործությունների զոհեր, այլ նաև հանցագործության այլ տեսակների զոհեր, սակայն ավելի քիչ է հավանական, որ հանցագործության մյուս տեսակների վերաբերյալ նրանք հաղորդումներ կներկայացնեն՝ հաշվի առնելով երկրորդային զոհականացման և վրեժխնդրության վախը՝ պայմանավորված իրենց սեռով կամ սեռական կողմնորոշմամբ: Հետևաբար, մինչ կկազմվեն և կներկայացվեն ատելության շարժառիթով կատարված հանցագործությունների դեմ պայքարի ուղեցույցներ և դասընթացներ, անհրաժեշտ է հաշվի առնել ԼԳԲՏԻՔ խոցելիության մասին տեղեկացվածությունը:

Փախստականների պաշտպանություն

Եթե հանցագործության տուժողն ապաստան հայցող է կամ փախստական, ապա պաշտպանության համատեքստում այդ անձինք ՀՀ-ում կարող են տեղափոխվել Ժամանակավոր տեղավորման կենտրոն: «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի համաձայն՝ ապաստան հայցողների ժամանակավոր տեղավորման կենտրոնը հատուկ հաստատություն է, որտեղ լիազոր մարմինը (ՀՀ միգրացիոն պետական ծառայություն) տեղավորում է ապաստան հայցողներին մինչև նրանց ապաստանի հայցի վերաբերյալ վերջնական որոշում կայացնելը: Նույն օրենքի 24-րդ հոդվածն ամրագրում է կացարանի իրավունքը, որի համաձայն՝ լիազոր մարմին (ՀՀ միգրացիոն պետական ծառայություն) դիմած ապաստան հայցողներին և նրանց ընտանիքի անդամներին լիազոր մարմինը տեղավորում է Ժամանակավոր տեղավորման կենտրոնում, որտեղ նրանց ապահովում են կենսապահովման պայմաններով՝ մասնավորապես՝ տրամադրվում են սնունդ (օրական երեք անգամ), սպիտակեղեն, անձնական հիգիենայի պարագաներ, անհրաժեշտության դեպքում՝ հագուստ և կոշիկ:

Մարդու թրաֆիքինգի կամ շահագործման ենթարկված անձանց պաշտպանություն

Առանձին հանցագործություններից տուժող անձանց իրավունքների մասին խոսելիս պետք է նշել մարդու թրաֆիքինգի կամ շահագործման ենթարկված անձանց լրացուցիչ աջակցության տրամադրման և պաշտպանության մասին: «Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման ենթարկված անձանց նույնացման և աջակցության մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածով սահմանվում է, որ ցանկացած զոհ և հատուկ կատեգորիայի զոհ ունի օրենսդրությամբ սահմանված կարգով աջակցություն և պաշտպանություն ստանալու իրավունք: Զոհերի և հատուկ կատեգորիայի զոհերի պաշտպանության և աջակցության ձևերը, տեսակները, տևողությունը, չափերը որևէ կերպ չեն կարող փոխկապակցված կամ պայմանավորված լինել իրավապահ մարմինների կողմից ՀՀ օրենքով սահմանված կարգով իրականացվող գործողություններին նրանց մասնակցության հանգամանքով: Աջակցության տրամադրումն[118] ապահովվում է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կող-

[118] Զոհերի և հատուկ կատեգորիայի զոհերի աջակցությունը կարող է ներառել՝

1) կացարանի տրամադրում,
2) բնաիրային օգնություն,
3) անհրաժեշտ փաստաթղթերի տրամադրում կամ վերականգնում,
4) բժշկական օգնություն և սպասարկում,
5) հոգեբանական օգնություն,
6) խորհրդատվական օգնություն,
7) իրավաբանական օգնություն,
8) խնամքի տրամադրում, այդ թվում՝ համապատասխան հաստատությունում,
9) թարգմանչական ծառայությունների մատուցում,
10) հիմնական կրթության ապահովում,
11) միջնակարգ կրթության կամ նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության հասանելիության ապահովում,
12) աշխատանքի ապահովում,
13) անվտանգ վերադարձի կազմակերպում,
14) միանվագ դրամական փոխհատուցում:

մից: Այս նախարարությունն ապահովում է նաև ընտանեկան բռնության ենթարկված անձանց տրամադրվող աջակցությունը՝ ղեկավարվելով «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքով:

Անդրազգային զոհեր[119]

Սա վերաբերելի է օտարերկրյա պետության քաղաքացիներին և քաղաքացիություն չունեցող անձանց, ովքեր հանցագործության զոհ են դարձել այլ պետության տարածքում:

- **Լավագույն փորձ է համարվում դեսպանատների և տուրիստական ծառայությունների հետ ինտենսիվ համագործակցությունը:**

Տեխնոլոգիաների գնահատման և համակարգերի վերլուծության ինստիտուտը (ՏԳՀՎԻ) լուրջ համագործակցություն է հաստատել զբոսաշրջային և հյուրընկալության արդյունաբերության հետ՝ զբոսաշրջիկներին աջակցություն ցուցաբերելու նպատակով՝ վերջիններիս առաջարկելով անվճար կացություն, սնունդ և փոխադրամիջոց արտակարգ իրավիճակներում: ՏԳՀՎԻ-ն նաև համագործակցում է ավիաընկերությունների և նավային ընկերությունների հետ՝ առաջարկելով տոմսերի/ճանապարհորդական ծրագրերի վերաթողարկում և վերապլանավորում: Ինտենսիվ համագործակցության արդյունքում ՏԳՀՎԻ-ն տրամադրում է անվճար աջակցության, այդ թվում՝ ընդհանուր բժշկական և խորհրդատվական, կացության տրամադրում հյուրանոցում կամ հոսթելում, ավիաընկե-

[119] Տե՛ս՝ «Անդրազգային զոհականացման ենթարկված Եվրոպայի զոհերի աջակցության» մասին հաղորդումը՝ https://victimsupport.eu/activeapp/wp-content/uploads/2017/02/VSE-Cross-border-Victimisation-Report.pdf:

> րությունների չվերթների վերապլանավորում, մանրածախ առևտրի վաուչերների տրամադրում, նավերի հրավիրատոմսերի վերաթողարկում/վերապլանավորում, ռեստորաններից օգտվելու համար նախատեսված վաուչերների տրամադրում, ուղևորափոխադրում ավտոբուսով, արագընթաց գնացքով, նավով, տաքսիով կամ գնացքով:

Անդրազգային զոհերի հետ աշխատելիս կարևոր է հիշել, որ արտասահմանում գտնվելու դեպքում նրանց հաճախ անհրաժեշտ կլինի ավելին՝ դատավարությանը նախապատրաստվելու համար: Դա նշանակում է, որ նրանց հավելյալ ժամանակ է անհրաժեշտ իրենց ճամփորդությունը և հանգիստը կազմակերպելու, ինչպես նաև դատավարության մասնակցության ժամանակ աջակցություն ստանալու նպատակով: Կարևոր է նաև հաշվի առնել, որ անդրազգային զոհերի դեպքում հաճախ ավելի երկար ժամանակ է պահանջվում որոշումներն ու այլ փաստաթղթեր փոխանցելու համար, և հաճախ զոհերի համար դրանք պետք է թարգմանեն: Հետևաբար, առաջարկվում է այդպիսի հանգամանքներում պարբերաբար վերանայել դատավարության ժամկետները: Շատ դեպքերում անդրազգային զոհերից պահանջվում է ունենալ օրինական ներկայացուցիչ տվյալ երկրում, սակայն դա բավարար չէ: Նաև առաջարկվում է անդրազգային զոհերին հնարավորություն ընձեռել, որպեսզի վերջիններս կարողանան հետևել դատավարության ընթացքին համացանցի միջոցով կամ հեռակա մասնակցության որևէ այլ եղանակով, եթե առկա են համապատասխան տեխնոլոգիաներ:

Զինված հակամարտության զոհեր

Զինված հակամարտության ընթացքում կատարված ռազմական և այլ հանցագործությունների դեպքում դատավարությունը մի շարք առումներով կրում է առանձնահատուկ բնույթ,

այդ թվում՝

- դրանք հաճախ տեղի են ունենում հակամարտությունից երկար ժամանակ անց,
- տուժողների թվի մեծ լինելու պատճառով հաճախ դժվար է պարզել վերջինիս նկատմամբ անհատական պատասխանատվությունը,
- հրամանատարական աստիճանակարգման շղթայի վերին օղակների դեպքում ավելի բարդ է դառնում պատասխանատվության հիմնավորումը և արարքների ապացուցումը,
- ենթադրյալ հանցագործների թիվը սովորաբար շատ մեծ է, և նրանք հաճախ պաշտպանվում են իրենց ուժերով,
- նման հանցագործությունների քննությունը քաղաքականության տեսանկյունից կարող է լինել շատ զգայուն:

Տուժողների մասնակցությունը միջազգային քրեական դատարանում (ՄՔԴ)

Տուժողները կարող են դիմել ՄՔԴ-ում իրականացվող դատական գործընթացներին մասնակցելու համար՝ լրացնելով ստանդարտ դիմումի ձևը: Ֆիզիկական անձանց և հաստատությունների համար առկա են համապատասխան հատուկ ձևանմուշներ: Ռեգիստրում մշակվել են նաև գրավոր ուղեցույցներ, որոնք օգնում են անձին և/կամ կազմակերպությանը՝ լրացնելու դիմումի ձևը: Եթե անձը տուժող է կամ հանդես է գալիս տուժողների անունից, և եթե ցանկանում է լրացնել դիմումի ձևը՝ ՄՔԴ-ում ընթացող դատական գործընթացներին մասնակցելու համար, նրան հորդորվում է կապ հաստատել ՄՔԴ-ի «Տուժողների մասնակցության և փոխհատուցման բաժնի» հետ, որը կտրամադրի

բոլոր անհրաժեշտ տեղեկությունները, ձևերը և այլ փաստաթղթեր[120]:

ՄՔԴ-ն հայտնի է դատարանում հարուցված դատավարության ընթացքում տուժողների նկատմամբ մանրակրկիտ և ողջամիտ մոտեցմամբ[121]:

[120] Միջազգային քրեական արդարադատության պատմության մեջ առաջին անգամ տուժողները հնարավորություն ունեն կիսել իրենց տեսակետներն ու մտահոգությունները դատավարության գործընթացում, որոնք ներկայացվում են դատարանի դահլիճում որպես իրավախորհրդատու հանդես եկող փաստաբանի կողմից: Եթե զոհը կամ զոհերի խումբը չունի այդպիսի օրինական ներկայացուցչի համար անհրաժեշտ միջոցներ, Ռեգիստրը կարող է որոշակի ֆինանսական օգնություն տրամադրել այդ նպատակով:

[121] Տես՝ https://www.icc-cpi.int/about/victims; http://www.eurojust.europa.eu/Practitioners/Genocide-Network/Knowledge-sharing/Pages/Expert-reports.aspx;
http://www.eurojust.europa.eu/doclibrary/genocide-network/KnowledgeSharing/Digest%20of%20the%20European%20Court%20of%20Human%20Rights%20jurisprudence%20on%20core%20international%20crimes%20(Sept%202017)/2017-09_Digest-of-European-Court-for-Human-Rights-jurisprudence-on-core-international-crimes_EN.pdf:

Դաս 3. Խոցելի տուժողների մասնակցությամբ իրականացվող քննությունը

Թեմա 9. Լրացուցիչ պաշտպանության ենթակա տուժողների իրավունքները

ՀՀ սահմանադրության 64-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք (ներառյալ՝ դատավարության մասնակիցների) ունի իրավաբանական օգնություն ստանալու իրավունք: Օրենքով սահմանված դեպքերում իրավաբանական օգնությունը ցույց է տրվում պետական միջոցների հաշվին: Իրավաբանական օգնություն ապահովելու նպատակով երաշխավորվում է անկախության, ինքնակառավարման և փաստաբանների իրավահավասարության վրա հիմնված փաստաբանության գործունեությունը:

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ հանրային պաշտպանի գրասենյակը, բացառությամբ քրեական գործով կասկածյալին կամ մեղադրյալին իրավաբանական օգնություն տրամադրելու, ինչպես նաև նույն հոդվածի 6-րդ մասում[122] նշված դեպքերի, անվճար իրավաբանական օգնությունը տրամադրում է հետևյալ անձանց՝

[122] Անվճար իրավաբանական օգնություն ցույց չի կարող տրվել սույն հոդվածի 5-րդ մասում նշված անձանց՝

1) ձեռնարկատիրական բնույթի գործերով (ներառյալ՝ կորպորատիվ վեճերով).
2) նվազագույն աշխատավարձի հազարապատիկը գերազանցող գույքային (գումարի) պահանջով գործերով, բացառությամբ այն գործերի, որտեղ անձը հանդես է գալիս որպես պատասխանող կամ պատասխանողի կողմում հանդես եկող երրորդ անձ.
3) եթե առկա են դիմող անձի անվճարունակությունը ժխտող փաստական հավաստի տվյալներ:

1) ՀՀ սահմանների պաշտպանության ժամանակ զոհված (մահացած) զինծառայողի ընտանիքի անդամներին.
2) 1-ին և 2-րդ խմբի հաշմանդամներին.
3) դատապարտյալներին.
4) ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված՝ 0-ից բարձր անապահովության միավոր ունեցող ընտանիքի անդամներին.
5) Հայրենական մեծ պատերազմի և ՀՀ սահմանների պաշտպանության ժամանակ մարտական գործողությունների մասնակիցներին.
6) գործազուրկներին.
7) միայնակ բնակվող կենսաթոշակառուներին.
8) առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին, ինչպես նաև առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձանց.
9) փախստականներին.
10) ՀՀ-ում ժամանակավոր պաշտպանություն ստացածներին.
11) անվճարունակ այն ֆիզիկական անձանց, որոնք իրենց անվճարունակությունը հաստատող հավաստի տվյալներ են ներկայացնում[123].
12) հոգեբուժական կազմակերպությունում բուժվող հոգեկան խանգարումներ ունեցող անձանց.
13) օրենքով սահմանված կարգով մարդկանց թրաֆիքինգի և շահագործման ենթարկված զոհերի նույնացման հանձ-

[123] Սույն կետի իմաստով անվճարունակ է համարվում այն ֆիզիկական անձը, ով չունի բավարար եկամուտ, համատեղ բնակվող աշխատող ընտանիքի անդամ, ինչպես նաև, բացի անձնական բնակարանից, որպես սեփականություն չունի այլ անշարժ գույք կամ նվազագույն աշխատավարձի հազարապատիկը գերազանցող արժեքի փոխադրամիջոց:

նաժողովի կողմից զոհ կամ հատուկ կատեգորիայի զոհ ճանաչված անձանց.

14) ՀՀ-ում ապաստան հայցողներին.

15) խոշտանգումից տուժած անձանց՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.3-րդ հոդվածով սահմանված կարգով փոխհատուցում ստանալու նպատակով.

16) «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ ընտանիքում բռնության ենթարկված անձանց:

ՀՀ քր. դատ. օր.-ի հոդվածի 59-րդ հոդվածի համաձայն՝ տուժողն իրավունք ունի ունենալ ներկայացուցիչ, իսկ որպես այդպիսին ՀՀ քր. դատ. օր.-ի հոդվածի 78-րդ հոդվածի համաձայն՝ կարող են մասնակցել փաստաբանները և դատավարությանը համապատասխան մասնակցի կողմից տրված լիազորագիր ունեցող այլ անձինք (տուժող ֆիզիկական անձի պարագայում՝ միայն փաստաբանը): ՀՀ քր. դատ. օր.-ի հոդվածի 86-րդ հոդվածի համաձայն՝ վկան իրավունք ունի քրեական վարույթն իրականացնող մարմին ներկայանալ փաստաբանի հետ[124]:

Վերը նշված երաշխիքներն արդեն իսկ որոշակի պաշտպանություն են ստեղծում իրավական համակարգի հետ առնչություն ունենալու դեպքում:

ՀՀ-ում պաշտպանության միջոցները տասներկուսն են՝

1) անձին պաշտոնապես նախազգուշացնելը, ումից սպասվում է պաշտպանվող անձի նկատմամբ բռնության վտանգ կամ այլ հանցանքի կատարում,

[124] Թումասյան Դ., Յորդաշ Ու. Խոցելի տուժողների/վկաների և կասկածյալների մասնակցությամբ իրականացվող քննությունը, Երևան, 2017, էջ 14:

2) պաշտպանվող անձի ինքնությունը հաստատող տվյալները պաշտպանելը,
3) պաշտպանվող անձի անձնական անվտանգությունն ապահովելը, բնակարանը և այլ գույքը պահպանելը,
4) պաշտպանվող անձին անհատական պաշտպանության միջոցներ տրամադրելը և վտանգի մասին հայտնելը,
5) վերահսկողության տեխնիկական միջոցներ օգտագործելը և հեռախոսային ու այլ հաղորդումները գաղտնալսելը,
6) պաշտպանվող անձի՝ քրեական վարույթն իրականացնող մարմին ներկայանալու անվտանգությունն ապահովելը,
7) կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ այնպիսի խափանման միջոց ընտրելը, որը կբացառի նրանց կողմից պաշտպանվող անձի հանդեպ բռնության կամ այլ հանցանքի կատարման հնարավորությունը,
8) պաշտպանվող անձին բնակության այլ վայր փոխադրելը,
9) պաշտպանվող անձի ինքնությունը հաստատող փաստաթղթերը փոխարինելը կամ արտաքինը փոխելը,
10) պաշտպանվող անձի աշխատանքի, ծառայության կամ ուսման վայրը փոփոխելը,
11) դատական նիստերի դահլիճից առանձին անձանց հեռացնելը կամ դռնփակ դատական քննություն անցկացնելը,
12) դատարանում պաշտպանվող անձին հարցաքննելը՝ առանց նրա ինքնության մասին տեղեկությունների հրապարակման:

Անհրաժեշտության դեպքում կարող են իրականացվել մեկից ավելի հատուկ պաշտպանության միջոցներ: Այս հատուկ պաշտպանական միջոցներն ընդհանրական են և վերաբերելի են բոլոր դեպքերին, երբ առկա է որևէ վտանգ: Եթե դատավարության մասնակիցը հանդիսանում է խոցելի խմբերի ներ-

կայացուցիչ, բացի վերը նշված պաշտպանության միջոցներից, վարույթ իրականացնող մարմինը պետք է նաև հատուկ վերաբերմունք դրսևորի անձի նկատմամբ՝ փոփոխելով ինչպես քննչական գործողությունների մարտավարությունը, այնպես էլ կիրառելով հատուկ տեխնիկական հնարքներ:

Ինչպես հայտնի է՝ ՄԻԵԿ-ով պաշտպանության տակ են առնվում հետևյալ իրավունքները.

1. Կյանքի իրավունք (2-րդ հոդված),
2. Խոշտանգումների արգելում (3-րդ հոդված),
3. Ստրկության և հարկադիր աշխատանքի արգելում (4-րդ հոդված),
4. Ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունք (5-րդ հոդված),
5. Արդար դատաքննության իրավունք (6-րդ հոդված),
6. Պատիժ՝ բացառապես օրենքի հիման վրա (7-րդ հոդված),
7. Անձնական և ընտանեկան կյանքը հարգելու իրավունք (8-րդ հոդված),
8. Մտքի, խղճի և կրոնի ազատություն (9-րդ հոդված),
9. Արտահայտվելու ազատություն (10-րդ հոդված),
10. Հավաքների և միավորման ազատություն (11-րդ հոդված),
11. Ամուսնության իրավունք (12-րդ հոդված),
12. Իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունք (13-րդ հոդված),
13. Խտրականության արգելում (14-րդ հոդված):

ՄԻԵԿ-ը պահանջում է բոլոր իրավունքների անխտիր կիրառումը, բացառությամբ դրանց այն սահմանափակումների, որոնք նախատեսված են ՄԻԵԿ-ով, այլ կոնվենցիաներով կամ,

եթե դա վերապահված է ՄԻԵԿ-ով, ազգային օրենսդրությամբ[125]:

Հետևաբար, տուժողների իրավունքների լրացուցիչ պաշտպանության կարիքի առնչությամբ բազմաթիվ գործերով անդրադարձել է ՄԻԵԴ-ը[126]:

ՄԻԵԴ-ը ձևավորել է բավականին լայն նախադեպային իրավունք տուժողների պաշտպանության համատեքստում[127]:

---

125 ՄԻԵԿ-ը թույլատրում է վերը նշված իրավունքների պաշտպանության ոլորտում շեղում միայն արտակարգ իրավիճակներում: Մասնավորապես՝ պատերազմի կամ ազգի կյանքին սպառնացող այլ արտակարգ դրության ժամանակ ցանկացած պետություն կարող է ձեռնարկել միջոցառումներ՝ ի շեղում ՄԻԵԿ–ով ամրագրված իր պարտավորությունների՝ բացառապես այնքանով, որքանով դա պահանջում է դրության լրջությունը՝ պայմանով, որ նման միջոցառումներն անհամատեղելի չեն միջազգային իրավունքով ստանձնած նրա մյուս պարտավորությունների հետ: Բոլոր դեպքերում անվերապահորեն պահպանվում են՝

- կյանքի իրավունքը, բացառությամբ պատերազմական օրինական գործողությունների հետևանքով մարդկային զոհերի կապակցությամբ,
- խոշտանգումների արգելքը,
- ստրկության և հարկադիր աշխատանքի արգելքը,
- պատիժ սահմանելը բացառապես օրենքի հիման վրա:

Սակայն եթե պետությունն օգտագործում է շեղվելու այս իրավունքը, այն ԵԽ Գլխավոր քարտուղարին ամբողջությամբ պետք է ներկայացնի իր կիրառած միջոցառումների և դրանք կիրառելու դրդապատճառների մասին: ԵԽ Գլխավոր քարտուղարը ծանուցվում է նաև այդ միջոցառումների գործողությունը դադարեցնելու և ՄԻԵԿ-ի դրույթների լիակատար իրագործումը վերսկսելու մասին:

126 Տուժողների իրավունքների լրացուցիչ պաշտպանության լավագույն փորձն ամփոփվել է Վրաստանի կողմից Տես՝ https://rm.coe.int/council-of-europe-georgia-european-court-of-human-rights-case-study-vi/16807823c4:

127 Հաշվի առնելով, որ ՄԻԵԴ-ի՝ խոցելի տուժողների նախադեպերին անդրադարձ արդեն իսկ կատարվել է 2017թ.-ի «Խոցելի տուժողների/վկաների և կասկածյալների մասնակցությամբ իրականացվող քննությունը» վերտառությամբ ուսումնական ձեռնարկում, ստորև ներկայացվում են միայն 2018-2019թթ.-ին ձևավորված և տուժողների/ նրանց ընտանիքների խոցելիությանը կամ ՄԻԵԿ-ով պաշտպանվող տարբեր իրավունքներին վերաբերող ՄԻԵԴ-ի նախադեպերը:

Մասնավորապես՝ այդ նախադեպերից են՝

ԳՈՀ Ստիֆթանգ Գեգենն (Stiftan Gegen) ընդդեմ Շվեյցարիայի, 2018թ.-ի հունվարի 9

Հիմքում ընկած խնդիրը. Ատելություն պարունակող ճառը քննադատելու ազատություն

Իրավական հիմնախնդիրը. Խոսքի ազատություն

Փաստերի համառոտ ակնարկ. Դիմումատուն Շվեյցարիայում գրանցված հասարակական կազմակերպություն է, որի հիմնական նպատակն է պայքարել ռասիզմի և հակասեմիտիզմի դեմ: 2009թ.-ին մինարեթների սահմանադրական արգելքի շվեյցարական արշավների ընթացքում մի երիտասարդ ակտիվիստ, ով կողմ էր արտահայտվում սահմանադրական արգելքին, հայտարարեց, որ «Շվեյցարիայի առաջադեմ մշակույթը, որը հիմնված է քրիստոնեության վրա, չի կարող իրեն թույլ տալ փոխարինվել այլ մշակույթներով»: Դիմումատու կազմակերպությունը հոդված է հրապարակել իրենց կայքում՝ որակելով այս խոսքը որպես խոսքային ռասիզմ: Երիտասարդը, ի պատասխան, հայց է ներկայացրել դիմումատու կազմակերպության դեմ՝ խնդրելով հեռացնել հոդվածը կազմակերպության կայքից և այն փոխարինել դատարանի վճռով: Խնդրանքը բավարարվել է, և ԳՈՀ-ն բողոք է ներկայացրել ՄԻԵԴ՝ պնդելով, որ խախտվել է իրենց խոսքի ազատությունը:

Իրավական հիմնավորում. ՄԻԵԴ-ը քննարկեց ռասիզմը՝ որպես հանցագործության և որպես սոցիալական երևույթի միջև եղած տարբերությունը և եզրակացրեց, որ «տվյալ նախաձեռնության կողմնակիցների քաղաքական դիսկուրսում ձեռք բերած երանգը նկարագրվել է Ռասայական խտրականության վերացման հանձնաժողովը (այսուհետ՝ ՌԽՎՀ)՝ Շվեյցարիայի վերաբերյալ 2009թ.-ի զեկույցում հետևյալ կերպ՝ «այն մեծապես նպաստում է [մուսուլմանների նկատմամբ] անհարգալից վերաբերմունքի դրսևորմանը և մեծամասնություն կազմող համայնքի անդամների կողմից նրանց նկատմամբ ռասիստական

նախապաշարմունքների և խտրականության ուժեղացմանը»: Նույն կերպ Ռասիզմի դեմ Շվեյցարիայի դաշնային հանձնաժողովն իր առաջարկություններում նշել է, որ նախաձեռնությունը մեղադրել է և խտրական վերաբերմունք է դրսևորել մուսուլման տղամարդկանց և կանանց նկատմամբ: Ավելին, 2014թ.-ին ՄԱԿ-ի ՌԽՎՀ-ն զեկուցել է այդ նախաձեռնության մասին իր եզրափակիչ դիտարկումներում՝ «Ռասիզմը և այլատյացությունը քաղաքականության մեջ և լրատվամիջոցներում» խորագրով: Հետևաբար, ՄԻԵԴ-ն եզրակացրեց, որ չի կարելի ասել, որ այդ ելույթը որպես «խոսքային ռասիզմ» դասակարգելը՝ հաշվի առնելով, որ տարբեր կազմակերպությունների կողմից բնութագրվել էր որպես խտրական, այլատյաց կամ ռասիստական, հիմնազուրկ է: Հետևաբար, ՄԻԵԴ-ն եզրակացրեց, որ հայտարարությունը հանելու և ներպետական դատարանի վճիռը հրապարակելու պահանջը խոսքի ազատության խախտում է:

Բիքասն (Bikas) ընդդեմ Գերմանիայի, 2018թ.-ի հունվարի 25

Հիմքում ընկած խնդիրը. Դատավարական հարմարություններ հաշմանդամություն ունեցող զոհերի համար

Իրավական հիմնախնդիրը. Անմեղության կանխավարկած

Փաստերի համառոտ ակնարկ: Մի քանի տարվա ընթացքում հարյուրավոր անգամներ Բիքասը սեռական բնույթի բռնություններ է գործադրել մտավոր հաշմանդամություն ունեցող երիտասարդ կնոջ նկատմամբ: Ազգային դատարանը որոշեց քննել միայն այն չորս դեպքերը, որոնց համար գտավ հիմնավոր ապացույցներ և կարողացավ պարզել դրանց կատարման ժամանակը և վայրը: Դատարանը հաշվի է առել նաև մնացյալ տասնյակ դեպքերը, որոնց վերաբերյալ տուժողը, իր հաշմանդամության պատճառով, չի կարողացել ճշգրիտ տեղեկություններ հաղորդել, թե երբ են դրանք պատահել: Այս միջադեպերը համարվեցին ծանրացուցիչ հանգամանք Բիքասի

պատժի համար: Նրան դատապարտեցին 6 տարվա ազատազրկման: Բիքասը բողոքեց, որ խախտվել է իր անմեղության կանխավարկածը՝ հաշվի առնելով այն դեպքերը, որոնց համար նրան պաշտոնապես չեն հետաքննել:

Իրավական հիմնավորում. ՄԻԵԴ-ը պարզեց, որ հարցը ոչ թե վերաբերում է նրան՝ առանց ապացույցների մեղավոր ճանաչելուն, այլ տարբեր դեպքերի համար տարբեր տեսակի ապացույցներ ունենալուն: ՄԻԵԴ-ը պարզեց, որ չորս դեպքերում ազգային դատարանն ուներ բոլոր տարրերը՝ դրանք դատավարական իմաստով որպես հանցագործություններ սահմանելու համար, հետագա հիսուն դեպքերի առնչությամբ, որոնց կապակցությամբ դադարեցվել է դատավարությունը, նշվեց, որ մեղադրյալը մեղավոր ճանաչվեց, բայց տուժողի խոսքի խանգարման պատճառով հնարավոր չէր հստակ նշել այն ժամանակը և վայրը, որտեղ տեղի էին ունեցել այդ միջադեպերը (...): Այս համատեքստում ՄԻԵԴ-ը հաշվի է առնում, որ մյուս հիսուն դեպքերը, ինչպես հայտարարել է ազգային դատարանը, իսկապես միանման էին և սերտորեն կապակցված. նրանք բոլորն էլ առնչվում էին նույն տեսակի հանցագործության, այն է՝ սեռական բռնության. դրանք կատարվել են նույն տուժողի նկատմամբ որոշակի ժամանակահատվածում՝ 2001թ.-ի հունվարից մինչև 2007թ.-ի հոկտեմբեր: Սրա արդյունքում հաստատվում է այն եզրակացությունը, որ տվյալ դեպքում հիմք ընդունելով այն փաստը, որ գործողությունների իրականացումն ապացուցվել է առանց որևէ ողջամիտ կասկածի՝ պարտադիր չէ որոշել կատարված արարքներից յուրաքանչյուրի ճշգրիտ ժամանակը և վայրը: Դրանով դատարանները բավարարել են այն պահանջները, որոնք սահմանված են ներպետական դատարանների նախադեպային իրավունքի մեջ ապացույցների գնահատման առնչությամբ՝ սեռական բռնության ժամանակ սերիական հանցագործությունների առանձնահատկություններին համապատասխան:

ՄԻԵԴ-ը ՄԻԵԿ-ի 6-րդ հոդվածի խախտում չէր հաստատել:

Սելամին և ուրիշներն (Selamin and others) ընդդեմ նախկին Հարավսլավիայի Մակեդոնիայի Հանրապետության, 2018թ.-ի մարտի 1

Հիմքում ընկած խնդիրը. Ընտանիքի անդամները որպես խոշտանգումների զոհ. համարժեք փոխհատուցում խոշտանգումների զոհերի համար

Իրավական հիմնախնդիրը. Խոշտանգումների արգելք

Փաստերի համառոտ ակնարկ. Դիմումը ներկայացվել է պ-ն Սալամիի կնոջ և երեք երեխաների կողմից: Պ-ն Սալամին զրկվել է ազատությունից և խոշտանգումների է ենթարկվել նախկին Հարավսլավիայի Մակեդոնիայի Հանրապետության ոստիկանության կողմից: Նա և նրա ընտանիքի անդամները հայց են ներկայացրել փոխհատուցման պահանջով: Ընտանիքի անդամների հայցը մերժվել է, քանի որ ներպետական օրենսդրությունը փոխհատուցում է տալիս ընտանիքի անդամներին միայն այն դեպքում, երբ վատ վերաբերմունքի արդյունքում տուժողի մոտ առաջացել է հաշմանդամություն: Այնուամենայնիվ, քանի որ անմիջական տուժողն ուներ նախկինում արդեն իսկ գոյություն ունեցող աշխատունակության խնդիրներ, նա չէր կարող պնդել, որ հաշմանդամ է դարձել խոշտանգումների արդյունքում: Ավելին, տրված փոխհատուցումը կազմում էր մոտ 8,900 եվրո, ինչը չէր համապատասխանում նրա կրած վատ վերաբերմունքին:

Իրավական հիմնավորում. ՄԻԵԴ-ը պարզեց, որ չորս դիմումատուներից միայն մեկը՝ Սալամիի որդին, ով մահից հետո հայտարարվել է վերջինիս միակ ժառանգ, ունի տուժողի կարգավիճակ՝ ըստ ՄԻԵԴ-ի համատեքստի: ՄԻԵԴ-ը պարզեց, որ «խոշտանգումների հետ կապված բողոքները՝ որպես ՄԻԵԿ-ի 3-րդ հոդվածով արգելված դաժան վերաբերմունքի ամենալուրջ դրսևորում, սկզբունքորեն, բարձրացնում են ընդհանուր հետաքրքրության արժանի հարց, որը վերաբերում է «մարդու իրավունքների նկատմամբ հարգանքին»: Այս կապակցությամբ

ՄԻԵԴ-ը ևս մեկ անգամ շեշտում է դատական համակարգի զսպող ազդեցության կարևորությունը և այն դերը, որն այն պետք է ունենա վատ վերաբերմունքի և մասնավորապես՝ խոշտանգումների արգելքի խախտումները կանխելու գործում: Դա չափազանց կարևոր է հասարակության վստահությունը պահպանելու, օրենքի գերակայությունն ապահովելու, ինչպես նաև ապօրինի գործողություններում հանդուրժողականության կամ հանցավոր համաձայնության դեպքերը կանխելու համար: Ավելին, դատարաններում առկա գործերը նույնպես ունեն բարոյական կամ սկզբունքային էություն, և ամենամտերիմ հարազատները կարող են ունենալ օրինական իրավունք, այն է՝ ստանալ որոշումը, նույնիսկ անմիջական տուժողի մահվանից հետո:

Ելնելով վերոգրյալից՝ ՄԻԵԴ-ը հաստատել է ՄԻԵԿ-ի 6-րդ և 10-րդ հոդվածների խախտում:

Աբդեննասեր Նաիտ-Լիմանն (Nait-Limann) ընդդեմ Շվեյցարիայի, 2018թ.-ի մարտի 15

Հիմքում ընկած խնդիրը. Փոխհատուցում՝ նախատեսված խոշտանգումների զոհերի համար

Իրավական հիմնախնդիրը. Արդար դատաքննության իրավունք

Փաստերի համառոտ ակնարկ. Դիմումատուն ենթարկվել էր խոշտանգումների Թունիսում: Խոշտանգումներից հետո նա ապաստան է ստացել Շվեյցարիայում և այժմ Շվեյցարիայի քաղաքացի է: Նա ցանկանում էր փոխհատուցում պահանջել Թունիսի այն ժամանակվա ՆԳ նախարարից՝ վերջինիս ենթադրյալ խոշտանգումների համար, սակայն թունիսցի փաստաբանի կողմից տեղեկացվել է, որ նման հայցն երբեք չի կարող բավարարվել Թունիսի դատարաններում: Հետևաբար, նա քաղաքացիական հայց էր ներկայացրել Շվեյցարիայի դատարաններ, որը մերժվել էր, և ՄԻԵԴ-ին խնդրել են պարզել՝ արդյոք տեղի է ունեցել ՄԻԵԿ-ի 6-րդ հոդվածի 1-ին մասի խախտում:

Իրավական հիմնավորում. ՄԻԵԴ-ի Մեծ պալատը պարզեց, որ Նաիտ-Լիմանի արդար դատաքննության իրավունքի որևէ խախտում չի հայտնաբերվել՝ համարելով, որ խոշտանգումների զոհերի փոխհատուցման իրավունքի նկատմամբ համընդհանուր իրավասություն սահմանելու պարտավորություն չկա: Որոշման 218-րդ կետում նշվում է. «Այս եզրակացությունը կասկածի տակ չի դնում միջազգային հանրության լայն կոնսենսուսը՝ խոշտանգումների զոհերի համար համապատասխան և արդյունավետ փոխհատուցում ստանալու իրավունքի առկայության վերաբերյալ, ինչպես նաև այն փաստը, որ Պետություններին խրախուսվում է իրավական ուժ հաղորդել այս իրավունքին՝ շնորհելով իրենց դատարաններին իրավասություն՝ քննելու փոխհատուցման վերաբերյալ պահանջները, ներառյալ այն դեպքերը, երբ դրանք հիմնված են իրենց աշխարհագրական սահմաններից դուրս տեղի ունեցած փաստերի վրա: Այս առումով գովելի են Պետությունների ջանքերը հնարավորինս հասանելի դարձնել արդար դատաքննության իրավունքը խոշտանգումների դիմաց փոխհատուցում հայցողների համար»:

Լոզովն (Lozov) ընդդեմ Ռուսաստանի, 2018թ.-ի ապրիլի 24

Հիմքում ընկած խնդիրը. Հանցագործության զոհի հուղարկավորությունն առանց հարազատների պատշաճ տեղեկացվածության

Իրավական հիմնահարցը. Անձնական և ընտանեկան կյանքը հարգելու իրավունք

Փաստերի համառոտ ակնարկ. Դիմումատուների որդին սպանվել է Սանկտ Պետերբուրգում: Մինչ իշխանությունները փորձ էին անում հայտնաբերել մահացածի հարազատներին, այդ ընթացքում որդին հուղարկավորվել էր Սանկտ Պետերբուրգում՝ նախքան քննության ավարտը: Դիմումատուները հետագայում պարզել են դա, արտաշիրիմել նրա մարմինը և

վերահուղարկավորել իրենց հարազատ քաղաքում: Արձագանքելով իշխանությունների կողմից իրենց որդու մահվան մասին լուրը չհայտնելու վերաբերյալ բողոքներին՝ շրջանային դատարանը հաստատեց, որ քննիչը բավարար քայլեր չի ձեռնարկել հանգուցյալի հարազատներին գտնելու համար՝ չնայած քրեական գործի նյութերը բավարար տեղեկություններ են պարունակել դրա համար:

Իրավական հիմնավորում. ՄԻԵԿ-ի 8-րդ հոդվածով նախատեսված իրենց դրական պարտավորությունների կատարման ընտրության հարցում Պետություններն ունեն հայեցողության լայն շրջանակ: Այնպիսի իրավիճակներում, ինչպիսին սույն գործն է, երբ պետական մարմինները տեղյակ են մահվան մասին, իսկ ընտանիքի անդամները՝ ոչ, գոյություն ունի «համապատասխան մարմինների պարտավորություն առ այն, որ վերջիններս առնվազն պետք է ողջամիտ քայլեր ձեռնարկեն, որպեսզի ընտանիքի ողջ մնացած անդամները տեղեկացված լինեն»: ՄԻԵԴ-ը պնդում է, որ իշխանությունները «չեն գործել ողջամիտ ջանասիրությամբ և, հետևաբար, չեն կատարել իրենց դրական պարտավորությունը»:

ՄԻԵԴ-ը հաստատեց ՄԻԵԿ-ի 8-րդ հոդվածի խախտում:

Հովհաննիսյանն (Hovhannisyan) ընդդեմ Հայաստանի, 2018թ.-ի հուլիսի 19

Հիմքում ընկած խնդիրը. Աշխատանքի վայրում նվաստացնող վերաբերմունքի մասին հաղորդումների արդյունավետ քննության ձախողում

Իրավական հիմնահարցը. Խոշտանգումների և անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի արգելք

Փաստերի համառոտ ակնարկ. Դիմումատուն քաղաքացիական ծառայող էր, որն աշխատում է ՀՀ բնապահպանության նախարարությունում: Ըստ դիմումատուի՝ նա իր վերադասի հետ վիճաբանություն է ունեցել իր աշխատասենյակում հաշվետվության վերաբերյալ: Վերջինս և իր տեղակալը հարձակ-

վել են նրա վրա, բռնել են նրա ձեռքերը, վիրավորել նրան և ստիպողաբար վերցրել են նրանից հաշվետվությունը: Բռնությունների արդյունքում նա ուշաթափվել է, ստացել մարմնական վնասվածքներ, նրա ձեռքերի վրա առկա էին բազմաթիվ արյունազեղումներ և լրջորեն նվաստացվել էր: Նա դեպքի մասին հայտնել է աշխատակազմի ղեկավարին և ոստիկանությանը: Դատաբժշկական փորձաքննությունը հաստատել է, որ դիմումատուն արյունազեղումներ է ունեցել իր ձեռքի տարբեր հատվածների վրա: Այնուամենայնիվ, նրա բոլոր գործընկերները, ովքեր հայտարարություններ են տվել և եղել են ենթադրյալ հանցագործություն կատարողների ենթակաները, հերքել են դեպքի նման ընթացքը, ինչի արդյունքում քրեական գործի հարուցումը մերժվեց:

Իրավական հիմնավորում. ՄԻԵԴ-ը պարզեց, որ պետական մարմինները չեն կարողացել պատշաճ քննություն անցկացնել դիմումատուի կողմից ներկայացված վատ վերաբերմունքի մասին հայտարարության վերաբերյալ: Ոչ մի քննություն նույնիսկ չէր էլ սկսվել, ոչ մի ներքին քննություն չէր էլ իրականացվել: Որևէ քայլ չէր ձեռնարկվել՝ ձեռք բերելու ապացույցներ դիմումատուի գործընկերներից այնպես, որպեսզի խուսափեն հնարավոր խնդիրներից, որոնք կարող են ստեղծվել այն փաստի պատճառով, որ նրանք ենթադրյալ հանցագործություն կատարողների ենթականերն են: ՄԻԵԴ-ը հայտնաբերեց ՄԻԵԿ-ի 3-րդ հոդվածի խախտում:

Ակելիենեն (Akelene) ընդդեմ Լիտվայի, 2018թ.-ի հոկտեմբերի 16

Հիմքում ընկած խնդիրը. Իշխանությունների կողմից դիմումատուի որդուն սպանելու համար դատապարտված անձի նկատմամբ որպես պատիժ ազատազրկում կիրառելու ձախողում

Իրավական հիմնահարցը. Կյանքի իրավունք

Փաստերի համառոտ ակնարկ. Դիմումատուի որդին

սպանվել է 1994թ.-ին: Իշխանությունները քննություն են սկսել նրանից հետո, երբ դիմումատուի դուստրը հայտնել է, որ իր եղբայրն անհետ կորել է: Ա.Գ.-ին պաշտոնապես առաջադրվել է սպանության մեղադրանք 2005թ.-ին: Նա ձերբակալվել է 2006թ.-ի մարտին և կալանքի տակ է գտնվել մինչև նույն տարվա նոյեմբեր, երբ նրա նկատմամբ կիրառվել է ստորագրություն չհեռանալու մասին: 2009թ.-ին նա արդարացվել է, և արդարացման մասին որոշումը թողնվել է անփոփոխ: 2011թ.-ին Գերագույն դատարանը չեղյալ հայտարարեց այդ որոշումը և գործն ուղարկեց նոր քննության: 2012թ.-ի նոյեմբերին Վերաքննիչ դատարանը մեղադրեց Ա.Գ.-ին ծանր հանցագործություն կատարելու մեջ և նրան դատապարտեց 14 տարվա ազատազրկման: 2012թ.-ի դեկտեմբերին պարզ դարձավ, որ Ա.Գ.-ն դիմել է փախուստի՝ խուսափելով պատիժը կրելուց:

Իրավական հիմնավորում. Պետության կողմից ձեռնարկված միջոցառումները բավարար էին Ա.Գ.-ի ձերբակալումից հետո վերջինիս գտնելու և Լիտվային արտահանձնելու համար:

ՄԻԵԴ-ը չի հայտնաբերել ՄԻԵԿ-ի 2-րդ հոդվածի խախտում:

Կաբողլուն և Օրանն (Kaboghlu and Oran) ընդդեմ Թուրքիայի, 2018թ.-ի հոկտեմբերի 30

Հիմքում ընկած խնդիրը. Անարգանք երկու ակադեմիկոսների անձնական կյանքի նկատմամբ, որոնց հասցեին ուղղվել են սպառնալիքներ և ատելություն պարունակող ճառեր՝ տպագիր թերթի հոդվածներում

Իրավական հիմնահարցը. Անձնական և ընտանեկան կյանքը հարգելու իրավունք

Փաստերի համառոտ ակնարկ. Դեպքը վերաբերում էր դիմումատուների դեմ ուղղված սպառնալիքներին և թերթերի՝ ատելություն պարունակող հոդվածներին՝ մեղադրելով նրանց այն գաղափարների համար, որոնք նրանք ներկայացրել էին Կառավարությանը հասցեագրված զեկույցում, որը վերաբերում

էր փոքրամասնությունների և մշակութային իրավունքների հարցերին: Դիմումատուները պարտվել են իրենց ներպետական դատարաններում, որոնք համարել են, որ վիրավորական հոդվածները գրվել են օրենքի շրջանակներում՝ ապահովելով խոսքի ազատություն:

Իրավական հիմնավորում. ՄԻԵԴ-ը, մասնավորապես, պարզել է, որ դիմումատուների դեմ ուղղված բանավոր հարձակումները և ֆիզիկական վնասվածքների սպառնալիքները նպատակ են հետապնդել խաթարել նրանց մտավոր անհատականությունը՝ նրանց մոտ առաջացնելով վախի, անհանգստության և խոցելիության զգացողություն, որպեսզի նվաստացնեն նրանց և կոտրեն իրենց գաղափարները պաշտպանելու վերջիններիս կամքը: ՄԻԵԴ-ը պարզել է նաև, որ ներպետական դատարանները բավարար կերպով չեն պատասխանել այն հարցին, թե արդյոք մամուլի ազատությունը կարող է արդարացնել, տվյալ գործի հանգամանքներում, դիմումատուների անձնական կյանքի նկատմամբ հարգանքի իրավունքին պատճառված վնասն այն հոդվածների միջոցով, որոնք վերաբերում են ատելություն պարունակող ճառերին և բռնության հրահրմանը, այդպիսով, փորձելով նրանց արժանացնել հասարակության պարսավանքին և արհամարհանքին: ՄԻԵԴ-ն եզրակացրեց, որ ներպետական դատարանները չեն պահել արդարացի հավասարակշռություն դիմումատուների անձնական կյանքի նկատմամբ հարգանքի և մամուլի խոսքի ազատության նկատմամբ հարգանքի իրավունքների միջև:

Լակատոսովան և Լակատոսն (Lakatosova and Lakatos) ընդդեմ Սլովակիայի, 2018թ.-ի դեկտեմբերի 11

Հիմքում ընկած խնդիրը. Սլովակիայի իշխանություններին չի հաջողվել քննել գնչուական ընտանիքի տան ուղղությամբ ոչ աշխատանքային ժամին ոստիկանության աշխատակցի կողմից արված կրակոցների հնարավոր ռասայական դրդապատճառները

Իրավական հիմնահարցը. Կյանքի իրավունք և խտրականության արգելում

Փաստերի համառոտ ակնարկ. Դեպքը վերաբերում էր 2012թ.-ին կրակոցների արձակմանը, որը տեղի է ունեցել ոստիկանության ծառայողի կողմից գնչուական ընտանիքի տան ուղղությամբ: Գործով երկու դիմումատուներն ամուսնացած զույգ, ծանր վիրավորվել են, իսկ նրանց ընտանիքի երեք անդամներ՝ սպանվել: Ոստիկանը հարցաքննության ընթացքում ասաց, որ ինքը մտածում էր «արմատական լուծման մասին»՝ գնչուների հետ «գործ ունենալու համար»: Վերջիվերջո նա դատապարտվեց և նրա պատիժը կրճատվեց՝ կազմելով 9 տարվա ազատազրկում սահմանափակ մեղսունակության պատճառով: Որոշումն ընդունվել է պարզեցված վճռի տեսքով, որը չի պարունակել որևէ իրավական հիմնավորում: Հիմնվելով 14-րդ հոդվածի (խտրականության արգելք) վրա, որն ընթերցվում է 2-րդ հոդվածի (կյանքի իրավունք) հետ միասին, դիմումատուները, ըստ էության, բողոքել են, որ Սլովակիայի իշխանությունները չեն կարողացել իրականացնել արդյունավետ քննություն առ այն, թե արդյոք իրենց ընտանիքի վրա հարձակումը պայմանավորված էր ռասայական շարժառիթով: Ըստ ՄԻԵԿ-ի 13-րդ հոդվածի (արդյունավետ պաշտպանության միջոց), որը ՄԻԵԿ-ի 2-րդ հոդվածի հետ միասին է մեկնաբանվում, նրանք նաև բողոքել են, որ իրենց թույլ չի տրվել ակտիվորեն մասնակցել քրեական դատավարությանը:

Իրավական հիմնավորում. ՄԻԵԴ-ն ընդունել է, որ գործնականում հաճախ ծայրահեղ դժվար է ռասայական շարժառիթի առկայությունն ապացուցելը: Այնուամենայնիվ, իշխանությունները պարտավոր էին անել այն ամենը, ինչ ողջամիտ էր տվյալ հանգամանքներում՝ ճշմարտությունը բացահայտելու համար: Մասնավորապես, եթե հետաքննության ընթացքում ի հայտ գային ռասիզմի ապացույցներ, ապա դրանք պետք էր ստուգել, իսկ հաստատվելու դեպքում՝ պետք էր անցկացնել մանրակրկիտ քննություն: ՄԻԵԴ-ը համարեց, որ դիմումատուների

գործով առկա էին ողջամիտ տեղեկություններ, որոնց նպատակն էր քննիչներին և դատախազներին հիշեցնել ռասիզմի նախնական գնահատում իրականացնելու անհրաժեշտությունը, ինչն էլ իրականացվել էր: Քննչական մարմինները, մասնավորապես, հարցաքննել էին պ-ն Ջ.-ին և մյուս վկաներին՝ պարզելու, թե ինչ հնարավոր ռասիստական նախապատմություն կա նրա գործողությունների հիմքում, և հոգեբաններին խնդրել էին գնահատել այդ արարքի դրդապատճառները: Այնուամենայնիվ, նրանք չէին ընդարձակել իրենց քննությունն ու վերլուծությունը դրա սահմաններից դուրս: Ավելին, չնայած քննության ընթացքում հավաքված ապացույցներին՝ պ-ն Ջ.-ին մեղադրանք չի առաջադրվել ռասայական շարժառիթով կատարված հանցագործության համար: Դատախազին այնուհետև չի հաջողվել անդրադառնալ մեղադրական եզրակացության այդ թերությանը՝ առհասարակ չքննարկելով ռասիստական շարժառիթը: ՄԻԵԴ-ը շեշտեց, որ ռասայական շարժառիթով բռնությունը մարդկային արժանապատվությանն ուղղված հատուկ թշնամանք է, ինչը պահանջում է հատուկ զգոնություն և իշխանությունների բուռն արձագանք: Այնուամենայնիվ, դիմումատուների գործով քննությունն ու դատավարությունն արժեզրկվել են այնքանով, որ այդ գործն անհամատեղելի է եղել այդ պարտավորության հետ: Իրոք, ի դեմս ռասիզմի ուժեղ ցուցանիշների, իշխանությունները չկարողացան պատշաճ կերպով պարզել, թե արդյոք հարձակումը պայմանավորված է եղել ռասայական ատելությամբ, թե՝ ոչ: Հետևաբար, տեղի է ունեցել ՄԻԵԿ-ի 14-րդ հոդվածի խախտում, որը մեկնաբանվում է ՄԻԵԿ-ի 2-րդ հոդվածի հետ միասին:

Թեմա 10. Խոցելի զոհերի մարդու իրավունքների պաշտպանությունն ապահովող մարտավարությունը և մեթոդիկան

Դատավարության մասնակցի՝ խոցելի խմբի ներկայացուցիչ հանդիսանալու հանգամանքը պարզելուց հետո պետք է իրականացվի դատավարության կոնկրետ մասնակցի իրավունքների պաշտպանություն:

Խոցելի տուժողի իրավունքները պաշտպանելիս դատավորը, մասնավորապես, կարող է կիրառել հետևյալ պաշտպանական միջոցները՝

1. *Անձնական անվտանգությունն ապահովելը, բնակարանը և այլ գույքը պահպանելը:* ՀՀ քր. դատ. օր.-ի 98.4-րդ հոդվածի համաձայն՝ քրեական վարույթն իրականացնող մարմինը, համագործակցելով այլ իրավասու մարմինների հետ, իրականացնում է պաշտպանվող անձի անձնական պահպանությունը, նրա բնակարանի կամ այլ գույքի պահպանությունը: Պաշտպանվող անձի բնակարանը կամ այլ գույքը սարքավորվում են հակահրդեհային կամ ազդանշանային տեխնիկական միջոցներով, փոխվում են նրա բնակարանի կամ անձնական այլ հեռախոսահամարները կամ նրան պատկանող տրանսպորտային միջոցի (միջոցների) պետական համարանիշերը:

ՀՀ-ում բացակայում է քրեական դատավարության ոլորտում պաշտպանվող անձի անվտանգության ապահովման, նրա բնակարանի կամ գույքի պահպանության, դրանց նկատմամբ հսկողության իրականացման հարաբերությունները կարգավորող օրենսդրական ակտ: Մինչև օրենսդրական և ինստիտուցիոնալ կառուցակարգերի ձևավորումը, պաշտպանվող անձի անվտանգության պահպանությունը նրա բնակարանի կամ գույքի պահպանությունը կարող է իրականացվել ՀՀ ոստիկանության համապատասխան ստորաբաժանումների կողմից: Անհրաժեշտության դեպքում պետությունը կարող է նշված գոր-

ծառույթը պատվիրել «Մասնավոր պահնորդական գործունեության մասին» ՀՀ օրենքի հիման վրա գործող թիկնապահական և պահնորդական ծառայություններ մատուցող կազմակերպություններին: «Մասնավոր պահնորդական գործունեության մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի համաձայն՝ իրավապահ մարմինների հետ համագործակցության ընթացքում թիկնապահական և պահնորդական գործունեություն իրականացնող կազմակերպությունների աշխատանքներն իրականացվում են հետևյալ հիմնական ուղղություններով՝ իրավակարգի պահպանում, քաղաքացիների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության ապահովում և այլն: Իրավապահ մարմինների հետ համագործակցությունն իրականացվում է համաձայնագրերի հիման վրա՝ տեղեկատվության փոխանակման, օրենսդրությամբ նախատեսված համատեղ կամ համաձայնեցված միջոցառումների անցկացման միջոցով: Նշված օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ թիկնապահական և պահնորդական գործունեությունն իրականացնելիս կարող են մատուցվել հետևյալ ծառայությունները.

1) ֆիզիկական անձի կյանքի և առողջության պաշտպանությունն հակաիրավական ոտնձգություններից (այդ թվում՝ զենքի օգտագործմամբ).
2) սեփականության կամ օրինական տիրապետման ներքո գտնվող օբյեկտների, անշարժ և շարժական գույքի, տարածքի պահպանությունը.
3) պահպանվող օբյեկտներում անցագրային և ներօբյեկտային պայմանակարգերի ապահովումը.
4) հատուկ կապի և տրանսպորտային միջոցների տրամադրումը:

Պաշտպանվող անձի անվտանգությունը կարող է ապահովվել, օրինակ՝ թիկնապահ տրամադրելու եղանակներով: «Մասնավոր պահնորդական գործունեության մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ թիկնապահը պաշտպան-

վող անձի կյանքի և առողջության պաշտպանություն իրականացնելու համար օրենքով նախատեսված որակավորում ունեցող, թիկնապահական և պահնորդական գործունեություն իրականացնող կազմակերպությունում պայմանագրային հիմունքներով աշխատող և կանոնադրական խնդիրներ իրականացնող ֆիզիկական անձ է: Պաշտպանվող անձի նկատմամբ հսկողություն կարող է սահմանվել նաև երրորդ անձանց համար անտեսանելի պայմաններում: Պաշտպանվող անձի անվտանգության ապահովումը չի ենթադրում պաշտպանվող անձի մեկուսացում իր միջավայրից, օրինակ՝ անթույլատրելի է պաշտպանվող անձին արգելել հանդիպել իր ազգականներին, մտերիմներին, դուրս գալ բնակարանից, կատարել հեռախոսազանգեր և այլն:

Պաշտպանվող անձի անվտանգության ապահովման, նրա բնակարանի կամ գույքի պահպանության ուղղությամբ միջոցներ ձեռնարկելիս ցանկալի է ձեռք բերել պաշտպանվող անձի գրավոր համաձայնությունը: Բանն այն է, որ սույն պաշտպանության միջոցի ձեռնարկման դեպքում կարող է սահմանափակվել անձի ազատությունը, մասնավոր կյանքը, սեփականության իրավունքի օգտագործման, տնօրինման և տիրապետման իրավազորությունները:

Պաշտպանվող անձանց անվտանգության ապահովման եղանակներից է պաշտպանվող անձի բնակարանի հրդեհային անվտանգությունը: «Հրդեհային անվտանգության մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի համաձայն՝ բնակավայրերը և օբյեկտները պետք է ապահովված լինեն հրդեհային պահպանությամբ, ինչպես նաև հակահրդեհային ջրամատակարարմամբ, շենքերին և շինություններին հարող մշտական գործող ճանապարհներով, կապի միջոցներով՝ համաձայն հակահրդեհային նորմատիվ փաստաթղթերի: Հրդեհային պահպանությունը՝ հրդեհների կանխարգելման, հրդեհաշիջման, ինչպես նաև դրանց հետ կապված վթարային-փրկարարական աշխատանքներ անցկացնելու նպատակով սահմանված կարգով ստեղծված պետական կառավարման և տեղական ինքնակա-

ռավարման մարմինների, կազմակերպությունների ուժերի և միջոցների, այդ թվում՝ հակահրդեհային միջոցների ամբողջություն է, իսկ հրդեհային անվտանգության ապահովման համակարգը՝ հրդեհների դեմ պայքարի համար նախատեսված ուժերի և միջոցների, ինչպես նաև իրավական, կազմակերպական, տնտեսական, սոցիալական և գիտատեխնիկական միջոցառումների ամբողջություն է («Հրդեհային անվտանգության մասին» ՀՀ օրենքի 3 հոդված):

2. *Անհատական պաշտպանության միջոցներ տրամադրելը և վտանգի մասին հայտնելը:* ՀՀ քր. դատ. օր.-ի 98.5-րդ հոդվածի համաձայն՝ պաշտպանվող անձի անձնական անվտանգության ապահովման համար օրենսդրությամբ սահմանված կարգով նրան տրամադրվում են անհատական պաշտպանության միջոցներ, ինչպես նաև նրան հայտնվում է սպասվող վտանգի մասին: «Անհատական պաշտպանության միջոցների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 11.11.2004թ.-ի թիվ 1631-Ն որոշման 4-րդ կետի համաձայն՝ անհատական պաշտպանության միջոց է համարվում ցանկացած սարքը կամ հարմարանքը և մի քանի սարքերից կամ հարմարանքներից բաղկացած միավորը, որը նախատեսված է մեկ կամ մի քանի վնասակար կամ վտանգավոր գործոններից՝ հնարավոր վտանգից մարդու և մարդու մարմնի կամ նրա առանձին մասերի պաշտպանության համար: Կանոնակարգով սահմանվում են անհատական պաշտպանության միջոցները, այն է՝ պաշտպանական հագուստ, ոտքերի, ձեռքերի, աչքի, լսողական օրգանների, գլխի և դեմքի, շնչառական օրգանների պաշտպանության միջոցներ, ջրում օգտագործման համար նախատեսված և խորտակվելուց պաշտպանվելու միջոցներ: Զենքի տրամադրման կարգը սահմանվում է «Զենքի մասին» ՀՀ օրենքով:

3. *Պաշտպանվող անձի՝ քրեական վարույթն իրականացնող մարմին ներկայանալու անվտանգությունն ապահովելը:*

ՀՀ քր. դատ. օր.-ի 98.7-րդ հոդվածի համաձայն՝ քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով ներկայանալու համար անհրաժեշտության դեպքում պաշտպանվող անձի փոխադրման անվտանգությունն ապահովում է քրեական վարույթն իրականացնող մարմինը: Նշված պաշտպանության միջոցը կիրառվում է միայն պաշտպանվող անձի տեղաշարժման, այդ թվում՝ քննչական գործողություններին կամ դատական նիստին մասնակցելու նպատակով վարույթն իրականացնող մարմին ներկայանալու ժամանակ: Եթե անհրաժեշտություն կա պաշտպանվող անձի անվտանգությունն ապահովել ոչ միայն տեղաշարժման ընթացքում, այլև բնակարանում գտնվելու ժամանակահատվածում, ապա, որպես պաշտպանության միջոց, պետք է կիրառել պաշտպանվող անձի անվտանգության ապահովումը, քանի որ այդ պաշտպանության միջոցը ներառում է անվտանգության միջոցի կիրառում ոչ միայն պաշտպանվող անձի տեղաշարժի, այլ նաև բնակարանում, ուսումնական հաստատության կամ աշխատավայրում գտնվելու ընթացքում:

4. *Բնակության այլ վայր փոխադրելը:* ՀՀ քր. դատ. օր.-ի 98.9-րդ հոդվածի համաձայն՝ պաշտպանվող անձը ժամանակավոր կամ մշտապես փոխադրվում է բնակության այլ վայր: Բնակության այլ վայր փոխադրելն իրականացվում է պաշտպանվող անձի գրավոր համաձայնությամբ, եթե առկա է այնպիսի իրադրություն, երբ պաշտպանվող անձի անձնական անվտանգությունը չի կարող ապահովվել այլ միջոցներով: Սույն պաշտպանության միջոցը կարող է կիրառվել, եթե՝

    1. առկա է պաշտպանվող անձի գրավոր համաձայնությունը,
    2. բացառվում են անձի անվտանգության ապահովումը պաշտպանության այլ միջոցներով:

Որպես բնակության վայր կարող են համարվել հյուրանոցները, հանգստյան տները և այլն, որտեղ ապահովված կլինի

պաշտպանվող անձի անվտանգությունը: Միևնույն ժամանակ, կարծում ենք, սույն պաշտպանության միջոցը չի ենթադրում առանց պաշտպանվող անձի համաձայնության, անվտանգության նպատակով նրան ազատազրկման վայրերում (մեկուսարաններում, քրեակատարողական հիմնարկներում) պահելը:

4. *Ինքնությունը հաստատող փաստաթղթերը փոխարինելը - կամ պաշտպանվող անձի արտաքինը փոխելը:* ՀՀ քր. դատ. օր.-ի 98.10-րդ հոդվածի համաձայն՝ անհրաժեշտության դեպքում կարող են փոխարինվել պաշտպանվող անձի ինքնությունն հաստատող փաստաթղթերը, ինչպես նաև կարող է փոխվել նրա արտաքինը: Փաստաթղթերի փոխարինումը, արտաքինը փոխելը, այդ թվում՝ պլաստիկ վիրահատությունը, իրականացվում են պաշտպանվող անձի գրավոր համաձայնությամբ, եթե առկա է այնպիսի իրադրություն, երբ պաշտպանվող անձի անձնական անվտանգությունը չի կարող ապահովվել այլ միջոցներով: ՀՀ կառավարության «Անձը հաստատող փաստաթղթի մասին» 22.12.1999թ.-ի թիվ 767-Ն որոշման համաձայն՝ ՀՀ անձը հաստատող փաստաթղթերն են՝

   ա) ՀՀ քաղաքացիների համար անձնագիրը, զինվորական գրքույկը, ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության կողմից ժամանակավորապես տրվող՝ անձը (ինքնությունը) հաստատող փաստաթուղթը, մինչև 16 տարեկան երեխաների համար՝ նաև ծննդյան վկայականը,

   բ) ապաստան հայցողների համար՝ ապաստան հայցողի անձը հաստատող վկայականը, փախստականների համար՝ կոնվենցիոն ճամփորդական փաստաթուղթը,

   գ) օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց համար՝ օտարերկրյա պետության անձնագիրը, անձը (ինքնությունը) հաստատող միջազգայնորեն ճանաչված փաստաթղթերը, ՀՀ հատուկ անձնագիրը, կացության քարտը:

«Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ անձնագիրը ՀՀ քաղաքացու ինքնությունը և ՀՀ քաղաքացիությունը հավաստող փաստաթուղթ է, որը նախատեսված է ՀՀ-ից դուրս գալու և ՀՀ վերադառնալու, ինչպես նաև ՀՀ տարածքում օգտագործելու համար:

ՀՀ կառավարության 1998թ.-ի դեկտեմբերի 25-ի թիվ 821 որոշմամբ հաստատվել է «Հայաստանի Հանրապետությունում անձնագրային համակարգի կանոնադրությունը», որի 1-ին կետի համաձայն՝ ՀՀ քաղաքացու անձնագիրը ՀՀ-ում և օտարերկրյա պետություններում նրա անձը հաստատող հիմնական փաստաթուղթն է: Կանոնադրության 5-րդ կետի համաձայն՝ ՀՀ քաղաքացու անձնագրում քաղաքացու անձի մասին գրառվում են հետևյալ տեղեկությունները՝

ա) ազգանունը, անունը, հայերեն էջում՝ նաև հայրանունը,

բ) ծննդյան վայրը, օրը, ամիսը և տարեթիվը,

գ) սեռը,

դ) քաղաքացիությունը,

ե) անձնական համարը:

ՀՀ քաղաքացու անձնագրում կարող են նշվել ՀՀ-ում նրա բնակության վայրը, օտարերկրյա պետություններում մշտապես կամ ժամանակավորապես բնակվելու մասին, օտարերկրյա պետություններ մեկնելու և վերադառնալու մասին: «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքը 29-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ապաստան հայցողների անձը հաստատող վկայականը հաստատում է ապաստան հայցողի օրինական բնակության փաստը և գործում է ՀՀ-ի ողջ տարածքում, իսկ նույն օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կոնվենցիոն ճամփորդական փաստաթուղթը փախստականի անձը և ՀՀ-ում օրինական բնակությունը հաստատող և ՀՀ-ից դուրս գալու համար նախատեսված վավեր փաստաթուղթն է:

«Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի

համաձայն՝ անձնագիրը կամ ճամփորդական փաստաթուղթը միջազգայնորեն ճանաչված՝ անձը հաստատող ճամփորդական փաստաթուղթ է, որը տրված է օտարերկրյա պետության կամ միջազգային կազմակերպության կողմից և իրավունք է տալիս հատելու պետական սահմանը: Նույն օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ՀՀ ժամանակավոր, մշտական և հատուկ կացության կարգավիճակները հաստատող փաստաթղթերն են համապատասխանաբար ժամանակավոր կացության քարտը, մշտական կացության քարտը և հատուկ անձնագիրը: Փախստականներին և քաղաքական ապաստանի իրավունք ստացած անձանց տրվող ճամփորդական փաստաթղթի նկարագիրը և փաստաթուղթը տալու կարգը սահմանվում է ՀՀ կառավարության 03.12.2009թ.-ի «Փախստականին, ինչպես նաև քաղաքական ապաստանի իրավունք ստացած անձին տրվող կոնվենցիոն ճամփորդական փաստաթղթի նկարագիրը և փաստաթուղթը տալու կարգը հաստատելու մասին» թիվ 1417-Ն որոշմամբ:

Արտաքինը փոխելու եղանակ է պլաստիկ վիրահատությունը: Սույն պաշտպանության միջոցը պահանջում է մեծ ֆինանսական ծախսեր և կարող է կիրառվել բացառիկ դեպքերում, երբ հնարավոր չէ այլ եղանակներով ապահովել անձի անվտանգությունը: Սույն պաշտպանության միջոցի ձեռնարկումը պաշտպանվող անձի համար կարող է առաջացնել հոգեբանական, սոցիալական, բարոյական հետևանքներ: Իրավապահ մարմինները սույն պաշտպանության միջոցի իրականացման նպատակով պետք է համագործակցեն այն առողջապահական հիմնարկների հետ, որտեղ իրականացվում է պլաստիկ վիրահատություն: Պլաստիկ վիրահատության եղանակով անձի արտաքինը փոխելն առավել արդյունավետ կհամարվի, եթե այն զուգակցվի անձը հաստատող փաստաթղթերի փոխարինմամբ: ՀՀ քր. դատ. օր-ը թույլատրում է երկու և ավելի պաշտպանության միջոցի ձեռնարկում:

6. Աշխատանքի, ծառայության կամ ուսման վայրը փոփոխելը:

ՀՀ քր. դատ. օր.-ի 98.11-րդ հոդվածի համաձայն՝ եթե պաշտ-

պանվող անձին ուղղված վտանգի վերացման համար պահանջվում է, որ նա թողնի նախկին աշխատանքի, ծառայության կամ ուսման վայրը, ապա քրեական վարույթ իրականացնող մարմինն այդ անձի միջնորդությամբ կամ համաձայնությամբ օգնում է տեղավորվել նոր աշխատանքի կամ ուսման վայր: Պաշտպանվող անձի հարկադիր պարապուրդի ժամկետը հաշվակցվում է որպես աշխատանքային ստաժ, և այդ ժամկետի համար վճարվում է փոխհատուցում, որը չի կարող նախկին աշխատանքի կամ ծառայության համար տրված աշխատավարձից ցածր լինել: Նոր աշխատանքի կամ ծառայության վայրում ցածր աշխատավարձի դեպքում աշխատավարձերի տարբերությունը փոխհատուցվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: Սույն պաշտպանության միջոցի ձեռնարկման դեպքում վարույթ իրականացնող մարմինը պաշտպանվող անձին նոր աշխատատեղով ապահովելու պարտականություն չունի, պարզապես նա հնարավոր բոլոր միջոցներով պետք է աջակցի պաշտպանվող անձին նոր աշխատանքի կամ ուսման վայր տեղավորվելու գործում: Այս պաշտպանության միջոցի ձեռնարկման համար նույնպես պահանջվում է պաշտպանվող անձի համաձայնությունը: Պաշտպանվող անձին ուսման այլ վայր տեղավորելիս պետք է հաշվի առնվեն նրա նախկին ուսման վայրի պայմանները[128]:

▶ Տուժողի կամ վկայի նկատմամբ պաշտպանական միջոցների կիրառումն ու դրանց ընտրությունը պետք է հիմնվի օբյեկտիվ գնահատականի վրա և կրի նպատակային ու անհատական բնույթ:

[128] Պաշտպանական միջոցների մասին մանրամասն տես՝ ՀՀ քրեական դատավարություն. Մաս 1/ Գիտական խմբագիր Ա. Ղամբարյան, Երևան, 2016, էջեր 341-348:

Հարցաքննություն

Խոցելի տուժողների մասնակցությամբ քննչական և այլ դատավարական գործողությունները պետք է առանձնանան «զոհակենտրոնությամբ», այսինքն՝ կիրառվող վերաբերմունքը պետք է հիմնված լինի տուժողի/վկայի իրավունքների պաշտպանության առաջնահերթության վրա: Եթե տուժողը կամ վկան երեխա է, ապա «զոհակենտրոն» մոտեցումը պետք է փոփոխվի «երեխայակենտրոն» մոտեցմամբ, երբ քննչական և այլ դատավարական գործողություններն իրականացնելիս առաջնայնությունը տրվում է երեխայի լավագույն շահի պաշտպանությանը:

- Խոցելի տուժողի իրավունքների պաշտպանությունը քննության ողջ ընթացքում պետք է լինի առաջնային:
- Դատավորի կողմից տուժողների հետ կազմակերպվող աշխատանքը պետք է լինի «զոհակենտրոն», իսկ տուժող երեխաների հետ՝ «երեխայակենտրոն»:

ՀՀ քր. դատ. օր-ի 343-րդ հոդվածի համաձայն՝ տուժողը հարցաքննվում է ՀՀ քր. դատ. օր.-ի 339-342-րդ հոդվածներով սահմանված կանոններով: Այսինքն՝ օրենսդրությունը նույնանման մոտեցում է դրսևորում տուժողների և վկաների հարցաքննությանը: Մասնավորապես, հարցաքննությունից առաջ նախագահողը պարզում է վկայի ինքնությունը և պարզաբանում է՝

1) իր, ամուսնու կամ մերձավոր ազգականների վերաբերյալ ցուցմունք տալուց հրաժարվելու նրա իրավունքը, եթե ողջամտորեն ենթադրում է, որ այն հետագայում կարող է օգտագործվել իր կամ նրանց դեմ.
2) ցուցմունքներ տալուց հրաժարվելու կամ խուսափելու կամ սուտ ցուցմունքներ տալու համար պատասխանատվության մասին:

Տասնվեց տարեկան չդարձած վկան ցուցմունքներ տալուց հրաժարվելու կամ խուսափելու կամ սուտ ցուցմունքներ տալու համար պատասխանատվության մասին չի նախազգուշացվում:

Վկաները հարցաքննվում են միմյանցից անջատ և դեռևս չհարցաքննված վկաների բացակայությամբ: Նախագահողը պարզում է վկայի հարաբերությունն ամբաստանյալի, տուժողի, քաղաքացիական հայցվորի, քաղաքացիական պատասխանողի և գործին մասնակցող այլ անձանց հետ և վկային առաջարկում է հայտնել այն ամենը, ինչ հայտնի է իրեն գործի վերաբերյալ: Չի թույլատրվում վկային հարցերով ընդհատել[129]:

Անչափահաս վկայի հարցաքննությունը, եթե դա անհրաժեշտ է գործի հանգամանքների լրիվ, բազմակողմանի և օբյեկտիվ հետազոտման համար, կողմերի միջնորդությամբ կամ դատարանի նախաձեռնությամբ կարող է կատարվել ամբաստանյալի բացակայությամբ: Դատական նիստի դահլիճ վերադառնալուց հետո ամբաստանյալի համար հրապարակվում են անչափահաս վկայի ցուցմունքները, նրան հնարավորություն է ընձեռնվում տվյալ վկային տալ հարցեր և ցուցմունքներ՝ վկայի հաղորդած տվյալների վերաբերյալ:

16 տարին չլրացած վկան պետք է հեռացվի դատական նիստի դահլիճից նրա հարցաքննությունն ավարտվելուց հետո, բացի այն դեպքերից, երբ դատարանը՝ կողմի միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ, անհրաժեշտ է համարում այդ վկայի հետագա ներկայությունը:

Հետաքննության, նախաքննության կամ նախորդ դատական քննության ընթացքում վկայի տված ցուցմունքների հրա-

[129] Կողմի միջնորդությամբ դատական քննության կանչված կամ նրա կողմից ներկայացված վկային առաջին հերթին հարցաքննում է միջնորդություն հարուցած կամ վկային ներկայացրած անձը, այնուհետև՝ տվյալ կողմում հանդես եկող այլ անձինք, իսկ վերջում՝ հակառակ կողմի ներկայացուցիչները և դատարանը:

Դատարանի նախաձեռնությամբ կանչված վկային առաջին հերթին հարցաքննում է մեղադրանքի կողմը, ապա՝ պաշտպանության կողմը, այնուհետև՝ դատարանը:

պարակումը, ինչպես նաև նրա ցուցմունքների ձայնագրառման վերարտադրումը դատական քննության ժամանակ թույլատրվում է, երբ վկան դատական նիստից բացակայում է այնպիսի պատճառներով, որոնք բացառում են նրա դատարան ներկայանալու հնարավորությունը, էական հակասություններ կան այդ ցուցմունքների և դատարանում վկայի տված ցուցմունքների միջև, ինչպես նաև սույն օրենսգրքով նախատեսված այլ դեպքերում:

Անհարգելի պատճառով չներկայանալու դեպքում հարցաքննության կանչված անձը կարող է բերման ենթարկվել ՀՀ քր. դատ. օր.-ի 153-րդ հոդվածով նախատեսված հիմքով: Չնայած օրենսդրությամբ ամրագրված է բերման ենթարկելու որոշում կայացնելով ապահովել վկայի կամ տուժողի մասնակցությունը՝ խոցելիությունը հաշվի առնելով նման մոտեցումները միջազգային պրակտիկայում անընդունելի են, քանի որ դատարանների հետ համագործակցության ցանկություն չհայտնած վկան կամ տուժողը դեռ գտնվում է հանցագործի կամ հանցագործության ազդեցության տակ և միայն դրանց բացասական հետևանքներից ձերբազատվելուց հետո նա ի վիճակի կլինի (անգամ հոգեբանորեն) մասնակցել քննչական գործողություններին:

Ավելին, եթե հանցագործության տուժողը կամ վկան գիտակցի քննչական գործողության մասնակցությունը, օրինակ՝ ցուցմունք տալը լոկ որպես պարտականություն, նա կկարողանա կիրառել այնպիսի ձևակերպումներ, որոնք ցուցմունքը կդարձնեն անբովանդակ և ձևական, ինչը միանշանակ չի բխում քննության շահերից:

Պետք է հիշել նաև այն, որ մարդու դեմ ուղղված հանցագործությունների, մասնավորապես՝ սեռական հանցագործությունների, սպանության, ընտանեկան բռնությունների դեպքում, վկան ինքնին հանդիսանում է սթրեսային վիճակում գտնվող և պատահական չէ, որ ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների ականատես վկաների նկատմամբ պետք է վերաբերել այնպես, ինչպես վերաբերում են հանցագործության

տուժողին, այլ ոչ թե վկային[130]:

- Ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների ականատեսներին պետք է վերաբերել այնպես, ինչպես վերաբերում են հանցագործության տուժողին՝ հաշվի առնելով նրանց հոգեբանական և հոգեկան վիճակը:

Դատավորն անչափահաս տուժողի հարցաքննության առավելագույն տևողության օրենսդրական սահմանափակումից բացի, պետք է նկատի ունենա, թե երեխան ի՞նչ ժամանակահատվածով կարող է կենտրոնացնել իր ուշադրությունը, մասնավորապես՝

1. դպրոցականների ուշադրության կենտրոնացման ունակությունը կախված տարիքից և զարգացվածության աստիճանից, կարող է տատանվել 30 րոպեից մինչև 1.5 ժամ, սակայն հարցաքննության արդյունավետ տևողությունը 45 րոպե է (1 դասաժամ դպրոցում).
2. նախադպրոցականների հարցաքննության արդյունա-

[130] Օրինակ՝ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված է տարբերակված մոտեցում խոցելի խմբերի որոշ ներկայացուցիչների հարցաքննության դեպքում: Այսպես, ՀՀ քր. դատ. օր.-ի 205.1-րդ հոդվածի համաձայն՝ հարցաքննությունը չի կարող տևել անընդմեջ չորս ժամից, իսկ անչափահասի, ինչպես նաև հոգեկան կամ այլ ծանր հիվանդությամբ տառապող անձի հարցաքննությունը՝ երկու ժամից ավելի: Այսինքն՝ խոցելի խմբերի որոշ ներկայացուցիչների համար օրենսդրորեն ամրագրված է առանձնահատկություններ:

Հարցաքննությունը թույլատրվում է շարունակել հարցաքննվող անձին հանգստի և սնվելու համար անհրաժեշտ առնվազն մեկ ժամ ընդմիջում տրամադրելուց հետո: Օրվա մեջ հարցաքննության ընդհանուր տևողությունը չի կարող գերազանցել ութ, իսկ անչափահասի, ինչպես նաև հոգեկան կամ այլ ծանր հիվանդությամբ տառապող անձի համար՝ վեց ժամը: Բժշկի եզրակացության հիման վրա քննիչը կարող է սահմանել սույն հոդվածով նախատեսված հարցաքննության ժամկետներից ավելի կարճ ժամկետներ:

վետ տևողությունն է 20 րոպեից ոչ ավելի[131]:

- Դատավորը հարցաքննելիս չպետք է կաշկանդվի տակտիկական այնպիսի հնարքների օգտագործումից, որոնք կնպաստեն խոցելի խմբերի տուժողի հարցաքննությունն ավելի արդյունավետ և մարդահեն դարձնելու համար:

Երեխաների հարցաքննության ընթացքում պետք է պահպանվեն հետևյալ կանոնները[132՝]

Խուսափեք	Օգտագործեք
1) երկար նախադասություններից, 2) բարդ նախադասություններից, 3) կրավորական սեռից *(Ի՞նչ է արվել քո կողմից)*, 4) ժխտական նախադասություններից *(Դու նրան չեմ ասել)*, 5) բազմիմաստ հարցերից, 6) կրկնակի ժխտումից *(Մայրիկդ չի՞ ասել քեզ, որ փողոց դուրս չգաս)*, 7) հռետորական հարցերից *(Եթե հոգնես, ասա)*:	1) համառոտ նախադասություններ, 2) պարզ նախադասություններ, 3) ներգործական սեռ *(Ի՞նչ ես արել)*, 4) ոչ ժխտական նախադասություններ *(Դու նրան ասացի՞ր)*, 5) միայն մեկ իմաստ ունեցող հարցեր, 6) մեկ ժխտում *(Մայրիկդ ասե՞լ է քեզ, որ փողոց դուրս չգաս)*, 7) ուղիղ հարցեր *(Դու հոգնե՞լ ես)*:

[131] Методические рекомендации по организации и ведению допроса несовершеннолетних в специализированном помещении на этапе следствия. - СПб: Санкт-Петербургская общественная организация. «Врачи Детям», 2014, էջ 18:

[132] Օ՛Բրայեն Մ., Հոերթեն Թ., Վան դեն Բորն Ա. Ինչպես հարցաքննել թրաֆիքինգի/ շահագործման ենթարկված անչափահասներին (մեթոդական ձեռնարկ իրավապահ մարմինների աշխատակիցների համար), Երևան, 2012, էջեր 16-17:

Վերը նշված կանոնները կիրառելի են նաև խոցելի խմբերի այլ ներկայացուցիչների, մասնավորապես՝ հոգեկան խանգարում ունեցող, տկարամիտ, հոգեբանական բարդույթներ կամ խնդիրներ ունեցող, սեռական կամ ընտանեկան բռնության ենթարկված անձանց նկատմամբ:

▶ **Խոցելի տուժողներն ուշադրություն են դարձնում ոչ միայն հարցերի ձևակերպմանը, այլ նաև դատավորի ձայնին, միմիկային և վարքին:**

Երեխաները, հատկապես փոքր տարիքի, ընկալում են դատավորներին որպես հեղինակություններ: Երբեմն նրանք դատավորին ընկալում են որպես մի անձ, ով ամեն ինչ գիտի, և երեխան կարող է գոհացնելու մեծ պատրաստակամություն ցուցաբերի՝ «ճիշտ» պատասխաններ տալով: Սա կարող է հանգեցնել երեխային թաքցնելու թյուրիմացություններն ու ցանկացած անհարմարություն: Ստորև թվարկված են ուղենիշային որոշ սկզբունքներ, որոնց պահպանումը կարևոր է դատավորի համար՝

1. «Եթե ես ասածներիցդ ինչ-որ բան սխալ հասկանամ, ասա ինձ դրա մասին: Ես ուզում եմ դա ճիշտ ընկալել»:
2. «Եթե դու իմ ասածներից ինչ-որ բան չհասկանաս, ասա ինձ, և ես կպարզաբանեմ ասածս»:
3. «Եթե դու որևէ անգամ անհարմար զգաս քեզ, ասա ինձ, կամ ցույց տուր ինձ «Ստոպ» նշանը»:
4. «Եթե նույնիսկ դու կարծում ես, որ ես արդեն դա գիտեմ, միևնույնն է ասա ինձ՝ թեկուզ կրկնվելով»:
5. «Եթե դու անգամ համոզված չես պատասխանում, մի փորձիր կռահել: Սա այն դեպքը չէ, երբ դու դպրոցում ես, և ուսուցիչը բարկանում է քեզ վրա կամ ասում, որ պետք է պարտադիր պատասխանես: Միայն մինչ պատասխանդ ասա ինձ, որ դու վստահ չես»:

6. «Հիշիր, որ երբ դու պատմում ես դեպքի մասին, ես այնտեղ չեմ եղել, երբ դա կատարվել է: Որքան շատ կարողանաս պատմել պատահածի մասին, այնքան ավելին ես կհասկանամ»:
7. «Հիշիր, որ ես չեմ բարկանա կամ զայրանա քեզ վրա»:
8. «Միայն խոսիր այն բաների մասին, որոնք իրական են և իրականում տեղի են ունեցել»[133]:

Խոցելի խմբերի նկատմամբ վերաբերմունքը.

Հանցագործության բնույթով և հանգամանքներով պայմանավորված՝ խոցելի խմբերի ներկայացուցիչների մասնակցությամբ քննությունն իրականացնելիս դատավորները պետք է կարգավորեն հետևյալ հիմնահարցերը՝

- ապահովեն խոցելի տուժողների պաշտպանության պոզիտիվ պարտականության իրականացումը,
- ձեռնարկեն կրկնազոհականացումից և սպառնալիքներից պաշտպանող միջոցառումներ,
- նվազեցնեն քննության ընթացքում առաջացող դժվարությունները,
- ապահովեն անձնական և մասնավոր կյանքի պաշտպանությունը,
- կշռադատված ապահովեն տուժողի/վկայի իրավունքների իրականացումը կասկածյալի/մեղադրյալի պաշտպանության իրավունքի համատեքստում:

Վերը նշված հիմնահարցերը ստորև կենթարկվեն մանրամասն վերլուծության:

[133] Ճանաչողական (կոգնիտիվ) հարցաքննության սցենար: ՀՀ դատախազության դպրոցի ուսումնական ֆիլմի համար/ Հեղինակների խումբ՝ Սարգսյան Գ., Թումանյան Ք., Թումասյան Դ., Գասպարյան Ա. և այլոք, Երևան, 2013:

Խոցելի փուժողների պաշտպանության պոզիտիվ պարտականության իրականացում.

ՄԻԵԴ-ի նախադեպային պրակտիկայի համաձայն՝ պետության ներկայացուցիչները ոչ միայն պարտավոր են հարգել մարդու իրավունքները, այլ նաև ունեն «պաշտպանելու պարտավորություն», որի շրջանակում պետությունը պարտավոր է իրավատերերին պաշտպանել երրորդ անձանց միջամտությունից և պատժել մեղավորներին[134]: Ուստի դատավորները որոշակի հանգամանքներում կրում են երրորդ անձանց կողմից դաժան վերաբերմունքի նկատմամբ խոցելի անհատների իրավունքներն երաշխավորելու պոզիտիվ պարտավորություն:

Դատարանն իսկապես համարել է, որ ՄԻԵԿ-ի 1-ին հոդվածով նախատեսված պարտավորությունը (իրենց իրավազորության ներքո գտնվող յուրաքանչյուր անձի համար ապահովել ՄԻԵԿ-ով սահմանված իրավունքները և ազատությունները) ՄԻԵԿ-ի 3-րդ հոդվածի հետ (խոշտանգման կամ անմարդկային և նվաստացուցիչ վերաբերմունքի արգելք) միասին վերցված նշանակում է, որ պետությունները պարտավոր են միջոցներ ձեռնարկել, որպեսզի իրենց իրավազորության ներքո գտնվող անձինք չենթարկվեն խոշտանգման կամ անմարդկային և նվաստացուցիչ վերաբերմունքի կամ պատժի՝ ներառյալ մասնավոր անձանց կողմից նման վերաբերմունքը (*Փրեթին ընդդեմ Միացյալ Թագավորության* (դատավճիռը՝ 29 ապրիլ 2002թ.), պարբ. 50 և 51): Այդ պաշտպանությունն ապահովելու համար անհրաժեշտ են ողջամիտ և արդյունավետ միջոցներ՝ ներառյալ երեխաների և խոցելի այլ խմբերի առնչությամբ (*Օքալին ընդդեմ Թուրքիայի* (դատավճիռը՝ 16 հոկտեմբեր 2006թ.), պարբ. 70), որպեսզի կանխվի այն դաժան վերաբերմունքը, որի մասին իշխանություններն իմացել են կամ

[134] J. Akandji-Kombe, Positive Obligations under the European Convention on Human Rights: A Guide to the Implementation of the European Convention on Human Rights, Human Rights Handbooks, No. 7, (2007 Council of Europe), էջ 5:

պետք է իմանային: Այդ պարտավորությունից բխում է քննելու պարտավորությունը, որը չի կարող համարվել բացառապես պետության ներկայացուցիչների գործողություններով սահմանափակված պարտավորություն (*Մ.Կ.-ն ընդդեմ Բուլղարիայի* (դատավճիռը՝ 4 դեկտեմբեր 2003թ.), պարբ. 151):

Խոցելի անձանց պաշտպանելու պոզիտիվ պարտավորությունը կիրառվել է նաև գենդերահեն և սեռական բռնության արդյունավետ քննությունն ապահովելու համար (*կներկայացվի սփորև):*

Կրկնազոհականացումից և սպառնալիքներից պաշտպանող միջոցառումներ.

Այն տուժողներին և վկաներին, ում խոցելիության պատճառը հանցագործության տեսակն է կամ հանցագործության հանգամանքները, ընկալման մակարդակը բարձրացնող լրացուցիչ երաշխիքները դժվար թե նույնչափ անհրաժեշտ լինեն, քանի որ նրանց խոցելիությունը պայմանավորված է ոչ թե ճանաչողական ընկալման ավելի ցածր աստիճանով, այլև՝ սուբյեկտիվ հանգամանքով: Այնուամենայնիվ, միջոցներ պետք է ձեռնարկել նրանց կրկնազոհականացումից և սպառնալիքներից պաշտպանելու ուղղությամբ, որոնք համապատասխան դեպքերում պետք է ներառեն նաև նրանց անձնական կյանքի պաշտպանությունը, նրանց անվտանգության պաշտպանության հատուկ միջոցներ և աջակցության՝ ներառյալ բուժօգնության կամ խորհրդատվության ցուցաբերում:

Դատավորները պետք է տեղյակ լինեն, որ ահաբեկված վկաների և տուժողների պաշտպանության լրացուցիչ երաշխիքները կարող են կիրառվել նաև երեխաների, խոցելի չափահասների և գենդերային բռնության ենթարկված կանանց դեպքում:

Եվրոպայի խորհրդի վկաների ահաբեկման և պաշտպանական կողմի իրավունքների մասին թիվ R(97)13 հանձնարարականով «ահաբեկումը» սահմանվում է որպես ցանկացած

ուղղակի, անուղղակի կամ պոտենցիալ սպառնալիք՝ ուղղված վկային, որը կարող է միջամտություն առաջացնել նրա՝ որևիցե ազդեցությունից զերծ ցուցմունք տալու պարտականության նկատմամբ: Դա ներառում է բռնության և վրեժխնդրության գործելակերպով հայտնի հանցավոր կազմակերպության գոյության փաստով պայմանավորված ահաբեկումը կամ վկայի՝ փակ սոցիալական խմբի պատկանելու և դրա ներսում թույլ վիճակ ունենալու փաստը:

Ընդհանուր սկզբունքն այն է, որ դատավորները պետք է ձեռնարկեն համապատասխան միջոցներ, որպեսզի տուժողները և վկաները, ինչպես նաև նրանց մերձավորները կարողանան ապացույցներ տրամադրել ազատորեն և չենթարկվելով ահաբեկող որևէ գործողության: Ավելին, հարգելով պաշտպանական կողմի իրավունքը, դատաքննությունից առաջ, դրա ընթացքում և դրանից հետո պետք է կազմակերպել տուժողների, վկաների և նրանց մերձավորների պաշտպանությունը[135]:

Վերը նշված *թիվ R(97)13 հանձնարարականի համաձայն*՝

1. Պետք է ձեռնարկվեն համապատասխան օրենսդրական և գործնական միջոցներ՝ ապահովելու համար, որ վկաները կարողանան ցուցմունք տալ ազատ և առանց վախի:
2. Հարգելով հանդերձ պաշտպանական կողմի իրավունքները, դատաքննությունից առաջ, դրա ընթացքում և դրանից հետո պետք է անհրաժեշտության դեպքում կազմակերպել տուժողների, վկաների և նրանց մերձավորների պաշտպանությունը՝ ներառյալ նրանց կյանքի և անձնական անվտանգության պաշտպանությունը:
3. Վկաների ահաբեկման գործողությունները պետք է պատժելի դարձվեն կա՛մ որպես առանձին հանցագործություններ, կա՛մ անօրինական սպառնալիքներ կիրառելու հանցակազմի շրջանակում:

[135] Recommendation Rec(2005)9 on the protection of witnesses and collaborators of justice, պարագրաֆներ 1 և 2:

4. Հաշվի առնելով դատարանների կողմից ապացույցների ազատ գնահատման սկզբունքը՝ դատավարական օրենսդրությունը պետք է թույլատրի հաշվի առնել ցուցմունքների վրա ահաբեկման ազդեցությունը:
5. Պահպանելով հիմնական իրավունքները՝ վկաներին պետք է քաջալերել, որպեսզի նրանք իրավասու մարմիններին հաղորդեն հանցագործություններին առնչվող բոլոր վերաբերելի տեղեկությունները, ապա համաձայնեն ցուցմունք տալ դատարանում:
6. Հարգելով պաշտպանական կողմի իրավունքները՝ վկաներին պետք է ընձեռել ապացույց ներկայացնելու այլընտրանքային մեթոդներ, որոնցով նրանք կպաշտպանվեն մեղադրյալի հետ առերեսվելու փաստով պայմանավորված ահաբեկումից, օրինակ՝ վկաներին թույլատրելով ապացույց ներկայացնել առանձին սենյակում:
7. Քրեական արդարադատության ոլորտում աշխատողները պետք է համարժեքորեն վերապատրաստված լինեն, որպեսզի աշխատեն այնպիսի գործերի շրջանակում, որոնցում հնարավոր է վկաների ահաբեկման ռիսկի գոյությունը:

Քննության ընթացքում առաջացող դժվարությունների նվազեցում.

Քրեական վարույթին որպես տուժող կամ վկա մասնակցելը կարող է յուրաքանչյուրին դժվարություններ պատճառել, հատկապես, երբ անձը խոցելի վիճակում է՝ հատկապես, երբ հանցանքը կատարողի անձը հայտնի է տուժողին կամ վկային: Հետևապես, դատավորները պետք է միջոցներ ձեռնարկեն՝ խոցելի տուժողների և վկաների մասնակցությամբ հանցագործությունները քննելիս խուսափեն անձանց լրացուցիչ դժվարություն պատճառելուց:

Պաշտպանական միջոցառումներ իրականացնող դատավորները պետք է ապահովեն պաշտպանության համաչափությունը տուժողի կամ վկայի ահաբեկման ծանրությանը (Եվրոպայի խորհուրդ, *Rec(2005)9* հանձնարարական, պարբ. 14): Պաշտպանության միջոցներ կամ ծրագրեր ստանալու՝ տուժողի կամ վկայի իրավունքի մասին որոշում կայացնելիս պետք է, ի թիվս այլ հանգամանքների, հաշվի առնել հետևյալ չափորոշիչները՝

- պաշտպանվող անձի դատավարական կարգավիճակը (տուժող, վկա, հանցագործության կատարող, կազմակերպիչ, դրդիչ կամ օժանդակող),
- մասնակցության նշանակությունը,
- ահաբեկման/ սպառնալիքի ծանրությունը, և
- պաշտպանության միջոցների և ծրագրերի մեջ ներգրավվելու պատրաստակամությունը և համատեղելիությունը:

Թեպետ միևնույն տեսակի ահաբեկման/ սպառնալիքի ենթարկված տուժողները և վկաները պետք է միատեսակ պաշտպանություն ստանալու իրավունք ունենան, պաշտպանական ցանկացած միջոցառման կամ ծրագրի մեջ հարկ է հաշվի առնել նաև դեպքի կոնկրետ հանգամանքները և անձի անհատական կարիքները (Եվրոպայի խորհուրդ, *Rec(2005)9* հանձնարարական, պարբ. 15):

Դատավորները պետք է տեղյակ լինեն, որ «պաշտպանության միջոցառումների կամ ծրագրերի ընդունման, իրագործման, փոփոխման կամ չեղարկման հետ կապված ընթացակարգի բոլոր փուլերը պետք է գաղտնի պահել» (Եվրոպայի խորհուրդ, *Rec(2005)9* հանձնարարական, պարբ. 8):

Անձնական և մասնավոր կյանքի պաշտպանություն.

Հարգելով պաշտպանական կողմի իրավունքները՝ վկաներին և տուժողներին պետք է հնարավորության դեպքում ընձե-

ռել ապացույց ներկայացնելու այլընտրանքային մեթոդներ, որոնք նրանց կպաշտպանեն մեղադրյալի հետ առերեսվելու փաստով պայմանավորված ահաբեկումից (Եվրոպայի խորհուրդ, *Rec(2005)9* հանձնարարական, պարբ. 6): Դա կարող է ներառել մինչդատական փուլում դատավորների կողմից ապացույցներ ստանալը, որոնք կարող են դատարանում ներկայացվել՝ տուժողների կամ վկաների ուղղակի ցուցմունքների փոխարեն:

Անձնական և մասնավոր կյանքը չպետք է վտանգված լինի կամ դառնա հանրային քննարկման առարկա:

Ցուցմունք տված վկաների պաշտպանության պարտականությունը.

Վկաների և արդարադատության հետ համագործակցող անձանց պաշտպանության մասին թիվ Rec(2005)9 հանձնարարականի համաձայն՝

17. Վարույթի մասնակիցներին ընձեռելով վկայի/արդարադատության հետ համագործակցող անձի ներկայացրած ցուցմունքը վիճարկելու համարժեք հնարավորություն, կարող են քննարկվել վկայի նույնականացման կանխելուն ուղղված հետևյալ միջոցառումներն իրականացնելու նպատակահարմարությունը.
    - վկաների/արդարադատության հետ համագործակցող անձանց տված ցուցմունքների տեսաձայնագրությունը նախաքննության փուլում,
    - նախաքննության փուլում տված ցուցմունքները որպես ապացույց օգտագործելը դատարանում, երբ վկայի համար անհնարին է դատարան ներկայանալը, կամ երբ դատարան ներկայանալը կարող է մեծ և իրական վտանգ առաջացնել վկաների/արդարադատության հետ համագործակցող անձանց կամ նրանց մերձավորների համար: Մինչդատական ցուցմունքները

պետք է համարել վավերական ապացույց, եթե մասնակիցներն ունեն կամ ունեցել են հնարավորություն՝ մասնակցելու հարցաքննությանը և հարցաքննելու և/կամ խաչաձև հարցեր տալու վկային և քննարկել ցուցմունքի բովանդակությունը վարույթի շրջանակում,

- այնպիսի տեղեկությունների բացահայտումը, որոնք հնարավոր են դարձնում վկայի նույնականացումը վարույթի հնարավորինս ուշ փուլում, և/կամ միայն որոշ տվյալների բացահայտումը,
- զանգվածային լրատվության միջոցների և/կամ հանրության ներկայացուցիչների մասնակցության բացառումը կամ սահմանափակումը դատաքննությանը կամ դրա մի մասին,
- վկաների/արդարադատության հետ համագործակցող անձանց ֆիզիկական նույնացումը կանխող սարքերի, օրինակ՝ միջնապատի կամ վարագույրի օգտագործումը, վկայի դեմքի քողարկումը կամ նրա ձայնի աղավաղումը,
- տեսակապի օգտագործումը:

Կշռադատված ապահովել տուժողի/վկայի իրավունքների իրականացումը կասկածյալի/մեղադրյալի պաշտպանության իրավունքի համատեքստում.

Դատավորները պետք է հատկապես տեղյակ լինեն, որ տուժողների և վկաների համար իրականացվող պաշտպանության շրջանակում «պետք է պահպանել ժողովրդավարական հասարակությունում անհրաժեշտ հավասարակշռությունը հանցավորությունը կանխելու, տուժողների և վկաների կարիքների և արդար դատաքննության իրավունքի երաշխիքների միջև» (Եվրոպայի խորհուրդ, Rec(2005)9 հանձնարարական, պարբ. 16):

Մեղադրական կողմի շահերին և տուժողների ու վկաների շահերը հակադրվում են արդար դատաքննության և կողմերի հավասարության հիմնարար երաշխիքներից մեկը՝ վկաների ապացույցները վիճարկելու՝ պաշտպանական կողմի իրավունքը (ՄԻԵԿ-ի 6-րդ հոդվածի 3-րդ մասի (դ) կետը): Թեպետ ՄԻԵԴ-ը վճռել է, որ պետությունը պարտավոր է պաշտպանել տուժողների շահերը, ՄԻԵԿ-ի դրույթներով՝ ներառյալ 2-րդ և 8-րդ հոդվածներով, նախատեսված շահերը պետք է հավասարակշռել պաշտպանական կողմի շահերի հետ:

Հաշվի առնելով այն, որ վկայի պաշտպանության դատավարական միջոցառումների մեծ մասը բնականաբար տարբեր չափերով սահմանափակում է ապացույցները վիճարկելու՝ պաշտպանական կողմի իրավունքը և/կամ անմիջականության սկզբունքը, ՄԻԵԴ-ը կարևոր նախադեպային պրակտիկա է ձևավորել, որով սահմանվում են ՄԻԵԿ-ի 6-րդ հոդվածի 3-րդ մասի (դ) կետի ներքո այդ իրավունքի սահմանափակման ընդունելի սահմանները[136]: Օրինակ՝ Դատարանը թույլ է տվել բացառություններ, որպեսզի վկայի ցուցմունքը ոչ միշտ պարտադիր լինի հրապարակավ ներկայացնել դատարանում՝ այն թույլատրելի ապացույց ճանաչելու համար: Նախաքննության փուլում տրված ցուցմունքները կարող են որպես անանուն ապացույցներ օգտագործվել դատարանում, եթե պաշտպանական կողմին հասանելի են փոխհատուցման միջոցառումներ, և եթե բավարարված են հետևյալ պայմանները.

- մեջբերված պատճառներն իրական են և լրջորեն քննության են առնվել դատական իշխանությունների կողմից նախքան բացառությունը թույլատրելը,
- պաշտպանական կողմի իրավունքի սահմանափակումները պահպանվել են նվազագույնի սահմաններում և խստորեն անհրաժեշտ են պաշտպանության իրավաչափ նպատակի բավարարման համար,

[136] Procedural protective measures for witnesses: Training manual for law-enforcement agencies and the judiciary, (2006 Council of Europe), էջ 37:

- պաշտպանական կողմի իրավունքների պակասեցումը պետք է համապատասխանաբար փոխհատուցվի/հակակշռվի[137]:

Անանուն վկաներին վերաբերող նախադեպային որոշումներից են Կոստովսկին ընդդեմ Նիդեռլանդների (դատավճիռը՝ 20 նոյեմբեր 1989թ.), *Դուրսոնն ընդդեմ Նիդեռլանդների* (դատավճիռը՝ 25 մարտ 1996թ.) և այլ գործերը:

Քննիչները պետք է տեղյակ լինեն, որ անգամ այն դեպքում, երբ պարզվում է, որ «հակակշռող» ընթացակարգերը բավարար չափով փոխհատուցել են պաշտպանական կողմի գործունեության սահմանափակումները, մեղադրական դատավճիռը չպետք է բացառապես կամ վճռորոշ չափով հիմնված լինի անանուն վկայի ցուցմունքների վրա (*Դուրսոնն ընդդեմ Նիդեռլանդների* (դատավճիռը՝ 25 մարտ 1996թ.), պարբ. 76): Այսպիսով, քննիչները պետք է ձգտեն հավաքել մեղադրական դատավճիռը հիմնավորող լրացուցիչ ապացույցներ:

Ամփոփելով, հարկ է նշել հետևյալ քայլերը ձեռնարկելու անհրաժեշտությունը՝ երաշխավորել խոցելի վկաների և տուժողների բարօրությունը քննության ընթացքում՝ հաշվի առնելով քննության ընթացքում նրանց համար ծագող դժվարությունների և ահաբեկման կամ կրկնազոհականացման ռիսկը:

Սեռով պայմանավորված կամ սեռական բռնության քննության առանձնահատկությունները.

Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի 1-ին հոդվածի համաձայն՝ սույն Կոնվենցիայի նպատակների համար «կանանց նկատմամբ խտրականություն» հասկացությունը նշանակում է սեռի հիմքով ցանկացած տարբերակում, բացառում կամ սահմանա-

[136] Procedural protective measures for witnesses: Training manual for law-enforcement agencies and the judiciary, (2006 Council of Europe), էջ 37:

[137] Նույն տեղում, էջ 45:

փակում, որը նպատակ ունի կանանց համար սահմանափակել կամ վերացնել քաղաքական, տնտեսական, սոցիալական, մշակութային, քաղաքացիական կամ ցանկացած այլ բնագավառում, տղամարդկանց և կանանց, անկախ նրանց ամուսնական կարգավիճակից, հավասարության հիմքով, մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների ճանաչումը և կանանց կողմից այդ իրավունքների ու ազատությունների իրականացումը կամ դրանցից օգտվելը:

Սեռով պայմանավորված կամ սեռական բռնության քննության ընթացքում դատավորը պետք է մասնագիտորեն նախապատրաստված լինի՝ արդյունավետ և մարդկային արժանապատվությունը չնսեմացնող քննություն իրականացնելու համար[138]: Յուրաքանչյուր դատավոր նախևառաջ պետք է պարզի կնոջ կարգավիճակը և նրա հատուկ կարիքները[139]: Կանանց նկատմամաբ բռնությունները չեն ճանաչում սոցիալական, մշակութային, էթնիկական կամ կրոնական սահմաններ[140]: Կանանց նկատմամբ բռնությունը բազմազան է:

Դատավորները պետք է տեղյակ լինեն նաև, որ «հանցավորության կանխարգելումը և կանանց նկատմամբ բռնության դեմ քրեական արդարադատության արձագանքը պետք է ուղղված լինեն տուժողների կարիքներին»: Ավելին, կանխարգելման և միջամտության ջանքերը պետք է գործադրվեն ոչ միայն կանանց նկատմամբ բռնությունը դադարեցնելու և համապատասխանաբար բռնարարին պատժելու, այլ նաև այդ բռնությունից տուժողների արժանապատվության և վերահսկողության զգացումը վերականգնելու համար (Հանցավորության կանխարգելման և քրեական արդարադատության ոլորտում կանանց նկատմամբ բռնության վերացման թարմացված օրինակելի ռազմավարություններ և գործնական միջոցառումներ

138 Մանրամասն՝ UN OHCHR (1997), կետ 129:

139 Նույն տեղում, կետ 125:

140 UNDOC, Handbook on Effective police responses to violence against women, Criminal justice Handbook Series (2010, United Nations: New York), էջ 1:

(«Օրինակելի ռազմավարություններ»), պարբ. 7)[141]:

Ընդհանուր առմամբ դատավորները պարտավոր են (ա) արդյունավետորեն քննել կանանց նկատմամբ բռնության բոլոր ենթադրյալ միջադեպերը, (բ) բոլոր քննությունները կատարել՝ հարգելով յուրաքանչյուր կնոջ իրավունքները և կարիքները՝ անհարկի չծանրացնելով տուժողի համար առանց այն էլ գոյություն ունեցող բեռը, (գ) միջոցներ ձեռնարկել գենդերային բռնությունից տուժող բոլոր անձանց օժանդակելու և պաշտպանելու ուղղությամբ: Դրանք պետք է ներառեն հանցագործության և տուժողի առանձնահատուկ բնույթի նկատմամբ զգայուն գործելակերպի մշակում և ներդրում[142]:

Ընտանեկան բռնության համատեքստում կնոջ համար ծառացած վտանգը գնահատելու և կառավարելու առումով կարևոր է, որպեսզի ոստիկանությունը հիշի, որ յուրաքանչյուր իրավիճակ հատուկ է, և ուստի՝ հնարավոր չէ հեշտ հաղթահարել պարզ կամ բանաձևային արձագանքի միջոցով: Յուրաքանչյուր վտանգի բարդությունից և նրբությունից ելնելով՝ պահանջվում է անհատականացված արձագանք, որը լավագույնս կբավարարի տվյալ կնոջ կարիքները:

[141] 16-րդ կետ. Անդամ պետություններին կոչ է արվում ազգային իրավական համակարգերի շրջանակում հավուր պատշաճի և միջազգային իրավական բոլոր գործիքները հաշվի առնելով ... (բ) մշակել կանանց նկատմամբ բռնության դեմ արձագանքի ամբողջական, բազմամասնագիտական, համակարգված, համակարգային և շարունակելի մեխանիզմներ, որոնց շնորհիվ ավելի հավանական կդառնան հանցագործի բարեհաջող ձերբակալությունը, քրեական հետապնդումը և դատապարտումը, կբարելավվի տուժողի բարօրությունը և անվտանգությունը, և կկանխվի կրկնազոհականացումը:

[142] UNDOC, Handbook on Effective police responses to violence against women, Criminal justice Handbook Series (2010, United Nations: New York), էջ 46:

Կարևոր սկզբունք

Սեռական բռնության դեպքի արդար և արդյունավետ քննությունն ապահովելու համար դատավորները պետք է ապացույցներ հավաքելիս տեղյակ լինեն հետևյալի մասին՝

Սեռական բռնության գործով բողոք ներկայացնողի արժանահավատությունը որևէ կերպ պակաս չէ, քան ցանկացած այլ հանցագործության վերաբերյալ բողոք ներկայացնողինը: Թե՛ քրեական, թե՛ քաղաքացիական վարույթում բողոք ներկայացնողի սեռական կյանքի վերաբերյալ պատմություններ ներկայացնելն արգելվում է, եթե դա չի առնչվում գործին: Սեռական հանցագործության ենթադրյալ կատարման պահից մինչև դրա մասին հաղորդում ներկայացնելն անցած որևէ տևողությամբ ժամանակահատվածի հիման վրա չի կարելի կատարել բացասական մտահանգումներ (Օրինակելի ռազմավարություններ, պարբ. 15(ե)):

Ուստի, դատավորները պետք է տուժողի սեռական կյանքի մասին պատմությանը և վարքին առնչվող ապացույցները ներկայացնեն միայն այն դեպքում, երբ դրանք վերաբերելի են և անհրաժեշտ (Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրանց դեմ պայքարի մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիա, հոդված 54):

Հետաքրքրությունից բխող և գործին չվերաբերող հարցերն անթույլատրելի են, իսկ դրանց պատասխանները կիրառելը՝ առավել ևս:

Կանանց նկատմամբ բռնության մասին ԵԽ կոնվենցիայի 56-րդ հոդվածի համաձայն՝ պետությունները պետք է ձեռնարկեն օրենսդրական և այլ բնույթի անհրաժեշտ բոլոր միջոցները նախաքննության և դատաքննության փուլերում՝ տուժողների

իրավունքները և շահերը, ներառյալ՝ նրանց որպես վկաների ունեցած հատուկ կարիքները պաշտպանելու նպատակով, մասնավորապես՝

ա. տուժողներին, ինչպես նաև նրանց ընտանիքի անդամներին, և վկաներին՝ պաշտպանելով ճնշումներից, վրեժից և կրկնակի զոհականացումից;

բ. ապահովելով, որպեսզի տուժողները տեղեկացվեն կատարողին ժամանակավորապես կամ վերջնականապես ազատ արձակելու կամ վերջինիս փախուստի մասին՝ առնվազն այն դեպքերում, երբ տուժողը կամ նրա ընտանիքի անդամները վտանգված են;

գ. տեղեկացնելով նրանց, ներքին օրենսդրությամբ սահմանված պայմաններում, իրենց իրավունքների և իրենց տրամադրվող ծառայությունների, բողոքների քննության ընթացքի, հարուցված գործի մեղադրանքների, ընդհանրապես նախաքննական կամ դատական վարույթի ընթացքի, իրենց դատավարական դերի, ինչպես նաև գործի ելքի մասին;

դ. հնարավորություն տալով տուժողներին, ներպետական քրեադատավարական օրենքով սահմանված կարգով, արտահայտելու իրենց տեսակետը և ներկայացնելու ապացույցներ և ապահովելով նրանց տեսակետները, կարիքները և մտահոգություններն անձամբ կամ միջնորդի միջոցով քննարկման առարկա դարձնելու հնարավորությունը;

ե. տուժողներին աջակցության համապատասխան ծառայություններ տրամադրելով՝ այնպես, որ նրանց իրավունքներն ու շահերը ներկայացվեն և հաշվի առնվեն պատշաճ կերպով;

զ. ապահովելով տուժողի մասնավոր կյանքի անձեռնմխելիությունը կամ տուժողի նկարագիրը պաշտպանելուն ուղղված միջոցներ նախատեսելու հնարավորությունը;

է. հնարավորության դեպքում ապահովելով նախաքննության մարմնի գտնվելու վայրում կամ դատարանում տուժողների և կատարողների միջև շփումների բացառումը;

ը. ապահովելով անկախ և ձեռնահաս թարգմանիչներ;

թ. ներպետական օրենսդրությամբ սահմանված կարգով տուժողներին տրամադրելով առանց դատական նիստին ներկայանալու կամ առնվազն դատական նիստից ենթադրյալ կատարողի բացակայության պայմաններում ցուցմունք տալու հնարավորություն, մասնավորապես՝ հնարավորության դեպքում, հաղորդակցման տեխնոլոգիաների օգտագործմամբ:

Կանանց նկատմամբ բռնության կամ ընտանեկան բռնության տուժող կամ վկա երեխաներին, համապատասխան դեպքերում, պետք է տրամադրվեն պաշտպանության հատուկ միջոցներ, որոնք հաշվի կառնեն երեխայի լավագույն շահերը:

Դատավորները պետք է տեղյակ լինեն, որ ընտանեկան բռնության կամ սեռական բռնության դեպքում տուժողներին կարող է անհրաժեշտ լինել հրատապ բուժօգնություն կամ բժշկական զննություն: Լավագույն տարբերակն այն է, երբ իգական սեռի տուժողին խնամող բուժաշխատողները (հատկապես, երբ տուժողն ենթարկվել է սեռական ոտնձգության/բռնաբարության) կանայք լինեն: Դա թեթևացնում է անհարմարության այն զգացումը, որը կինը կարող է ունենալ բուժօգնություն ստանալիս[143]:

Ընտանեկան բռնության և սեռական ոտնձգության դեպքում բուժաշխատողները[144] կարող են մի քանի տարբեր ծառայու-

[143] UNDOC, Handbook on Effective police responses to violence against women, Criminal justice Handbook Series (2010, United Nations: New York), էջ 58:

[144] Գենդերային բռնությունից տուժողներին պաշտպանելու համար կարող են անհրաժեշտ լինել նաև այլ միջոցառումներ: Թեպետ քննիչներն իրենք ոչ միշտ են ի վիճակի լինում տրամադրել այդպիսի ծառայություններ, նրանք պետք է տեղյակ լինեն առկա միջոցառումներին և տուժողին/ վկային ուղղորդելու կարգին:

թյուններ մատուցել՝ ներառյալ ֆիզիկական վնասվածքների խնամքը, խորհրդատվությունը կամ խորհրդատվության ուղղորդելը, ինչպես նաև կարող են օգնել հանցագործության ապացույցների հավաքմանը և փաստաթղթավորմանը: Բռնաբարության դեպքում նրանք կարող են նաև քայլեր ձեռնարկել սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդությունների և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի փոխանցման ռիսկի կապակցությամբ՝ ներառյալ կանխարգելիչ բուժմամբ, թեստավորմամբ և խորհրդատվությամբ[145]:

Անդրադառնալով քննարկվող հարցին՝ ՀՀ վճռաբեկ դատարանը 2015թ.-ի մարտի 27-ի թիվ ԿԴ1/0006/01/14 որոշման մեջ իրավական դիրքորոշում է արտահայտել առ այն, որ տուժողը [վկան] չի կարող կանչվել և հարցաքննվել այն դեպքում, երբ ֆիզիկական կամ հոգեկան պակասությունների հետևանքով ունակ չէ ճիշտ ընկալելու և վերարտադրելու քրեական գործով պարզելու ենթակա հանգամանքները: Այլ խոսքով՝ ՀՀ քր. դատ. օր.-ով նախատեսված է տուժողի [վկայի]՝ ցուցմունք տալու պարտականությունից բացառություն, ինչպես նաև նրա ցուցմունք տալու իրավունքի սահմանափակման հիմք: Նշված սահմանափակումը նպատակ է հետապնդում ապահովելու ամբաստանյալի արդար դատաքննության իրավունքը, համաչափ է հետապնդվող նպատակին և չի իմաստազրկում տուժողի՝ իր իրավունքներն ու օրինական շահերը պաշտպանելու բուն իրավունքը, քանի որ վերջինս օժտված է իր իրավունքների և օրինական շահերի պաշտպանության այլ իրավական միջոցներով (ՀՀ քր. դատ. օր.-ի 59-րդ հոդված): Միևնույն ժամանակ, ՀՀ քր. դատ. օր.-ով հստակ սահմանված են տուժողին հարցաքննելու սահմանափակման հիմքերը: Մասնավորապես, որպես տուժող չի կարող կանչվել և հարցաքննվել այն անձը, ով. 1. ունի ֆիզիկական կամ հոգեկան պակասություններ, 2. (1) կետում նշված հանգամանքի հետևանքով ունակ չէ ճիշտ ընկա-

[145] UNDOC, Handbook on Effective police responses to violence against women, Criminal justice Handbook Series (2010, United Nations: New York), էջ 58:

լելու և վերարտադրելու քրեական գործով բացահայտման ենթակա հանգամանքները: Ընդ որում, վերոնշյալ հանգամանքների միաժամանակյա առկայությունը պարտադիր է քննարկվող սահմանափակումը կիրառելու համար: Օրենսդրական նման կարգավորումը պայմանավորված է նրանով, որ անձի մոտ ֆիզիկական կամ հոգեկան բնույթի առանձին շեղումների առկայությունը դեռևս չի նշանակում, որ տվյալ անձն առհասարակ չի կարող ճիշտ ընկալել և վերարտադրել օբյեկտիվ իրականության փաստերը: Մասնավորապես, հնարավոր են դեպքեր, երբ հոգեկան հիվանդությամբ տառապող անձի մոտ ժամանակավորապես վերականգնվի օբյեկտիվ իրականության փաստերը ճիշտ ընկալելու և վերարտադրելու ունակությունը, կամ տվյալ հիվանդությունն իր բնույթով այնպիսին լինի, որ անձին չզրկի երևույթների նշանակությունը հասկանալու և դրանք վերարտադրելու ունակությունից և այլն: Հետևաբար, անձը չի կարող հարցաքննվել, եթե ֆիզիկական կամ հոգեկան պակասությունը զրկում է նրան քրեական գործով բացահայտման ենթակա հանգամանքները ճիշտ ընկալելու և վերարտադրելու ունակությունից: Միաժամանակ, նկատի ունենալով, որ քրեական գործով բացահայտման ենթակա հանգամանքները ճիշտ ընկալելու և վերարտադրելու՝ վկայի և տուժողի անընդունակությունը կարող են հաստատվել միայն դատահոգեբուժական փորձագետի եզրակացությամբ, ՀՀ վճռաբեկ դատարանը նշում է, որ քրեական գործով բացահայտման ենթակա հանգամանքները ճիշտ ընկալելու և վերարտադրելու՝ տուժողի և վկայի ունակությունը կասկածի տակ դնելու հիմքերի առկայության դեպքում վարույթն իրականացնող մարմինը պետք է նշանակի փորձաքննություն[146]:

Հիմք ընդունելով միջազգային չափանիշները՝ առանձնացվում է երեք հիմնական խնդիր, որոնք արդիական ու հրատապ

[146] Մարաբյան Ս., Թումասյան Դ., Գևորգյան Դ. Երեխաների նկատմամբ բռնության բնութագիրը և քննության առանձնահատկությունները, Երևան, 2019, էջեր 63-64:

են անչափահաս տուժողների և վկաների մասնակցությամբ իրականացվող դատական քննության առանձնահատկությունների տեսանկյունից, դրանք են՝

1. դատական քննության արագացման սկզբունքը,
2. դատական քննությունը դռնփակ անցկացնելը և
3. երեխայի հարցաքննության առանձնահատկությունները դատական քննության փուլում:

1) ՄԱԿ-ի ուղենիշների 30-րդ կետի «գ» ենթակետը սահմանում է, որ պետք է ապահովվի դատական քննության հնարավորինս վաղ իրականացումը, եթե ձգձգումները չեն բխում երեխայի լավագույն շահերից, այսինքն՝ միջազգային չափանիշով ազդարարվում է, որ անչափահաս երեխաների և, մասնավորապես, տուժողի մասնակցությամբ վարույթը պետք է իրականացվի արագացված կարգով: Մինչդեռ ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ գործնականում, ելնելով որոշ օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներից, վարույթի արագացման սկզբունքը չի երաշխավորվում:

Նախ, դրա համար առկա չեն բավարար օրենսդրական հիմքեր, քանի որ ՀՀ քրեադատավարական օրենսդրությունը չի սահմանում հատուկ կանոններ անչափահաս տուժողների մասնակցությամբ վարույթն արագացված կարգով իրականացնելու մասին: Երկրորդ, նախաքննական մարմինները և դատարանները քննարկվող գործերին առանձնահատուկ ուշադրություն չեն դարձնում, առավել մեծ ջանքեր չեն գործադրում երեխայի վերաբերյալ քրեական գործի քննությունն արագ անցկացնելու համար:

2) Անդրադառնալով դատական քննության գաղտնիության սկզբունքին, պետք է նկատել, որ այն երաշխավորված է միջազգային չափանիշներով, մասնավորապես՝ Եվրոպական խորհրդարանի և Եվրոպայի խորհրդի 2011/92EU «Երեխաների սեռական չարաշահման և սեռական շահագործման, մանկական պոռնոգրաֆիայի և Խորհրդի 2004/68/JHA

շրջանային որոշումը փոխարինելու վերաբերյալ» հրահանգի 20-րդ հոդվածը (Մինչդատական վարույթում և դատական քննության փուլում երեխա տուժողների պաշտպանությունը) սահմանում է. «(…) 5. Անդամ պետությունները պետք է հավաստիանան, որ 3-ից 7-րդ հոդվածներով նախատեսված հանցագործությունների դատական քննության փուլում՝ ա) դատական քննություններն անցկացվեն դռնփակ (…)»: Երեխաների մասնակցությամբ վարույթը դռնփակ անցկացնելու մասին պահանջն ուղղակի բխում է նաև ՄԱԿ-ի ուղենիշներից, որը սահմանում է, որ անչափահասի մասնավոր (անձնական) կյանքին միջամտությունը պետք է լինի նվազագույն, և այն պետք է տեղի ունենա միայն օրենքով սահմանված կարգով՝ նպատակ ունենալով ապահովելու ապացույցներին ներկայացվող պահանջների կատարումը, ինչպես նաև արդար դատական քննության իրավունքի իրացումը, բացի այդ, անչափահաս տուժողի կամ վկայի գաղտնիությունը պետք է պաշտպանվի, մասնավորապես, այն տեղեկությունները, որոնք կարող են բացահայտել վկա կամ տուժող անչափահասին, պետք է հրապարակվեն միայն դատարանի թույլտվությամբ: Ավանդաբար դռնբաց դատական քննությունը հետապնդում է դատական ողջ գործընթացի նկատմամբ հասարակական վերահսկողության և դաստիարակչական նպատակներ (ինչպես հանցավորի, այնպես էլ նիստերի դահլիճում ներկա անձանց համար): Մինչդեռ, միջազգային չափանիշների տեսանկյունից, անչափահասների գործերով արդարադատության առանցքային պահանջը ոչ թե հասարակական վերահսկողությունն ու դաստիարակությունն են, այլ անչափահասի իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը, բնականաբար, չանտեսելով առաջինները: Այլ խոսքով ասած, միջազգային իրավունքի տեսանկյունից անչափահասների մասնակցությամբ գործերով դատավարության դաստիարակչական նշանակությունը և հասարակական վերահսկողությունը զիջում են այնպիսի հիմնարար սկզբունքների, ինչպիսիք են

արդարադատության երեխայակենտրոն և պաշտպանական լինելը: Այս սկզբունքներն ենթադրում են, որ դատական քննությունը պետք է բարենպաստ լինի երեխայի լավագույն շահի տեսակետից և իրականացվի փոխըմբռնման մթնոլորտում, ինչն անչափահասին դատաքննությանը մասնակցելու և ազատ արտահայտվելու հնարավորություն կտա: Բացի այդ, անչափահասի անձեռնմխելիության իրավունքը պետք է հարգել բոլոր փուլերում՝ անհարկի հրապարակայնության արդյունքում նրան վնաս պատճառելուց խուսափելու համար, քանի որ հասարակության և, մասնավորապես, լրատվության միջոցների մասնակցությունը բացասաբար է անդրադառնում անչափահասի հոգեվիճակի վրա, առաջացնում է խիստ հուզական և լարված վիճակ, որի հետևանքով անչափահասը կարող է արդյունավետ մասնակցություն չունենալ իր շահերին վերաբերող դատավարությանը, ինչպես հարկն է՝ չներկայացնել իր սեփական կարծիքը գործի վերաբերյալ: Հակառակ դրան, դատական քննության գաղտնիությունը կարևոր է ինչպես անչափահասի կողմից իր իրավունքների և օրինական շահերի պաշտպանության՝ օրենքով չարգելված բոլոր միջոցներից օգտվելու իրավունքի ապահովման, այնպես էլ մասնավոր կյանքի հարգման իրավունքի ապահովման տեսանկյունից: Ասվածն իր ուղղակի ամրագրումն է ստացել ՀՀ քր. դատ. օր.-ի 16-րդ հոդվածում, որի 2-րդ մասը սահմանում է, որ գործի քննությունը դատարանում կարող է իրականացվել դռնփակ՝ ելնելով քրեական դատավարությանը մասնակցող անձանց մասնավոր կյանքի, պատվի և արժանապատվության, անչափահասների կամ արդարադատության շահերի պաշտպանության անհրաժեշտությունից: Դա նշանակում է, որ դատարանները գործնականում պետք է դռնփակ նիստեր անցկացնեն անչափահաս տուժողների մասնակցությամբ քրեական գործերով: Այս պահանջն առավել կարևոր է այն տեսանկյունից, որ դատական պրակտիկայի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ երեխաների նկատմամբ կա-

տարված հանցագործությունների 1/3-ը սեռական անձեռնմխելիության դեմ ուղղված հանցագործություններն են, իսկ այդ գործերով դռնբաց դատական նիստերը կարող են էական վնաս պատճառել երեխայի լավագույն շահերին՝ պատվին, արժանապատվությանը, մասնավոր կյանքին և այլն:

Դատական պրակտիկայի ուսումնասիրությունները նաև ցույց են տալիս, որ գործնականում դատարանները դատական նիստերը նշանակում են դռնբաց (թեև մինչ այդ լինում են նաև միջնորդություններ դռնփակ նիստ անցկացնելու մասին, որին դատարաններն անդրադառնում են դատական նիստում), որից հետո, դատական նիստում լսելով կողմերի կարծիքը, որոշում են կայացնում գործի քննությունը դռնփակ անցկացնելու կամ չանցկացնելու մասին: Դատարանը դռնփակ դատական նիստ անցկացնելու մասին որոշումը պետք է կայացնի դատական քննություն նշանակելու մասին որոշմամբ՝ անկախ նրանից՝ այդ մասին առկա՞ է կողմի միջնորդությունը, թե՝ ոչ: Այլ հարց է, որ դատարանը կաշկանդված չէ դատական քննության մի մասը կամ ամբողջ դատական քննությունը դռնբաց անցկացնելու հարցը քննության փուլում քննարկելու և լուծելու հարցում, որի լուծումը թողնվում է դատարանի հայեցողությանը՝ բնականաբար գնահատելով երեխայի լավագույն շահերին վնասելու կամ չվնասելու հանգամանքի առկայությունը կոնկրետ դեպքում: Քննարկվող հարցի հետ կապված՝ կարևոր է նաև այն հանգամանքը, որ գործնականում հանդիպում են դեպքեր, երբ ամբաստանյալի հարազատները հանրայնացնում են դեպքը, քանի որ չեն վստահում քննչական և դատական մարմիններին, կարծում են, որ իրենց հարազատի նկատմամբ իրականացվում է անօրինական քրեական հետապնդում: Կատարված ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ գործերից մեկով ամբաստանյալի հարազատները գործի հանգամանքները քննարկման առարկա էին դարձրել հեռուստատեսային մի շոուի ընթացքում: Այս առումով տուժողի օրինական ներկայացուցիչը դատարանին միջնորդություն էր ներկայացրել պաշտ-

պանական կողմի անօրինականությունները կանխելու և գործի հանգամանքները հրապարակայնորեն քննարկման առարկա դարձնելը կանխելու խնդրանքով, որը քննարկվել էր դատական նիստում և դատարանի միջամտությամբ կանխվել էին նրանց հետագա գործողությունները: Նախաքննության մարմինները և դատարանները պարտավոր են միջոցներ ձեռնարկել, որպեսզի նման գործերի հանգամանքները չհրապարակայնացվեն, ինչն ուղղակիորեն ամրագրված է ՀՀ քր. դատ. օր.-ի 16-րդ և 201-րդ հոդվածներում և երաշխավորված ՀՀ քր. օր.-ով[147]:

■ Զոհեր, որոնք չեն ցանկանում, որ մեղադրյալը տեսնի իրենց.

Խոցելի շատ տուժողներ վախենում են ամբաստանյալի հետ հանդիպումից: Նման պայմաններում, սկզբունքորեն, պետք է միջոցառումներ ձեռնարկվեն, որպեսզի ամբաստանյալը չտեսնի տուժողին դատարանում: Դա կարելի է անել, օրինակ՝ շղարշ օգտագործելով կամ ծածկելով որոշ հատված կամ ամբաստանյալին այնպես նստեցնելով, որ վերջինս չկարողանա տեսնել տուժողին: Սակայն որոշ դատարաններում դատարանի կահույքի և ամբիոնի դասավորվածությունը կարող է չընձեռի դրա հնարավորությունը:

Ճանաչողական այց դատարան

Ընդհանրապես խիստ օգտակար է խոցելի տուժողների համար դատարան ճանաչողական այց կազմակերպելը, քանի որ դա կարող է նվազեցնել նրանց անհանգստությունը և, իր հերթին, բարելավել հաղորդակցվելու նրանց կարողությունը[148]:

[147] Նույն տեղում, էջեր 99-101:

[148] Տես՝ https://www.victimsupportni.com/360-interactive-courtrooms/:

Խորհուրդներ մասնագետներին

Փաստաբանների պորտալ գործիքակազմում[149] նկարագրված են խոցելի խմբերի ներկայացուցիչների հետ վարվեցողության լավագույն օրինակներ: Այդ անձանց հետ հանդիպման ժամանակ դատախազը/դատավորը պետք է.

1. հարցնի տուժողին/վկային, թե նա ինչ գիտի դատարանում գործող տուժողների/վկաների և ընթացակարգն ապահովող այլ ծառայությունների մասին,
2. խնդրի տուժողին/վկային հաստատել հատուկ միջոցառումներից որևէ մեկի կազմակերպումը. դատախազը պետք է համոզված լինի, որ տուժողը/վկան հասկանում է և բավարարված է դրանցով, և, անհրաժեշտության դեպքում, այդ միջոցառումները նախատեսված են, որպեսզի իր կողմից ընտրված աջակիցներն ուղեկցեն իրեն ապացույցները ներկայացնելիս,
3. բացատրի դատական ընթացակարգերը (ներառյալ՝ դատավորի դերը),
4. բացատրի պաշտպանի դերը, որ վերջինիս պետք է պաշտպանել իր վստահորդին, վիճարկել իրադարձությունների՝ մեղադրող կողմի ներկայացրած ընթացքը, նաև նշել այն հանգամանքը, որ նա կարող է պնդել, թե իբր տվյալ տուժողը/վկան սխալվում է կամ ստում է: Տուժողը/վկան պետք է տեղեկացվի, որ պետք է ուշադիր լսի ցանկացած նման պնդում և հստակ ասի՝ համաձայն է, թե համաձայն չէ դրա հետ,
5. տեղեկացնի տուժողին/վկային, որ վերջինս չպետք է վախենա ընդմիջում խնդրել, եթե իրեն իսկապես ան-

[149] Տե՛ս՝ https://www.theadvocatesgateway.org/images/toolkits/1a-case-management-in-criminal-cases-when-a-witness-or-a-defendant-is-vulnerable-2019.pdf/:

հրաժեշտ է դա, օրինակ՝ երբ նա հոգնել է, կորցրել է կենտրոնացումը կամ ուզում է հավասարակշռել զգացմունքները,

6. բացատրի տուժողին/վկային բոլոր հարցերն ուշադիր լսելու կարևորությունը և համոզվի, որ վերջինս հասկանում է հարցը՝ նախքան դրան պատասխանելը: Տուժողին/վկային պետք է խրախուսել, որպեսզի վերջինս չվախենա խնդրել հարցը հնչեցնող փաստաբանին կամ դատավորին կրկնել կամ վերաձևակերպել ցանկացած հարց, որն ինքը չի հասկացել,
7. տեղեկացնի տուժողին/վկային ճշմարտացիորեն պատասխանել բոլոր հարցերին, որքան էլ որ դա դժվար լինի: Նրանց պետք է տեղեկացվի, որ թուլության նշան չէ, եթե նրանք չգիտեն կամ չեն հիշում որոշ հարցերի պատասխաններ, և եթե դա իսկապես այդպես է, ապա նրանք չպետք է վախենան բարձրաձայնել այդ մասին,
8. բացատրի տուժողին/վկային, որ կարևոր է նախքան դատարան գալը վերհիշել որոշ հանգամանքներ. եթե տուժողը/վկան նախապես ներկայացրել է հայտարարություն կամ տեսաձայնագրված ցուցմունք: Պետք է հորդորել նրանց հիշել իրենց առաջին հայտարարությունը,
9. տեղեկացնի տուժողին/վկային պատասխանող կողմի ընդհանուր դիրքորոշման մասին, եթե այն հայտնի է (օրինակ՝ սխալ նույնականացում, համաձայնություն, ինքնապաշտպանություն, մտադրությունների բացակայություն): Դատախազները չպետք է շահարկեն հնարավոր պաշտպանական միջոցները,
10. այն դեպքում, եթե առկա են որևէ կոնկրետ տուժողի/վկայի վերաբերյալ երրորդ կողմի նյութեր, որոնք բացահայտված են պաշտպանական կողմի համար և

որոնք կարող են խափանել դատախազի դիրքորոշումը կամ աջակցել պաշտպանող կողմի դիրքորոշմանը (ինչպես, օրինակ՝ սոցիալական ծառայություններ, բժշկական կամ խորհրդատվական արձանագրություններ), ապա կոնկրետ այդ տուժողը/վկան պետք է տեղեկացվի նման բացահայտման հնարավորության մասին,

11. այն դեպքում, երբ կա որևէ կոնկրետ տուժողի/վկայի հետ վերջինիս անձնական կյանքի բացասական կողմերի կամ սեռական անցյալի վերաբերյալ հարցաքննության անցկացման հավանականություն, ապա նա պետք է տեղեկացնի դրա մասին,

12. տեղեկացնի տուժողին/վկային, որ դատախազը կարող է առարկել սադրիչ/անտեղի հարցերի առնչությամբ, և որ դատավորն է որոշում՝ պետք է պատասխանել այդ հարցերին, թե՝ ոչ: Տուժողին/վկային պետք է տեղեկացնել, որ անհրաժեշտ է գործել դատավորի որոշմանը համապատասխան:

Օգտագործված գրականության ցանկ

1. Իրավական փաստաթղթեր

1. Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին Եվրոպական կոնվենցիա, 1950թ.-ի նոյեմբերի 4
2. Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր, 1948թ.-ի դեկտեմբերի 10
3. Երեխայի իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիա, 1989թ.-ի նոյեմբերի 22
4. Երեխայի իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիային կից Զինված հակամարտություններին երեխաների մասնակցությանը վերաբերող կամընտիր արձանագրություն, 2005թ.-ի մարտի 21
5. Երեխայի իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիային կից Մանկավաճառության, երեխաների մարմնավաճառության և մանկական պոռնոգրաֆիայի մասին կամընտիր արձանագրություն, 2005թ.-ի հուլիսի 30
6. Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին ՄԱԿ-ի կոնվենցիա, 1993թ.-ի հոկտեմբերի 13
7. Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ ՄԱԿ-ի կոնվենցիա, 2003թ.-ի սեպտեմբերի 29
8. Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ ՄԱԿ-ի կոնվենցիան լրացնող Մարդկանց, հատկապես կանանց և երեխաների առևտրի կանխարգելման, արգելման և պատժի մասին արձանագրություն, 2003թ.-ի դեկտեմբերի 25
9. Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ ՄԱԿ-ի կոնվենցիան լրացնող Ցամաքով, ծովով և օդով

միգրանտների անօրինական ներս բերելու դեմ արձանագրություն, 2004թ.-ի հունվարի 28

10. Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիա, 2007թ.-ի մարտի 30
11. Փախստականների կարգավիճակի մասին ՄԱԿ-ի կոնվենցիա, 1951թ.-ի հուլիսի 28
12. Միգրանտ աշխատողների և նրանց ընտանիքների պաշտպանության ՄԱԿ-ի մասին կոնվենցիա, 1990թ.-ի դեկտեմների 18
13. Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիր, 1966թ.-ի դեկտեմբերի 19
14. Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ 2000թ.-ի նոյեմբերի 15-ի ՄԱԿ-ի կոնվենցիա և այդ կոնվենցիան լրացնող Մարդկանց, հատկապես կանանց և երեխաների առևտրի կանխարգելման, արգելման և պատժի մասին 2000թ.-ի նոյեմբերի 15-ի արձանագրություն
15. Ազատությունից զրկված անչափահասների պաշտպանության վերաբերյալ ՄԱԿ-ի կանոններ (Հավանայի կանոններ), 1990թ.-ի դեկտեմբերի 14
16. Հանցագործությունից տուժած և հանցագործության վկա երեխաների գործերով արդարադատության ուղենիշներ, 2005թ.-ի հուլիսի 22
17. Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի միջոցների մասին ԵԽ կոնվենցիա, 2005թ.-ի մայիսի 16
18. Սեռական շահագործումից և սեռական բնույթի բռնություններից երեխաների պաշտպանության մասին ԵԽ կոնվենցիա, 2008թ.-ի հոկտեմբերի 25
19. «Հանցագործության զոհերի պաշտպանության, աջակցության և իրավունքների նվազագույն չափանիշների հաստատման մասին և ԵՄ թիվ 2001/220/JHA շրջանակային որոշման փոխարինման մասին՝ Եվրախորհրդարանի և Եվրոպական միության խորհրդի թիվ 2012/29/EU հրահանգ, 2012թ.-ի հոկտեմբերի 25

20. ՀՀ Սահմանադրություն (ընդունվել է 2015թ.-ի դեկտեմբերի 6-ին)
21. ՀՀ քրեական օրենսգիրք (ընդունվել է 2003թ.-ի ապրիլի 18-ին)
22. ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք (ընդունվել է 1998թ.-ի մայիսի 5-ին)
23. ՀՀ ընտանեկան օրենսգիրք (ընդունվել է 2004թ.-ի նոյեմբերի 9-ին)
24. ՀՀ քաղաքացիական օրենսգիրք (ընդունվել է 1998թ.-ի մայիսի 5-ին)
25. Երեխայի իրավունքների մասին ՀՀ օրենք (ընդունվել է 1996թ.-ի մայիսի 29-ին)
26. Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին ՀՀ օրենք (ընդունվել է 2005թ.-ի մայիսի 3-ին)
27. Սոցիալական աջակցության մասին ՀՀ օրենք (ընդունվել է 2014թ.-ի դեկտեմբերի 17-ին)
28. Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին ՀՀ օրենք (ընդունվել է 2013թ.-ի մայիսի 20-ին)
29. Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման ենթարկված անձանց նույնացման և աջակցության մասին ՀՀ օրենք (ընդունվել է 2014թ.-ի դեկտեմբերի 17-ին)
30. Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին ՀՀ օրենք (ընդունված 2017թ.-ի դեկտեմբերի 13-ին)
31. Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին ՀՀ օրենք (ընդունվել է 1993թ.-ի ապրիլի 14-ին)
32. Բռնադատվածների մասին ՀՀ օրենք (ընդունվել է 1994թ.-ի հունիսի 14-ին)

2. Գրականություն (ձեռնարկներ և ընթերցանության նյութեր)

33. Արդարադատության մատչելիության հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետու-թյունում (գիտագործնական վերլուծություն)/ Խմբագիր Դ. Ավետիսյան, Վ. Ենգիբար-յան, Երևան, 2013:
34. Դեն Օ'Դոնելլ. Երեխաների պաշտպանություն: Ձեռնարկ խորհրդարանականների հա-մար, Երևան, 2005:
35. Երեմյան Ա., Թումասյան Դ., Ղամբարյան Ա., Պետրոս-յան Տ. Հայաստանի Հանրապետու-թյունում թրաֆիքին-գի և շահագործման դեմ պայքարի իրավական հիմունքները, Երևան, 2011:
36. Թումասյան Դ., Յորդաշ Ռ. Խոցելի տուժողների/ վկա-ների և կասկածյալների մասնակ-ցությամբ իրականաց-վող քննությունը, Երևան, 2017:
37. ՀՀ քրեական դատավարություն. Մաս 1/ Գիտական խմբագիր Ա. Ղամբարյան, Երևան, 2016:
38. Ղամբարյան Ա., Թումասյան Դ. Երեխաների սեռական անձեռնմխելիության և սեռական ազատության դեմ ուղղված հանցագործություններն ու դրանց վարույթի առանձնահատ-կությունները (ձեռնարկ քննիչների համար), Երևան, 2015:
39. Ճանաչողական (կոգնիտիվ) հարցաքննության սցենար: ՀՀ դատախազության դպրոցի ուսումնական ֆիլմի համար/ Հեղինակների խումբ՝ Սարգսյան Գ., Թուման-յան Ք., Թումասյան Դ., Գասպարյան Ա. և այլոք, Երևան, 2013:
40. Մարաբյան Ս., Թումասյան Դ., Գևորգյան Դ. Երեխա-ների նկատմամբ բռնության բնու-թագիրը և քննության առանձնահատկությունները, Երևան, 2019:
41. Մելքոնյան Դ., Հարությունյան Ս. ՄԻԵԴ նախադեպային իրավունքի հիմնահարցերը քրեական գործերով, Երևան, 2015:

42. Տոնոյան Ն. Ընտանիքի և երեխայի շահերի դեմ ուղղված հանցագործություններ /ուսում-նական ձեռնարկ/, Երևան, Լիմուշ, 2014:
43. Брусницын Л.В. Обеспечение безопасности лиц, содействующих уголовному правосудию: мировой опыт и развитие российского законодательства (процессуальное исследование). Монография. М.: Юрлитинформ, 2010.
44. Гончаров В.Б., Кожевников В.В. Проблемы безопасности участников уголовного процесса// Государство и право, 2000, №2.
45. Методические рекомендации по организации и ведению допроса несовершеннолетних в специализированном помещении на этапе следствия. - СПб: Санкт-Петербургская общественная организация. «Врачи Детям», 2014.
46. Стандарты Европейского суда по правам человека и российская правоприменительная практика. Сб. аналитических статей/ Под ред. М.Р. Воскобитовой, М., 2005.
47. Akandji-Kombe J., Positive Obligations under the European Convention on Human Rights: A Guide to the Implementation of the European Convention on Human Rights, Human Rights Handbooks, No. 7, (2007 Council of Europe).
48. Brown H. Safeguarding adults and children with disabilities against abuse, (2003, Council of Europe Publishing)// http://www.coe.int/t/e/social_cohesion/soc-sp/Abuse%20_E%20in%20color.pdf
49. CPT, The CPT Standards: 'Substantive' Section of the CPT's General Reports, CPT/Inf/E (2002) 1- Rev.2006 - report
50. J Murdoch, & R Roche, The European Convention on Human Rights and Policing: A Handbook for police and other Law Enforcement Officers, (2013) – Handbook.
51. N. Muizniek, Commissioner for Human Rights of the Council of Europe following his visit to Armenia from 5 to 9 October 2014, (2015) Council of Europe, CommDH(2015)2 – report.

52. Norwegian Helsinki Committee, FIDH and CSI, Administration of Justice in the Republic of Armenia, (2012) – report.
53. S Sahakyan, Juvenile Justice in Armenia: Legislative Analysis, (2012) Civil Society Institute, Yerevan – report.
54. The United Kingdom Ministry of Justice, Achieving Best Evidence in Criminal Proceedings: Guidance on interviewing victims and witnesses, and guidance on using special measures, (2011) Crown Prosecution Service – report.
55. Hammarberg T. The UN Convention on the Right of the Child and How to Make it Work. New York. St. Martins Press. 1990.
56. Robertson T. Implementation Handbook for the Convention on the Rights of the Child. Paris. UNICEF. 1998.
57. FRA, Handbook on European law relating to access to justice.
58. Jeremy McBride, The Case-law of the European Court of Human Rights on Victims' Rights in Criminal Proceedings, undated.
59. The Advocate's Gateway, Ground rules hearings and the fair treatment of vulnerable people in court.
60. UK Ministry of Justice, Code of Practice for Victims of Crime.
61. US State of Illinois, 2016 Victims' needs assessment (available at: http://www.icjia.state.il.us/assets/articles/2016_ICJIA_Victim_Needs_Assessment_Summary_Report.pdf)
62. US Department of Justice, Model Standards for Serving Victims and Survivors of Crime, available at: https://www.ovc. gov/model-standards/index.html
63. Canadian Resource Centre for Victims of Crime, The Impact of Victimisation.
64. EU Fundamental Rights Agency (FRA), Victims' rights as standards of criminal justice – Justice for victims of violent crime, Part I.

65. FRA, Proceedings that do justice – Justice for victims of violent crime, Part II.
66. FRA, Sanctions that do justice – Justice for victims of violent crime, Part III.
67. Women as victims of partner violence – Justice for victims of violent crime, Part IV.
68. Joelle Milquet, Strengthening Victims' Rights: From Compensation to Reparation, 2019.
69. Victorian Law Reform Commission, The Role of Victims of Crime in the Criminal Trial Process, 2016, available at: http://lawreform.vic.gov.au/sites/default/files/VLRC_Victims%20Of%20Crime-Report-W_0.pdf
70. Victim Support UK (Dinisman and Moroz), Understanding victims of crime, 2017// https://www.victimsupport.org.uk/sites/default/files/VS_Understanding%20victims%20of%20crime_web.pdf

3. Ինտերնետ աղբյուրներ

71. www.echr.coe.int
72. www.coe.am
73. http://www.state.gov/documents/organization/236708.pdf
74. http://www.osce.org/yerevan/84022
75. https://www.arlis.am/
76. http://www.irtek.am
77. https://www.theadvocatesgateway.org/toolkits
78. US DoJ online training: https://www.ovcttac.gov/views/TrainingMaterials/dspOnline_VATOnline.cfm

4. ՄԻԵԴ-ի դատական պրակտիկա

79. Ա-ն (A-ն) ընդդեմ Խորվաթիայի (դատավճիռը՝ 14 հոկտեմբեր 2010թ.)

80. Աբդեննասեր Նաիտ-Լիմանն (Nait-Limann) ընդդեմ Շվեյցարիայի (դատավճիռը՝ 15 մարտի 2018թ.)
81. Ակելիենեն (Akelene) ընդդեմ Լիտվայի (դատավճիռը՝ 16 հոկտեմբեր 2018թ.)
82. Այդինն (Aydin-ն) ընդդեմ Թուրքիայի (դատավճիռը՝ 25 սեպտեմբեր 1997թ.)
83. Բավթարն (Baytar-ն) ընդդեմ Թուրքիայի (դատավճիռը՝ 14 հոկտեմբեր 2014)
84. Բիքասն (Bikas) ընդդեմ Գերմանիայի (դատավճիռը՝ 25 հունվար 2018թ.)
85. Բլոխինն (Blokhin-ն) ընդդեմ Ռուսաստանի (դատավճիռը՝ 14 նոյեմբեր 2013թ.)
86. ԳՌՀ Ստիֆթանգ Գեգենն (Stiftan Gegen) ընդդեմ Շվեյցարիայի (դատավճիռը՝ 9 հունվար 2018թ.)
87. Դորդևիցն (Đorđević) ընդդեմ Խորվաթիայի (դատավճիռը՝ 24 հուլիս 2012թ.)
88. Դուրսոնն (Doorson-ն) ընդդեմ Նիդեռլանդների (դատավճիռը՝ 25 մարտ 1996թ.)
89. Զոնթուլն (Zontul-ն) ընդդեմ Հունաստանի (դատավճիռը՝ 17 հունվար 2012թ.)
90. Իքս-ն (X-ն) ընդդեմ Թուրքիայի (դատավճիռը՝ 9 հոկտեմբեր 2012թ.)
91. Լակատոսովան և Լակատոսն (Lakatosova and Lakatos) ընդդեմ Սլովակիայի (դատավճիռը՝ 11 դեկտեմբեր 2018թ.)
92. Լ.Կ.Բ.-ն (L.C.B-ն) ընդդեմ Միացյալ Թագավորության (դատավճիռը՝ 9 հունիս 1998թ.)
93. Լոզովն (Lozov) ընդդեմ Ռուսաստանի (դատավճիռը՝ 24 ապրիլ 2018թ.)
94. Կաբողլուն և Օրանն (Kaboghlu and Oran) ընդդեմ Թուրքիայի (դատավճիռը՝ 30 հոկտեմբեր 2018թ.)
95. Կյուտինն (Kiyutin-ն) ընդդեմ Ռուսաստանի (դատավճիռը՝ 10 մարտ 2011թ.)

96. Հալիլովիցն (Halilovic-ն) ընդդեմ Բոսնիա-Հերցոգովինայի (դատավճիռը՝ 24 նոյեմբեր 2009թ.)
97. Հովհաննիսյանն (Hovhannisyan) ընդդեմ Հայաստանի (դատավճիռը՝ 19 հուլիս 2018թ.)
98. Մ.Կ.-ն (M.C.-ն) ընդդեմ Բուլղարիայի (դատավճիռը՝ 4 դեկտեմբեր 2003թ.)
99. Մենեշևան (Menesheva-ն) ընդդեմ Ռուսաստանի (դատավճիռը՝ 9 մարտ 2006թ.)
100. Մունյազն (Munjaz-ն) ընդդեմ Միացյալ Թագավորության (դատավճիռը՝ 17 հուլիս 2012թ.)
101. Պ.-ն և Ս.-ն (P and S) ընդդեմ Լեհաստանի (դատավճիռը՝ 30 հունվար 2012թ.)
102. Պլոնկան (Plonka-ն) ընդդեմ Լեհաստանի (դատավճիռը՝ 31 մարտ 2009թ.)
103. Ռենոլդն (Renolde-ն) ընդդեմ Ֆրանսիայի (դատավճիռը՝ 16 հոկտեմբեր 2008թ.)
104. Ռուպան (Rupa-ն) ընդդեմ Ռումինիայի (դատավճիռը՝ 16 դեկտեմբեր 2008թ.)
105. Սաուդն (Saoud-ն) ընդդեմ Ֆրանսիայի (դատավճիռը՝ 9 հոկտեմբեր 2007թ.)
106. Սելամին և ուրիշներն (Selamin and others) ընդդեմ նախկին Հարավսլավիայի Մակեդոնիայի Հանրապետության (դատավճիռը՝ 1 մարտ 2018թ.)
107. Վեներսկին (Wenerski-ն) ընդդեմ Լեհաստանի (դատավճիռը՝ 20 հունվար 2009թ.)
108. Տ.Ն.-ն (S.N.-ն) ընդդեմ Շվեդիայի (դատավճիռը՝ 2 հուլիս 2002թ.)
109. Տ.-ն (T.-ն) ընդդեմ Միացյալ Թագավորության (դատավճիռը՝ 16 դեկտեմբեր 1999թ.)
110. Օփուզն (Opuz-ն) ընդդեմ Թուրքիայի (դատավճիռը՝ 9 հունիս 2009թ.) և այլն:

ԴԱՎԻԹ ԹՈՒՄԱՍՅԱՆ

ՏՈՒԺՈՂԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ARM

Եվրոպայի խորհուրդն առաջատարն է մայրցամաքում մարդու իրավունքներով զբաղվող կազմակերպությունների շարքում: Եվրոպայի խորհրդին անդամակցում են 47 պետություններ, որոնցից 27-ը միաժամանակ նաև Եվրոպական միության անդամներ են: Եվրոպայի խորհրդի անդամ բոլոր պետությունները ստորագրել են Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների եվրոպական կոնվենցիան՝ որպես մարդու իրավունքների, ժողովրդավարության և օրենքի գերակայության պաշտպանությանը նպատակաուղղված միջազգային համաձայնագիր: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը վերահսկում է անդամ պետությունների կողմից Կոնվենցիայի դրույթների կատարումը:

www.coe.int

Եվրոպական միությունը 27 եվրոպական ժողովրդավարական երկրների տնտեսական և քաղաքական յուրահատուկ գործընկերություն է՝ իր 500 միլիոն քաղաքացիների համար առավել արդար և ապահով աշխարհում խաղաղություն, բարգավաճում և ազատություն ապահովելու նպատակով: Այս ամենն իրագործելու համար ԵՄ երկրները հիմնել են մարմիններ՝ ԵՄ աշխատանքներն իրականացնելու և նրա օրենսդրությունն ընդունելու համար: Նրա հիմնական մարմիններն են Եվրոպական խորհրդարանը (որը ներկայացնում է Եվրոպայի ժողովրդին), Եվրոպական միության խորհուրդը (որը ներկայացնում է ազգային կառավարությունները) և Եվրոպական հանձնաժողովը (որը ներկայացնում է ԵՄ ընդհանուր շահերը):

http://europa.eu

Funded by the European Union and the Council of Europe

EUROPEAN UNION

COUNCIL OF EUROPE

CONSEIL DE L'EUROPE

Implemented by the Council of Europe